Ա. ՅԱԿՈՎԼԵՎ

ՌՈԱՅԼԴ ԱՄՈՒՆԴՍԵՆԻ ԿՅԱՆՔՆ ՈՒ ԱՐԿԱԾՆԵՐԸ

ՊԵՏՀՐԱՏ 1937 ՅԵՐԵՎԱՆ

087.1
3Ա-25

23 JUN 2008

ՀՍԽՀ
ՊԵՏՀՐԱՏ

087.1
ՅԱ-25

Ա. ՅԱԿՈՎԼԵՎ

ՌՈԱՅԼԴ ԱՄՈՒՆԴՍԵՆԻ

ԿՅԱՆՔՆ ՈՒ ԱՐԿԱԾՆԵՐԸ

Նկարները
ՎԱՍԻԼԻ ԲԵԼՅԱՅԵՎԻ

[illegible] ԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1937

16580

ՓՈՔՐԱՀԱՍԱԿՆԵՐԻ ՅԵՎ ՄԻՋԱՀԱՍԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Թարգմանեց Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Պատ. խմբագիր՝ Ար. Հայրյան
Լեզվ. խմբագիր՝ Խ. Այվազյան
Տեխն. խմբագիր՝ Տ. Խաչվանքյան
Սրբագրիչ՝ Ս. Շահբազյան

Գլավլիտի լիազոր Կ—1066, հրատ. 3649
Պատվեր 470, տիրաժ 3000
Պետհրատի տպարան, Յերևան, II Կնունյանցի, 4

А. ЯКОВЛЕВ
ЖИЗНЬ И ПРИКЛЮЧЕНИЯ РОАЛЬДА АМУНДСЕНА
Гиз ССР Армении, Ереван, 1937 г.



ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹՅՈՒՆ ԴԵՊԻ ԾՈՎԸ

Դպրոցականները նեղ կամրջակներով անցան դեպի նավը և շղթայաձև նստեցին նավաշուրթի յերկայնքով դրված ցածլիկ նստարանների վրա։ Յուրաքանչյուր յերեխայի ձեռքին կամ ուսին կար ուտելիքով լիքը մի պայուսակ։ Ուսուցչի ոգնական Կնուտսենն ամեն մեկին ցույց տվեց իր տեղը։ Նավն ամեն կողմից բաց եր, միայն բրեզենտե ծածկոցն եր տարածվում նրանց գլխավերևը։

Քաղաքը նոր եր միայն զարթնում, արեգակը դուրս յեկավ հեռավոր լեռան յետևից։ Նուրմարկենի ստորոտում գտնվող հովտում դեռևս կապույտ ստվերներ կային, ծովափի ջուրը թվում եր յուղոտ ու անշարժ։ Ծովարորները թռչելով նավի վրայով, զիլ ճչում եյին։ Ամենից վերջը նավ մտավ յերկարամորուք ուսուցիչ Նորդալը։ Նա հոգացողությամբ նայեց՝ չլինի թե մանուկներից մեկն

ու մեկը մեքենային մոտիկ նստած լինի, և անցավ նավի յետևի կողմը: Լսվեց նավի սուլիչը, տախտակամածի տակ սկսեց փշշալ շոգին: Յերկու նավաստիներ վերցրին կամրջակները, հանեցին թոկերը և նավահանգստից յետ մղվելով՝ նավը շարժվեց: Մանուկները նավի յետևի կողմում բարձրաձայն յերգում եյին: Յեվ այդ յերգն իսկույն բռնեց վողջ նավը: Ամենից բարձր յերգում եր կանաչազգեստ ու կանաչ գլխարկով տղան: Կնուտսենը գլխով արեց տղային և, յերբ յերգը վերջացավ, ժպտալով ասաց.

—Ռոա՛լդ, քո ձայնն ամենից ուժեղն է:

—Յեվ ամենից անդուրեկանը,— իսկույն հեգնանքով արձագանքեց Ռոալդի հարևանը:

Յերեխաները բարձրաձայն ծիծաղեցին և կատակով ասում եյին.

—Ռոալդի կոկորդում աքաղաղներ են կանչում:

—Վո՛չ, նրա կոկորդում ծովացուլեր են մռնչում:

—Մի՛ք վիրավորի նրան: Նայեցե՛ք, վորքան գեղեցիկ է մեր շրջապատը:

Նավահանգստից հեռանալով, նավն արագացրեց իր ընթացքը: Քաղաքն սկսեց արագորեն հեռանալ: Լեռների ստորոտի մուգ-կանաչը ծածկվեց կապույտով: Նրա մեջ յերևացող սպիտակ տները նման եյին հանգստանալ ու նստած թռչուններին: Ծովախորշի ձախ ափով, հեռավոր լեռան յետևից, քաղաքին եր մոտենում գնացքը: Նրա վերևը յերկար պոչի պես ձգվում եր սպիտակ շոգին: Յերեխաներն, ամեն րոպե յերեսներն այս ու այն կողմ դարձնելով դիտում եյին ափերը: Նրանցից շատերն առաջին անգամն եյին այդ ծովախորշով գնում դեպի հեռավոր քաղաքը, դեպի ծովը, և այժմ նրանց համար ամեն ինչ հետաքրքիր եր: Նավն արագորեն անցնում եր ափերի մոտով, ուր քարաժայռերի վրա սպիտակին եյին տալիս գեղեցիկ տները: Հեռվում յերևաց քարակուռ ցածրանիստ կղզին: Ահա նա հետզհետե մոտենում է, արդեն յերևում

են կղզու քարե պատերը և պատերից նայում են թնդանոթների յերախները: Ուսուցիչ Նորդալը պարզում է իր ձեռքը դեպի առաջ, դեպի կղզին.

—Ահա՛ բերդը: Նա պաշտպանում է մեր մայրաքաղաքը:

Ռոալդը նախ նայեց իր ուսուցչին, հետո կղզուն, ինչ-վոր բան ծագեց նրա մտքում և հարցրեց.

—Ինչո՞ւ համար են թնդանոթները նայում ամեն կողմ: Մի՞թե թշնամին կարող է և՛ այստեղից մուտք գործել:

Նա յետ դարձավ և ցույց տվեց քաղաքը:

—Սա արված է շրջանցման դեպքերի համար: Թշնամին կարող է անցնել նաև թիկունքը: Նայեցե՛ք, վորքան ահեղ են այդ պարիսպներն ու թնդանոթները:

Յերեխաները հանդարտվելով, լուռ նայեցին այդ պարիսպներին ու թնդանոթներին:

Բերդի առաջից անցնելով՝ նավը մտավ, սողացող ոձի պես գալարուն, նեղ ջրանցքը: Ջրանցքի վրայով անցնում եր կախովի կամուրջը, վորից անցնում եյին կառքեր ու մարդիկ, և յերբ նավն անցավ կամրջի տակից, հեռվում իսկույն յերևաց ծովը, դեռևս վոչ պարզ՝ առավոտյան մառախուղի մեջ թագնված: Յերեխաները նորից սկսեցին յերգել:

Շուտով ջրանցքը վերջացավ, և նավն անցավ լայն ծովախորշով, վոր աջ կողմից շրջապատված եր լեռներով: Բաց ծովը հեռվից ավելի վճիտ եր յերևում: Յերեք յերկկայմանավ սպիտակ առագաստներով լողում եյին ծովի յեզերքին, իսկ ծովախորշի մեջտեղով անցնում եր ովկիանոսային յերկծխնելույզ շոգենավը: Յեվ յերկկայմանավերը, և՛ շոգենավն ուղևորվեցին դեպի փոքրիկ քաղաքը, վորի սպիտակ փողոցները ձգվում եյին ծովեզրի աջ ափին:

Նավը, վորով գնում եյին յերեխաները, արագորեն կտրեց ծովախորշը և անցավ դեպի քաղաքային նավա-

հանգիստը։ Ովկիանոսային շոգենավը առաջ անցավ նրանից և կանգ առավ քարապատնեշի մոտ։ Նա կարծես հսկա լիներ ձկնորսանավերի ու փոքր նավերի մեջտեղն ընկած։ Դպրոցականներն աղմուկով անցան քարակառույց ծովափը։ Ուսուցիչ Նորդայլը մուգ գլխարկով գնում էր նրանց հետ, իսկ նրա օգնական Կնուտսենը՝ բոլորի յետևից։ Ուսուցիչը ձեռքով ցույց տվեց քաղաքը, քարապատնեշը, ծովը։

— Յեվ այսպես, իմ բարեկամներ, մենք գտնվում ենք Տոնսբերգում, Նորվեգիայի ամենահին քաղաքում։ Այդ քաղաքը հիմնվել է ավելի առաջ, քան մեր մայրաքաղաք Քրիստիանիան։ Տեսե՛ք, թե ծովափին վորքան նավեր կան կանգնած։ Այդ նավերով նորվեգացիները գնում են ձուկ, գազան կամ կետ վորսալու։ Այժմ մենք կանցնենք ամբողջ ծովափով և կտեսնենք, թե ինչեր են կատարվում այդ նավերի վրա։

Այդ ժամին ծովափն արդեն լիքն էր ժողովրդով։ Ծովափի յերկարությամբ յերկու-յերեք շարքերով կանգնած եյին նավերը՝ բարձր կողերով և շատ բարձր նավախելերով։ Կայմերի վրա կախված եյին փաթաթված առագաստներ, ինչ-վոր առագաստ ընկած էր տախտակամածի

Կպրած պարանե սանդուխքը և առագաստափայտը շարժվում եյին կայմերի միջև, վորպես սարդի սև վոստայն։ Բոլոր նավերի կայմերի առջևի ծայրին դրված եյին տակառներ։ Այդ տակառներն ամենից ավելի շատ եյին գրավում յերեխաներին։

— Ինչո՞ւ տակառներն այդքան բարձր են կախված։

— Դուք գիտե՞ք, թե ինչու յեն դրանք դրված կայմերի վրա,—հարցրեց ուսուցիչը։—Յերբ նավը խրվում է սառույցի մեջ, նավապետը փակվում է այդ տակառում և հեռադիտակով դիտում հորիզոնը, թե արդյոք վորևէ տեղ գազան չի նկատվում, կամ կետերի շատրվան չի՞ յերևում։ Տակառից նա ավելի լավ է տեսնում

շրջակա հեռուները։ Ի դեպ, նավաստիներն այդ տակառն «ագռավի բուն» են անվանում։

Ռոալդը մի քայլ անգամ չէր հեռանում իր ուսուցչից, վորսում էր նրա յուրաքանչյուր խոսքը։ Նա առաջին անգամն էր այդ քաղաքում և առաջին անգամն էր տեսնում այդ նավերը։

Ահավասիկ նրանք, այդ հեքյաթային նավերը, վորոնց մասին նա այնքան շատ էր կարդացել։ Կան խիզախ մարդիկ, վորոնք այդ նավերով լողում են դեպի հեռավոր ովկիանոս, սպանում են կետեր, ծովացուլեր, փոկեր և ձուկ են վորսում...

—Իսկ ո՞ւր են նավաստիները,—վերջապես հարցրեց նա։

Նրան թվում էր, թե նավաստիները հսկաների նման պիտի լինեն։ Նրանք պետք է ունենան ինչ-վոր անսովոր բան, նրանք բոլորովին այնպես չպիտի լինեն, ինչպես մնացած մարդիկ։

Ուսուցիչը ծիծաղեց։

— Մի՞թե դու, Ռոալդ, չես տեսնում, թե ուր են նավաստիները։ Ահա, նրանք նավի վրա չեն, ահավասիկ՝ գլորում են տակառները։

Նա ցույց տվեց յերեք մարդ, վորոնք յերկար տախտակների վրայով տակառները դեպի ծովափ եյին գլորում։ Նավաստիները հագել եյին բաց օձիքավոր ճարպոտված շապիկներ, կաշվե շալվարներ և բարձըր, անճոռնի կոշիկներ։ Նրանց դեմքերը հողմահարված եյին ու խանձված։ Այդ դեմքերի վրա վոչ մի հերոսական բան չկար։

—Մի՞թե սրանք են նավաստիները։

— Մի՞թե սրանք են նավաստիները,— հիասթափված հարցրեց Ռոալդը։

— Այո, նավաստիներ են։

— Վորտեղից են գալիս նրանք։

Նավաստիներն այդ ժամանակ տակառները գլորելով տարել եյին քարե ծովեզրի մոտ գտնվող փայտե ծածկի տակ, դասավորել այլ տակառների շարքում և վերադառնում եյին դեպի կամրջակը։ Ուսուցիչը կանգնեցրեց նրանց։

— Դուք ինչ եք բեռնաթափում։

— Կետի ճարպ,— կցկտուր պատասխան տվեց նավաստին և գլխարկով բարևեց։

— Վորտեղից եք յեկել։

— Շպիցբերգենից։

Նա նորից պատվի առավ ու վազ տվեց կամրջակներով։

— Ահա, տեսնում ես,— դարձավ ուսուցիչը Ռոալդին,— այս նավը Շպիցբերգենի մոտ կետերի վորս է արել։

— Այդ դեպքում... Հապա ուր է նրանց նավապետը։

— Ահա և նավապետը։

— Ահա յեվ նավապետը.

Ուսուցիչը ցույց տվեց հաստ, ածխված դեմքով այն մարդուն, վոր կամրջակներով գնում եր դեպի ծովափ։ Նավապետը շատ քիչ եր տարբերվում նավաստիներից, միայն նրա կուրտկան ավելի մաքուր եր և թևի վրա փայլում եր մի վոսկեզօծ, նեղ ժապավեն։

— Իսկ յես կարծում եյի...

— մտմտաց Ռոալդը։

Ուսուցիչն աշխուժորեն դարձավ դեպի նա։

— Իսկ դու ինչ եյիր կարծում։

— Իսկ յես կարծում եյի, թե նավապետն բարձրահասակ է, շատ ուժեղ...

Ուսուցիչը ժպտաց, յերեխաները ծիծաղեցին։

— Դու, ըստ յերևույթին, կարծել ես, թե բոլոր նավաստիները և նավապետները նման են հին վիկինգներին, ինչպես այդ նկարում են մեր գրքերում։ Այժմ, տեսնում ես, նրանք սովորական մարդիկ են։

Բարձր ձայնով կանչելով միմյանց, յերեխաները ծովափով ավելի հեռու գնացին։ Նավերում իրարանցում կար։ Նավաստիները ձեռնասայլակներով կամրջակների վրայով ծովափն եյին տեղափոխում փոկերի մորթիների հակեր, վորոնք վատ հոտ եյին արձակում։ Մի տեղ, ուղղակի ծովափին, փոքր կույտերով ընկած եյին հսկայական մորթիներ՝ սպիտակ ժանիքներով.— այդ ծովացուլերի մորթիներ եյին։

Ամբողջ նավահանգիստը բռնել եր ձկան ու վորվանի (ծովային կենդանու ճարպի) հոտը։ Բազմաթիվ ծովաբորներ զիլ ճչոցով թռչում եյին նավակայանների վրայով։ Ծովափի ջրերը ծածկված եյին յուղի բծերով և թրվում եյին բոլորովին կեղտոտ։ Ծովից փչում եր քամին, անցնում եյին փոքրիկ ալիքները։ Քամին հանդարտորեն շաչում եր առագաստափայտերի ու կայմերի միջև՝ կարծես թե կանչում եր ինչ-վոր հեռու տեղ, դեպի ազատ տարածություն։

Ռոալդն ամենից վերջումն եր մնացել, դպրոցականների բազմության յետևը։ Նա ուշադրությամբ դիտում եր յուրաքանչյուր նավը, աչքերով ուղղակի կպել եր նրանց։ Թվում եր, թե նրան ամեն ինչ գրավում եր — և՛ նավը, և՛ մարդիկ, և՛ ծովափը, և՛ ալիքները, վորոնք զարնվում եյին քարափներին։

Հեռվից ընկերները բղավում եյին.

— Ռոալդ, Ամունդսեն, յետ մի մնա։



Ռոալդն ուշադրությամբ դիտում եր յուրաքանչյուր նավը։

Նա հասավ նրանց, մի քանի րոպե քայլում եր նրանց հետ, ապա կանգ առնում ինչ վոր խարիսխի, թոկի կամ մի հին․ խարխլած մակույկի մոտ, նայում, դիտում նրանց ամեն կողմից և նորից մոտենում իր ընկերներին։

Դպրոցականները ծովեզրից գնացին քաղաք։ Ռոալդը մոտեցավ ուսուցչին։

— Թույլ տվեք ինձ մնալ նավահանգստում։ Յես ուզում եմ նայել, թե ինչպես են աշխատում այստեղ։

— Յես ել, յես ել եմ ուզում մնալ,— լսվեցին մի քանի ձայներ։

Ուսուցիչը նայեց իր ոգնականին։

— Ի՞նչ արած, դուք գուցե կմնաք նրանց հետ։ Մենք կգնանք թանգարան։ Կեսորին դուք կլինեք կենտրոնական դպրոցում, այնտեղ մենք կհանդիպենք։

Բազմությունը ցրվեց։ Մի քանիսը գնացին ուսուցչի հետ դեպի քաղաք, իսկ մյուսները Կնուտսենի հետ վերադարձան նավահանգիստ, ուր կանգնած եր այն փոքրիկ շոգենավը, վորով նրանք մեկնել եյին Քրիստիանիայից։ Յերեխաներն այժմ ավելի դանդաղ եյին գնում, յերկար կանգ եյին առնում ամեն մի նավի մոտ, լարված դիտում եյին նավն ու մարդկանց, վորոնք աշխատում եյին

այդ նավերի վրա. բոլորն ել նրանց թվում եր վոչ սովորական, և ամեն ինչ նրանց հրապուրում եր։

— Դու ինչ կուզես լինել,— հարցրեց Կնուտսենը։

Ռոալդը ցնցվեց, կարծես թե մեկն իմացավ նրա գաղտնի մտքերը։ Նա նայեց Կնուտսենին և պատասխանեց հաստատակամ կերպով.

— Յես ծովագնաց պիտի լինեմ։

«ԴՈՒ ԲԺԻՇԿ ԿԴԱՌՆԱՍ...»

Սենյակի դուռը հանդարտորեն բացվեց։ Մայրը կարի վրայից բարձրացրեց գլուխը և նայեց, թե ով ե մտնում։ Շեմքում կանգնած եր Ռոալդը։ Նրա աչքերը փայլում եյին։ Նա ուրախ ժպտաց մորը, ուշադրությամբ նայեց նրան և հանկարծ զարմացավ։ Մոր աչքերում արցունքի կաթիլներ նկատեց։ Նրա ժպիտը վարկենապես անհետացավ։

— Դու նորից լա՛ց ես յեղել, մայրիկ,— դժգոհությամբ փնթփնթաց նա։

Մայրը նորից ծռեց իր գլուխը կարի վրա, նա չեր ուզում, վոր վորդին տեսնի իր արցունքները, և աչքը չբարձրացնելով, հարցրեց խուլ ձայնով.

— Արձակուրդդ անցկացրի՞ր։

— Այո,— պատասխանեց Ռոալդը։— Արդեն անձրևն սկսեց կաթկթել։ Յեղբայրս վախեցավ, թե կփչացնի իր նոր գլխարկը և փախավ արագորեն, ինչպես նապաստակը բանջարանոցից։

Ռոալդն ուզում եր կատակով ուրախացնել մորը, սակայն մայրն ել ավելի կռացավ կարի վրա և տղան լսեց մոր խուլ հեկեկանքը։ Նա ուղղվեց։

— Դե, մայրիկ, լաց մի լինի։ Ամբողջ ժամանակ միայն արցունք ու արցունք։

Մայրը դողդոջուն ձայնով պատասխանեց.

— Յես չեմ լալիս։ Դե, ինչ արած, քանի վոր այդպես ե պետք, թող գնա։ Բոլոր վորդիներս գնացին։ Այ-

ժըմ պետք է թափառեն ամբողջ աշխարհում։ Դու մնացիր վերջինը։ Ի՞նչպես պիտի ապրեն նրանք։

Ռոալդը պատասխանեց աշխուժորեն.

— Լավ կապրեն, նրանք կաշխատեն, կծառայեն գրասենյակներում։ Յես էլ շուտով պիտի աշխատեմ։ Յես արդեն տասնչորս տարեկան եմ։

Մայրը բացասաբար գլուխն օրորեց։

— Դու դեռևս չպիտի աշխատես։ Դու պետք է շատ սովորես։ Մի՞թե չգիտես, յես ուզում եմ, վոր դու բժիշկ դառնաս։

Յերեխան նստեց մոր դիմաց դրված աթոռին, ձեռները դրեց սփռոցի վրա, թեքվեց, լամպի լույսից նայելով մոր դեմքին՝ ասաց.

— Մայրի՛կ, չէ՞ վոր յես քեզ ասել եմ, վոր դառնալու յեմ ծովագնաց։

— Վոչ, դու պետք է բժիշկ դառնաս։ Յես չեմ ուզում, վոր դու յերբևիցե հեռանաս ինձանից։ Տեսնո՞ւմ ես, ինձ մոտ արդեն վոչ վոք չմնաց, բացի քեզանից։ Յեթե ծովագնաց դառնաս, դու հաճախ ամիսներով պիտի բացակայես, կարող է պատահել տարիներով, և յես քեզ չպիտի տեսնեմ, քեզ համար պիտի անհանգստանամ ու լաց լինեմ։

Յերեխայի դեմքի վրայով ստվեր անցավ, նա ուզեց ինչ-վոր բան ասել, սակայն լռեց։ Սկզբներում նա մոր հետ միշտ և շատ յերկար եր վիճում։ Ահա արդեն յերկու տարի յե, վոր նա հաստատ վորոշել է, թե՝ «ծովագնաց պիտի լինեմ ու ծովագնաց», սակայն այն որից, յերբ մեռավ նրա հայրը (իսկ դա պատահեց մի տարի առաջ), նա դադարեց մոր հետ վիճելուց։ Մայրն այժմ հաճախ լաց է լինում, չի կարողանում հաշտվել հոր մահվան հետ, նա շարունակ վշտի մեջ է։ Ահա այսոր նրանից հեռացավ իր վորդին՝ Լեոն, գնաց ինքնուրույն կյանք վորոնելու, մնացել է միայն նա՝ Ռոալդը և նա էլ չի ուզում վշտացնել իր մորը։

Մայրը մի քիչ հանգստացավ, բարձրացրեց գլուխը, ուշադրությամբ նայեց վորդուն և մեղմորեն ասաց.

— Այո, զավակս, դու բժիշկ կդառնաս։ Կանցնի ելի մի քանի տարի — վեց կամ ութ — չգիտեմ, սակայն կարծում եմ, վոր ավելի, և դու կավարտես համալսարանը, քեզ հետ միասին մենք կտեղափոխվենք խաղաղ մի անկյուն, Քրիստիանիա, իսկ թերևս կգնանք ովկիանոսից դենը, ինչ-վոր տեղ, օրինակ՝ Բերգեն։ Մենք կապրենք հանգիստ կյանքով։ Դու կծառայես հիվանդանոցում, քեզ կճանաչեն ու կհարգեն վողջ քաղաքում՝ վորպես լավ բժիշկ, յես քեզ կսպասեմ ամեն յերեկո ծառայությունից վերադառնալիս, և մենք յերկար զրույց կանենք քեզ հետ միասին։ Գիշեր ժամանակ կգան, կկանչեն վորևե տեղից, հիվանդի այցելելու կգնաս, իսկ յես ականջ կդնեմ, թե դու յերբ ես տուն վերադառնում...

Տղան հենվեց աթոռին՝ կիսախուփ աչքերով։

«Բժի՛շկ»։ Նա պատկերացրեց, թե ինչպես է ապրում իրենց հարևան բժիշկ Լևին — ալեոր, շարունակ հազացող, կապտավուն մորուքով ծերուկը։ Նա միշտ մռայլ է, միշտ սերթուկ ունի հագին. Նա այնպիսի աչքեր ունի՝ կարծես թե դժգոհ է ամբողջ աշխարհից։ Բժիշկ Լևին միշտ նույն փողոցումն է աշխատում, վոչ մի տեղ չի գնում, ամառ ու ձմեռ միշտ միայնակ է։ Յերեխայի աչքին պատկերացավ նույնը — նա նույնպես պիտի ման գա ձեռնափայտին հենած, ամառ ու ձմեռ միշտ միևնույն փողոցով պիտի անց կենա, ամռանն ու ձմռանը միայն պիտի փոխի իր գլխարկը, իսկ ձմռանը, սև սերթուկի փոխարեն պիտի հագնի բրդոտ ոձիքով մուշտակը, ինչպես Լևին է անում։ «Վո՛չ, վո՛չ, յես չեմ ուզում բժիշկ դառնալ», վճռեց նա՝ ինքն իր մեջ։

— Մայրի՛կ, պատմիր բորգեյի մասին։

Մայրը լամպի լույսից նորից նայեց նրան։

— Բորգեյի մասին։ այսօր ինչը հիշեցրեց քեզ այդ։

Յերեխան վաղուց արդեն նկատել եր, վոր մորը

ՀՍՍՀ-CCPA

բավական կլինի հիշեցնել Բորգեյի մասին, և նա իսկույն կուրախանա։

— Ես սիրում եմ պարզապես, երբ դու պատմում ես Բորգեյի մասին։ Ես այնտեղ եմ ծնվել։

— Այո, դու այնտեղ ես ծնվել. սակայն դու չես կարող ոչինչ հիշել, որովհետև այնտեղից քեզ տեղափոխել ենք այն ժամանակ, երբ դեռևս դու երեք ամսական էիր։ Այնտեղ մենք լավ էինք ապրում։ Այնտեղ ծնվեցին ու մեծացան քո բոլոր եղբայրները։ Հայրդ ամբողջ կյանքում երազեց այն մասին, թե ինչպես պիտի ապրի մայրաքաղաքում։ Ահա, տեսնում ես, մենք տեղափոխվեցինք Քրիստիանիա, և այստեղ մենք վատ չէինք ապրում, քանի չէր մահացել քո հայրը։ Դու աշխատասեր երեխա ես, բոլոր ուսուցիչներն են ասում այդ։ Ես այժմ ամեն ինչ պիտի անեմ, որպեսզի դու միջնակարգ դպրոցից հետո մտնես համալսարան։

Մայրը խոսում էր հանդարտ, հոգնած ձայնով։

Ռոալդը փակեց աչքերը և մտածմունքի մեջ ընկավ։ Անձրևը թմբկահարում էր պատուհանը. գիշերից արդեն բավական անցել էր։ Մայրը երկար խոսեց, թե որքան լավ կյանք կունենան իրենք, եթե Ռոալդը բժիշկ դառնա։ Ռոալդը ձեռները դրեց սեղանին. նրա ձեռների տակ ընկած էր ծովի մասին եղած գիրքը, նա չէր լսում, թե ինչի մասին էր խոսում մայրը,— նա իր մտքերով էր զբաղված։ Մայրը մի անգամ ևս նայեց նրա փակ աչքերին ու ասաց։

— Դու արդեն քնել ես ուզում։ Գնա, քնիր։

Ռոալդն իսկույն թափ տվեց իրենից քունը, աշխույժ վեր կացավ, ներողություն խնդրեց մորից և գնաց քնելու։

Նրա սենյակը շատ փոքր էր, նման այն նավախուցին, որ նա տեսել էր նավի վրա՝ Տոնսբերգում։ Առանց լույսը վառելու նա մոտեցավ պատուհանին և կանգ առավ։ Անձրևը դեռևս շարունակում էր թմբկահարել ապակիները։

Պատի ետևը միապաղաղ աղմկում էին ծառերը, հեռվում լսվում էր ինչ-որ ձայն. այդ աշտարակի ժամացույցն էր խփում՝ մեկ, երկու, երեք... հինգ... տաս... Հարևան բակում հաջեց բժիշկ Լևիի շունը։ Այնտեղ շունը հաջում էր ամեն անգամ, երբ գալիս էին բժշկին հիվանդի մոտ կանչելու։ Ռոալդը պատկերացրեց՝ ահա ինքն էլ այդպես պիտի ապրի, նույնպիսի մի տան մեջ, ինչպես Լևին։ Աղջամուղջին բժիշկը տուն վերադարձավ։ Հիմա նորից կծեծեն դուռը, կհաջի շունը,— ինչ-որ տեղից եկել են բժշկին կանչելու. նա կփնթփնթա ու կհագա և խուլ գիշերվա մութ փողոցներով կգնա ինչ-որ տեղ...

Իսկ Ռոալդը հենց այն օրից, երբ նա առաջին անգամ եղավ Տոնսբերգում, մտածում է միայն ծովի ու նավաստիների մասին։ Նա արդեն՝ քնած թե արթուն՝ երազում է օվկիանոսի, ծովի, կետերի, ծովացուլերի և փոկերի մասին,— նա հեռավոր որսի է գնում... «Ո՛չ» ես բժիշկ չեմ լինի... Թող մայրիկը մի քիչ դարդ անի, իսկ ես, համենայն դեպս, բժիշկ չեմ դառնա...»։

ՋՈՆ ՖՐԱՆԿԼԻՆԻ ԱՐԿԱԾՆԵՐԸ

Տոն օր էր։ Ռոալդը դպրոց չգնաց։ Նա առավոտվանից փակվեց իր սենյակում և դուրս չեկավ, չնայած ժամը տասներկուսն էր արդեն։ Մայրը մոտեցավ սենյակին և ծեծեց դուռը։

— Ռոա՛լդ, դու քնա՞ծ ես։

Դռան ետևից պատասխանեց աշխույժ մի ձայն.

— Ո՛չ, մայրիկ, ես քնած չեմ։

— Հապա ի՞նչ ես անում։

— Կարդում եմ։

— Եկ նախաճաշիր։

Ռոալդը շեմքի վրա երևաց տնային կանաչ զգեստով։ Ձեռքին բռնել էր մի հաստ գիրք։ Նրա աչքերը լայն բացված էին և նա համառ կերպով նայեց մորը, սարքած սեղանին, կարծես թե զարմացավ, թե ինչպես էր

ընկել այդտեղ։ Նրա մազերը խռնված էին, շապկի օձիքը բաց էր մնացել։

— Մի տես, Ռոալդ, ինչ տեսք ունես,— հանդիմանությամբ ասաց մայրը։

— Ի՞նչ կա վոր։

— Գնա սանրվիր ու կոճկվիր։ Չի կարելի այդպես թափթփված լինել։

Ռոալդը, վոր կարծես թե դեռ չէր հաղթահարել քունը, կոճկեց օձիքը, ձեռքով ուղղեց մազերը և գիրքը դրեց սեղանին։ Մայրը նրան մոտեցրեց սուրճի բաժակը։ Ռոալդը մի ձեռքով վերցրեց բաժակը, իսկ մյուս ձեռքով բաց արավ գիրքը և աչքերը սևեռեց գրքի չավարտած էջին։ Մայրը գրգռված ասաց.

— Վերջ տուր ընթերցանությանդ և նախաճաշիր։

— Յես հիմա, հիմա, մայրիկ, ահա միայն կես յերես է մնացել։

Նրա աչքերն արագորեն թռչում էին տողերի վրայով։ Մայրն ինքը փակեց գիրքը։ Ռոալդն արագորեն սկսեց խմել սուրճը։

— Իսկ ի՞նչ գիրք է այդ։

— Ջոն Ֆրանկլինի արկածները։

— Նորի՞ց ծովագնացներ։

— Այո՛, ծովագնացներ։

— Ո՜, այդ ծովագնացները։ Նրանք շշմեցրել են քո գլուխը։ Դու, կարծես թե, հենց միայն նրանց մասին ես մտածում։ Ժամանակն է, վոր դադարես փոքրիկ տղա լինելուց։

— Ինչու՞ չեմ փոքր, մայրիկ։

— Դու այժմ պետք է մտածես քո ապագա կյանքի մասին։ Դու ծովագնաց չպիտի լինես, այլ բժիշկ։

— Իսկ, կարող է պատահել, վոր յես ծովագնաց լինեմ։

— Ե՞հ, գիտես ի՞նչ մարդ է ծովագնացը։ Կամ աղքատ և հարբեցող, կամ այնպիսի մեկը, վոր ամեն օր իր գլխի հետ է խաղում։ Յես ուզում եմ, վոր դու հանգիստ կյանք վարես։

Ռոալդն աչքի տակով նայեց մորը,նա չէր ուզում վեճի բռնվել և ժամանակ էլ չկար։ Նա շտապ խմեց իր բաժակը և, գիրքը վերցնելով, վազեց դեպի սենյակ։ Գնալիս նա արդեն բաց էր արել հարկավոր էջը. Նա գիրքը դրեց սեղանին, աչքերը սևեռեց տողերի վրա և մեքենայորեն առաջ քաշեց աթոռը, վոր նստի։

«Յերեք շաբաթ էր, ինչ շարունակվում էր նավի պայքարը սառույցների հետ։ Մի մթին գիշեր, յերբ վոռնում էր փոթորիկը, նավը հանկարծ հարված ստացավ, սառույցները ճզմում, հուպ էին տալիս նավի կողերը. Հրացանի կրակոցի նման մի բան վորոտաց նավի ներսում. այդ կայմն ու տախտակամածի գերանները կոտրվեցին։ Ջուրը խուժեց դեպի նավամբարը, և մարդիկ արդեն անզոր էին նավը փրկելու։ Տախտակամածի վրա և նավամբարում լսվեցին աղաղակներ։

— Փրկվեցե՛ք։

Բազմաթիվ մարդիկ անցան մթության միջից։ Ջահերի լույսի տակ նրանք ուղղակի սառույցների վրա սկսեցին բեռնաթափել նավակներ, արկղներ և կենսամթերքներով լի տակառներ ու հագուստի հակեր։ Նրանք աշխատում էին փրկել իրենց։ Ամբողջ գիշերը մոլեգնում էր փոթորիկը, ամբողջ գիշերը ճաքճքում էին սառույցները և յերբ լույսը բացվեց, տեսան, վոր իրենց նավից մնացել էին միայն ջարդ ու փշուր յեղած գերաններ՝ թափված սառույցների վրա և կայմն՝ իր պարաններով։ Սակայն հեռվում, բարեբախտաբար, նշմարվեցին սև ափեր, վորոնց բարձունքները ծածկված էին կապույտ սառույցով և ձյունով։ Մարդիկ դեպի իրենց էին քաշում նավակը, և ճաքճքած սառույցների վրայով պարենը դեպի ափն էին փոխադրում։ Ամենքը դողում էին ցրտից. Նրանք աշխատանքի լարվածությունից այնքան էին կռանում, վոր նրանց կուրծքը համարյա քսվում էր սառույցին։

Հարկավոր յեղավ յերկու օր, վոր նրանք ափ հասնեյին։ Այդ ճանապարհին չորս հոգի սառույցների տակ

մնացին. ընկերները չկարողացան օգնության հասնել: Սառույցները ծածկեցին նրանց գլուխները և թաղեցին ովկիանոսում…

Քիչ ուրախություն էր սպասում նրանց նաև ցամաքում: Այստեղ, հազարավոր կիլոմետրերի վրա, մարդկային բնակություն չկար. միայն սառցապատ քարեր էին ու սառցային անապատներ: Ինչ-որ տեղ հեռվում՝ դեպի հարավ, թերևս, այստեղից հազար կիլոմետր հեռու, կային ամերիկացիների առևտրական կայաններ, սակայն նրանց հասնելու համար պետք էր շաբաթներ ու ամիսներ, իսկ այդ մարդիկ քիչ սննդամթերք ունեին և շատ քիչ հագուստ: Սակայն ուժեղ է մարդկային հոգին և ուժեղ է կամքը: Ջոն Ֆրանկլինը հավաքեց իր բոլոր ուղեկիցներին, բոլորին քաջալերեց: Նա ասաց, որ պետք է առանց դանդաղելու գնալ դեպի հարավ, քանի դեռ ուժ կա և վրա չի հասել բևեռային մութ գիշերը…

Քաջալերվելով նրա խոսքերից, մարդիկ շարժվեցին դեպի հարավ: Նրանք իրենց մոտ քաշեցին ինքնաշեն սահնակի վրա դրված նավակները, ուր կային սննդի ու հրազենի խղճուկ պաշարներ: Որերն սկսեցին հետզհետե կարճանալ, հյուսիսից փչում էր քամին, ձյունը ձաղկում էր, թափանցելով մինչև վոսկրները: Ամեն ցերեկը մարդիկ ոթևան էին սարքում նավակների տակ, պահվում էին քամուց, իսկ լուսաբացին նորից շարունակում էին ճանապարհը…

Յերկրորդ շաբթում նրանք սպառեցին իրենց աղքատիկ սննդի բոլոր պաշարները, ուրբաթ գիշերն ոթևանում քաղցից ու ցրտից մահացան յերկու նավաստի, և այս յերկու մահը բոլորին հուսահատություն հասցրեց, բոլորն ուզում էին պառկած մնալ ու սպասել մահվան: Սակայն, առավոտյան՝ վորոշ ժամին, Ջոն Ֆրանկլինը նրանց վոտքի հանեց և նորից վողջ ջոկատը շարժվեց դեպի հարավ: Յերկուշաբթի որը հեռվում տեսան ծովից դուրս շպրտված գերաններից շինված մի տնակ: Վողջ



Ջոկատը քաջալերվեց։ Բոլորը մտածեցին, թե տնակում մարդիկ են ապրում։ Այնտեղ կարելի յե գտնել տաք ապաստան և սնունդ։ Նրանք վազեցին դեպի տնակը, լարելով իրենց վերջին ուժերը։ Ահա տնակը մոտ ե, մոտ... Դուռը բաց ե, պատուհանը՝ ջարդված։ Տնակը դատարկ եր։ Միայն ամռանը այնտեղ ապրել եյին հընդիկները և ամեն ինչից յերևում եր, վոր նրանք արդեն վաղուց թողել եյին տնակը և գնացել դեպի հարավ։ Նրանք չեյին թողել վոչ սնունդ և վոչ ել փայտ։ Միայն մի պատի մոտ ընկած եր սպիտակ արջի կմախք՝ միս չորացած կտորտանքներով։ Մարդիկ ագահորեն կմախքի վրա պրծան, յուրաքանչյուրն ուզում եր շուտով ձեռք բերել այդ միսը, սակայն Ջոն Ֆրանկլինը կանգնեցրեց նրանց, վերցրեց միսը և հավասարապես բաժանեց նրանց միջև...

Այդ գիշեր դժբախտ ճանապարհորդներն անցկացրին տնակում, առավոտյան նորից շարժվեցին դեպի հեռուն, սակայն հաջորդ որը, լուսաբացին, նրանք նորից ուտելու վոչ մի բան չունեյին։ Ամեն մի ոթևանում մեռնում եյին նավաստիները, մեռնում եյին լուռ և առանց գանգատի։ Ջոն Ֆրանկլինն ամենից առաջ եր գնում, վորքան կարող եր քաջալերելով և խոստանալով շուտ ազատել նրանց...

Մի տեղ կանգ առնելիս նավաստի Ջեմսը հանեց իր մեռած ընկերոջ կոշիկները, դանակով կտրեց յերկար կապը և սկսեց ծամել։ Նայելով նրան, մյուս նավաստիները նույնպես կտրեցին կոշիկները և սկսեցին կաշին ծամել։ Ինքը՝ Ֆրանկլինը կտրեց իր կոշկի կապերը...

Այդպես վարվեցին բոլորը, վորպեսզի մի կերպ հագեցնեն իրենց անտանելի քաղցը»։

Ռոալդը գլուխը գրքից բարձրացրեց։ Ի՞նչպես։ Կոշիկներ։ Մարդիկ ուտեն իրենց կոշիկները։ Նա նայեց մահճակալի տակ, ուր դրված եյին կաշվից կարած իր մի զույգ ամուր վոտնամանները։ Ահա մարդիկ վերցրել են, թերևս, այսպիսի կոշիկներ ու ծամել։ Այս ձևով նրանք

աշխատել են չմեռնել քաղցից։ Ռոալդը հուզված վեր կացավ տեղից և սկսեց քայլել սենյակում... Յերեք քայլ մեկ՝ և յերեք քայլ մյուս կողմի վրա։ Նա պատկերացրեց, թե մարդիկ ինչպես են գնում մութ սառցե անապատներով, կատաղի քամին խփում ե նրանց յերեսին, իսկ նրանք գնում են առանց հոգնելու։ Նրանք վայր են ընկնում հոգնությունից և ուժասպառությունից, մեռնում են ոթևաններում, ուտում են իրենց սեփական կոշիկները։ Իմանալու և տեսնելու ծարավը, թե ինչ կա հեռավոր բևեռային շրջաններում, նրանց այդտեղ ե հասցրել։ Գիտության համար նրանք այդպիսի տանջանքներ են կրում... Յեվ ահա նրանք կործանվում են։

Ռոալդը հուզված կանգնեց պատուհանի առաջ։ Վողջ պարտեզը վողողված եր արևի ճառագայթներով։ Յերկինքը փայլում եր խորունկ, ինչպես ծովը։ Ջոն Ֆրանկլինը դուրս ե յեկել այդպիսի քաղաքից, նավաստիները նույնպես դուրս եյին յեկել այնպիսի քաղաքներից, վորտեղ տաք եր, վորտեղ փայլում եր շողող արեգակը․ Նրանք գնացել եյին դեպի բևեռային հավիտենական սառույցները, ուր նրանց սպասում են սարսափելի տանջանքն ու կործանումը։ Նրանք կամեցել են ամեն ինչ իմանալ, ամեն ինչ տեսնել, ցանկացել են հարստացնել գիտությունը, հրաժարվել մեծ քաղաքների լավ կյանքից... Նրանք կործանվում են, սակայն ինչ բան կարող ե ավելի գեղեցիկ լինել, քան բևեռային ճանապարհորդի մահը։ Յենթարկվել մեծագույն զրկանքների, խորտակվել հանուն գիտության։

Ռոալդը նորից նայեց վոտնամաններին, — կարո՞ղ ե նա մտածել, վոր քաղցն ստիպում ե մարդկանց ուտել իրենց սեփական կոշիկները։ Նա պատկերացրեց քաղցած, տանջված մարդկանց, վորոնք հասնում են մինչև հուսահատություն, և ել ավելի արագ սկսեց ման գալ սենյակում։ Դեպի այնտեղ, շուտով նրանց հետ, նա կգնար նրանց հետ, նա ինքը կտաներ այդ բոլոր զըր-

կանքները, նա իրեն կպահեր հերոսաբար, բոլորին կըքաջալերեր, բոլորին կօգներ…

—Յես բևեռային հետազոտող պիտի լինեմ,—բարձրաձայն ասաց նա և շոկվեց հրճվալից, կարծես թե, վերջապես, գտավ այն բանը, վոր նա յերկար ժամանակ վորոնում եր:

ԱՄԵՆ ԻՆՁ՝ ՄԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԱՄԱՐ

«Իսկ ի՞նչ պիտի անել մայրիկի հետ» նորից ու նորից իրեն հարց եր տալիս Ռոալդը: Ջոն Ֆրանկլինի գիրքը նա կարդացել եր բազմաթիվ անգամ: Նա բերանացի գիտեր այն տեղերը, ուր խոսվում եր այդ փառավոր, հերոսական եքսպեդիցիայի սարսափելի տանջանքների ու կործանման մասին: Յեվ—զարմանալի չե—այդ տանջանքները նրան ավելի եյին հրապուրում: Նա ել ավելի ամրապնդվեց իր մտադրության մեջ՝ «Յես բևեռային հետազոտող պիտի լինեմ»:

Յեվ միմիայն մոր մասին յեղած մտքերը հանգիստ չեյին տալիս նրան: Ի՞նչ կասի մայրիկը, յերբ իմանա, վոր Ռոալդը պետք ե լինի վոչ միայն ծովագնաց, այլ և բևեռային հետազոտող: Ծովագնացը դեռ վոչինչ. ճիշտ ե, վտանգավոր ե նրա կյանքը, բազմաթիվ նավորդներ խորտակվել են ծովերի ու ովկիանոսների անհուն տարածության մեջ: Բայց չե՞ վոր նրանցից շատերն ապրել են մինչև խոր ծերության հասակը, խաղաղ կերպով անց են կացրել իրենց կյանքի վերջին որերը՝ վորևե հանգիստ քաղաքում, ընտանեկան շրջանում… Թերևս վաղ թե ուշ մայրը հաշտվեր, վոր նրա Ռոալդը ծովագնաց պիտի դառնա:

Սակայն նա յերբեք չի հաշտվի այն մտքի հետ, վոր իր վորդին բևեռային հետազոտող դառնա: Նա ինքը շատ գրքեր ե կարդացել, վորոնց մեջ խոսվում ե այն եքսպեդիցիաների մասին, վորոնք ուղարկվել են բևեռային շրջանները և կորել են անհետ, առհավետ…

Վո՛չ, վո՛չ, նա կհիվանդանա հենց այն մտքից, վոր իր վորդին յերբևիցե այդպիսի տանջանքների ու վտանգի պիտի յենթարկվի:

«Առայժմ կարիք չկա վորևե բան խոսելու նրա հետ: Յերբ յես կմեծանամ և ինքնուրույն կդառնամ, այն ժամանակ կհայտնեմ… Կարող ե պատահել մայրիկն այն ժամանակ այնպիսի վշտով չի ընդունի այդ լուրը, ինչպես կընդուներ այժմ: Չպետք ե նրան անհանգստացնել ժամանակից առաջ: Թող նա վոչինչ չիմանա: Թող կարծի, վոր յես այնպիսի բժիշկ կդառնամ, ինչպես մեր տխուր հարևան Լևին: Իսկ ինձ անհրաժեշտ ե նախապատրաստվել…»:

Այսպիսով յերկու հունի բաժանվեց պատանի Ռոալդ Ամունդսենի կյանքը:

Առաջվա նման նա սովորում եր, ինչպես սովորում են բոլոր պատանիները. ամեն որ կանոնավոր հաճախում եր դպրոց, իսկ տանը դասերն եր պատրաստում. և՛ մայրը, և՛ բոլոր ուսուցիչները նրան համարում եյին ամենախելոք աշակերտը: Սակայն գաղտնորեն նա սկըսեց պատրաստվել դեպի հեռավոր ու վտանգավոր ուղևորությունների՝ անծանոթ, բևեռային յերկրներում: Յեվ այս գաղտնի աշխատանքը կլանել եր նրա վողջ մտքերը: Իսկ ուսմանը նա հատկացնում եր միայն ամենաանհրաժեշտ ժամանակը:

Նա դպրոցում ընկերներ ուներ:

Հենրիկ Պետերսոնը նրա ամենահավատարիմ ու նըվիրված ընկերն եր: Նրանք միասին եյին յերազում ծովագնացներ դառնալու մասին: Առաջին որերը, յերբ Ռոալդը վորոշեց դառնալ բևեռային հետազոտող, շատ եր ցանկանում խոսել այդ մասին Հենրիկի հետ: Սակայն նա մտածում եր այսպես. որերից մի որ Հենրիկը կարող ե գալ իրենց՝ Ամունդսենների մոտ և հանկարծ մոր ներկայությամբ իր հետ խոսել իրենց պլանների մասին. գաղտնիքը կարող ե բացվել, մայրը կանհանգստանա և

նորից լաց կլինի։ Վո՛չ, լավ է չխոսել, վոչ վոքի չհայտնել։ Զուր չէ վոր գոյություն ունի նորվեգական առածը՝ «Իսկական մեծ գործը գաղտնի յե կատարվում»։ Իսկ միթե նրա գործը մեծ գործ չի լինի։

Այսպես, ուրեմն՝ գաղտնիք պահել։ Գաղտնի պատրաստիր քեզ՝ մեծ նվաճումների համար։

Ահա այդ որից Ռոալդը հաստատակամորեն գծեց իր վողջ ուղին։ Ամեն ինչ՝ մի նպատակի համար։

Ջոն Ֆրանկլինի ճանապարհորդության գիրքը դարձավ նրա սեղանի գիրքը։ Առաջին շաբաթն այդ գիրքը նա նույնիսկ իր հետ դպրոց եր տանում՝ դասագրքերի պայուսակի մեջ դրած։ Առաջին գիրքը, վոր նա կարդացել եր, գրադարանից եր վերցրել, վորն ստիպված յեղավ վերադարձնել։ Նա իր համար գնեց նույն այդ գրքից, վոր միշտ իր հետ ունենար։ Գրքում առանձին եջի վրա զետեղված եր Ֆրանկլինի նկարը։ Ռոալդը կտրեց այդ նկարը գրքի միջից, շրջանակի մեջ դրեց և կախեց իր սեղանի վերևը, վորպեսզի սառույցների մեջ կորած մեծ հետազոտողը միշտ իր աչքերի առաջ լինի։

Որերը գլորվում եյին իրար յետևից, շաբաթները՝ շաբաթների։ Ռոալդն ամբողջովին խորասուզվել եր ճանապարհորդությունների մասին յեղած գրքերում։

Վաղո՜ւց, շա՜տ վաղուց, ամբողջ մի հազարամյակ է, վոր մարդիկ ճանապարհորդում են ծովերով ու ովկիանոսներով։ Բայց և այնպես յերկիրը մինչև այժմ ել քիչ է հետազոտվել։ Վոչ վոք չգիտե, թե ինչ կա հյուսիսային ու հարավային բևեռներում, վոչ վոք չի իմանում, թե, արդյոք, նավով կարելի յե անցնել Ամերիկայի հյուսիսային ափերի յերկայնությամբ՝ Բաֆֆինի ծովածոցից մինչև Բերինգյան նեղուցը, կամ Յեվրոպայի ու Ասիայի հյուսիսային ափերի յերկայնությամբ՝ Սպիտակ ծովից մինչև այդ նույն Բերինգյան նեղուցը։ Աշխարհագրական քարտեզների վրա սպիտակ են մնացել բևեռային շրջանի տեղերը։

Եվ ընդհանրապես, վերջերս է, վոր մարդիկ սկսեցին հետազոտել ու ճանաչել յերկիրը։

Միայն չորս հարյուր տարի առաջ Քրիստափոր Կոլոմբոսի կարավելներն (փոքրիկ նավերը) առաջին անգամ անցան Ատլանտյան ովկիանոսը և գտան Ամերիկան։

Յեվ միայն յերեք դար առաջ Վասկո-Դե-Գաման խարխափելով կտրեց-անցավ Աֆրիկայի ափերը, իսկ մի այլ ճանապարհորդ՝ Ամերիկո Վեսպուչչին առաջինն եր, վոր կտրեց-անցավ Ամերիկայի ափերի շուրջբոլորը։

Իսկ հյուսիսի ու հարավի հավիտենական սառույցների գաղտնի մնացած մարզերը դեռ շատ յերկար ժամանակ կմնան անհայտության ծածկույթի տակ։

Յերկու դար առաջ Կաբբոտի, Բարենցի, Հուդզոնի և բազմաթիվ այլ ճանապարհորդների նավերը վախվխելով մոտեցան հավիտենական սառույցների յեզրերին և, իրենց անզոր զգալով, նահանջեցին։

Յեվ միայն 18-րդ և 19-րդ դարերի առաջին կեսին՝ մարդիկ վորոնելով առևտրական նոր ճանապարհներ, և խիզախորեն ձգտելով դեպի նոր գիտություն, սկսեցին հետզհետե թափանցել հյուսիսի ու հարավի հավիտենական սառույցների սահմանները։

Ֆիպսն ու Ֆրանկլինը հետազոտում եյին Շպիցբերգենը (Սվալբարդ), Նորդենշեյլդն անցնում է Սիբիրի հյուսիսային ափերը, Սկորեսբին ուսումնասիրում է Գրենլանդիայի, արևելյան ափերը, Բաֆֆինը՝ Ամերիկայի հյուսիսային ափերը... Հետզհետե նորանոր հետազոտող ծովագնացներն անցնում են բևեռային յերկրները,—նրանք յենթարկվում են զրկանքի, կործանվում են, սակայն քիչ-քիչ պատռում են անհայտ յերկրների վրա ընկած վարագույրը։

Յեվ, խորասուզվելով գրքերում, Ռոալդ Ամունդսենը հետզհետե ճանաչեց այդ անձնվեր, խիզախ մարդկանց։

Ովքե՞ր են դրանք։ Ի՞նչով են տարբերվում մյուս մարդկանցից։

Նրանք խիզախ, վճռական մարդիկ են. տոկուն են։ Նրանք յերկաթյա առողջություն ունեն. անընկճելի յեն. Նրանք չեն վախենում դրկանքներից, քաղցից և նույնիսկ՝ մահից։ Ամուր է նրանց կամքը, ինչպես՝ պողպատ։

Յեվ ակամա Ռոալդն իրեն համեմատում եր այդ մարդկանց հետ։

Ի՞նչ է ինքը։ Թույլ առողջության տեր և յերբեմն փնթփնթում է, յերբ մայրը նրան վատ ճաշ է տալիս. նա քնքուշ է։ Վորքան շատ պիտի աշխատի ինքն իր վրա, նախապատրաստվի՝ աշխատանքին ու դրկանքներին դիմանալու համար։ Յեվ Ռոալդը, լռության մեջ, գաղտնորեն ամեն ինչ կշռադատեց, քննարկեց և աստիճանաբար մշակեց այն պատկերը, վորին ինքը՝ Ռոալդը նման պիտի լինի, վորպեսզի պատվով կրի բևեռային հետազոտողի անունը։

Առողջությո՞ւն։ Ի՞նչ առողջություն ունի նա։ Նա ճիշտ այնպես է, ինչպես բոլոր մյուս յերեխաները, բոլոր նրանք, ովքեր ուզում են բժիշկ, փաստաբան, հաշվապահ դառնալ։

Իսկ նա կամք ունի՞։ Վո՛չ, նա կամք չունի, այսոր նա մի բան է վճռում, իսկ հենց վոր խոչընդոտներ հանդես կգան, նա իսկույն յետ կնահանջի։

Պետք է լիովին վերակառուցվել։ Իսկ գիտությո՞ւնը։ Նա գիտություն էլ չունի, վորպեսզի, ինչպես հարկն է, աշխատի գիտության համար։ Բոլոր մեծ ճանապարհորդները միաժամանակ մեծ գիտնականներ են յեղել։

Այսպես, ուրեմն՝ առողջություն, կամք, գիտություն։

Այսպես եյին ընթանում պատանի Ամունդսենի մտքերը։

Յեվ, պարզ նպատակ դնելով իր առաջ, նա սկսեց իր վրա աշխատել։

ՈՒԺԵՂ ԿԱՄՔԻ ՏԵՐ ՄԱՐԴԸ

Նա կարծես թե առաջվա նման եր պահում իրեն։ Դասագրքերով լիքը պայուսակն ամեն առավոտ նա տանում եր դպրոց, պատասխանում եր ուսուցիչների հարցերին. նա միշտ մեղմ եր ու հանդարտ։ Ճիշտ է, դասամիջոցին նա յերբեք տոթ դասարանում չեր մնում, այլ վազում եր լայնարձակ բակը և ման եր գալիս ընկերների հետ։ Թեկուզ հինգ, թեկուզ տասը րոպե — նա խաղում եր համառորեն և հրապուրանքով։ Ֆուտբոլը լավագույնն է, քան վորևե այլ խաղ. նա ամրապնդում է վոտքի մկանները, իսկ բևեռային ճանապարհորդին հարկավոր են, ամենից առաջ, ամուր վոտներ։

Առաջվա նման շատ եր կարդում։ Նա հատուկ տետրակ եր պահում, վորի մեջ գրի եր առնում բևեռային բոլոր ճանապարհորդների փորձերը, թե ինչպես են նրանք հագնվում, ինչպիսի՞ վոտնաման են հագնում՝ սառույցների վրա արշավանքի դուրս գալիս։ Ի՞նչ են ուտում, ինչո՞վ են փոխադրում իրենց հանդերձանքը, սարքը և ինչպես են գիտական դիտողություններ կատարում։

Ջանասիրությամբ, տող առ տող, Ռոալդն իր տետրակում գրում եր այս տեղեկությունները։

Այն ինչ ձմեռը վրա հասավ։ Իր մշտական յեռանդագին պարապմունքների ընթացքում, Ռոալդը գրեթե չնկատեց, թե ինչպես անցավ արագընթաց ժամանակը։

Ժամանակը յերկար է թվում միայն ծույլերին և անհամբեր մարդկանց, իսկ Ռոալդը ծուլության նմուշ անգամ չուներ։

Նոյեմբերի վերջին Քրիստիանիայի լեռները ծածկվեցին ձյունով։ Ցրտերն սկսվեցին։

Իր սենյակի պատուհանի առաջ, դրսի կողմից, Ռոալդը ջերմաչափ կախ տվեց։ Սառնամանիքներ մեծ չեյին — հինգ-վեց աստիճան։ Միայն մի անգամ ջերմաչափը ցույց տվեց տասներկու աստիճան։ «Ոհո՜, այսոր

ցուրտ է,— վճռեց Ռոալդը, պատուհանից տեսնելով, թե ինչպես ցածր է իջել ջերմաչափը,— պետք է տաք հագնվել»: Նա պատուհանից իսկույն հեռացավ, վորպեսզի շտապ հագնվի: Սակայն իսկույն նրա մեջ միտք հղացավ «սա բոլորովին չնչին ցուրտ է այն սառնամանիքների համեմատությամբ, վորոնք լինում են այնտեղ, բևեռային շրջաններում: Ի՞նչպես կարող եմ ես հետազոտող լինել, երբ այժմ տասներկու աստիճան ցրտից վախենում եմ: Ես պետք է վարժեցնեմ ինձ, վորպեսզի աննկատելիորեն կարողանամ տանել նման սառնամանիքները»:

Եվ այդ առավոտվանից նա սկսեց իրեն վարժեցնել սառնամանիքներին:

Թեթև հագուստով նա դպրոց էր գնում, ձեռնոցներ չէր հագնում, վորպեսզի կոփի իր ձեռները: Առավոտյան ու երեկոյան լվացվում էր ձյունախառն սառը ջրով: Նա ամեն ինչ կատարում էր միայն նրա համար, վոր իր մարմինը դարձնի ավելի ուժեղ ու տոկուն...

Մի օր, ուշ գիշերին, քնելու պատրաստվելով, Ռոալդը մոտեցավ իր անկողնին, վերցրեց վերմակը, դրսեց սավանը և բարձը: «Իսկ ինչպես պետք է քնել այնտեղ,— մտածեց նա,— երբ վո՛չ բարձ, վո՛չ ներքնակ, և վո՛չ էլ սավան կլինի: Եվ ցուրտ: Իսկ ես սովորել եմ քնել հարմար ու տաքուկ անկողնում»:

Հանկարծ, ինչ-վոր միտք ծագեց նրա գլխում. Նա կամաց անցավ նախասենյակ (վողջ տունն արդեն քնել էր), վերցրեց իր տաք վերարկուն, վոր կախ էր տված կախարանից, փռեց մահճակալի վրա, իսկ վրան էլ՝ վերմակը: Այնուհետև բաց արեց պատուհանը,— ցուրտը ներս խուժեց սենյակը: Ռոալդը շտապ հանգցրեց լույսը, հանվեց ու պառկեց վերմակի տակ: «Ահա այսպես... Թեկուզ փոքր նմանություն ունենա այն վայրերի գիշերելու տեղերին»: Վերմակի տակից դուրս հանեց միայն քիթը՝ օդ ծծելու համար:

Այսպես քնեց նա առաջին գիշերը՝ բաց պատուհանի առաջ:

Առավոտը կանուխ մայրը ծեծեց նրա դուռը.

— Ռոալդ, ի՞նչ է կատարվում քեզ մոտ:

Ռոալդը շտապ բարձրացավ մահճակալի վրա, ցուրտն իսկույն համակեց նրան վոտից մինչև գլուխ:

— Ի՞նչ է, մայրիկ:

— Ինչո՞ւ այսպես փչում է քո դռնից:

— Ես բաց եմ արել պատուհանը:

— Փակի՛ր շուտ, ամբողջ բնակարանը սառեց:

Ռոալդը փակեց պատուհանը, սկսեց հագնվել՝ դողալով ցրտից և աշխատելով հաղթահարել դողը: «Ես իրավունք չունեմ սառչելու: Ես չպետք է սառչեմ: Ես տաք եմ» — ներշնչեց նա ինքն իրեն՝ մտքում:

Նախաճաշի ժամանակ մայրը, տաք շորի մեջ փաթաթված, նկատողություն արավ նրան.— չի կարելի այդպես սառեցնել բնակարանը: Ռոալդը ժպտաց, բայց լռեց, իսկ երեկոյան, քնելուց առաջ, նախքան պատուհանը բանալը, նա դռան տակ մի փոքրիկ գորգ դրեց, վոր ցուրտը մյուս սենյակները չթափանցի:

Առավոտյան մայրը նորից նկատեց, վոր Ռոալդի սենյակից ցուրտ է փչում և նորից խոսակցություն տեղի ունեցավ:

— Ինչո՞ւ գիշերները պատուհանը բաց ես անում:

— Ես ուզում եմ վարժվել ցրտին: Ցուրտն ամրապնդում է մարդուս:

— Բայց դու կարող ես մրսել:

— Հենց դրա համար էլ ես ուզում եմ վարժեցնել ինձ, վոր չմրսեմ...

Մայրը նեղացավ, խրատներ տվեց: Ռոալդը շարունակում էր իր արածը. ամեն գիշեր նրա պատուհանը բաց էր մնում,— լիներ սառնամանիք, թե ձյուն — միևնույն էր: Նա երևակայում էր, թե բևեռային երկրներում ստիպված կլինի քնել նաև ցրտում, թերևս, երկա՜ր, երկա՜ր գիշերներ:

«Իսկ ինչպես են գնում այնտեղ ճանապարհորդները: Միայն դահուկներով: Դահո՜ւկ, դահո՜ւկ, դահո՜ւկ»:

Յեվ Ռուալդը վորոշեց դառնալ Քրիստիանիայի լավագույն դահուկավորը։

Ծախսելու համար մոր տված առաջին փողերով նա իրեն համար գնեց դահուկ, ձեռնափայտ, և սկսվեց գրավիչ աշխատանքը. դահուկի գործը նա դիտում եր վորպես աշխատանք։

Առաջին որերը նա դահուկով քայլում եր անշնորհք և անճոռնի։ Սակայն ինչ բանը չի հաղթահարի ուժեղ կամքը։

Ռուալդն իր յուրաքանչյուր ազատ որն օգտագործում եր դահուկային վարժություններ կատարելով։ Յեվ յուրաքանչյուր որ նա ավելի վստահ ու ավելի լավ եր սահում։ Նա դիտում եր, թե ինչպես եյին սլանում փորձված դահուկավորները, գնում եր այն ընկերների հետ, վորոնք արդեն կարող եյին ավելի լավ սլանալ…

Ազատ որերին, փոքր պարկն ուսին գցած, նա առավոտվանից գնում եր լեռները և վերադառնում եր միայն ուշ յերեկոյան հոգնած, սակայն գոհ՝ իր հաջողություններից։

Ապրիլին նա արդեն իսկական դահուկավոր եր դարձել — անխոնջ, խիզախ, կոփված։ Նա առանց հանգստանալու կարող եր անցնել յերկու տասնյակ կիլոմետր ճանապարհ։

Ձմռան մի յերեկո, գրադարանում, ուր հաճախում եր Ռուալդը, վորպեսզի ժուռնալներում կարդա տեղի ունեցած իրադարձությունների մասին, նա հանկարծ մի ժուռնալում տեսավ մի հոդված՝ «Դահուկներով Գրենլանդիայի վրայով»։

Ռուալդի ձեռները դողացին։ «Գրենլանդիա։ Դահուկ։ Ահա թե նա ուր կգնար ուրախությամբ»։ Նա հուզմունքով սկսեց կարդալ հոդվածը. Յերիտասարդ գիտնական Ֆրիտյոֆ Նանսենն ուզում է դահուկներով կտրել-անցնել Գրենլանդիայի սառցադաշտերը։ Նավով նա կգնա մինչև այդ մեռյալ կղզու արևելյան ափերը, նավակով կանցնի

լողացող սառույցների միջով, վորոնք շրջապատում են ափերը, կբարձրանա վողջ Գրենլանդիան ծածկող սառցադաշտերի վրա և նրանց վրայով, Գրենլանդիայի միջով, կանցնի մինչև նրա արևմտյան ափերը, մինչև Գոտգոբ ավանը։

Ռուալդը մի քանի րոպե նստած եր շշմած։ Ա՜յ, սա ճանապարհորդություն է, հա՛։ Մինչդեռ ինքը, Ռուալդը դեռևս յերազում է հեռավոր յերկրների մասին, նրա հայրենակից Նանսենն արդեն պատրաստվում է դահուկներով անցնել անմատչելի, անհայտ Գրենլանդիայի վրայով։

«Ո՞վ է Նանսենը»։

Հոդվածում վոչ մի խոսք չկար այդ մասին. այնտեղ գրված եր նրա ծրագրի մասին։ Ռուալդը դիմեց գրադարանապետին.

— Ասացեք, խնդրեմ, վորտե՞ղ, ինչ ժուռնալում յես կարող եմ կարդալ Նանսենի մասին։

Գրադարանապետն ուշադրությամբ նայեց Ռուալդին և ժպտաց։

— Ահա թե ինչ. ձե՞զ էլ գրավեց նա։ Դո՞ւք էլ եք ուզում նրա արշավանքին մասնակցել։

Ռուալդը հուզմունքից շիկնեց. գրադարանապետը կռահեց նրա թանկագին գաղտնիքը, — նա իրոք վոր դեմ չի Նանսենի հետ գնալուն… Սակայն նա բարձրաձայն պատասխան տվեց.

— Դժբախտաբար, յես դեռևս այնքան չեմ մեծացել, վոր կարողանամ այդպիսի մի ճանապարհ անցնել։

Գրադարանապետը ցածրացրեց ձայնը.

— Այստեղ ափսոսալու բան չկա։ Նանսենը խելագար ձեռնարկում է սկսել, կարդացեք, ահա՛։

Գրադարանապետը Ռուալդին տվեց հումորիստական մի բարակ ժուռնալ և մատով ցույց տվեց եջը։

Ռուալդը կարդաց.

«Այս տարվա հունիս ամսում լաբորանտ Նանսենը պետք է մի նշանավոր ներկայացում տա, դահուկներով

վազք՝ Գրենլանդիայի մայր ցամաքի վրա։ Հասարակության համար տեղ ե սարքված սառցադաշտերի ճեղքվածքների մեջ։ Վերադարձի տոմս վերցնելն ավելորդ ե»։

Իսկ թերթում տպված նկարն այսպես եր. սառցալեռների մեջտեղն ընկած եր վոտներին դահուկ կապած յերկարավուն մի մարդ. նա սառել եր, նա թաղվում եր ձյան մեջ...

Ռոալդը հոնքերը կիտեց։ Այս ծաղրը վիրավորեց նրան։ Նա ժուռնալը վերադարձրեց գրադարանապետին և խստորեն ասաց.

— Յես կուզեյի կարդալ վորևե լուրջ բան այս մասին։

— Ձեզ, ինչպես տեսնում եմ, դուր չի գալիս ծաղրը։ Գրադարանապետը նորից ժպտաց։— Սակայն, նկատի ունեցեք, Նանսենի մտադրությունը նման ե խելագարության։ Դրա համար ել ո՞վ լուրջ բան կգրի այդ մասին։ Ի միջի այլոց, կարող եք կարդալ ահա այստեղ և այստեղ։

Գրադարանպետը տվեց Ռոալդին յերկու լրագիր։ Ո՞վ ե Նանսենը։ Յերիտասարդ գիտնականն ապրում ե Բերգենում։ Ահա թե ինչ. նա արդեն ուղեկիցներ ե հավաքում։ Նրան հարկավոր են յերեք մարդ՝ բևեռային ճանապարհորդության վարժված և գիտականորեն պատրաստված։ «Կարելի յե գրել նրան» շտապ մտածեց Ռոալդը, և հենց միայն այս մտքից սառեցին նրա ձեռները։

Սակայն իսկույն նրա գլխում մի միտք ծագեց. նա դեռևս տասնևհինգ տարեկան ե, յերբեք չի ճանապարհորդել նույնիսկ ծովի վրա, ուր մնաց թե ճանապարհորդի բևեռային յերկրներում։

Յեվ սկսեց զայրանալ ինքն իր վրա, թե ինչու նա այդքան յերիտասարդ եր և անփորձ։

Այդ յերեկո Ռոալդը գրադարանում մնաց մինչև փակվելը։ Նա կարդաց բոլոր թերթերն ու պարբերականները, վորոնց մեջ խոսվում եր Նանսենի մասին։ Նա տեսավ, թե վորքան շատ մարդիկ կան, վոր քիչ են հավատում Նանսենի մտադրություններին։ Ռոալդը բար-

Ժուռնալներում յերեվացին Նանսենի նկարները։

կանում էր այդ մարդկանց վրա. Նա փնտրում ու գտնում էր միայն այն հոդվածները, վոր քաջալերում ու խրախուսում էին Նանսենին։

Յեվ այդ որից նա սկսեց լարված կերպով հետևել Նանսենի բոլոր պատրաստություններին։ Լրագրերում լուրեր յերևացին։ Նանսենը գտել էր յերեք ուղեկից,— վորոնք նույնպես նորվեգացի յեն։ Դրանք են՝ կապիտան Սվերդրուպը, լեյտենանտ Դիտրիխսենը և յերիտասարդ գյուղացի Տրանը։ Նրանց հետ գնում են և յերկու լապլանդացի։

Ապրիլյան մի պարզ որ Քրիստիանիան ճամբու դրեց Նանսենին և նրա ուղեկիցներին։ Ամբողջ ծովափը լեցված էր զուգված ամբոխով։ Նավահանգստում նավը զարդարված էր տարբեր գույնի դրոշակներով։ Նանսենը գլխաբաց անցավ պատի պես կանգնած ամբոխի միջով։ Ռոալդը կանգնած էր կամրջակի մոտ։ Անթարթ, ագահ աչքերով նա դիտում էր անվեհեր ճանապարհորդին։ Նա խլացնող ձայնով ուռա էր կանչում ու թափահարում գլխարկը։

Յերբ շոգենավը հեռացավ, ամբողջ նավահանգստում սկսեցին սուլել շոգենավերի շչակները և կայմերի վրա սկսեցին ծածանվել դրոշներ՝ «բարի ճանապարհ»։ Բերդի պատերից վորոտաց թնդանոթային համազարկը։ Հսկայական ամբոխը ծովի ափին թափահարում էր գլխարկները, թաշկինակները՝ վողջունելով ճանապարհորդներին։

Ահա շոգենավն անցավ ամրոցի հին պարսպի մոտից, կախովի կամրջի կողքով, թաքնվեց ջրանցքի շրջապտույտի յետև, ծողովուրդն սկսեց ցրվել։ Ռոալդն ամենից վերջը հեռացավ ծովափից։

Յեվ այդ որից ամեն առավոտ նա ագահորեն հետևում էր թերթերին, թե «լուր չկա արդյոք Նանսենի մասին»։

Լուրերն աղքատ ու ժլատ էին։ Նանսենը ժամա-

նեց Կոպենհագեն։ Նանսենը մեկնեց Շոտլանդիա։ Նանսենը գնում է Իսլանդիա, վորպեսզի նստի «Յագոն» նավը, վորը նրան պիտի հասցնի Գրենլանդիայի արևելյան ափը։ Հունիսի սկզբում թերթերում տպված էր վերջին հեռագիրը՝ «Նանսենն ու նրա ուղեկիցները նստեցին «Յագոն» նավը և ուղևորվեցին դեպի ովկիանոս»։ Այդ որվանից ամբողջ յերկու ամիս վոչ մի տեղեկություն չեկավ։ Ամառը տանջալից անցավ Ռոալդի համար։ Նա անհամբեր լուրերի յեր սպասում, բայց լուրեր չկային ու չկային։ Վերջապես, սեպտեմբերին, թերթերը տպեցին կարճ հաղորդագրություններ՝ «Դեռևս հուլիսի կեսերին Նանսենն ու իր ուղեկիցները յերկու նավակով «Յագոն»-ից ուղևորվեցին Գրենլանդիայի ափերը՝ լողացող սառույցների արանքով»։

Իսկ մի ամսից հետո յեկավ նոր լուրը՝ «Նանսենի էքսպեդիցիան բարեհաջող կերպով դահուկներով անցավ Գրենլանդիայի սառցադաշտերի միջով և մնաց ձմեռելու արևմտյան ափին, Գոտգոբ ավանում, ուր նավերը մուտք են գործում միայն ամռանը»։

Ռոալդն այս լուրը կարդաց թերթում առավոտյան դպրոց գնալիս՝ ճանապարհին։ Նա ուզում էր վերադառնալ տուն, ուզում էր այս մեծագույն դեպքի մասին հայտնել իր մորը, սակայն տուն գնալ՝ նշանակում է դասից ուշանալ։ Վոչ, վոչ։ Նա վազեց դպրոց և լրագիրը թափահարելով ներս ընկավ դասարան։

— Նանսենն անցել է Գրենլանդիան, ուռա...

ՀԵՐՈՍԸ

Նորվեգիական բոլոր թերթերում ու պարբերականներում հանդես եկան գովասանական հոդվածներ։ Ռոալդն ամեն որ յերեկոյան նստում էր գրադարանում մինչև փակվելը։ Այն նույն գրադարանապետը, վոր մի քանի ամիս առաջ ծիծաղում էր Նանսենի վրա, այժմ ասում էր շողոքորթաբար՝

— Նանսե՞նը։ Ո՜, այո. Նանսենը մեր հերոսն է։

Յեվ այն թերթերում, ուր մի ժամանակ հայհոյում եյին Նանսենին, այժմ գովերգում եին նրան։

Ժուռնալներում յերևաց Նանսենի և իր հարազատների՝ հոր ու մոր նկարները և այն տնակի նկարը, վորի մեջ նա ապրել եր, այն դպրոցը, ուր նա սովորել եր։ Ահա պատանի Նանսենը։ Շիկահեր, զգեստը նույնը, ինչպես հագնում են Նորվեգիայի բոլոր յերեխաները և ինքը՝ Ռոալդը հագել եր տաս տարի շարունակ։ Նանսենը հրապուրվեց ձկնորսությամբ։ Յերեխաներից ով չի սիրում ձկնորսությամբ զբաղվել։ «Մի անգամ փոքրիկ Ֆրիտյոֆը գնացել եր ծովափ ձուկ վորսալու։ Որը շատ հաջողակ եր, շատ վորս արավ, և շուտով նրա զամբյուղը լցվեց տասնյակ մեծ ձկներով։ Ֆրիտյոֆը կարթը շպրտելիս շտապեց և կարթաթելն այնքան անհաջող թափահարեց, վոր կեռիկը մտավ նրա վերին շրթունքի մեջ։ Անտանելի ցավը ստիպեց նրան յերկու ձեռքով բռնել կեռիկը։ Նա փորձեց դուրս քաշել կեռիկը, սակայն այն պինդ եր մտել. այն ժամանակ Ֆրիտյոֆը կեռիկը շրթունքին վազեց տուն։ Արյունը վողողել եր նրա վողջ զգեստը։ Մայրը դիմավորեց նրան վախի աղաղակով.

— Ի՞նչ է պատահել քեզ, զավակս։

— Իմ շրթունքի մեջ կեռիկ է մտել,— աշխատելով հանգիստ լինել, պատասխանեց Ֆրիտյոֆը։

Մայրն աշխատեց ձեռքով դուրս քաշել կեռիկը, բայց դուրս չեր գալիս։ Այն ժամանակ մայրը վերցրեց մի սուր դանակ, կտրեց շրթունքի կաշին և դուրս քաշեց կեռիկը։ Վո՛չ Ֆրիտյոֆը, վո՛չ մայրը վոչ բղավեցին և վոչ լաց յեղան, կարծես թե նույնիսկ չանհանգստացան»։

«Լա՞ց կլինեյի յես, յեթե ինձ հետ պատահեր այդ,— ինքն իրեն հարցրեց Ռոալդը։— Դե՛, իհարկե, լաց կլինեյի։ Իսկ մայրիկը ... Նա սարսափից սուգ ու շիվան կաներ»։

Թերթերն ելի շատ բան եյին գրում.— մանկության

ու պատանեկության տարիներին Նանսենը հրապուրվեց դահուկով, վորսորդությամբ, ձկնորսությամբ։ Նա կարող է դահուկով այնպես գնալ, վոր դժվար թե մեկը նրան հասնել կարողանա։ Նա վարժեցրել, կոփել է իրեն՝ մշտական վարժություններով։

Այս բոլորը հենց այն եր, ինչ կատարում եր նաև Ռոալդը։

Ռոալդը շատ գոհ եր, նա ճիշտ ուղիով եր գնում։ Կգա ժամանակ, վոր նա ել այդպիսի մեծ ճանապարհորդություն կկատարի բևեռային յերկրներում,— և թերթերն ու ժուռնալները նրա մասին նույնպես կգրեն։ Յեվ ամբողջ Նորվեգիան նույնպես կպարծենա նրանով, ինչպես պարծենում եր Նանսենով։

Ապրիլ ամիսն անցավ աննկատելիորեն։ Յերկիրը պատրաստվում եր դիմավորելու Նանսենին։ Յեվ ահա, հասավ ժամանակը. Քրիստիանիայի բոլոր բնակիչներն առավոտից ուղևորվեցին նավահանգիստը։ Ծովախորշի ափերը, հին բերդի պարիսպները, ջրանցքի վրայի կախովի կամուրջը լեփ-լեցուն եյին ժողովրդով։ Հարյուրավոր շոգենավեր և հազարավոր նավակներ գնացին դիմավորելու այն շոգենավին, վորով գալիս եյին Նանսենն ու իր ուղեկիցները։

Ռոալդն ու իր յերեք ընկերները նավակով գնացել եյին ծովի ավելի հեռուները։ Նրանցից առաջ անցան միայն շոգենավերը և մեծ նավերը։ Հեռվում սպիտակին տվեց այն շոգենավը, վորին սպասում եյին։ Շոգենավերը յերեք անգամ սուլեցին, բոլոր կայմերի վրա սկսեցին ծածանել զանազան գույնի դրոշակներ՝ «Բարի գալուստ»։ Ռոալդն աչքերը սևեռեց շոգենավին։ Այնտեղ, բակի վրա, ազդանշանային զանգակի կողքին կանգնել եյին վեց հոգի։ Զորսը բարձրահասակ մարդիկ եյին, իսկ յերկուսը՝ կարճահասակ։ Ռոալդի նավակը կանգ առավ նավի ճանապարհին։ Մոռանալով, վոր պետք է ուղղել առագաստը և ղեկը, յերեխաները կատաղությամբ բղա-

Ամենից հետևը կանգնած էր Նանսենը:

վում էին, թափահարում գլխարկները։ Շոգենավի վրայից վեց հոգին խոնարհվելով բարևեցին նրանց։ Ամենից հետևը կանգնած էր Նանսենը։— Ռոալդը իսկույն ճանաչեց նրան։ Նանսենն ազատ շարժումով բարձրացրեց գլխարկը։

— Նրանց հետ կանայք կան, — ասաց Պետերսենը, վոր նստած էր ղեկի մոտ և ցույց տվեց Նանսենի փոքրիկ ուղեկիցներին։

— Դրանք կանայք չեն։ Դրանք լապլանդացիներ են, Բալտոն և Ռավնոն,— պատասխանեց Ռոալդը (նա արդեն թերթերից ու ժուռնալներից գիտեր ճանապարհորդներից յուրաքանչյուրին)։

Շոգենավը դանդաղորեն մոտեցավ նավակայանին։ Նավակներն ու նավերը յերկար պոչերով հետևեցին նրան։ Բերդի պարիսպից վորոտացին թնդանոթային կրակոցներ,— ողջույնի համազարկը։ Ծովափին գտնված հազարավոր ամբոխը հերգեր էր յերգում, ուռա յեր կանչում։ Ռոալդն ամբողջ ուժով թիավարելով, աշխատում էր յետ չմնալ շոգենավից և եքստազի մեջ ընկած յերգում էր։

Մինչև խոր գիշեր հոծ ամբոխը կանգնած էր այն տան առաջ, վորտեղ իջել էր Նանսենը։ Ռոալդն ամբոխի մեջ էր գտնվում։ Հենց վոր Նանսենը յերևում էր փողոցում, նրան դիմավորում էին բարձրաղաղակ ուռաներով և յերգերով։ Ժողովրդի աչքում Նանսենն իսկական հերոս էր։

ԲԵԿՈՒՄ

Դանդաղ էին անցնում Ռոալդի ուսանողական տարիները։ Նա ուսումնասիրում էր բժշկությունը։ Սակայն այդ աշխատանքը չէր նրա գլխավոր նպատակը։ Այդ միայն մայրն էր ուզում, իսկ ինքն առաջվա նման գաղտնորեն պատրաստվում էր, վորպեսզի բևեռային հետազոտող դառնա։ Ամբողջ ձմեռը—նոյեմբերից մինչև ապրիլ ամիսը—նա ոգտագործում էր յուրաքանչյուր ազատ ժամը, վորպեսզի դահուկով ման գա և դահուկային սպորտում նա անսովոր հաջողություններ ձեռք բերեց. որական հեշտությամբ անցնում էր հիսուն կիլոմետր, կարող էր բարձրանալ լեռներ։ Դահուկային վազքում նա առաջինն էր։ Ամռանը Ռոալդը հրապուրվեց թիավարությամբ և ֆուտբոլով,—այդ ձևերով նա ամեն կերպ ամրացնում էր իր առողջությունը, իսկ գիշերն անց էր կացնում բևեռային ճանապարհորդությունների մասին յեղած գրքերի ուսումնասիրությամբ և սովորում էր օտար լեզուներ, վորոնք նրան վաղ թե ուշ պետք պիտի գային, նրանց կարիքը պիտի զգար։ Նա խոսում էր գերմաներեն, ֆրանսերեն և անգլերեն։

Այսպես անցավ նրա ուսանողական կյանքի յերկրորդ տարին։ Մնաց էլի յերեք տարի, յերբ նա կավարտի համալսարանը, կստանա բժշկի դիպլոմ և այն ժամանակ, այն ժամանակ… Նա իր մորը կասի ճշմարտությունը։ Իսկ այժմ ինչու նրան անհանգստացնել։ Չէ՞ վոր այդքան շուտ չի գնա բևեռային յերկրները։ Նա դեռևս յերիտասարդ է, փորձ չունի, գիտություն չունի, դեռևս բավարար չափով չի կոփված։

Իսկ Նանսենը… Յեթե այդպիսին լինե՜ր, ինչպես Նանսենը։

Դրանք լապլանդացիներ են՝ Բալտոն յեվ Ռավնոն:

Այդ ժամանը նորվեգական թերթերը նորից խոսեցին Նանսենի մասին։ Վերջինս պատրաստվում էր նոր, խիզախ արշավանքի. այս անգամ, արդեն, դեպի հյուսիսային բևեռը։

Դեպի բևեռ։ Դեպի բևեռ։ Սա հենց այն է, որի մասին երազում էր Ռոալդը։ Նանսենը կառուցում է չտեսնված ձևի մի նավ։ Նավը չի ունենա վողնուց, իսկ հատակը սեպի ձև կունենա։ Երբ բևեռային սառույցները կճնշեն այն, նավը վերև կբարձրանա՝ սառույցների վրա և ոչ թե կճզմվի նրանցից, ինչպես ճզմվեց, խորտակվեց հռչակավոր «Ժաննետա» նավը։

Ռոալդն արդեն կարդացել էր «Ժաննետա»-յի ճակատագրի մասին։ Այդ նավը խրվել էր Արևելյան Սիբիրի սառույցների մեջ, նավակազմը լքել էր այն, սառույցները քշել-տարել էին դեպի բևեռը, ճանապարհին ջարդ ու փշուր արել և նրա բեկորները հինգ տարուց հետո դուրս էին նետվել Գրենլանդիայի արևմտյան ափերի վրա։

Գրենլանդիայի ափերին՝ նավի բեկորների հետ միասին՝ ընկած էր և նավաստի Լյուի-Նարի շալվարը։ Շալվարը նույնպես լողալով անցել էր բևեռի մոտով։

Ի՞նչպես է գնում հոսանքը Հյուսիսային Սառուցյալ օվկիանոսում։ Սիբիրի վրայից դեպի Գրենլանդիայի ափերը։ Արդեն վաղուց բևեռային ճանապարհորդները նկատել էին, թե ինչպես սիբիրյան բազմաթիվ սոճիներ, լեղենիներ և խեժափիճիներ լող էին տալիս Գրենլանդիայի ափերին։ Այս ծառերն օվկիանոսն էին բերում Սիբիրի գետերը—Օբը, Ենիսեյը, Լենան. օվկիանոսում սառցային հոսանքները շրջապատում էին այդ ծառերը, և քշելով բևեռի վրայով, դուրս էին շպրտում Գրենլանդիայի ափերը։

Նանսենը վորոշեց իր նավով նույն ճանապարհով գնալ, ինչպես գնացել, քշվել-տարվել էին սիբիրյան սոճիները, «Ժաննետա»-յի բեկորները և նավաստի Լյուի-Նարի շալվարը։ Նա կթագնվի, կպահվի նավի մեջ (սա-

Դահուկային վազքում Ռոալդը առաջինն էր։

ռույցների մեջ) և սառույցների հետ կլողա հյուսիսային բևեռից դեպի Գրենլանդիայի ափերը։

Նանսենի խիզախ պլանը ցնցեց Ռոալդին։ Ահա թե ինչպես պետք է աշխատել ու մտածել։ Խիզախություն, հայացքի լայնություն, սրամտություն։ Այսպիսի աննշան դեպքերի մասին, ինչպիսին են՝ նավաստու շալվարի և նավի բեկորների յոլ տալը՝ բևեռի մոտով, կարդացել էին հազարավոր մարդիկ, և ինքը՝ Ռոալդն էլ էր կարդացել, բայց այդ աննշան դեպքը Նանսենի մեջ միտք էր հղացրել՝ լողալ սառույցի հետ՝ բևեռի վրայով։

Ռոալդը նորից կարդաց այն բոլոր թերթերը և ժուռնալները, ուր գրվել էր Նանսենի մասին։

Աշնանը ավարտվեց նավի կառուցումը և նավը ծովը դուրս բերվեց։ Նավի անունը դրին «Ֆրամ», որ Նորվեգերեն նշանակում է՝ հառաջ։

Հառաջ սառույցների միջով՝ դեպի հյուսիսային բևեռ։

Նանսենը մեկնեց Անգլիա։ Նրան անհրաժեշտ էր իմանալ, թե ինչ են ասում իր պլանի մասին մասնագետները։ Ռոալդը մտքով նրա հետ մեկնեց այնտեղ։ Լոնդոնի աշխարհագրական ընկերության մեջ՝ բազմաթիվ բևեռային ճանապարհորդների ներկայությամբ՝ Նանսենը զեկուցում տվեց։ Յեվ... Նանսենի պլանը մերժվեց։ Ծովակալ Ներսն ուղղակի ասաց.

— Հյուսիսային բևեռին հասնել չի կարելի։

Նանսենին համարեցին խիզախ վիկինգ*), սակայն անգլիացիները չուզեցին հավատալ նրա պլանին։

Ռոալդը վրդովվեց. ի՞նչպես կարելի է չհավատալ։ Նրան ամեն ինչ պարզ, հստակ, սրամիտ էր թվում։ Թերևս, անգլիացիները նախանձից չէին ուզում հավատալ։

Նա պակաս չէր տանջվում, քան ինքը՝ Նանսենը։ Նա վախենում էր, թե չլինի հանկարծ Նանսենը հրաժարվի իր պլանից։ Այն ժամանակ... այն ժամանակ ինչ պի-

---

*) Վիկինգ կոչվում էին Սկանդինավիայի այն ազնվականները և ծովագնացները, վորոնք միջին դարերում արշավանքներ էին գործում մյուս յերկրների վրա և հասնում էին Յեվրոպայի խորքերը։

տի անել։ Այն ժամանակ Ռոալդն ինքը կկենսագործի այդ։ Ինչ գեղեցիկ է այդ նավով լողալ բևեռի վրայով։

Համենայն դեպս, Լոնդոնի աշխարհագրական ընկերության մեջ յեղած խոսակցությունները չխռովեցին Նանսենին։ Նա վերադարձավ Նորվեգիա և նոր յեռանդով սկսեց նախապատրաստվել։ Ինչ էլ ուզում է լինի, նա իր պլանը մինչև վերջ պիտի տաներ։

«Ֆրամ»-ի մեկնումը նշանակված էր հունիսի քսանչորսին՝ Հովհաննեսի տոնի օրը։ Այդ օրը Նորվեգիայում համարվում էր ժողովրդական տոն։ Դեռևս իրիկնամուտին Ռոալդը տնից յեկավ այնտեղ, Լյուզաքերի ծովածոցը, ուր կանգնած էր «Ֆրամ»-ը։ Նա ման էր գալիս ծովափին ու մանրամասն դիտում էր նավը։ Ափսոս վոր նա յերիտասարդ էր և անփորձ, ապա թե վոչ Նանսենի հետ կմեկներ։

Գիշերն սկսվեց տոնակատարությունը։ Բոլոր լեռների իրա վառվեցին խարույկները, սկսվեցին յերգերը։ Յերիտասարդներն ու ծերերը պարում ու յերգում էին, իսկ Ռոալդը տխուր թափառում էր ուրախացող մարդկանց միջև։ Ինչու թաքցնել։ Նա նախանձում էր։ Նա նախանձում էր նրանց, ովքեր առավոտյան «Ֆրամ»-ով մեկնելու յեն դեպի հյուսիսային բևեռ։

Յեկավ և Հովհաննեսի օրը։ Առավոտից անձրև էր մաղում։ Սակայն Լյուզաքերի ծովածոցի ափերը լեփ-լեցուն էր ժողովրդով։ Նանսենը դուրս յեկավ իր տնից։ Նրան ուղեկցում էր իր կինը՝ փոքր աղջիկը գրկած։ Յետևից գալիս էր ամբոխը, վորի մեջն էր և Ռոալդը։ Նանսենը նստեց փոքրիկ նավը և սլացավ դեպի «Ֆրամ»։ Ամոխը հիացմունքով ուռա յեր կանչում և թափահարում գլխարկներն ու թաշկինակները։ Նավահանգստում նվագում էր յերաժշտախումբը։ Ահա նավը կանգ առավ ծովածոցում՝ «Ֆրամ»-ի կողքին։ Նանսենը դուրս յեկավ նավի տախտակամածը։ «Ֆրամ»-ը զարդարվեց դրոշակներով և ծովածոցից դուրս յեկավ դեպի բաց ծովը։ Մանր անձրևի շը-

ղարշը շուտով նավը ծածկեց ժողովրդի աչքից։ Ռոալդը դեռևս յերկար նայում էր գորշ, անորոշ հեռուն։

Նա տուն վերադարձավ տխուր, մռայլ։ Քանի տարի պիտի սպասի դեռևս։ Յերկու տարի, յերեք, չորս։

Սրտնեղած նա դռան զանգը տվեց։ Յերկար ժամանակ չբացեին դուռը։ Նա սպասում էր. հիմա շուտ կգա սողնակը և դռան առաջ կերևա մայրը, քանի վոր գրեթե միշտ նա էր դիմավորում։ Սակայն դուռը բացվելով, յերևաց հասակավոր մի կին, հարևանուհի Մարթան։ Ռոալդը զարմացավ. Մարթան շատ քիչ էր լինում նրանց մոտ։

— Իսկ ո՞ւր է մայրիկը, — զարմացած հարցրեց Ռոալդը։

Մարթան շփոթվելով ցածր ձայնով պատասխանեց.

— Մայրդ պառկած է։

Ռոալդն շտապ հանվեց և վազեց մոր սենյակը։ Մայրը պառկած էր՝ աչքերը փակած։ Նրա դեմքը վառվում էր. գլխավերևը նստած էր բժիշկ Լևին՝ իրենց հարևանը։ Նա նշան արավ Ռոալդին, վոր լռի։

Ռոալդը փսփսալով հարցրեց.

— Ի՞նչ է պատահել։

Բժիշկը կամացուկ պատասխանեց.

— Դրությունը շատ լուրջ է։

Նա բռնեց Ռոալդի ձեռքից, տարավ հարևան սենյակը և ասաց.

— Հավանաբար, նա վաղուց է հիվանդ յեղել, բայց հաղթահարել է։ Այժմ հիվանդությունն իսկույն ընկճել է նրան։

Ռոալդը սղմեց ատամները և վոչինչ չասաց։ Իսկապես, նա նկատել էր, վոր մայրը կարծես թե հիվանդ է։ Մայրը նրա հետ քիչ էր խոսում, վերջին օրերը միշտ փակվում էր իր սենյակում, իսկ ինքը շարունակ զբաղված լինելով գրքերով ու իր մտքերով՝ չէր նկատում, թե ինչպես էր ապրում մայրը։

Նա նորից վերադարձավ մոր սենյակը։ Մայրն առաջվա նման պառկած էր աչքերը փակած, վառվող դեմքով։ Մր-

ռալդ բժիշկ Լևին թեքվեց նրա վրա, շփեց նրա կոպերը, խեթ նայեց Ռոալդին, գլուխն օրորեց, կարծես թե ուզում էր ասել՝ «դրությունը բոլորովին վատ է»։ Ռոալդը նստել էր մահճակալի մոտ՝ մոր վոտների տակ։ Նա նայում էր բութ կերպով, կարծես շշմած լիներ, կարծես թե չէր հասկանում, թե ինչ էր կատարվում։ Մահճակալի մոտ ելի յերևացին մի քանի կանայք։ Նրանք հարևանուհիներ եյին. թերևս նրանք լսել եյին տխուր լուրը և փսփսալով եյին խոսում։ Բժիշկ Լևին բռնեց Ռոալդի ձեռքից և տարավ հարևան սենյակը, իսկ այնտեղ, դռան առաջ, արդեն կանգնել էր Ռոալդի յեղբայր Լեոն, նրա կինը և ինչ վոր մարդիկ։ Բոլորը լռությամբ բարևեցին Ռոալդին։ Նրանք խոսում եյին փսփսալով։

Ռոալդը մոտեցավ պատուհանին։ Ամառային գիշերը լի էր ահավոր լռությամբ, կարծես թե նա էլ անհամբեր սպասում էր՝ կմեռնի՞, թե չի մեռնի Ռոալդի մայրը։

Մայրը մեռավ առավոտյան դեմ։

ԱՌԱՋԻՆ ՓՈՐՁՈՒԹՅՈՒՆԸ

Մոր մահը շշմեցրեց Ռոալդին։ Մոր թաղումից հետո յերկու շաբաթ շարունակ նա շշմածի նման էր ման գալիս։ Նա ամայություն էր զգում իր շրջապատում։ Կար մի մարդ, վոր հոգ էր տանում նրա մասին, սիրում էր նրան, — այժմ մեն-մենակ էր մնացել աշխարհում։ Դատարկ սենյակները ճնշում եյին նրան։ Նրա ձեռքը գործին չէր կպչում՝ բան անելու, սակայն ուժեղ կամքը և սովորությունը նրան համառորեն աշխատանքի եյին քաշում։

Այժմ արդեն հարկավոր չէ վոչ վոքից թաքցնել իր յերազները. կարելի է լրիվին նվիրվել հիմնական աշխատանքին, ուղիղ գնալ դեպի առաջադրած նպատակը։ Յեվ Ռոալդն անմիջապես դիմում տվեց համալսարանին, վոր նա դադարեցնում է իր պարապմունքները։

Նա իրեն ազատ էր զգում։ Կարող էր գնալ, ուր վոր ցանկանար։ Բայց վո՛չ։ Նրան դեռ սպասում էր գին-

վորական ծառայությունը։ Ինչպես իր հասակի բոլոր յերիտասարդ մարդիկ, նա նույնպես պիտի յենթարկվեր զինապարտության։ Քանի դեռ ուսանող եր, նրան տարկետում եյին տվել, իսկ այժմ պետք ե ծառայեր։

Ռոալդն ուրախ եր, վոր զինվորական ծառայության եր գնում. այստեղ, զորաշարքում, ինչպես հարկն ե, կփորձեր իրեն, թե ուժե՞ղ ե ինքը, տոկու՞ն ե արդյոք, թե կարո՞ղ ե լավ զինվոր դառնալ։

Նորվեգիայում այդ ժամանակ զինվորական ծառայությունը տևում եր ընդամենը մի քանի շաբաթ, հետևաբար չեր կարող Ռոալդին յերկար ժամանակ կտրել հիմնական նպատակից։ Նա մեծ պատրաստակամությամբ զորակոչի գնաց. միայն մի թերություն խռովեց նրան. արդեն վաղուց նկատել եր, վոր մշտապես կարդալուց նրա աչքերն սկսել եյին փչանալ։ Նա դիմեց բժշկին, վորը կարճատես դուրս բերեց նրան և խորհուրդ տվեց ակնոցներ դնել։

Սակայն Ռոալդը հրաժարվեց ակնոցներ կրելուց և հույս ուներ, վոր տեսողությունը կլավանա։ Զինվորական ծառայության ընդունելու ժամանակ նրան մանրամասն կքննեն, յերևան կհանեն կարճատեսությունը և, կարող ե պատահել, վորակեն վոչ պիտանի։

Այս բանից Ռոալդը շատ եր վախենում։

Նշանակված ժամին Ամունդսենը յերիտասարդ մարդկանց բազմության հետ գնաց զինվորական վարչություն, ուր տեղի յեր ունենում բժշկական հանձնաժողովի նիստը։ Մի մեծ սենյակում յերիտասարդ մարդիկ բոլորովին հանվեցին, մերկացան և այդ դրությամբ հերթի կանգնեցին գլխավոր բժշկի սեղանի մոտ։ Գլխավոր բժիշկը և նրա յերեք ոգնականները մանրամասն քննեցին այդ մարդկանց՝ մեկը մյուսի յետևից։ Ամունդսենը սրտի բաբախյունով մոտեցավ բժշկի սեղանին։ Այժմ կվճռվի նրա բախտը։

Գլխավոր բժիշկը քննեց նրան վոտից մինչև գլուխ և հանկարծ վեր կացավ։

— Շուռ արի, յերիտասարդ, — ասաց նա Ամունդսենին։

Նա իսկույն շուռ յեկավ։

Բժիշկը գովեստներ եր շռայլում՝

— Հիանալի յե, հիանալի, յերիտասարդ։ Ինչպիսի՜ հոյակապ մկաններ, ինչպիսի՜ գերազանց կազմվածք։

Նա մատներով խփեց Ռոալդի ձեռներին ու վոտներին. նրանք ամուր եյին, ինչպես յերկաթ։ Ավագ բժիշկը մի քանի անգամ շուռ յեկավ նրա շուրջը՝ հրապուրվելով նրա ուժեղ կազմվածքից։ Վերջապես նա հարցրեց

— Յերիտասա՛րդ, ի՞նչ ձևով ձեզ հաջողվեց զարգացնել այսպիսի մկաններ։ Ամեն տարի իմ առջևից անցնում են հազարավոր նորակոչիկներ, բայց յես յերբեք չեյի տեսել այսպիսի հոյակապ կազմվածք։

Ամունդսենը պատասխանեց.

— Յես շատ եմ զբաղվել ֆիզիկական վարժություններով։

— Յեվ վաղո՞ւց ե, վոր զբաղվում եք։

— Արդեն վեց տարի յե։

— Իսկ հատկապես ի՞նչ տեսակ ֆիզկուլտուրայով եք պարապում։

— Դահուկով, ֆուտբոլով, թիավարումով, հետիոտն զբոսանքով։

Ավագ բժիշկը մոտեցավ այն դռանը, վոր տանում եր հարևան սենյակը և ձայն տվեց.

— Խնդրե՛մ, պարոններ; յեկեք հրաշք տեսեք։

Դռնից ընդունարան մտան յերկու սպա։ Ավագ բժիշկը ցույց տվեց Ամունդսենին. Նայեցե՛ք, ահա մի մարդ, վոր ինքն ե իրեն հսկա դարձրել։

Յեր ու սպաները մոտեցան Ամունդսենին, դիտեցին, և գովասանքներ շռայլեցին։ Բժիշկը մոռացավ քննել նրա աչքերր և Ամունդսենն ընդունվեց զինվորական ծառայության։

Եռանդով զբաղվեց զինվորական վարժություններով և մարմնամարզությամբ, պահակ կանգնեց, լեռներով չվերթներ կատարեց և այստեղ առաջին անգամ տեսավ, թե ինչպես շատ առաջ անցավ իր ընկերներից։

Նա վաշտում ամենից ուժեղն էր և ամենից տոկունը. հեշտությամբ էր տանում զինվորական կյանքի դժվարությունները։

Ծննդյան արձակուրդներին երիտասարդ զինվորներին բաց թողեցին տուն գնալու։ Զինվորական ծառայությունն Ամունդսենի համար փորձություն չէր։ Նա երազում էր այնպիսի դժվարությունների մասին, որոնք բևեռային ճանապարհորդների կրած դժվարություններին նման լինեին։

Այդ տարին դաժան ձմեռ եղավ՝ բուք ու սառնամանիք։ Ամունդսենն ավելի ուրախ էր. այդ ձմեռը հիշեցնում էր նրան բևեռային երկրների բուքն ու սառնամանիքը։ Ինչքա՜ն էր կարդացել այդ մասին։

«Ի՞նչ կլինի, եթե նման ձմռան ընկնեինք որևէ անապատ։ Ես ինչպե՜ս կզգայի ինձ արդյոք»։

Նա սկսեց մտածել. ինքը շատ ազատ ժամանակ ունի, կարող է որևէ տեղ գնալ այս երկու շաբաթում։ Բայց ո՞րտեղ։ Նորվեգիայում ո՞ւր կարելի չէ գտնել սառույցի անապատ։ Վա՜յ։ Հապա ինչ է Խանդանգերի սարահարթը։ Ինչո՞վ է նա տարբերվում անապատից։ Եթե այն կտրենք-անցնենք արևելքից դեպի արևմուտք, դա կլինի Գրենլանդիա, միայն թե հարյուր անգամ նրանից փոքր։

Նա արագորեն հիշեց այն բոլորը, ինչ որ լսել ու կարդացել էր այդ սարահարթի մասին։ Սարահարթը ծովի մակերևույթից բարձր էր գտնվում։ Այնտեղ շարունակ ցուրտ քամիներ են փչում, ոչ ոք երբեք այնտեղ չի եղել. միայն ամռանը հաճախ այնտեղ թափառում են հովիվները և որսորդները։ Համեմատելով բևեռային երկրների նկարագրությունն այդ սարահարթի նկարագրության հետ, Ամունդսենը նրանց մեջ ընդհանուր շատ

բան գտավ։ Անցնել սարահարթի վրայով՝ նշանակում է ճանաչել, իմանալ, թե ինչ է բևեռային ճանապարհը։ Բայց ինչպես մենակ գնալ այդ ճանապարհը։ Հարկավոր է հավատարիմ ընկեր, որ վտանգի րոպեին օգնության հասնի քեզ։ Ամունդսենը մտքումը վերհիշեց բոլոր ընկերներին։ Ո՞ւմ վերցնել։ Եվ հիշեց՝ որ զինվորների մեջ էր իր դպրոցական ընկերներից Իոհանսենը։ Նա ուրախ, խիզախ, ուժեղ մարդ էր։ «Ահա թե ում վերցնել։ Կասեմ իրեն» վճռեց Ամունդսենը։ Իոհանսենն իսկույն համաձայնեց։

Երկու բարեկամները մանրամասն պատրաստվում էին այս ճանապարհորդությանը. կարծես թե բևեռային ճանապարհորդության էին պատրաստվում։ Նրանք ունեին ամուր դահուկներ, դահուկափայտեր, եղջերվի մորթուց կարած քնելու պարկեր և ուղերթի պարկիկներ՝ պարենով լցված։ Այդ փոքր պարկերում ավելորդ բան չկար, այլ միմիայն անհրաժեշտ իրերը։ Նրանք ունեին շատ տաք հագուստ, բայց թեթև էին։

Ծննդյան տոնի արձակուրդի առաջին օրը երիտասարդ ճանապարհորդները Քրիստիանիայից դահուկներով ուղևորվեցին դեպի Մուգենի լեռնային փոքր կալվածքը, որ գտնվում էր սարահարթի արևելյան կողմը։

Երկրորդ օրը, երեկոյան, նրանք հասան այդ կալվածքը։ Սա մի փոքրիկ տնակ էր, որ ընկած էր սարահարթի հենց վերելքի ճամփին։ Տնակի առաջից՝ արևմտյան կողմից բարձրանում էր սարահարթը, իսկ կալվածքից ներքև, դեպի արևելք. ընկած էր հովիտը։ Հովտի հեռվում երևում էր անտառների կանաչ շրջագիծը և սևին էր տալիս փոքրիկ գյուղը։

Երիտասարդ ճանապարհորդներին դիմավորեց մի ծերուկ և նրանց առաջնորդեց դեպի տուն։ Ընդառաջ եկան ծերունու երկու որդիները, նրանց կանայք և մի պառավ՝ ծերուկի կինը։

Ամենքն էլ մեծ զարմանքով դիտեցին եկվորներին։

Ոչ ամառը և ոչ էլ ձմռանը, այստեղ չէին գալիս մարդիկ և տանտիրուհին սկսեց կասկածանքով նայել այս ճանապարհորդներին։ Ինչո՞ւ են եկել այս ջահելներն այստեղ այնպիսի ժամանակ, երբ դեպի կալվածքը ոչ մուտք կա և ոչ էլ ելք։

Ամունդսենը թույլտվություն խնդրեց գիշերելու։ Տանտերը նրանց հրավիրեց տուն։ Այդ տունը երկու սենյակ ուներ։ Շուտով օջախում սուրճ եփեցին, սեղան բաց արին և բոլորը ընթրիքի նստեցին։ Ծեր տանտերը, և՛ նրա որդիները, հատկապես կանայք, ուզում էին շուտով իմանալ, թե ինչ մտադրությամբ էին եկել այս երիտասարդ մարդիկ։

— Ո՞ւր եք ուզում գնալ,— հարցրեց վերջապես ծերունին։

Ամունդսենը պատասխանեց.

— Մենք ուզում ենք սարահարթից անցնել դեպի փոքրիկ Գարեն կալվածքը։ Դուք գիտե՞ք այդ կալվածքը։ Նա գտնվում է արևելյան կողմը, այստեղից հազիվ հարյուր կիլոմետր լինի։

Ծերունին և նրա որդիները ծիծաղեցին։ Նրանք կարծում էին, թե Ամունդսենը կատակ է անում։

— Ի՞նչպես կարելի է ձմեռը սառցասարերի վրայով անցնել, երբ այնտեղով, նույնիսկ ամառը, ոչ ոք չի անցնում։ Ո՛չ, դուք մեզ ճիշտ ասեք, ինչու՞ եք եկել այս կողմը։

— Ես ձեզ ճիշտ եմ ասում,— հոնքերը կիտելով, ասաց Ամունդսենը։

Ծերունին քննող հայացքով նայեց և գլուխը թափահարեց։

— Ի՞նչ է, դուք ձանձրացե՞լ եք կյանքից։ Դուք այնտեղ կմոլորվեք, կսառչեք և անդունդի մեջ կընկնեք։ Ես և իմ որդիները լավ ենք ճանաչում այդ տեղը, բոլոր մանրամասնություններով։ Նույնիսկ ամառը վտանգավոր է այնտեղ գնալը։

— Ինչ ուզում է լինի, մենք պիտի գնանք։

— Իսկ դուք ե՞րբ եք մտադիր այնտեղ հասնել։

— Ես կարծում եմ մենք ողջ սարահարթը կանցնենք երկու օրում։ Ձեր կալվածքից մինչև Գարեն կալվածքը հարյուր կիլոմետր է, մենք կարող ենք դահուկներով գնալ. այդ ճանապարհը մենք հեշտությամբ կանցնենք։

— Իսկ որտե՞ղ պիտի գիշերեք։

— Կգիշերենք ձյան վրա։ Մենք քնելու պարկեր ունենք։

Ծերունին գլուխը թափահարեց։

— Դե՛, դուք պարզապես ռիսկ եք անում։ Իհարկե, ցանկանում եմ, որ դուք հաջողությամբ կտրեք անցնեք այդ ճանապարհը, միայն թե հավատս չի գալիս։ Ահա թե ինչ կարող եմ ասել ձեզ. հենց սարահարթի կենտրոնում կա հովվի մի տնակ, գտեք այդ տնակը և գիշերեցեք այդտեղ։ Այնտեղ փայտ էլ կա. համենայն դեպս չեք սառչի։

Ծերունու որդիները և երեք կանայք լսեցին այս խոսակցությունը՝ վախեցած, կարծես թե իրենց առաջ խելագարներ էին կանգնած։ Ահա մարդիկ, կրթված ու դաստիարակված, երկուսն էլ առողջ ու ջահել, բայց պարզապես դեպի մահն են գնում։

Ընթրիքից հետո բոլորը գնացին քնելու։ Հյուրերին տեղ տվին բուխարիկի մոտ — ամենատաք ու պատվավոր տեղը. «Թող լավ քնեն... մահից առաջ»։

Երկու ընկերները որոշեցին՝ որքան հնարավոր է շուտ ճանապարհ ընկնել. սակայն առավոտյան, նախքան լուսանալը, սկսվեց բուքը։ Ձյունն ալեկոծվում էր կատաղորեն,— երկու մետրի վրա ոչինչ չէր երևում։ Այսպիսի բուքին ճանապարհ ընկնել՝ նշանակում է, հիրավի, դեպի մահ գնալ։ Մեր ճանապարհորդները որոշեցին սպասել։ Սակայն անցավ երկու, երեք, հինգ օր, իսկ բուքը չի դադարում։ Եվ միայն իններորդ օրվա գիշերը քամին դադարեց։ Առավոտյան վաղ, Ռո-

ալդն ու Իոհանսենը ճանապարհ ընկան։ Ծերունին և իր յերկու վորդիները գնացին ուղեկցելու նրանց մինչև այնտեղ, ուր սկսվում ե վերելքը դեպի սարահարթը։ Ամբողջ ճանապարհին նրանք Ամունդսենին և Իոհանսենին համոզում եյին հետ կանգնել իրենց մտադրությունից, հետ դառնալ։

— Ահա, տեսնում եք, ութ որ բուք արավ։ Բուքը կարող ե նորից կրկնվել։ Դուք կմոլորվեք և կկործանվեք։

— Չենք կործանվի,— արիաբար պատասխանեց Ամունդսենը։

Հինգ հոգին ել հովիտով անցան յերեք կիլոմետր, ծերունին ցույց տվեց հազիվ նկատելի մի արահետ, վոր ոլորվում եր սառույց կտրած ժայռերի արանքով։ Արահետը ծածկված եր ձյունով։

— Գնացեք այստեղով, սա ամենալավ վերելքն ե,— ասաց ծերունին։— Իսկ վերևում դուք արդեն ստիպված կլինեք կողմնացույցով գնալ. այնտեղ վոչ մի արահետ չկա և չի ել յեղել։

Ճանապարհորդները սրտագին հրաժեշտ տվին հյուրասեր ընտանիքին և գնացին վերև տանող արահետով։ Նրանք յերկար ժամանակ մագլցում եյին խիստ վերելքով։ Ծերունին ու նրա վորդիները ներքևից սիրալիր շարժում եյին իրենց գլխարկները, նրանց ձայնն ավելի ու ավելի խլանում ու անլսելի յեր դառնում։ Ամբողջ յերկու ժամ յերկու ընկերները մագլցում եյին լեռն ի վեր։ Վերևից դեպի հովիտը մի հոյակապ տեսարան եր բացվում։ Ներքև՝ հեռվում յերևում եր անտառի ու գյուղի կապտավուն գծագրությունը։ Լեռների գլխին կախվել եյին ձմռան սպիտակավուն ամպերը։

Ամունդսենը բաց արեց քարտեզը, գրպանից հանեց կողմնացույցը և ցույց տվեց Իոհանսենին։

— Մենք հիմա այստեղ ենք գտնվում, իսկ պետք ե գնանք այսպես։ Ահա մոտավորապես, այստեղ կլինի խրճիթը, մենք չպետք ե ճանապարհից շեղվենք, այլ ուղիղ այսպես պիտի գնանք։

Սպիրտայրոցի վրա նրանք իրենց համար սուրճ յեփեցին, նախաճաշեցին և ճանապարհ ընկան։ Ամեն մեկն իր վոտներին դահուկ ուներ, ձեռքին՝ փայտեր, իսկ մեջքին՝ յեղջերվի մորթուց պատրաստված քնելու պարկը, մի փոքրիկ պարկ ուտելիքով լցված և սպիրտային փոքրիկ լամպ։ Նրանց ուտելու պաշարը բաղկացած եր գալետից, շոկոլադից, փոքր քանակությամբ յուղից և բուտերբրոդից։

Նրանց առաջ փռված եր մի հարթ տարածություն։ Ամենուրեք միայն ձյուն եր ու ձյուն, վոր ամուր ծածկել եր իրար նման, մանր, միատեսակ բլուրները։ Ամեն րոպե նայելով կողմնացույցին՝ Ամունդսենը գնում եր առջևից։ Ճանապարհորդները մեկ բարձրանում եյին բլուրները, մեկ՝ իջնում ներքև, փոքրիկ հովիտները։ Փափուկ ձյունը ճռճռում եր նրանց դահուկների տակ։ Յերկուսն ել փորձված, ուժեղ դահուկավորներ եյին, յերկուսն ել արագ եյին սահում։ Սակայն կարճ ե ձմռան որը,— արդեն սկսեց մութն ընկնել, իսկ շուրջը նույն բլուրներն եյին, միապաղաղ ձգվող հովիտները, և ցածում, ձյուների վրա կախվել եյին սպիտակավուն ամպերը։ Վոչ մի տեղ վոչ մի խրճիթ չեր յերևում։

Իոհանսենն սկսեց անհանգստանալ։

— Կգտնե՞նք արդյոք։

— Կգտնենք,— վստահ պատասխանեց Ամունդսենը։— Կողմնացույցը մեզ կհասցնի այնտեղ։

Ահա, վերջապես, բոլորովին մթնեց, իսկ տնակը չեր յերևում, և յերբ գիշերը վրա հասավ, ճանապարհորդները նոր միայն դեմ առան խրճիթին։ Ռոալդն ու Իոհանսենն ուրախ ուռա՜ գոռացին,— նրանք շատ հպարտ եյին, վոր ղեկավարվելով միմիայն քարտեզով և կողմնացույցով, կարողացան հասնել ամայության մեջ թաղված այդ տնակին։ Տնակն ամեն կողմից ձյունով եր պատած։ Նրանք մի քանի անգամ պտտեցին նրա շուրջը։ Տնակի պատուհանը և դուռը տախտակով ծածկված եյին։ Ամունդսենը բարձ-

Տնակն ամեն կողմից ձյունով էր պատած:

բացավ տանիքը՝ փորձելու ծխնելույզից ներս մտնել։ Սակայն ծխնելույզը ևս ծածկված էր ծանր տախտակներով և այնքան նեղ էր, վոր հնարավոր չէր ներս սահել։ Մինչդեռ արդեն վրա յեր հասնում խոր գիշերը, սկսեց փչել ցուրտ քամին և ճանապարհորդները սոսկալի մրսում էյին։ Դահուկներով և ձեռնափայտերով նրանց ձյունը դեն նետելով, բաց արին դուռը, դանակներով տախտակների վրայից դուրս քաշեցին մեխերը և մտան տնակը։ Այս աշխատանքն այնքան դժվար էր, վոր յեր-

կուսն էլ սառցրին իրենց մատները։ Այնուհետև կարիք չեղավ յերկար ժամանակ ձյունով շփել մատները։

Տնակում փայտ կար դիզված։ Ամունդսենը բարձրացավ տանիքը և հանեց այն տախտակները, վորով ծածկել էյին ծխնելույզը։ Իոհանսենն սկսեց կրակ վառել օջախում։ Սակայն ծխանցքը չէր գործում և ծուխն սկսեց լցվել տնակը։

Մոտ յերկու ժամ տևեց, մինչև վոր հնարավոր յեղավ վառարանը վառել։ Ճանապարհորդները բոլորովին հոգնած էյին, սակայն, վերջ ի վերջո վառարանը կարգի գցեցին, իրենց համար սուրճ յեփեցին, տաքացան և փաթաթվելով քնելու պարկերում, պառկեցին օջախի դեմ պատի տակ դրված մահճակալների վրա։

Առավոտյան, լույսը հազիվ բացված, վեր կացան։ Նրանք կարծում էյին, թե այժմ իրենց տանջանքները վերջացել են, մնում է միայն կտրել-անցնել սարահարթի կեսը։ Յեվ հեշտությամբ կգտնեն Գարենի կալվածքը, ինչպես գտան, ահա, այս մենավոր տնակը։

Սակայն ուրախալի չէր առավոտը։ Դուրսը մոլեգնում էր իսկական բուքը։

— Ի՞նչ անենք,— շփոթված հարցրեց Իոհանսենը։

— Վոչինչ։ Կնստենք ու կսպասենք։ Բուքը վերջ ի վերջո հո կդադարի։ Բևեռային ճանապարհորդները կարողանում են համբերությամբ սպասել։

— Սակայն մենք կսովենք։ Յեկ փնտրենք, թե արդյոք այստեղ պահած վորևէ պաշար չկա՞։

Նրանք տակն ու վրա արին վողջ տնակը։ Նայեցին մահճակալների, նստարանների տակ և հանկարծ մի անկյունում մի փոքրիկ պարկ գտան՝ հաճարի ալյուրով լի։

— Ահա, սա կլինի մեր սնունդը, քանի մենք այստեղ ենք, իսկ մեր պաշարներին ձեռք չենք տա,— ասաց Ամունդսենը։— Կպահենք այն ճանապարհի համար։

Փոքրիկ կաթսայում նրանք ձյուն հալեցին, ջրի վրա ալյուր լցրին և իրենց համար ջրիկ շիլա պատրաստեցին։

Անհամ էր այդ շիլան։ Սակայն բևեռային ճանապարհորդը պետք է վարժվի ամեն բանի։ Չէ՞ որ Ֆրանկլինի ուղեկիցները նույնիսկ՛ իրենց կոշիկները կերան։

Երկու օր մոլեգնում էր բուքը և այդ երկու օրն ընկերներն ստիպված եղան նստել տնակում ու սնվել շիլայով։ Երրորդ օրը բուքը դադարեց և ճանապարհորդներն առաջ գնացին։

Նրանք գիտեին, որ սարահարթի արևմտյան կողմից միայն երկու տեղ կա, որտեղից հեշտ կլինի սահել դեպի հովիտը։ Մի տեղը դա Գարենի կալվածքն էր, իսկ մյուսը՝ հիսուն մղոն նրանից դեպի հյուսիս էր։ Անհրաժեշտ էր շատ ուշադիր հետևել, որպեսզի ճիշտ կերպով գնային նշված վայրը, հակառակ դեպքում ճանապարհից կշեղվեին, կմոլորվեին, անդունդը կընկնեին ու կկործանվեին։ Նրանք մանրամասն, ուշադիր կերպով ընտրեցին ճանապարհը և առաջ անցան։ Ամունդսենն ամեն րոպե բաց էր անում քարտեզը, ուղղություն բռնում ըստ կողմնացույցի, սակայն նրանք դեռևս տասը կիլոմետր չէին անցել, երբ նորից սկսեց առատ ձյուն տեղալ, անմիջապես եղանակը տաքացավ և ձյունը հալ ընկավ։ Թափվելով բացված քարտեզի վրա, ձյունն իսկույն թրջեց այն, փչացրեց և ճանապարհորդներն ստիպված եղան դեն շպրտել ու առաջնորդվել միմիայն կողմնացույցով։

Նրանց առաջ ընկած էին էլի նույն ցածլիկ բլուրները և միատեսակ հովիտները։ Ինչ-որ տեղ նրանց ետևում, հեռավոր զառիվայրում, ընկած էր Գարենի կալվածքը։

ԿՅԱՆՔԸ ՄԱԶԻՑ ԿԱԽՎԱԾ

Առանց կանգ առնելու, մեր ճանապարհորդները վեց ժամ շարունակ գնում էին։ Արդեն մթնում էր։ Հեռավոր լեռները ձուլվում էին երկնքի հետ և շուտով վրա հասավ գիշերը։ Քամին մոլեգնորեն փչում էր, ձյունը, խիտ ծածկոցի նման թափվում էր ամեն կողմից, այնպես որ երեք քայլի վրա ոչինչ չէր երևում։

Ուղևորներն այժմ կողք կողքի էին գնում, վախենալով կորցնել մեկ մեկու։ Իոհանսենը բոլորովին ուժասպառ էր լինում, ցավում էին նրա ձեռները, որ սառել էին դեռևս այն երեկոյան, երբ նրանք բաց արին տնակի դուռը։

— Այլևս չեմ կարող առաջ գնալ,— ասաց նա Ռոալդին։

— Ի՞նչ արած, կգիշերենք ուղղակի այստեղ՝ ձյունի վրա։

Ուղևորները հանեցին դահուկները, ձյունը կոխոտեցին մի փոքրիկ տարածության վրա, բաց արին պարկերը, փռեցին, մի քիչ գալեթ ու բուտերբրոդ կերան, քնելու պարկի մեջ մտան և ծածկեցին իրենց գլուխները։ Պարենով լցված փոքրիկ պարկերը դրին իրենց ոտքերի տակ և ձեռնափայտերը խրեցին նրանց մոտ, ձյունի մեջ։

Բուքը դեռ մոլեգնում էր, թաց ձյունն արագորեն ծածկում էր նրանց գլուխները։ Դեռևս ճանապարհին թաց ձյունով ծածկված նրանք ուժեղ կերպով թրջվել էին և այժմ, երբ տաքացան պարկերի մեջ, ձյունն սկսեց հալչել, ջուրը հոսում էր հագուստներից, և պարկերը ներսից սկսեցին թրջվել։ Այսպես, Ամունդսենն ու Իոհանսենը, թաց դրությամբ մի քանի ժամ պառկեցին։

Գիշերվա կեսին, սառնամանիք արավ. պարկերն սկսեցին սառչել. ցուրտը թափանցեց հագուստները։ Առաջինն արթնացավ Ամունդսենը։ Մթության մեջ նա

շուռ եկավ և հանկարծ զգաց, որ բոլորովին փայտացել է ու չի կարողանում տեղից շարժվել։ Դժվարությամբ շուռ եկավ մի կողքից մյուսի վրա. դողը բռնել էր նրա ամբողջ մարմինը։ «Այսպես հո չես սառչում եմ, —մտածեց նա.— լամպից՝ սպիրտ չխմեմ. գուցե թե տաքանամ»։ Լամպը գտնվում էր նրա մթերապաշարի պարկի մեջ։ Նա դուրս եկավ քնելու պարկից և մթության մեջ սկսեց որոնել։ Ահա, ձեռքը կպավ դահուկի փայտերին — հենց այդ փայտերի կողքին էր դրված նաև պարկը, որ թաղված էր ձյունի մեջ։ Նա փորեց մի փոսիկ, մի ուրիշը, երրորդը, —սակայն պարկը ոչ մի տեղ չկար։ Ամունդսենն սկսեց անհանգստանալ և արթնացրեց Իոհանսենին։

— Լսիր, ո՞ւր է քո պարկը։

Իոհանսենը դուրս եկավ քնելու պարկից և սկսեց փնտրել։ Մթերապաշարի պարկը չկար։ Ամբողջ մի ժամ նրանք ձեռներով փորփրեցին ձյունակույտերը, իսկ սառը քամին նրանց վրա էր նետում ձյունի ամպեր։ Դողդողալով. սառելով մինչև ոսկորները, նրանք վերջ տվին իրենց որոնումներին։

— Առավոտյան կփնտրենք, երբ լույսը կբացվի։

Տանջված ու հոգնած նրանք նորից մտան իրենց քնելու պարկի մեջ և այդ դրությամբ մնացին մինչև լուսաբաց։ Լուսաբացին նորից սկսեցին դահուկներով և փայտերով փորել ձյունն այնտեղ, ուր նրանք գիշերել էին։ Մթերապաշարի երկու պարկն էլ անհետ կորել էին։ Հավանաբար ագվեսներն էին թռցրել։

— Դե, այլևս ի՞նչ փնտրել։ Երևում է, իզուր կլինի, — ասաց Ամունդսենը։ — Գնանք քաղցած, ինչ արած։

Ընկերներն իրար նայեցին։ Նրանք հասկանում էին, որ այժմ իրենց դրությունը շատ վտանգավոր է. եթե շուտով չկարողանան որևէ ապաստարան հասնել, նրանք քաղցից կմեռնեն։ Չպետք է կորցնել թեկուզ մի րոպե, պետք է անմիջապես ճանապարհ ընկնել, քանի դեռ ուժ

կա։ Երկու ուղևորներն իսկույն կապեցին դահուկները և, նայելով կողմնացույցին, նորից առաջ շարժվեցին դեպի Գարենի կալվածքը։ Շուտով սկսեց այնպիսի ձյուն տեղալ, որ նրանք իրենց առաջ նույնիսկ մի քանի քայլի վրա չէին կարող որևէ բան տեսնել։

«Ո՞ւր կտանի մեզ այս ճանապարհը։ Թերևս մենք պտտվում ենք արդեն որևէ վայրէջքի գլխին։ Մենք կարող ենք անդունդ գլորվել ու կործանվել» — մտածում էր ամեն մեկն ինքն իրեն։

— Լսի՛ր, Ռոալդ, - ասաց Իոհանսենը.— մենք պետք է վերադառնանք. կգտնենք տնակը, այնտեղ նորից կհանգստանանք և կվերադառնանք Մուգենի կալվածքը։

Ռոալդը մի րոպե մտածեց. և իրոք, եթե իրենք այս խավարի մեջ առաջ գնան, հայտնի չէ, թե ուր կընկնեն։ Այդպիսի եղանակին անհնար է գտնել սարահարթի վայրէջքի ճանապարհը։

— Ի՞նչ արած, — ասաց նա ընկերոջը, — վերադառնանք։

Եվ քաղցած, սառած նրանք շուռ եկան դեպի արևելք՝ որոնելու տնակը։ Չէին անցել դեռևս մի քանի կիլոմետր, երբ գիշերը վրա հասավ։ Նորից սկսեց տեղալ թաց ձյունը։ Այժմ մեր ուղևորների ամբողջ հագուստը թրջվեց։ Մթության մեջ նրանք հասան մի փոքրիկ ժայռի և այստեղ պաշտպանվեցին քամուց։ Ռոալդն ասաց.

- Եկ, փոսեր փորենք, փաթաթվենք պարկերի մեջ և մտնենք փոսերը։ Ձյուների մեջ մենք լավ կքնենք։

— Ո՛չ, ես չեմ կարող.— պատասխանեց Իոհանսենը։ — Ես այլևս ուժ չունեմ։

Իոհանսենը մտավ պարկը և տեղն ու տեղն ընկավ ձյունի վրա, իսկ Ռոալդը դահուկներով ու ձեռնափայտերով մի խոշոր փոս փորեց և մեջը մտավ։ Նա շատ անգամ կարդացել էր, թե ինչպես ճանապարհորդները բևեռային երկրներում այդ կերպով ազատվել էին սառնամանիքից և բուք ու բորանից։ Ձյան մեջ ավելի

տաք է, քան բաց օդում։ Ձյան մեջ նա շուտով տաքացավ և, տանջված լինելով ցերեկվա ճանապարհից՝ շուտով քնեց։

Թաց ձյունը հաստ շերտով ծածկեց փոսը և մուտքը բոլորովին փակեց։ Առավոտյան կողմ սկսեց այնպիսի ուժեղ սառնամանիք, որ ամբողջ ձյունն՝ ամուր սառեց շրջապատում։ Գիշերն Ամունդսենը զարթնեց։ Նա քնել էր կռնակի վրա, աջ ձեռքով ծածկելով աչքերը։ Նրա ամբողջ մարմինը փայտացել էր և, ինչքան նա փորձ արեց, չկարողացավ տեղից շարժվել։ Նրա արմունկի տակ ճեղքվեց քնելու պարկը, որովհետև ամբողջովին սառել էր։ Սառել էր և շրջապատում յեղած ամբողջ ձյունը։

«Ի՞նչ է սա, կարծես թե յես սառույց եմ կորել» — մտածեց Ամունդսենը՝ սարսափից փայտանալով։ Նա հուսահատ ջանքեր թափեց, որ ազատվի, սակայն ձյունը պոկ չէր գալիս։ Ամունդսենն սկսեց կանչել իր ընկերոջը, սակայն ձայնը մարում էր ինչ որ տեղ — իր շրթունքին մոտիկ։ Այսպես, հավանաբար, դագաղի մեջ բղավում են կենդանի թաղվածները։

«Մենք կորանք» — մտածեց ինքն իրեն։ Նա յենթադրեց, որ Իոհանսենն էլ պառկած է ձյան մեջ՝ սառած և չի կարող պոկ գալ։ Նա այնքան հուզվեց, որ մի րոպե կորցրեց իր գիտակցությունը։ Սակայն կամքը, կամքը։ «Ամենից առաջ սառնասրտություն, — ասաց ինքն իրեն, — չպետք է հուզվել, այլապես շնչահեղձ կլինեմ»։ Նա հանգիստ պառկեց, մտածելով թե այժմ ինչ կարելի յե ձեռնարկել։ Հանկարծ նա հեռավոր կանչի ձայն լսեց՝ «Ռոալդ, Ռոալդ»։

Իոհանսենն էր կանչում։ Նա չէր ընկել ձյան թակարդը։ Իոհանսենը հուսահատորեն կանչում էր, — մինչ Ռոալդին հասնում էին նրա ձայնի խուլ հնչյունները։ Նա աշխատում էր պատասխանել, սակայն ձայնը կարվել էր։ Իոհանսենը յերկար ման յեկավ այն վայրի շուրջն, ուր

գիշերել էին։ Սպիտակ ձյան վրա նկատեց մի քանի մազեր, — դրանք Ռոալդի քնելու պարկի մազերն էին։ Իոհանսենը ձեռնափայտով սկսեց փորել և դուրս յեկավ, որ իսկապես ձյան տակ պառկած էր Ռոալդը։

Նա ամբողջ ուժով սկսեց դուրս քաշել ընկերոջը։ Գիշերը ձյունն այնպես էր սառել, որ սառույցի կարծրություն էր ստացել։ Հեշտ չէր Ռոալդին դուրս հանել։ Ամբողջ յերեք ժամ տևեց Ռոալդին ձյունե գերեզմանից դուրս հանելը։

ՆՐԱՆՑ ՉԵՆ ՃԱՆԱՉՈՒՄ

Երբ Ռոալդը դուրս յեկավ քնելու պարկից, թուլությունից հազիվ էր ոտքի կանգնում։ Իոհանսենը նըստել էր ձյան վրա, բոլորովին ուժասպառ. նրանից գոլորշի չէր բարձրանում։ Նա դեն նետեց գլխարկն ու ձեռնոցները, չնայած քամին առաջվա նման ձյան ամպեր էր շպրտում։

Դեռևս գիշեր էր և շրջապատում ոչինչ չէր յերևում։

Սակայն նրանք այլևս չէին կարող այնտեղ՝ լեռան յետևը մնալ, չէին կարող այլևս քնել։

— Գնանք, — ասաց Ռոալդը։

— Գնանք, — արձագանքեց Իոհանսենը՝ սրտնեղած։

Նրանք կապեցին դահուկները, ուսերին գցեցին քնելու պարկը և ժայռի հետևն անցան։ Ռոալդը լուցկին վառեց, նայեց կողմնացույցին, որոշեց ճանապարհը։

— Պիտի գնանք ըստ աստղերի։ Որևէ տեղ կհասնենք, յերևի։

Լուռ ու մունջ ճանապարհ ընկան։ Քամին հանդարտվեց։ Արևելքում յերկինքը փոքր ինչ սպիտակեց, սակայն մութն առաջվա նման շարունակվում էր։ Իոհանսենը յերեսուն քայլով առաջ էր անցել Ռոալդից։ Սպիտակ ձյան վրա Ռոալդը պարզ տեսնում էր իր ընկերոջը, թե

Ռոալդը լուցկին վառեց:

ինչպես եր նա ըշտապ քայլում դահուկներով։ Հանկարծ Իոհանսենը վայրկենապես անհայտացավ. կարծես թե գետնի տակն անցավ։ Ռոալդը դահուկներով սըլացավ այնտեղ, վորտեղ անհայտացավ Իոհանսենը։ Նա մտածեց, վոր Իոհանսենը զառիվայրից վայր ե ընկել, և իսկույն կողքի վրա սահելով հասավ զառիվայրի յեզերքը։ Ներքևից լսվեց հեռավոր մի ձայն.

—Ռոալդ, տեղիցդ չշարժվես։ Ես գլորվեցի։

Ռոալդը հանեց դահուկը և զգուշորեն մոտեցավ զառիվայրին։ Իոհանսենը սև բծի նման յերևում եր վարը՝ հեռվում։

—Կենդանի՞ ես,—բղավեց Ռոալդը։

—Կենդանի և անվնաս։ Ես կռնակի վրա ընկա՝ քնելու պարկի վրա։

Ռոալդը մոտեցավ զառիվայրի յեզրին, ձեռնափայտով շոշափեց, թե վորտեղից կարելի յե վայր իջնել։ Յերկար վորոնումներից հետո տեղը գտնվեց և Ռոալդն օգնեց Իոհանսենին վերև բարձրանալու։

—Այստեղ պիտի սպասենք լուսաբացին, այլապես կարելի յե գլուխ ջարդել։

Նրանք փաթաթվեցին քնելու պարկի մեջ, նստեցին զառիվայրի յեզրին և սկսեցին սպասել լուսաբացին։ Յերկուսին ել տանջում եր սոսկալի քաղցը։ Արդեն չորս որ եր անցել այն ժամանակից, յերբ նրանք վերջին անգամ ճաշել եյին Մուգենի կալվածքում և յերկու որ եր անցել ալյուրե շիլա ուտելուց։ Ժամ առ ժամ սպառվում եյին նրանց ուժերը։ Քաղցը մի քիչ մեղմելու համար նրանք շուտ-շուտ ջուր եյին խմում։ Այստեղ, սարահարթում կային շատ փոքր լճեր, սառույցների տակից ջուրը հոսում եր քարերի վրայով։ Նրանք այնքան ջուր եյին խմում, վոր այլևս տեղ չեր մնացել նրանց ստամոքսում։

Յերբ լուսացավ, ճանապարհ ընկան։ Ամբողջ որը նրանք գնացին, առանց վորևե հույս ունենալու, թե շուտով մարդկային բնակության կհասնեն։ Շուրջը միապաղաղ բլուրներ ու հովիտներ եյին, ծածկված սառույցով և ձյունով։

Արդեն սկսեց մթնել։ Նրանք անհանգստությամբ նայում եյին չորս կողմը. մի՞թե իրենք, սառած ու քաղցած նորից պիտի գիշերեն բաց յերկնքի տակ՝ քնելու պարկերում։ Հանկարծ Ռոալդը, աղջամուղջի մեջ նկատեց ինչ-վոր շենք, վոր սևին եր տալիս հեռվում։ Նրանք արագացրին քայլերը և շուտով տեսան մի փոքրիկ սրահ խոտով լիքը։ Սրահի շուրջը դահուկի հետքեր կային։ Ամունդսենն ուրախ բղավեց։

—Դե, այժմ մենք փրկված ենք։ Կգիշերենք այստեղ, կհանգստանանք, իսկ առավոտյան առաջ կշարժվենք՝ դահուկների հետքերով։

Նրանք հանեցին դահուկները, մտան խոտի մեջ, խոր թաղվեցին, պառկեցին ու քնեցին ամբողջ գիշերը։ Այնպես եյին հոգնած, վոր քնեցին ինչպես մեռել։ Առավոտյան առաջինն արթնացավ Ռոալդը։ Նա դուրս յեկավ սրահից, վերցրեց դահուկը և կանչեց.

Սպասի՛ր, սպասի՛ր, ընկե՛ր։

—Իոհանսեն, գնանք տեսնենք, որտեղ ենք գտնվում մենք։

Իոհանսենը մռայլ պատասխանեց

—Ես չեմ կարող տեղիցս շարժվել, ուժասպառ եմ եղել։

—Դե որ այդպես է, դու սպասիր, ես մենակ կգնամ հետախուզության՝ դահուկի հետքերով։

Ռոալդն արագ քայլերով անցավ մի փոքրիկ տարածություն, անցավ բլուրի հետևը և հեռվում տեսավ մի մարդկային կերպարանք։ Այդ մարդն ինչ-որ տեղ էր գնում։ «Սա երևի որսորդ է, որ գնում է դիտելու իր թակարդն ընկած կաքավը» մտածեց Ռոալդը։ Ամբողջ ուժով նա վազում էր այդ մարդու ետևից, գլխարկով նշան էր անում և բղավում էր։ Մարդն սկզբում կանգ առավ, զարմանքով դիտեց, թե ով կարող է վազել իր ետևից՝ բլուրների կողմից։ Հետո հանկարծ շուռ եկավ և ամբողջ ուժով սկսեց փախչել։ Նրան թվաց, թե սառցադաշտից դուրս եկած մի ոգի հալածում է իրեն։

Այսպես նրանք մի քանի րոպե ձյան վրա վազեցին իրար ետևից։ Ռոալդն անընդհատ բղավում էր.

—Սպասիր, սպասիր, ընկեր։

Նրա ձայնի մեջ այնքան հուսահատություն կար, որ այդ մարդը վերջապես կանգ առավ և ընդառաջ գնաց Ռոալդին։ Հեռվից նա հարց տվեց,

—Ո՞վ ես դու։

—Մենք մոլորվել ենք. իմ ընկերը մեռնում է ուժասպառությունից։ Նա, ահա, այնտեղ սրահում է։ Հեռո՞ւ է արդյոք բնակավայրը։

—Մինչև բնակավայրը շատ հեռու չէ, միայն մի ժամ պիտի քայլել։ Ահա, այնտեղ, լեռան տակ է գտնվում Մուգենի կալվածքը։

—Մի՞թե,—բացականչեց զարմանքով Ռոալդը։

Նա չէր հավատում իր ականջներին։ Նրանք ամբողջ չորս օր թափառել էին այնտեղ՝ զառիվայրերում ու ձյան անապատի մեջ և նորից նույն տեղն են եկել, որտեղից մեկնել էին։

—Դե, այժմ ես կվազեմ ընկերոջս ետևից,—ասաց Ռոալդը։

Նա արագ հասավ սրահը։ Իոհանսենն արդեն դուրս էր եկել խոտի միջից ու նստել պատի տակ։

—Շտապի՛ր, գնանք,—գոռաց նա։—Մի ժամից մենք կալվածքում կլինենք։

Իոհանսենը հավաքեց իր վերջին ուժերը, կանգնեց դահուկի վրա, սակայն արդեն չէր կարողանում դահուկը կապել իր ոտներին, որովհետև նրա ձեռների երկու մատները ցրտահարվել էին։ Ռոալդն ինքը կապեց նրա դահուկը և ուղևորները վերադարձան դահուկի հետքերով։ Շուտով նրանք սկսեցին ճանաչել այդ վայրերը՝ ահա այն բլուրը, որ տեսել էին նրանք առաջին անգամ։ Ահա և ձորը։ Նրանք առանց որևէ դժվարության իջան զառիվայրից։ Մուգենի կալվածքի փոքր տնակն այս անգամ կարծես ավելի մեծ տանիք ուներ, միայն թե մի կողմից հոգատար տնատերերը մաքրել էին ձյունից պատերը, պատուհաններն ու արտաքին սանդուղքը։

Ռոալդը դուռը ծեծեց, դուրս եկավ ինքը՝ տանտերը, նայեց մեր ուղևորներին ոտից մինչև գլուխ և ներս հրավիրեց դժկամորեն՝

—Ներս մտեք։

Ռոալդն ու Իոհանսենը դահուկները թողին սանդուխքի մոտ և տուն մտան։ Յերեք կին թել եյին մանում։ Ծերունու տղաները փայտից ինչ-վոր բաներ եյին շինում։ Բոլորն ակնապիշ և վոչ սիրալիր դիտեցին անկոչ հյուրերին։ Ռոալդը զարմացավ. հինգ որ առաջ այս մարդիկ ինչ սիրով ճանապարհ դրին իրենց, ինչպես ուրախ հրավիրում եյին նորից վերադառնալ իրենց մոտ, իսկ այժմ նրանք իրենց վրա նայում եյին անվստահությամբ ու անբարյացակամ։

— Դուք մեզ չե՞ք ճանաչում,— հարցրեց Ռոալդը։

Ծերունին խոժոռված՝ ժպտաց.

— Ճանաչելը դժվար է, վորովհետև մենք առաջին անգամն է, վոր ձեզ տեսնում ենք։

— Վո՛չ, առաջին անգամը չէ։ Մենք հինգ որ առաջ այստեղ եյինք։ Դուք ուղեկցեցիք մեզ մինչև լեռը բարձրանալու վայրը։

Ծերունին հոնքերը կիտեց։

— Միթե այդ դուք եք,— հարցրեց նա անվստահորեն։

Բոլորը նայեցին հյուրերին՝ վոտից մինչև գլուխ։

— Իսկապես վոր, այդ դուք եք,— ասաց յերիտասարդ գյուղացին։— Յես հիշում եմ, ձեր բաճկոնն ինձ դուր յեկավ։ Ահա այն։

— Այո՛, այո, այժմ մենք ճանաչում ենք։ Բայց ինչ պատահեց ձեզ հետ։

Ռոալդը, իսկ հետո և Իոհանսենը մոտեցան միջնապատին կախ տված փոքրիկ հայելուն. նրանք իրենց չըճանաչեցին։ Յերկարած, քրքրված մորուքներով, ներս ընկած այտերով ու ակնախոռոչների խորքում ընկած աչքերով նրանք մեռելների եյին նմանվում։

— Մենք քիչ մնաց պիտի զո՞հ գնայինք,— ասաց Ռոալդը։— Յերկու որ է վոչինչ չենք կերել։

— Տեսնում եք, չէ վոր յես ձեզ ասացի՝ չգնաք, իսկ դուք չուզեցիք ինձ լսել,— ասաց ծերունին հանդիսավոր կերպով։ — Դե, պառավ, շուտ արա, նրանց մի բան տուր ուտելու։



Յերեք կանայք իսկույն սկսեցին պտտվել օջախի մոտ և սեղանը սարքեցին։

Մեր ուղևորները յերեք օր ապրեցին այդ խրճիթում, հանգստացան իրենց սարսափելի ճանապարհորդությունից և կազդուրվեցին։ Չորրորդ օրը նրանք վերադարձան Քրիստիանիա։

Յերեք տարի անց Ամունդսենը պատահաբար իմացավ, վոր Գարեն կալվածքի տերը մի անգամ առավոտյան տնից դուրս է յեկել և գնալով սարահարթի արևմտյան կողմը՝ տեսել է իր դռնից մի քանի քայլ հեռու դահուկի հետքեր։ Հետքերն արևելյան կողմից էին յեկել, իսկ արևելքից, տարվա այդ ժամանակին վոչ վոք յերբեք կալվածքին չէր մոտեցել։ Գյուղացին զարմանքով հետևել էր դահուկի հետքերին, վորոնք տանում էին դեպի հեռավոր բլուրները։ Պարզ յերևում էր, վոր այս տեղից անցել էին յերկու մարդիկ։ Նշանակում է Ամունդսենը և Իոհանսենը բուք ու բորանի մեջ մոտեցել էին հենց կալվածատան դռներին և մթության մեջ չէին կարողացել նկատել այն։

ՆԱՎԱՍՏԻ

Զինվորական ծառայությունը վերջացնելուց հետո Ամունդսենը բոլորովին ազատ էր և կարող էր լիովին նվիրվել իր աշխատանքին։

Վերջին տարիներում, ուսումնասիրելով բևեռային ճանապարհորդների մասին յեղած գրքերը, նա նկատել էր մի տարօրինակ բան. բևեռային արշավախմբի պետերը, ծովային ճանապարհորդության գնալիս, գրեթե միշտ ուրիշի նավ էին վարձում, այնպես վոր նավի վրա յերկու իշխանություն էր լինում՝ նավապետը և արշավախմբի պետը։ Բևեռային յերկար ձմեռներն այդ յերկու մարդկանց մեջ շարունակ վեճ էր ծագում, նավապետները յերբեմն չէին հնազանդվում արշավախմբի պետերին, հաճախ չէին ուզում գնալ այնտեղ, վորտեղ հրամայում

էր գնալ արշավախմբի պետը և, վերջ ի վերջո, այդպիսի վեճերի հետևանքով խորտակվում էր արշավախումբը։

Ամունդսենը վճռեց նավապետ դառնալ, վորպեսզի ինքը ղեկավարի նավը, սակայն դրա համար անհրաժեշտ էր, վորպեսզի նավապետն իմանար ծովային վողջ ծառայությունը, սկսած նավաստու պարտականություններից։ Դրա համար շատ տարի չէր հարկավոր։ «Ի՞նչ անել։ Ափսոս է ժամանակ կորցնել, սակայն պետք է դառնալ նավապետ։ Անհրաժեշտ է։ Այն ժամանակ էլ ինչո՞ւ մտածել այս մասին», մտածում էր Ամունդսենը և հենց նույն գարնանը վճռեց նավաստի դառնալ՝ մի առագաստանավի վրա։ Քրիստիանիայից նա մեկնեց Բերգեն, այնտեղից դեպի Սառուցյալ օվկիանոսը, ուր գնում էին բազմաթիվ նավեր՝ փոկեր և կետեր վորսալու համար։ Բերգենը գտնվում էր օվկիանոսի ափին։ Օվկիանոսային քամիները փչում էին այստեղ ազատորեն։ Հարյուրավոր նավեր էին կանգնում ծովափի յերկարությամբ։

Յերեք օր շարունակ Ամունդսենը ման էր գալիս նավահանգստում և դիտում էր, թե վո՛ր նավն է ամենից լավը։ Հեռավոր ծովապատնեշի մոտ կանգնած էր յեռակայմանի մեծ «Վիկինգ» առագաստանավը։ Ռոալդը մի քանի անգամ յետ ու առաջ գնաց ծովափի յերկայնությամբ, դիտելով այդ նավը։ «Վիկինգ»-ից հեռացավ մի մակույկ, վորի մեջ յերեք նավաստի կային։ Յերբ նավաստիները մակույկից ծովափ իջան, Ռոալդը մոտեցավ նրանց, բարևեց և հարցրեց.

— Ո՞ւր է գնում «Վիկինգ»-ը։

— Դեպի Շպիցբերգեն՝ փոկ վորսալու, — պատասխանեց նավաստին։

«Դեպի Շպիցբերգեն։ Ինչքա՜ն սազում է ինձ», ինքն իր մեջ մտածեց Ամունդսենը և հարցրեց.

— Իսկ ո՞ւր է նավապետը։

— Նավապետն, ահա, այնտեղ է, գարեջրատանը, գնացել է մի բաժակ գարեջուր խմելու։

Նավաստին ցույց տվեց գարեջրատունը, վորի կապույտ ցուցանակի վրա նկարված եր գարեջուր խմողների մի խումբ։

— Մենք այնտեղ ենք գնում,— ասաց նավաստին։— Ի՞նչ ես անում նավապետին։

—Յես կուզեյի նավաստի դառնալ,— ասաց Ռոալդը։

Նավաստիները նայեցին նրան վոտից մինչև գլուխ։ Ռոալդի քաղաքացիական կոստյումը շփոթեցրեց նրանց։

— Յեթե կատակ չես անում, գնանք։ Մենք քեզ կծանոթացնենք նավապետի հետ. մեզ նավաստի յե հարկավոր։

Գարեջրատանը, փոքրիկ պատուհանի առաջ դրված սեղանի մոտ, նստած եր հաստ, շիկամորուք մի մարդ։ Նավաստիները Ռոալդին նրան ներկայացրին։

— Նավապետ, այս մարդը ցանկանում ե մեզ մոտ նավաստի վարձվել։

Նավապետը քննող հայացքով նայեց Ռոալդին։

—Ի՞նչպիսի նավաստի։ Դուք յերբևիցե ճանապարհորդել եք,— հարցրեց նա։

—Վոչ, չեմ ճանապարհորդել։

—Իսկ վորտե՞ղ եք սովորել։

—Յես սովորել եմ համալսարանում։

—Այո՞,— զարմացած նայեց նավապետը։— Յեվ ցանկանում եք ինձ մոտ նավաստու աշխատանք տանել։

—Այո, յես ուզում եմ ուսումնասիրել ծովային ծառայությունը, վորպեսզի հետագայում շտուրմանի (ղեկապետի) քննություն տամ։

—Ա՜, այդ ուրիշ բան ե,— ասաց նավապետը։— Ուրախությամբ յես կվերցնեմ այդպիսի նավաստու։

Ռոալդն ու նավաստիները նստեցին նավապետի փոքր սեղանի շուրջը և տասը րոպեից հետո վճռվեց ամեն ինչ։ Ռոալդը վաղն և յեթ կտեղափոխվի նավը, կսկսի աշխատել վորպես նավաստի, իսկ չորս որից հետո «Վիկինգ»-ը կմեկնի Սառուցյալ ովկիանոս՝ գազաններ վորսալու։

Արդեն այդ նույն որը յերեկոյան Ամունդսենը նավի վրա յեր՝ իր ունեցած-չունեցածովը, վորը դրել եր մի փոքր սնդուկի մեջ։ Նավաստիական սենյակում նրան հատկացրին մի մահիճ, ճիշտ այնպիսին, ինչպես ունեյին մյուս նավաստիները։ Սենյակը նեղ եր, կեղտոտ և մութ։ Սակայն այդ բոլոր անհարմարությունների հետ նա իսկույն հաշտվեց. «յեթե այս ուղին դեպի մեծ նպատակն ե տանում, ինչ ուզում ե լինի՝ պետք ե գնալ այդ ուղիով»։

Չորս որից հետո, լուսաբացին, «Վիկինգ»-ը բաց առագաստներով դուրս յեկավ Բերգենի նավահանգստից, Նորվեգիայի ծովափի յերկարությամբ դեպի հյուսիս։

Նոր նավաստի Ռոալդ Ամունդսենն ամենից յեռանդուն եր աշխատում։ Վորպես նորեկ, նրան հանձնել եյին ամենասև աշխատանքը։ Նավաստիները ծիծաղում եյին նրա վրա։ Ամենից առաջ ստիպեցին լվանալ նավի տախտակամածը և հատակները։ Նրանց համար զվարճալի յեր ընկնել «ուսանողի» հետ,— այսպես եյին անվանում նրանք իրենց նոր ընկերոջը։ Ռոալդն աշխատանքն արագ եր կատարում և այնպես լավ, վոր նույնիսկ բոցմանը — մի հին, թիկնավետ ու խիստ մարդ — հաստատում եր այդ բանը։ Ռոալդը վոչ մի րոպե անգործ չեր նստում։ Նա ուզում եր ամեն ինչ իմանալ։ Նա դիտում եր իր նոր ընկերներին, թե նրանք հատկապես ինչ գործ և ինչպես են կատարում։ Նա ինքն եր ուզում ամեն բան կատարել։

Յերկրորդ որը՝ յերեկոյան, նավն անցավ Նորդկապ հրվանդանի մոտով, վոր գտնվում եր Նորվեգիայի հյուսիսային ծայրին և ուղևորվեց դեպի բաց ովկիանոսը։

Փչում եր արևելյան քամին։ Մի կիլոմետր յերկարություն ունեցող ալիքները՝ տասնհինգ մետր բարձրությամբ անցնում եյին, վորպես անհաղթելի բանակ, արևելքից դեպի արևմուտք։ «Վիկինգ»-ն որորվում եր մի կողմից մյուսը և թվում եր, թե, ահա, վորտեղ վոր ե, կխորտակվի։ Ալիքները զարնում եյին նավի շուրթերին։ Փրփրակալած ջրի հորձանքը լվանում եր տախտակամածը,

մտնում էր ամենախուլ, փակ անցքերը, ձեղնահարկն ու խոհանոցը։ Քամին հետզհետե ուժեղանում էր։ Նավապետը, որ գլուխը կոխել էր բրեզենտե վերարկվի մեջ, ամբողջ ժամանակ դես ու դեն էր շրջում կամրջակի վրա։ Նա սուր կերպով սուլեց. նավաստիները դուրս վազեցին տախտակամածը։

— Հանել մեծ առագաստը,— հրամայեց նավապետը։

Նավաստիները, կատվի նման նետվեցին դեպի նավաշուրթը, թուլացրին ճոպանը և առագաստը դանդաղորեն իջավ ներքև։ Նավաստի Ամունդսենն աշխատում էր նավի կողքին։ Ալիքները վոտից գլուխ թրջեցին նրան, սակայն նա ամուր պահում էր շղթան, փութաջանորեն կծկում էր պարանը և այնպիսի տեսք էր ընդունել, վոր կարծես թե ամեն ինչ նրա համար սովորական էր — և՛ ովկիանոսը, և՛ փոթորիկը, և՛ ալիքները։

Առագաստն իսկույն հանեցին, նավաստիները վազեցին դեպի իրենց խցիկները։

— Դե, ուսանող, քեզ ինչպե՞ս դուր չեկավ քամին։ Ցերեկի սիրտդ ճաքեց,— կատակեց նավաստի Ֆրիցը։

— Վոչինչ, կվարժվեմ,— աշխույժ պատասխանեց Ամունդսենը։

— Վարժվի՛ր, վարժվի՛ր։ Դժվար է միայն առաջին տասը տարին։ Այնուհետև կվարժվես։

Ամունդսենը պառկեց իր մահճին։ Շուրջն ամեն ինչ ճռճռում էր, որորվում, ալիքները զարնվում էին նավի կողերին։ Նրա սիրտը խառնում էր։ Ամունդսենը բաց արեց աչքերը, աշխատեց մտածել հողի, լեռների մասին։ Այնտեղ չի տարուբերվում։ Նա ուզում էր կամքի ուժով հաղթել ծովային հիվանդությունը։ Իսկ «Վիկինգ»-ը շարունակում էր ավելի ու ավելի ճոճվել։ Ալիքները պայթյունի նման զարնվում էին նավակողին։

Հանկարծ վերևում, բաքի վրա, հնչեց զանգակը, հսկիչի հերթափոխություն։

— Ամունդսեն։ Հերթապահ ես,— բղավեց Ֆրիցը։

Ամունդսենն շտապ իր վրա քաշեց վերարկուն, կապեց

ժապավենն իր վզին և վերև վազեց։ Ովկիանոսն ամբողջովին յեռում էր։ Ջրի շիթերը թռչում էին մինչև կայմի վերին մասերը։ Բզկտված ամպերն իջել էին ցածր՝ ալիքների վրա։ Ձեռնաշղթաներից բռնած Ամունդսենը գնաց դեպի ղեկանվի պահատնակը։

Այսպես յերկու որ ու գիշեր քամին դես ու դեն էր քաշքշում նավը։ Յեվ այդ յերկու որ ու գիշերվա մեջ Ամունդսենը շատ անգամ և՛ մեռնում և՛ հարություն էր առնում։ Չնայած նրա մարմինը կոփված էր, սակայն դեռևս չէր ընտելացել այդպիսի տանջանքների. նրա մարմինը բողոքում էր, և անհրաժեշտ էր հավաքել կամքի վողջ ուժը, վորպեսզի ստիպի իրեն՝ հանգիստ կերպով տանելու փոթորկի պատճառած տանջանքները։

Միայն յերրորդ որը քամին մեղմացավ, ալիքներն սկսեցին հանգստանալ և ոդը ցրտեց։

— Դե, ուսանող, ուրախացիր, շուտով ափը կհասնենք. վերջ կլինի քո տանջանքներին։ Բայց դու կեցցես, առաջին անգամն ես ծովի վրա և կարծես թե հոգդ էլ չե այդ բոլորը,— ասաց բոցմանն աշխուժությամբ։

Ամունդսենը ծիծաղեց քթի տակ. յեթե բոցմանը գիտենար նրա տանջանքը, այդքան չէր գովի։

Արդեն յերկու որ էր, վոր արեգակը մայր չէր մտնում։ Գիշերվա կեսին նա կանգնած էր բարձր հորիզոնի վրա։ Յեվ հենց կես գիշերին, հեռվում, ջրի վրա յերևաց սպիտակ, փայլուն մի շերտ։ Ինչ վոր մեկը բղավեց.

— Սառույց։

Ամունդսենը վազեց դեպի նավի քիթը, բարձրացավ բաքի վրա և հեռադիտակը դրեց աչքերին. վողջ հորիզոնն իր առաջ լուսավորվեց։ Աջ ու ձախ, հեռու-հեռվում ձգվում էր սպիտակ շերտը։ Րոպե առ րոպե նա ընդարձակվում էր։ Այդ սառույց էր — Հյուսիսային Սառուցյալ ովկիանոսի լողացող հավիտենական սառույցը։

Յերեք ժամից հետո «Վիկինգ»-ի ճանապարհին

սկսեցին հանդիպել առանձին սառցաբեկորներ։ Սպիտակ կարապների նման նրանք լողալով դիմավորում եյին նավին. Նրանք հանդարտ օրորվում եյին ալիքների վրա։ Յերևացին ծովարորները։ Մեծ յերամներով նրանք թռչում եյին նավի յետևից։

Բոցմանը կայմապարանի վրայով մտավ տակառի մեջ, վոր ամրացված եր առջևի կողմի վրա։ Ահա նա անցավ տակառի յեզրով, յերևում եյին միայն նրա ուսերը և գլուխը։ Նա աչքերին դրեց դիտափողը և իսկույն գոռաց դեպի ներքև.

— Կա՜ն։

Նավապետը, վոր կանգնել եր կամրջակի վրա, հարցրեց.

— Շա՞տ են։

— Կարծես թե շատ են. Ուղղվեցեք դեպի հյուսիսարևելք։

— Փոկե՜ր, փոկե՜ր։ Բոցմանը բազմաթիվ փոկեր ե տեսնում,— փսփսացին նավի վրա և բոլորն սկսեցին վազվզել, իրար անցնել։

Հրաձիգները գնացին իրենց սենյակը՝ հագնվելու, նավաստիները մոտեցան մակույկներ պատրաստելու,— գուցե այժմ ստիպված կլինեն իջնելու սառույցների վրա։

Ամեն մեկն արդեն գիտեր, թե ինչ պիտի անի ինքը։ Ռոալդը հացով և ճարպով լիքը յերկու պարկ քարշ տվեց դեպի համար առաջին նավակը,— նա այդ նավակով պիտի գնար։ Հրաձիգները մեկը-մյուսի յետևից դուրս յեկան տախտակամած, և այստեղ ստուգեցին, թե արդյոք փամփշտակալները դատարկ չե՞ն, հրացանները կարգի՞ն են։ Իսկ բոցմանը դեռևս նստած եր տակառի մեջ և դիտում եր դիտափողով։

Նավապետը նորից հարցրեց.

— Յերևու՞մ են։

Բոցմանը պատասխանեց.

— Յերևում են. Այդպես պահել։

Բոցմանը բազմ թիվ փոկեր ե տեսնում։

«Վիկինգ»-ը դանդաղ մոտեցավ սառույցի յեզրին։ Հազարավոր մանր սառույցներ լողում եյին ալիքների վրա, իրար եյին խփվում և ջարդ ու փշուր լինում։ «Վիկինգ»-ն իր կողերով նրանց ճանապարհից այս ու այն կողմ եր շպրտում։ Որորները և կայրերը նստել եյին սառույցների վրա, իսկ հեռվում՝ մեծ սառցադաշտի վրա՝ յերևում եյին սև բծեր,—դրանք սառույցների վրա պառկած փոկերն եյին։ Հանկարծ նավի քթի առջև ջրից դուրս յեկավ փոկի գլուխը, որ նման եր շան թրջված գլխի, և իսկույն թաքնվեց։

Հրաձիգներն սկսեցին անհանգստանալ, հուզվել։

Նավապետը կամրջակի վրայից ձայն տվեց.

—Պատրաստե՛լ մակույկները, գրավել տեղերը։

Հրաձիգները ու նավաստիները խմբերի բաժանվեցին և նստեցին յերեք մակույկի մեջ։ «Վիկինգ»-ը դանդաղեցրեց ընթացքը և կանգ առավ սառույցների մեջ։ Կամրջակից լսվեց նոր հրաման.

Փոկի գլուխը դուրս ցցվեց ջրից։

—Մակույկները ջուրն իջեցրե՛ք։

Սկսեցին աղմկել ճռիկներն ու թոկերը, և մարդկանցով լիքը մակույկները դանդաղորեն ծովն իջան։

Սառույցների վրա ամենուրեք յերևում եյին փոկերը։ Նրանք նիրհում եյին՝ գլուխները սառույցների վրա դրած։ Հանդարտ քամին փչում եր արևելքից։ Մակույկներն իրար հետևից լողում եյին «Վիկինգ»-ի ձախ կողմի վրա։ Նրանք ճարպկորեն անց ու դարձ եյին անում սառույցների միջով։ Ռոալդը նավում եր առաջին նավակով։ Իբրև նավաստի, նա թիավարողի դերում եր։ Նա թիավարում եր իր ամբողջ ուժով։ Նա կիսաձայն հարցրեց մի ուրիշ նավաստու.

—Ինչո՞ւ այսքան հեռու յենք գնում։

—Հարկավոր ե մոտենալ հողմահար կողմից, այլապես փոկերը մարդու հոտ կառնեն,—պատասխանեց նավաստին։

Մակույկներն անցան հեռավոր սառույցների արանքը և բաժանվեցին իրարից։ Առաջին նավակի ղեկակալը հրամայեց.—Կանգ առ։

Մակույկը կանգ առավ մի մեծ սառույցի մոտ, և հրաձիգները մեկը-մյուսի յետևից դուրս յեկան սառույցի վրա։ Նրանք հինգ հոգի եյին։ Կաշվե բաճկոններով, ամուր և ճարպիկ, նրանք սառույցների վրայով վազեցին դեպի փոկերը։ Փոկերն անհանգստորեն բարձրացրին իրենց գլուխները։ Մեկը շուռ յեկավ և սողաց դեպի սառցի յեզրը։ Նա սողում եր դանդաղորեն, մերթ ընդ մերթ կանգ առնում և վիզը յերկարացնում։ Նրա յետևից սողաց մեկ



Առաջին մակույկի ղեկակալը հրաման տվեց՝ «կանգ առ»։

ուրիշը, յերրորդը, չորրորդը։ Ահա, վորտեղ վոր ե, նրանք կսուզվեն ջրի մեջ։ Հանկարծ հրաձիգները և նավաստիներն սկսեցին վայրենաբար մռնչալ։ Ռոալդն էլ մռնչաց։ Փոկերը կանգ առան, զարմանալով այդ մռնչոցից։ «Սա ինչ բան ե, վո՞ր գազանն ե այսպես մռնչում»։ Հրաձիգները մռնչյունով վազեցին դեպի փոկերը։ Առաջին հրաձիգը հրացանն ուսից վար առավ. ճայթեց հրացանը և յեզրին կանգնած փոկն իր գլուխը սառցի վրա գցեց։ Ելի մի քանի համազարկեր, և փոկերն այս ու այն կողմ ցրիվ յեկան։ Սակայն դիպուկ կրակողները նրանց ստիպեցին իրենց տեղում մնալ։ Նավաստիները և Ռոալդը վազ տվին սառույցների վրայով՝ սպանված փոկերը հավաքելու։ Ֆրիցը դանակով ճարպկորեն կտրտում եր փոկերին, հանում նրանց կաշին ու ճարպը, իսկ միսը դեն եր շպրտում։ Ռոալդը լաստին եր կապում պարանը և քաշ տալով դեպի մակույկն եր տեղափոխում ավարը։

Յերկու ժամից հետո մակույկն այնքան եր լիքը, վոր նրա կողը միայն չորս վոտ եր բարձր ջրի մակերեվույթից։

Այսպես հաջող սկսվեց վորսը։

ԴԵՊԻ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԲԵՎԵՌԸ

Ամունդսենը յերեք տարի նավեց առագաստանավով։ Նորվեգական նավաստիների ու նավապետների մեջ նա արդեն հայտնի յեր դարձել. նրան ճանաչում եյին վորպես մի մարդու, վորին կարելի յե վստահել։ Ինչ գործ վոր նրան հանձնարարում եյին, նա շատ լավ եր կատարում։ «Ամունդսենը վոչ մի աշխատանքից չի վախենում» ասում եյին նրա մասին նավապետները և բոցմանները։ Նրան հաճույքով հրավիրում եյին զանազան նավերի վրա աշխատելու, սակայն Ամունդսենը գնում եր այնտեղ, ուր կարելի յեր նոր բան սովորել։

1897 թվականի գարնանը, Բերգեն նավահանգստում լուր տարածվեց, թե Բելգիայից յեկել ե մի նավապետ վարձելու փորձված շտուրմաններ (ղեկապետներ) ու նավաստիներ՝ հարավային մագնիտային բևեռն ուսումնասիրության գնալու համար։ Արշավախումբը գնալու յե «Բելգիկա» նավով։

Ամունդսենը հուզվեց. նա հենց այդպիսի արշավախմբերի մասին եր յերազում։ Նա գտավ այդ ծովագնացին. դա մի բարձրահասակ, նիհար բելգիացի յեր։

— Դուք շտուրմա՞ն եք փնտռում անտարկտիկական արշավին մասնակցելու համար։ Յես կարող եմ ձեզ օգտակար լինել, — ասաց նրան Ամունդսենը և տվեց նրան հանձնարարական թղթերի մի կապոց, վոր նա հավաքել եր նավերի վրա՝ իր ծառայության ժամանակ։

Բելգիացին իրար յետևից նայեց այդ թղթերը և դրեց գրպանը։

— Վաղը յեկեք, յես տեղեկություններ կհավաքեմ ձեր մասին և մենք կվորոշենք։ Ինձ թվում ե՝ դուք շատ ջահել եք։

— Յես արդեն քսան և հինգ տարեկան եմ։ Յերիտասարդ լինելը պակասություն չե, — ասաց Ամունդսենը։

Մյուս որն առավոտյան այն հյուրանոցում, ուր յեկավ Ամունդսենը, բելգիացին նրան սիրով դիմավորեց։

— Յես նայեցի ձեր տեղեկանքները։ Դուք մեզ համար ամենահարմար շտուրմանն եք։ Յեկեք պայմանագիր կնքենք և ոգնեցեք մեզ փորձված նավաստիներ գտնելու. մեզ անհրաժեշտ ե հինգ մարդ։

Յեվ չորս որ անցած, բելգիացին, Ամունդսենը և հինգ նորվեգացի նավաստի մեկնեցին Ամստերդամ, ուր կանգնած եր «Բելգիկա»-ն։ Այդ նավի նավապետը բելգիացի մի սպա յեր, արշավախմբի պետը նույնպես բելգիացի յեր, իսկ նավի բժիշկն՝ ամերիկացի Կուկն եր։ Հետո նավի վրա կար նաև մի ռումինացի գիտնական։ Նավաստիներն ու մեխանիկը բելգիացիներ եյին, և ելի վեց նորվեգացի՝ Ամունդսենի գլխավորությամբ։ Նրանք բոլորն էլ փորձված նավորդներ եյին, կոփված այդ գործի մեջ. թվում եր՝ վոչ մի բան չի կարող նրանց վախեցնել։

1897 թվի ուշ աշնանը «Բելգիկա»-ն թողեց Եվրոպայի ափերը և ուղևորվեց Ատլանտյան օվկիանոսով դեպի հարավ։

Մագնիսային բևեռն ընկած է Ավստրալիայից դեպի հարավ, Հարավային Սառուցյալ օվկիանոսում և նավի ճանապարհն անցնում էր Աֆրիկայի ու Ավստրալիայի կողքով։ Սակայն նավահանգստից դուրս գալու առաջին օրերն արդեն բոլորի համար պարզ դարձավ, որ նավապետը բոլորովին այլ ճանապարհով է տանում նավը։ Նա ճանապարհ էր բռնել դեպի Հորն հրվանդանը՝ Հարավային Ամերիկայի մոտ։ Այս հայտնությունը հուզեց Ամունդսենին. նա կերազում էր, թե շուտով կհասնեն Հարավային Սառուցյալ օվկիանոսը, նա կլողա բևեռային սառույցներով, սակայն այստեղ ամեն ինչ ջուրն էր ընկնում։ «Ո՞ւր է գնում նավը»։ Այս մասին նա հարցրեց շտուրմաններին, ուղեկիցներին։ Ոչ ոք չէր իմանում։ Ամեն օր ընդհանուր նավասենյակում, առանձին նավասենյակներում և փոքր սենյակներում տեղի էին ունենում ցածր խոսակցություններ։

— Ո՞ւր ենք գնում մենք։

Եվ ոչ ոք չէր կարողանում հարցնել այս մասին ո՛չ նավապետին և ո՛չ էլ էքսպեդիցիայի պետին։

Նավային դաժան կարգապահությունը թույլ չէր տալիս նման հարցեր տալու։ Վերջապես, այդ խոսակցությունները լսեց և՛ ինքը՝ նավապետը. և մի օր, ճաշից հետո ընդհանուր նավասենյակում ասաց.

— Ես նկատել եմ, որ ձեզ անհանգստացնում է այն հարցը, թե մենք ո՛ւր ենք գնում։ Մենք գնում ենք Հորն հրվանդանի կողքով։ Մենք բավական ժամանակ ունենք անցնելու Հրո երկիրը և գնալու արևելքից դեպի մագնիսային բևեռը։ Այստեղի աշխարհագրական լայնության վրա ամառը նոր է սկսվում։

«Վատ խաղ է,— ինքն իրեն ասաց Ամունդսենը։

— Թերևս, մենք կխրվենք։»

Դեկտեմբերի սկզբին «Բելգիկա»-ն հասավ Մագելլանի նեղուցը։ Այստեղ խիստ շոգ ամառ էր։ Անցնելով նեղուցը՝ «Բելգիկա»-ն ուղղվեց դեպի հարավ, Հրո երկրի ափերի երկայնությամբ։ Այդ տարիներին Հրո երկիրը դեռևս քիչ էր ուսումնասիրված։ Արշավախմբի պետը երազում էր նոր գյուտեր անել և դրա համար էլ նա շատ չէր շտապում հասնել իր հիմնական նպատակին — մագնիսային բևեռին։

«Բելգիկա»-ն դանդաղորեն անցավ Հրո երկրի ափերի երկայնությամբ, կանգ առնելով յուրաքանչյուր ծովածոցում։ Գիտնականներն ափերից հավաքեցին զանազան քարեր, ուսումնասիրեցին տեղական թռչունների և գազանների կյանքը, ժողովեցին բուսական նմուշներ, քարտեզի վրա կղզիներ նշեցին և ցեղանակի դիտողություններ կատարեցին։

Վերջապես «Բելգիկա»-ն անցավ Շոտլանդական կղզիների մոտով, և հեռվում, օվկիանոսում, բոլորն էլ նավի վրայից սկսեցին տեսնել սառցադաշտերը, որոնք որ գիշեր փայլում էին մայր չմտնող արեգակի ճառագայթների տակ։ «Բելգիկա»-ն զգուշորեն մոտեցավ այդ վիթխարի սառցադաշտին։

Սա հենց Անտարկտիկական երկիրն էր, որի խորքում, ինչ-որ հեռվում, սառույցների ու ձյուների ետևում գտնվում էր հարավային բևեռը։

Հսկայական սառցակույտերը երկրից սահում էին դեպի օվկիանոսը։ Նախկին հետազոտողներն այս վայրը կոչել էին Գրախամի Երկիր։ Այստեղ քիչ նավեր էին եղել, տեղի քարտեզը ճիշտ չէր կազմված և էքսպեդիցիայի պետը նորից տարվեց քարտեզի նկարահանման աշխատանքով։ Այս աշխատանքի համար պահանջվում էր նորից վեց շաբաթ։ «Բելգիկա»-ն դանդաղորեն անցավ Գրախամի Երկրի ափերի երկայնությամբ և, վերջապես, մտավ Հարավային Սառուցյալ օվկիանոսը։

Ձմեռն արդեն մոտենում էր։ Հարավային բևեռից

սկսեցին փչել ցուրտ քամիները։ Ճանապարհին ավելի ու ավելի հաճախ էին հանդիպում լողացող սառցասարեր, թռչունները թռչում էին հարավից դեպի հյուսիս՝ դեպի տաք երկրներ։ Այնինչ նավը դեռևս երկար ճանապարհ ուներ կտրելու՝ Հարավային մագնիսային բևեռը հասնելու համար։ Ամբողջ երկու շաբաթ «Բելգիկա»-ն անցնում էր լողացող վիթխարի սառույցների կողքով։

Մի անգամ, երեկոյան, երբ Ամունդսենը հերթապահ էր կանգնած նավապետի կամրջակի վրա, նա տեսավ, որ բաց օվկիանոսի վրայով, հյուսիսից, առաջ էր շարժվում փոթորիկը։ Մութ ամպերը սահում էին ուղիղ ջրի վրայով։ Քամին քշում էր սառցասարերը դեպի հավիտենական սառույցների երկրը։ Նավապետը դուրս եկավ կամրջակի վրա։ Ամունդսենն ասաց նրան.

— Մենք լավ փոթորիկի կհանդիպենք։ Հավանաբար, ձյուն և կարկուտ կգա։

— Ի՞նչ կա որ։ Առաջին անգամը հո չի,— փնթփնթաց նավապետը։

Նա ցույց տվեց մի մեծ սառցասար։

— Բռնեցեք այդ սառցասարի կողմը։ Նրա ետևը՝ ինչպես պատի ետև, կարելի է թաքնվել և ազատվել քամուց ու ալիքներից։

Ամունդսենը պատասխանեց.

— Լսում եմ։

Իր ամբողջ հերթապահության ընթացքում, ամբողջ չորս ժամ Ամունդսենը նավը տանում էր սառցասարի երկարությամբ։ Լեռան ետևը քամին հանդարտ էր և ալիքները հազիվ էին երերում նավը։

Բայց ահա բաքի վրա զնգզնգացրին, եկավ նոր հերթապահ շտուրմանը։ Ամունդսենը նրան ցույց տվեց սառցասարը և ասաց.

— Ուշադրություն պահեք այս լեռան երկայնությամբ, որպեսզի ազատվենք քամուց ու ալիքներից,— այդպես է հրամայել նավապետը։

Երկրորդ շտուրմանը պատասխանեց.

— Այդպես էլ կանենք։

Հանձնելով հերթապահությունը՝ Ամունդսենը գնաց իր սենյակը՝ հանգստանալու։ Նավը հազիվ էր օրորվում։

Քնելիս Ամունդսենը լսեց, թե ինչպես վերևում վոռնում է քամին, ալիքները խփում են նավի կողքերին, թե ինչպես նավի պտուտակը ռիթմիկ կերպով կտրում էր ջուրը։

Առավոտյան երբ արթնացավ, նա զգաց, որ նավի պտուտակն այլևս չի աշխատում. ոչ դղրդյուն կա, ոչ շվվոց։ Շուրջը լռություն էր։ Նավը կանգ էր առել։

Ամունդսենն արագ հագնվեց և վազեց դեպի տախտակամածը։ Այո, «Բելգիկա»-ն կանգնած էր անշարժ, նավի շուրջը պատի նման բարձրացել էին սառցասարերը. Նավը շրջափակվել էր լեռներով։

Ամունդսենը դիմեց երկրորդ շտուրմանին։

— Ի՞նչ է պատահել։ Ի՞նչպես ընկանք այստեղ։

— Մեզ այստեղ շպրտեցին ալիքները։ Գիշերն այնքան քամի էր, որ մթության մեջ ես չնկատեցի, թե ինչպես բաժանվեցինք սառցասարից և շպրտվեցինք այստեղ։ Մենք հրաշքով ազատվեցինք։

Նավապետը, արշավախմբի պետը, մեխանիկը, նավաստիներն արդեն տախտակամածի վրա էին։ Բոլորի դեմքերի վրա երևում էր անհանգստություն։ Դուրս եկավ, որ «Բելգիկա»-ն գտնվում է սառցալեռների օղակում, ինչպես բանտում։ Նավապետն ինքը հերթապահություն կանգնեց։ Ամունդսենն էլ նրա հետ։ Շուտով շոգի տվին և պտուտակն սկսեց նորից աշխատել։ Նավապետն ինքն էր ղեկավարում նավը՝ սառցասարերի երկայնությամբ։

Իսկ սարերի ետևը դեռևս մոլեգնում էր փոթորիկը։ Սառցասարերը դանդաղորեն տարուբերվում էին, երբեմն նրանցից պոկվում էին հսկայական սառցաբեկորներ և դղրդոցով ընկնում էին ծովի մեջ։ Ամեն րոպե նրանք կարող էին



«Բելգիկա»-ն սառցասարերի ողակում։

ընկնել նաև նավի վրա և տաշեղի պես ջարդ ու փշուր անել այն։ Առջևը՝ լեռների արանքում նավապետը նկատեց մի ճեղք,—նա նավն ուղղեց դեպի այնտեղ։ Հեռվից այդ ճեղքը շատ նեղ եր յերևում, սակայն յերբ մոտեցան, յերևաց, որ այդ ճեղքից կարելի յե անցնել դեպի ովկիանոսը։

«Բելգիկա»-ն այդ ճեղքի միջով սառցալեռների արանքով դուրս յեկավ բաց ծովը։ Սարսափելի վտանգն անցավ։ Սակայն դեռևս ովկիանոսում շարունակվում եր մոլեգնել փոթորիկը։ «Բելգիկա»-ն նորից դարձավ դեպի արևմուտք, անցավ յեզրի յերկայնությամբ։ Հսկայական ալիքները թավալվում եյին հյուսիսից, նավը սեղմում եյին սառույցներին։ Ամունդսենն ինքն եր կանգնել ղեկանիվի մոտ։ Ալիքներն ավելի ու ավելի ուժգին եյին խփում նավի կողերին։ Մի հարված ևս, և նավը կզարնվեր սառույցին։ Ամունդսենը դարձրեց ղեկը, որպեսզի նավը տանի դեպի հյուսիս, վտանգավոր սառույցներից հեռու։

Նավապետն արագ շուռ յեկավ դեպի նա։

—Ինչու յեք փոխում նավի ընթացքը։ Պահեք յեզրի յերկայնությամբ։

—Կարող ե զարնվել սառույցին։

—Սառույցների մեջ պետք ե փնտռենք ծովախորշ, կմտնենք այնտեղ և կսպասենք փոթորկի դադարելուն։ Շուռ տվեք նախկին ուղղությամբ։

Ամունդսենը հոնքերը կիտեց։ Նա տեսնում եր, որ նավապետը սխալվում ե։ Յեթե քամին նավը քշում ե դեպի սառույցները, պետք ե ամեն ջանք թափել, որպեսզի, որքան հնարավոր ե, ավելի հեռու, բաց ծովը դուրս գան։ Այլապես կատաղի ալիքները կարող են բարձրացնել նավը, շպրտել սառույցների վրա և ջարդ ու փշուր անել։ Ամունդսենը քանի՜ անգամ կարդացել ե նման դեպքերի մասին։ Գուցե ասե՞լ այդ նավապետին։ Սակայն ծովային դիսցիպլինան հրամայում ե՝ «Յեթե քեզ չեն հարցնում, քո խորհուրդներով մեջ մի ընկնի»։ Ամունդսենը մռայլ ու լուռ կանգնել եր ղեկի մոտ։

Յեվ նավը, ալիքներից քշվելով, անցավ դեպի արևմուտք, հենց յեզրի յերկայնությամբ։ Մի տեղ սառույցի յեզրը կտրվեց և չորս կիլոմետր լայնությամբ անցք բացվեց, որը տանում եր ուղղակի դեպի հարավ՝ սառույցների մեջ։ Նավապետը հրաման տվեց.

—Ուղղություն վերցրեք դեպի այդ անցքը։

Ամունդսենը ղեկը շուռ տվեց և նավն ուժեղ քամիներից քշվելով այդ անցքով արագ լողաց դեպի հարավ։

Յերեք ժամվա ընթացքում նավը մոտ հարյուր կիլոմետր խորացավ սառույցների մեջ և կանգ առավ։ Այստեղ արդեն ալեկոծություն չկար, ովկիանոսը մնաց յետևում, նավից աջ ու ձախ տարածվում եր անծայրածիր սառցադաշտը։ Նավում բոլորն ուրախացան, որ այնքան բարեհաջող կերպով խույս տվին վտանգից։ Ջուրախացավ միայն Ամունդսենը։

Ի միջի այլոց նա ասաց նավապետին.

—Մեզ ողակում են, ինչպես թակարդում։ Սառույցները յետևից կարող են մեզ փակել։

—Ոչինչ,—անտարբեր պատասխանեց նավապետը.—մենք մի քանի օր կանգ կառնենք, կսպասենք, փոթորիկը կանցնի և նորից կանցնենք դեպի օվկիանոսը։

Յեվ, թխկացնելով իր հսկայական մաշիկներով՝ նա գնաց ներքև, իր սենյակը՝ քնելու։

Ամունդսենն ամբողջ գիշերը չարչարվեց տախտակամածի վրա։ Նա լսում եր թե ինչպես սառույցները ճաքճքում են ու առաջ շարժվում. սակայն անցքը դեռևս չեր փակվել։ Ատամները սեղմելով, Ամունդսենը ջղայնորեն անց ու դարձ եր անում տախտակամածի վրայով։ Յեթե նա նավապետ լիներ, իսկույն կթողներ ու կհեռանար այստեղից։ Իսկ առայժմ... Առայժմ լռիր ու սպասիր։ Լույսը բացվելուց առաջ նա գնաց իր խցիկը և պառկեց առանց հանվելու։ Հանկարծ նա վերևում լսեց դոփյուն ու աղաղակներ։ Նա վազեց դեպի վերև։ Սառույցներն ամեն կողմից սեղմում եյին նավը։ Անցքից մի հետք անգամ չեր մնացել։ Նավն իր ամբողջ նավակազմով ամուր նստել եր սառույցների մեջ և նրանց հետ միասին լողում եր դեպի օվկիանոսի ինչ-վոր մասը։ Իսկ ձմեռը նոր եր միայն սկսում—բևեռային սոսկալի ձմեռը՝ իր բազմամսյա խավար գիշերներով։

ԹԱԿԱՐԴՈՒՄ

Առաջին յերկու շաբաթն Ամունդսենն ամեն օր շարունակ իջնում եր սառույցի վրա և դահուկով անց ու դարձ եր անում փակվող ճեղքի յերկայնությամբ, հույս ունենալով, վոր վերջ ի վերջո բաց անցք կգտնի նավի համար։ Նա չեր հաշտվում այն բանի հետ, վոր իրենք ստիպված պիտի լինեն ձմեռելու լողացող սառույցների մեջ։ Նա հասկացել եր, թե ինչ վտանգավոր դրության մեջ են ընկել մարդիկ ու նավը։ Սառույցների վրա ձմեռելու համար վոչ վոք չեր նախապատրաստված։ Միայն

չորս հոգի ունեյին տաք հագուստ. իսկ այժմ նավի վողջ անձնակազմը մնացել եր սառույցների վրա առանց մորթե զգեստների, բավարար քանակությամբ սննդի և նույնիսկ լամպի՝ սենյակները լուսավորելու համար։

Ամունդսենը կիլոմետր առ կիլոմետր ստուգում եր, վորոնելով ազատ տարածություն, սակայն շրջապատը շղթայված եր սառույցով։ Հարավից փչում եր ցուրտ քամին, ամեն որ բուք եր անում. արդեն պարզ եր, վոր ձմեռելն անխուսափելի յեր։

Վերջին անգամ Ամունդսենն անցավ տասը կիլոմետրից ավելի տարածություն։ Վոչ մի տեղ ջուր չեր յերևում։ Տխուր զգացումով նա նավ վերադարձավ։

—Ճանապարհ չկա։

Նա տեսավ նավաստիների թախծոտ դեմքերն ու նավապետի շփոթված արտահայտությունը։

Յերեկոյան բոլորը հավաքվեցին ընդհանուր նավասենյակ՝ արշավախմբի պետը, գիտնականները, նավապետը, շտուրմանները, մեխանիկը, նավաստիները։ Ամենքը լուռ եյին, կարծես վախենալով, վոր առաջին խոսողին իսկույն ևեթ կսկսեն հայհոյել, նավապետին կըմեղադրեն անփութության մեջ, թե ինչու նավը բերեց սառույցները և գցեց սառցե թակարդի մեջ։ Յերկար մընացին անխոս։ Վերջապես բժիշկ Կուկը խոսեց.

—Այսպես, ուրեմն, բարեկամներս, մենք ստիպված կլինենք այստեղ ձմեռել։ Արդեն ամեն բան պարզ ե։ Պատրաստվենք ձմռանը, յերկար ու դժվարին ձմռանը։

Նա կանգ առավ, կարծես չիմանալով, թե ել ինչ պիտի ասի։ Հանկարծ, կիսախավար անկյունից լսվեց հեկեկանք։ Ամենքը դարձան դեպի այն կողմը։ Այնտեղ, գըլուխը պատին հենած, լաց եր լինում նավաստի Վիլյամսը։ Նա արդեն վաղուց անհանգստությամբ դիտել եր սառույցներն ու ծովը։ Նա զղջացել եր, վոր մասնակցել եր այս սարսափելի արշավախմբին, և ահա նա, այդ ուժեղ մարդը, յերեխայի նման լաց եր լինում։ Բժիշկ Կուկը շտապ մոտեցավ նրան.

— Չի կարելի լաց լինել, Վիլյամս, արցունքով չես կարող վերքը բուժել: Արիացի՛ր:

— Մենք ամենքս կկործանվենք, մենք բոլորս կըվոչնչանանք, — արցունքների միջից կմկմաց Վիլյամսը:

Ինչ-որ մեկը հառաչեց: Մի ուրիշն ատամների միջից հայհոյանք բաց թողեց, — ընդհանուր նավասենյակում խեղդող էր դառնում, ինչպես գերեզմանում: Արշավախմբի պետը կմկմաց.

— Դե, այժմ խորհրդակցելու ժամանակ չի: Այս մասին հետո կխոսենք:

Եվ շտապ դուրս եկավ ընդհանուր նավասենյակից ու փակվեց իր սենյակում: Նավապետը հետևեց նրան: Նավաստի Վիլյամսը բռունցք ցույց տվեց, բղավելով՝

— Ա՛յ, թե ով է մեղավորը. ա՛յ, թե ում պատճառով ենք կործանվում:

Ամունդսենը մոտեցավ Վիլյամսին և ամուր բռնեց նրա ձեռքը.

— Վերջ տուր, ընկեր: Մի՞թե դու չգիտեիր, թե մենք ուր ենք գնում: Վստահ լինենք, որ մենք ելք կըգտնենք:

Վիլյամսն անեծքներ թափելով դուրս եկավ ընդհանուր նավասենյակից: Եվ ամենքը շուտով ցրվեցին իրենց տեղերը: Նավի վրա տիրեց այնպիսի լռություն, ինչպես լինում է այն տներում, ուր ննջեցյալ կա: Զանազան անկյուններից լսվում էին հառաչանքներ և քրթմնջոցներ: Ամունդսենը երկար շրջում էր վերին տախտակամածի վրա: Գիշերը վրա հասավ: Այդ ժամին լիակատար լռություն էր: Հեռու հարավում հորիզոնի վրա փայլեց սպիտակ մի բիծ, ահա նա մեծացավ, աճեց: Հանկարծ կրակե սյուներ բարձրացան նրա գլխից վեր, խաղացին, առաջ շարժվեցին, — բոցավառվեց բևեռային լուսափայլը: Ամունդսենն այդ տեսել էր նախ հյուսիսային բևեռային շրջանից հեռու և ահա այդ նույնը տեսնում էր և այստեղ, և էլի դեռ քանի անգամ նա պիտի տեսնի այս երկար, սոսկալի գիշերվա ընթացքում:

Ի՞նչ է սպասում նրանց այս գիշեր. թերևս կործանում:

Եվ նա հիշեց այն բոլոր սոսկալի մահերը, գրկանքները, քաղցը, որոնց մասին նա կարդացել էր բևեռային ձմեռումները նկարագրող գրքերում:

Ո՞վ է խորտակվել նման ձմեռումների ժամանակ: Ամենից առաջ խորտակվել են փոքրոգի մարդիկ: Նրանք այնքան են վախեցել, որ կորցրել են իրենց ուժերը և մահը շուտ է տապալել նրանց: Նա մտածեց մահվան մասին: Հանկարծ նրա մարմնով սարսուռ անցավ: Սակայն վախենո՞ւմ է նա արդյոք: Ո՛չ, չի վախենում: Նա գիտեր, թե ինչի յե եկել: Նա չի սարսափում և ոչ մի գրկանքից: Նա պատրաստ է տանել ամեն դժվարություն: Իսկ ո՞վ կլինի նրա հավատարիմ ընկերն այս դժվարին շաբաթներին և ամիսներին: Մենակ ապրել այս հուսահատվող, փոքրոգի մարդկանց մեջ՝ շատ դժվար կլինի: Անհրաժեշտ է մի ընկեր: Նա վերհիշեց բոլոր նավաստիներին, շտուրմաններին, նավապետին: Ո՞վ չի վախենում գրկանքներից: Եվ նրան թվաց, որ վախենում են բոլորն էլ. ձմեռը սարսափելի կլինի: Միմիայն բժիշկ Կուկը, այո, միայն նա է ամենաամուր, ամենաուժեղ մարդը: Ամունդսենը դուրս եկավ դեպի տախտակամածը և գնաց բժշկի սենյակը:

Բժիշկը նստել էր սեղանի առաջ և ինչ-որ բան էր գրում: Նա հարցական հայացքով նայեց Ամունդսենին:

— Ես եկել եմ խորհրդակցելու, բժիշկ: Մենք պետք է կարգ պահպանենք, հանգստացնենք ամենքին: Դուք պատկերացնո՞ւմ եք, թե ինչ կլինի մեզ մոտ մեկ ամսից հետո:

— Այո, պատկերացնում եմ: Կանենք այն ամենը, ինչ հնարավոր է, — պատասխանեց բժիշկը: — Այլապես և՛ նրանք կկործանվեն և՛ մենք՝ նրանց հետ:

Նրանք արտահայտիչ կերպով նայեցին իրար աչ-

քերի մեջ, սեղմեցին իրար ձեռքը և լուռ բաժանվեցին։

Միայն յերկու շաբաթ եր անցել և նավն արդեն լիովին բևեռային ձմռան իշխանության տակ եր գտնվում։ Բուքն ու բորանը նավի կողերի շուրջը ձյան լեռներ եյին հավաքել։ Ջյունը հասա շերտով նստել եր տախտակամածի վրա, մտել եր դռան անցքերի մեջ և առավոտյան դժվար եր լինում նավասենյակների դռները բանալ։

Ամունդսենը և բժիշկ Կուկը նավաստիների ոգնությամբ ամեն մի դռան առաջ առագաստից շինել եյին պատեր, վորպեսզի ձյունն ուժեղ կերպով չդիպչի դռան առաջ։ Նրանք հաշվել եյին, թե ինչքան վառելանյութ կար նավում, ըստ ամիսների բաշխել եյին այն, վորպեսզի ավելի չծախսեն, այլ պահեն ամբողջ ձմեռվա համար։ Նավում շատ քիչ լամպ կար, դրա համար ել վորոշել եյին լամպը վառել միմիայն ընդհանուր նավասենյակում։

Քանի դեռ լույս եր, Ամունդսենը և բժիշկ Կուկը քանի նավաստու հետ միասին անց ու դարձ եյին անում նավի շուրջը՝ վորս անելու համար և վորոնում եյին ծովացուլեր ու փոկեր։ Այդ որերում վորսը շատ հաջող եր գնում։ Վորսորդներն սպանել եյին քառասուն փոկ, պարանով քաշ եյին տվել նավի մոտ և այստեղ պահել ձյունի մեջ, վորպեսզի միսը լավ դիմանա։ Այժմ պարենի պաշարն ավելացավ և կարծես թե սովամահության վտանգը վերացավ։ Սակայն մի անակնկալ դժբախտություն պատահեց։ Մի անգամ ճաշից առաջ, յերբ ամենքը նստած եյին ընդհանուր նավասենյակում և խոհարարը կերակուր եր մատակարարում, նավապետը հանկարծ թեքվեց իր պնակի վրա և յերկար հոտոտեց փոկի մսի կտորը։

— Սա ի՞նչ կերակուր ե։ Նորի՞ց փոկ,— սուր կերպով գոռաց նա։— Յես պահանջում եմ, վոր այլևս նման կերակուր չտրվի։ Մենք շուն չենք, վոր ամեն որ միևնույն կերակուրն ուտենք։ Այդպիսի միսը վտանգավոր ե, նա կթունավորի մեզ։



Վորսորդներն սպանել եյին 40 փոկ։

—Սա ինչ կերակուր է: Նորից փոկի միս:

Ամենքը զարմացած նայեցին, թե ինչ է պատահել նավապետին, հո չի՞ խելագարվում։

Բժիշկ Կուկն ասաց.

— Ներեցեք, նավապետ, յես ձեզ վստահեցնում եմ, վոր այդ միսը շատ լավ կպահպանի մեր ուժերը։ Յեթե փոկ ել չուտենք, հապա ինչ պիտի ուտենք։

— Մենք ունենք չորացած բանջարեղեն, ունենք պահածոներ։

— Պահածոներից կարող է առաջանալ լնդախտ հիվանդությունը, այդպիսի դեպքեր շատ են յեղել հյուսիսում ու հարավում, իսկ փոկի թարմ միսը կազատի մեզ լնդախտից։

— Վոչ մի դեպքում յես թույլ չեմ տա փոկից ճաշ պատրաստել,— նեղացած ասաց կապիտանը և դուրս յեկավ ընդհանուր նավասենյակից։

Բժիշկ Կուկը դարձավ Ամունդսենին և փնթփնթաց.

— Յեթե բանն այսպես գնա, դե՛, իհարկե, նավի անձնակազմը կորած է...

Ամունդսենը լուռ գլխով համաձայնության նշան արավ։ Ճաշից հետո նրանք բարձրացան տախտակամածի վրա։ Անթափանցելի մութ գիշեր եր։ Արդեն ութ որ եր, վոր յերկնքի վրա արշալույսի շող անգամ չեր յերևում։

— Այժմ ինչ պետք է անենք,—հարցրեց բժիշկը։

— Առայժմ թող գործն այսպես գնա, ինչպես ցանկանում է նավապետը։ Մենք իրավունք չունենք խախտելու կարգապահությունը։ Իսկ հետո՝ կտեսնենք։

— Այնուամենայնիվ պետք է ստիպել, վոր նավակազմն աշխատի, այլապես անգործությունից բոլորը կըհիվանդանան։

— Կստիպենք աշխատել։

Նրանք անցան մինչև նավախելը։ Յետևում, մթության մեջ, ինչ-վոր ձայն կանչեց.

— Բժիշկ, բժիշկ, վորտե՞ղ եք դուք։

Բժիշկ Կուկը ձայն տվեց։ Խավարի մեջ շտապ մոտեցավ նրան ինչ-վոր անհայտ մարդ։

— Գնա՛նք, շո՛ւտ, բժիշկ, Վիլյամսին ինչ-վոր վատ բան է պատահել։

— Իսկ ինչ բան, թունավորվե՞լ է։

— Վո՛չ, նա պատրաստվում է գնալու։ Նա անկարգություններ է անում։ Ահա, տեսեք, արդեն դուրս է յեկել տախտակամածի վրա։

Բժիշկ Կուկը և Ամունդսենը մոտեցան ընդհանուր նավասենյակի դռներին։ Դռների մոտ խռնվել ու աղմկում եյին նավաստիները։ Նրանք բռնել եյին ինչ-վոր մեկի ձեռներից։ Բժիշկը մոտեցավ։ Մթության մեջ նա և Ամունդսենը նկատեցին, վոր նավաստիները բռնել եյին իրենց ընկերոջը՝ Վիլյամսին։ Վիլյամսն իր ուսին ուներ պայուսակ, իսկ ձեռքին՝ ձեռնափայտ։

— Ի՞նչ է պատահել, տղերք։ Ինչո՞ւ յեք նրան բռնել,— հարցրեց բժիշկը։

— Նա ուզում է գնալ։

— Ո՞ւր է գնում։ Դու, Վիլյամս, ո՞ւր ես ուզում գնալ։

— Յես ուզում եմ գնալ Բելգիա։ Յես չեմ կարող այստեղ ձմեռել։

— Ի՞նչպես, սառույցների, ովկիանոսի և ծովի վրայով վոտքո՞վ գնալ։

— Այո՛, վոտքով։ Այսինքն յես կլողամ, յերբ անհրաժեշտ կլինի։ Յես շատ լավ եմ լողում։

— Այո՛, ինարկե, լողալ կարելի յե, — հանդիստ կերպով ասաց բժիշկը, — սակայն, առայժմ, բարեկամ, յես խորհուրդ չեմ տալիս գնալ։ Սպասիր մի քիչ, շուտով արևը դուրս կգա, յես ել կգամ քեզ հետ։

Բժիշկը բռնեց նավաստու ձեռքից և, քնքշորեն գրուցելով նրա հետ, տարավ յետ՝ դեպի սենյակը։

Ամունդսենն ու նավաստիները մնացին տախտակամածի վրա։ Նավաստի Եմիլն ասաց.

— Սա նավ չե, այլ տուփ։ Այդ քիչ է կարծես՝ դեռ խելագար ել կա։ Կատարյալ պատուհաս։

Ամունդսենը մտածում եր.

«Իսկապես նավը տուփի յե նման, իսկ շրջապատը սառույցներ են, հազարավոր կիլոմետրերի վրա։ Դժբախտություն»։

Սակայն, բարձրաձայն պատասխանեց, արիաբար.

—Վոչինչ, յեղբայր, պիտի դիմանալ։ Մի կորցրու արիությունդ։ Կորցնել արիությունը—նշանակում է ամեն ինչ կորցնել։

—Վորտեղից լինի այդ արիությունը,—սրտնեղած մրմրթաց Եմիլը։

Ամունդսենը չպատասխանեց։ Ի՞նչ կարելի յե պատասխանել այն մարդկանց, վորոնք առաջին իսկ դժբախտությունից փոքրոգի յեն դառնում։ Նա իջավ ցած՝ սենյակը։

Բժշկի սենյակի դուռը բաց եր։ Բժիշկն ու նավաստի

Վիլյամսն իրար մոտ նստել եյին։ Ամունդսենը լսեց խոսակցության մի մասը.

—Միասին կգնանք շուտով...

— Այդպես,—ասաց բժիշկը։ Նավաստին ուրախ ծիծաղեց։ Թերևս նա հավատում եր։ Ամունդսենն այնուհետև իր սենյակը, մթության մեջ հանվեց ու պառկեց։ Նա հոգնել եր այդ որվա հուզմունքից։ Ի՞նչ կլինի հետագայում։

ԱՄՈՒՆԴՍԵՆԸ՝ ՆԱՎԱՊԵՏ

Անցնում եյին ծանր, դժվարին շաբաթներ։ Այնպիսի սառնամանիքներ եյին լինում, վոր անհնար եր քիթը հանել տախտակամածի վրա։ Ընդհանուր նավասենյակում չուգունե վառարանը շարունակ կարմրելու չափ վառվում եր, սակայն ելի վատ եր տաքացնում։ Վառարանի շուրջը նստել ու պառկել եյին մարդիկ։ Ամունդսենը և բժիշկն ընդհանուր նավասենյակի մի անկյունում, ընդհանուր արհեստանոց եյին սարքել,—սարքում եյին սահնակներ, փոկի կաշվից հագուստ եյին կարում։ Նրանց ոգնում եյին յերկու-յերեք նավաստի։

—Իսկ ո՞ւր է Եմիլը,—հարցրեց բժիշկը։

—Եմիլը սենյակումն է։ Նա արդեն յերկու որ է, վոր անկողնից վեր չի կենում։

Բժիշկը դեն շպրտեց սղոցը և դուրս յեկավ ընդհանուր նավասենյակից։ Հինգ րոպեյից հետո նա վերադարձավ և կանչեց Ամունդսենին։

— Յեկեք ու հիացեք,—ասաց նա կիսաձայն, յերբ նրանք դուրս յեկան մութ միջանցքից,—մեզ մոտ լընդախտ է սկսվել։

Նրանք լուռ մտան խցիկը։ Ճարպամոմը թույլ կերպով լուսավորում եր սենյակը։ Մահճակալի վրա պառկել եր Եմիլը։ Բժիշկն ու Ամունդսենը մոտեցան նրան։

—Բա՛ց արա բերանդ,—հրամայեց բժիշկը։

Էմիլը բաց արեց բերանը։ Ծանր հոտը փչեց Ամունդսենի յերեսին։ Էմիլի լնդերն ուռել և սևացել եյին։ Լեզուն հազիվ եր պտտվում։

—Իսկական լնդախտ ե,—ասաց Ամունդսենը։—Անհրաժեշտ ե թարմ միս։ Պետք ե գաղտնի կերակրել նրան, վոր նավապետը չիմանա...

—Այո, ստիպված ենք։ Մենք ինքներս պիտի պատրաստենք։

Յեվ այդ որից նավապետից գաղտնի կերպով նրանք փոկի թարմ մսից կերակուր եյին պատրաստում հիվանդ Էմիլի համար։

Սակայն մի շաբաթ չեր անցել և լնդախտով հիվանդացան ելի հինգ նավաստի։ Իսկ հետո ելի, և դեկտեմբերի սկզբին արդեն նավակազմի կեսը լնդախտով հիվանդ եր։

Արշավախմբի պետն ու նավապետը նույնպես սկսել եյին հաճախակի հիվանդանալ և վերջապես յերկուսն ել ուժից ընկան։ Նրանք միասին պառկած եյին նավապետի կիսամութ սենյակում, անշարժ, ինչպես գերան։ Նավապետը զգալիորեն թուլացավ։ Մի անգամ, յերբ նրա մոտ նստել եր բժիշկը, նա ասաց.

Նավակազմը յես հանձնում եմ առաջին շտուրման Ամունդսենին։

—Բժիշկ, վկաներ կանչեցեք, յես ուզում եմ կտակ անել։

Բժիշկը պատասխանեց սրտնեղած.

—Փոքրոգություն մի՛ք անի, նավապետ, մի՛ կորցնեք ձեր հույսը։

—Վերջ տվեք, բժի՛շկ,—սրտնեղած մրմռաց նավապետը։—Յես ձեզ խնդրում եմ վկաներ կանչեցեք։ Նավակազմը յես հանձնում եմ առաջին շտուրման Ամունդսենին։

Հիվանդին չհուզելու համար բժիշկը վկաներ կանչեց—Ամունդսենին, մեխանիկ Վիկտինգին, յերկրորդ շտուրման Բրուլին։ Յերբ վկաները ներս մտան, բժիշկը պինդ փակեց սենյակի դուռը, վորպեսզի նավի անձնակազմից վոչ-վոք չլսի նավապետի խոսքերը։ Յեթե ինքը՝ նավապետը պատրաստվում ե մահվան, այն ժամանակ ինչ ե մնում անելու մյուսներին։ Նշանակում ե դրությունն անհուսալի յե։

Նավապետը ցածր, նվաղ ձայնով սկսեց թելադրել.

«Գտնվելով առողջ դատողության և լավ հիշողության մեջ...»։

Բժիշկ Կուկը, վոր նստել եր սեղանի առաջ, արձանագրեց նավապետի խոսքերը։ Սենյակում կիսախավար եր։ Նավապետի ուժասպառ, մարվող դեմքը ծռվեց դեպի սեղանը։ Նրա մարած աչքերում հուսահատություն կար։ Մյուս մահճի վրա պառկած եր արշավախմբի պետը Նա նույնպես վիզը ծռեց և նայեց, թե ինչպես ե գրում բժիշկը։

Իսկ յերեք հոգին—Ամունդսենը, մեխանիկ Վիկտինգը և շտուրման Բրուլը—փաթաթված փոկի մորթե բաճկոններում, լուռ կանգնել եյին սեղանի շուրջը։ Լամպի թույլ լույսը լուսավորել եր նրանց մռայլ դեմքերը։

— Յես նույնպես ուզում եմ կտակ անել,—ասաց արշավախմբի պետը, յերբ նավապետն ավարտեց իր թելադրությունը։

— Դո՞ւք ել,— զարմացավ բժիշկը։

—Այո։ Յես զգում եմ, վոր մահը մոտ ե։

Բժիշկը նայեց Ամունդսենին։

— Ձեզ համար արդեն շատ վաղ է,— ասաց բժիշկը։

— Ո՛չ, ո՛չ։ Խնդրում եմ ձեզ, գրեցեք։

Բժիշկը նորից թեքվեց սեղանի վրա և իր առաջ մի նոր թերթ թուղթ դրեց։ Արշավախմբի պետը թելադրեց թույլ, կցկտուր ձայնով։

— Ստորագրեցեք,— ասաց բժիշկը, թուղթը տալով Ամունդսենին։ Ամունդսենն ստորագրեց։ Այնուհետև ստորագրեցին մեխանիկ Վիկտինգը և շտուրման Բրուլը — վկաները։ Ամեն ինչ կարգին էր։

— Իսկ այժմ... թող նավի և արշավախմբի հրամանատարությունը վերցնի Ամունդսենը,— ասաց արշավախմբի պետը։— Դուք դեմ չե՞ք, նավապետ։

— Ո՛չ։ Ես համաձայն եմ,— թույլ ձայնով ասաց նավապետը։

Բժիշկ Կուկն արձանագրեց նրանց խոսքերը՝ վերահսկողության գրքում, տվեց այն նավապետին և արշավախմբի պետին։

— Ստորագրեցե՛ք։

Նավապետն ու արշավախմբի պետն ստորագրեցին։ Բժիշկը վերահսկողության գիրքը հանձնեց Ամունդսենին։

— Ընդունե՛ցեք հրամանատարությունը։

Սա մի նշանավոր վայրկյան էր Ամունդսենի կյանքում։ Ահա նա բևեռային արշավախմբի պետ է արդեն։ Սակայն նա ցույց չտվեց որևէ հուզմունք անգամ։ Նա լուռ ստորագրեց և ամենքը անխոս դուրս եկան սենյակից։

— Այսպես, ուրեմն, սիրելի Ամունդսեն, գործն այժմ ձեզանից է կախված,— ասաց բժիշկը, երբ փակեց նավապետի դուռը,— Պետք է փրկել մարդկանց։

Ամունդսենը ձեռքը դրեց Բրուլի ուսին։

— Թանկագին Բրուլ, անմիջապես բոլոր առողջ նավաստիներին վերև կանչեցեք։

— Պատրաստ եմ կանչելու բոլոր առողջ նավաստիներին,— ժպտալով ասաց Բրուլը և պատվի առավ։

Շուտով նավասանդուղքների վրա ոտնաձայներ լսվեցին։ Նավաստիները դուրս եկան իրենց խցիկներից։ Բժիշկ Կուկը և Ամունդսենը վերև քաշ տվին երկաթե թիեր և կացիններ։ Տախտակամածի վրա հայտնվեցին միայն չորս նավաստի, Բրուլը, մեխանիկ Վիկտինգը և Ամունդսենը բժշկի հետ միասին։ Մյուսները բոլորն էլ հիվանդ էին։

— Մենք կիջնենք սառույցի վրա, ձյունի տակից կքանդենք ու դուրս կհանենք սպանված փոկերն ու պինգվինները (թանձրահավեր)։ Ջեմս, դու կգնաս խոհարարին կասես, որ նա անմիջապես խոհանոցում վառի վառարանը։ Այսօր մենք թարմ մսով ճաշ կունենանք։

Պատրաստ եմ ասելու խոհարարին, որ վառարանը վառի։

Ջեմսն ուրախ պատասխանեց.

— Պատրաստ եմ ասելու խոհարարին, որ անմիջապես վառարանը վառի։

Ջեմսը վազ տվեց դեպի սենյակը, իսկ մյուսները բահերն ու կացիններն ուսներին դրած գնացին դեպի սառույցները։ Մինչև ուշ գիշեր նրանք փորփրեցին նավի շուրջը գտնված ձյունալեռները։ Փոկերի ու պինգվինների մսեղիքը ծածկված էր նավի քթի մոտ եղած ձյան տակ։ Ամունդսենը վառեց լապտերը, երկար նայեց, թե որտեղ պետք է փորեն և վերջապես ասաց.

— Այստե՛ղ։

Նավաստիներն աշխատում էին բահերով և բրիչներով։ Ամունդսենն ու Կուկը փոխարինում էին նրանց. աշխատանքն արագ առաջ էր գնում։ Նրանք ստիպված եղան երկար միջանցք փորել ձյան մեջ նախքան փոկերին հանելը։ Ամունդսենն ինքը փոկերի մսերից կտր-

րեց լավագույն կտորը, տվեց նավաստիներին և հրամայեց տեղափոխել խոհանոց։

Մի ժամից հետո առատ ու համեղ ճաշը պատրաստ էր։ Ամբողջ խումբը — առողջներն ու հիվանդները — ով դեռևս կարող էր քայլել, նստել էին ընդհանուր նավասենյակում, սեղանի շուրջը և ուտում էին ճաշը։ Պահածոներն այնքան զզվեցրել էին ամենքին, որ փոկի տապակած միսը քաղցրեղեն էր թվում։

Այնուհետև բժիշկն ու Ամունդսենը կերակրեցին այն հիվանդներին, որոնք չէին կարող ճաշի սեղանի մոտ գալ։ Մսով լիքը մի պնակ վերցրեց բժիշկը գնաց նավապետի սենյակը։ Թե ինչ տեղի ունեցավ այնտեղ — նա չպատմեց, սակայն նա ընդհանուր սենյակ վերադարձավ ժպտալով, իսկ պնակը դատարկ էր։

Այս առաջին ճաշը կարծես թե հարություն տվեց բոլորին։ Ամենքը զրուցում էին աշխույժ, բարձրաձայն և կարծես թե մարդիկ տոնի էին հասել։

Հինգ օր էր միայն անցել և նավի անձնակազմն անճանաչելի չէր դարձել։ Հիվանդներն արդեն իրենց սենյակներից իրենք-իրենց վեր էին կենում ու ճաշելու գալիս, զրուցում էին աշխույժ, նույնիսկ հաճախ կատակներ էին անում։ Բժիշկն ասաց, որ նավապետն ու արշավախմբի պետն սկսել են առողջանալ։

Ընթրիքից հետո, սովորաբար, ամենքը չերկար ժամանակ նստում էին ընդհանուր նավասենյակում և հանգիստ կերպով խոսում այն օրերի մասին, երբ կփչեն հյուսիսային տաք քամիները, կքշեն սառույցները և «Բելգիկա»-ն դուրս կգա բաց ծովը։

ԲԺԻՇԿ ԿՈՒԿՆ ԱԶԱՏԱՐԱՐ

Վերջապես դաժան ձմեռը կոտրվեց։ Ամեն օր կեսօրվա ժամերին հորիզոնի վրա սկսում էր երևալ մի սպիտակ բիծ. այդ բևեռային արշալույսի նշան էր. նշանակում է երկար գիշերը վերջանում էր և շուտով կսկսվեր ցերեկը։

Ամեն անգամ բիծը հետզհետե մեծանում էր և մի քանի շաբաթից հետո, վերջապես, երևաց արեգակը։ Նա հորիզոնի վրա երևում էր միայն մի կողմից և այն էլ մի քանի րոպե։ Նավի տախտակամածի և սառույցների վրա արևին դիմավորում էր ամբողջ նավակազմը։ Ամունդսենը հրամայեց, որ դուրս բերեն խեղազար Վիլյամսին և հիվանդ նավապետին։ Արեգակին ամենքն այնպիսի խանդավառ բացականչություններով էին ողջունում, որ կարծես մոտ լիներ փրկության օրը։

Սակայն Ամունդսենը և բժիշկ Կուկը հասկանում էին, որ փրկությունը դեռ հեռու չէ։ Հաջորդ օրն արեգակն ավելի վեր բարձրացավ, լուսավորեց ավելի երկար, և երբ ողջ նավակազմն իրիկնամուտին նորից հավաքվեց ընդհանուր նավասենյակը, բժիշկ Կուկն ասաց.

— Փրկության օրը մոտ է։ Մեզ անհրաժեշտ է հետազոտել բոլոր սառույցները։ Վաղը մենք կգնանք դեպի հյուսիս և կտեսնենք, թե արդյոք որևէ ճանապարհ կա մեր նավի համար։

Հաջորդ օրը, դեռևս մթության մեջ, բժիշկ Կուկն ու Ամունդսենը դուրս եկան սառույցի վրա։ Հենց որ լույսը ծագեց, արևելքում երկինքը ծածկվեց սպիտակ շղարշով. լույս էր։ Ամունդսենն ու բժիշկը երկու կիլոմետր դեպի հյուսիս գնացին, սակայն ոչ մի տեղ ոչ ճեղքվածք, ոչ էլ անցք նկատեցին, — ամեն ինչ ծածկված էր թանձր սառույցով։ Արեգակը ծագեց. հեռվում նրանք տեսան երեք նավաստի, որոնք արևմտյան կողմից նրանց դիմավորելու եկան։ Նավաստիները նույնպես ճանապարհ էին որոնում։

Սպանված փոկը։



Արեվին դիմավորում եր ամբողջ անձնակազմը։

—Մենք այստեղից վոչ շատ հեռու անցք տեսանք, այստեղից չորս կիլոմետր հեռու չի լինի։

Հինգ հոգին էլ ուղևորվեցին դեպի այդ անցքը, վոր յերկար լեզվի նման տարածվել եր ինչ-վոր հեռու, դեպի հյուսիս։ Նրա ծայրը չեր յերևում սառույցների մեջ։ Բժիշկն ուրախացավ.

—Սա հենց այն ե, ինչ վոր մեզ հարկավոր ե։ Յեթե նավը հասցնենք այստեղ, մենք կազատվենք գերությունից։

—Հազիվ թե ազատվենք,—կասկածեց Ամունդսենը։—Այդ անցքը, հավանաբար, հյուսիսից փակված ե։

—Այդ հենց հիմա մենք կտեսնենք։

Բժիշկը գնաց դեպի սառցասարը, վոր ընկած եր անցքի ձախ կողմը, բարձրացավ նրա վրա և հեռադիտակով նայեց հեռուն։ Այդ անցքը վերջանում եր հեռվում. նրա յերկարությունը յերեք կիլոմետրից ավելի չեր լինի, իսկ հեռվում՝ հորիզոնի վրա պատնեշի պես բարձրացել եյին մեծ սառցասարեր և նրանից այն կողմը, հավանաբար, բաց ովկիանոսն եր։

Այդ որը, ճաշի ժամանակ, ընդհանուր նավասենյակում բժիշկն աշխուժությամբ ասաց.

—Թվում ե, յես կարող եմ բոլորին շնորհավորել մեծ հայտնությամբ։ Մենք հեռվում անցք ենք գտել, պետք ե նավը հասցնենք այնտեղ՝ վորքան հնարավոր ե շուտ։

—Անցքն ամեն կողմից փակված ե,—պատասխանեց մի նավաստի։—Միևնույն ե, մենք չենք կարող բաց ծովը դուրս գալ։

—Ահա, մենք հենց այդ անցքով պետք ե նավենք դեպի բաց ծովը,—վճռական կերպով ասաց բժիշկը.—յերբ գարունը կգա և կփչեն տաք քամիները, սառույցները կսկսեն ճաքճքել և ճեղքվածքն անպայման տեղի կունենա ամենաթույլ տեղում, այսինքն այնտեղ, ուր գտնվում ե անցքը, իսկ ճեղքվածքից մենք արդեն նավը դուրս կբերենք բաց ովկիանոսը։

Ամունդսենը գլուխը թափահարեց։

—Բժիշկն իրավացի յե։ Այդպիսի դեպքեր քիչ չեն յեղել բևեռային արշավանքներում։

—Իսկ ինչպես կտանենք նավը սառույցների միջից։ Չե՞ վոր մինչև անցքը մի ամբողջ կիլոմետր ե,—հարցրեց յերկրորդ շտուրմանը։

—Մենք սառույցների մեջ ջրանցք բաց կանենք, կպայթեցնենք սառույցը և ջրանցքով «Բելգիկա»-ն կանցկացնենք մինչև այդ անցքը։

Մեխանիկ Վիկտինգը ծիծաղեց.

—Վորտեղի՞ց կճարեք սղոցներ։ Իսկ դինամիտը վորտեղից։ Մենք ունենք միայն յերկու սղոց և մի քանի ֆունտ դինամիտ։

—Ցավ հենց այդ սղոցներով կարելի չե վորևե բան անել։ Յես հավատացած եմ, վոր աշխատանքը հաջող կընթանա։

Նավաստիները տխրությամբ իրար նայեցին և նրանց հայացքներից յերևում եր, վոր չեյին հավատում բժիշկ Կուկին։ Հետզհետե վեճ առաջացավ։

—Մենք կսառչենք այդպիսի աշխատանքի մեջ։ Մենք տաք վերարկուներ չունենք։

—Վերարկուներ մենք ձեզ կըերենք,—ասաց Ամունդսենը։—Մենք վերմակներ ունենք․ հենց այսորվանից այդ վերմակներից կսկսենք ձեզ համար վերարկուներ կարել։

Ճաշից հետո Ամունդսենը գնաց նավի տրյումը, ուր արկղների առաջ դրված եյին կարմիր գույնի հաստ, կոպիտ վերմակներ։ Նա քարշ տվեց այդ վերմակները դեպի ընդհանուր նավասենյակը։ Նավաստիներն ոգնում եյին նրան։ Սկզբում ծիծաղում եյին, վոր իրենք ստիպված կլինեն պճնվել այդ տարորինակ շորերով։

Դերձակի պարտականությունը կատարող մի նավաստի կտրատեց վերմակները և նրանցից կարեց անճոռնի զգեստներ։ Հետևելով նրան ամենքն ել սկսեցին կար անել։ Կարում եր ինքը՝ Ամունդսենը, կարում եր և բժիշկ Կուկը,—ընդհանուր նավասենյակը դարձել եր դերձակի արհեստանոց։ Յերեք որից հետո լուսաբացին նավի անձնակազմը յերկու սղոցով, կացիններով և բահերով դուրս յեկավ նավի տախտակամածը, իջավ սառույցների վրա և գնաց դեպի անցքը։ Սա մի զվարճալի տեսարան եր․ ամենքը հագել եյին կարմիր, անճոռնի շորեր և գլխներին դրել եյին անշնորհք գլխարկներ։

Բժիշկ Կուկը և Ամունդսենն անցքի յեզրից դեպի նավը յերկար, ուղիղ գիծ եյին քաշել․ նրանք ցույց եյին տալիս, թե ինչ լայնություն պետք ե ունենա ջրանցքը, և նավաստիները լծվել եյին աշխատանքի։ Նրանք ունեյին



Կարում եր ինքը՝ Ամունդսենը, կարում եր բժիշկ Կուկը։

միայն յերկու սղոց։ Սղոցի մի ծայրին, յերկաթալարի վրա կապել եյին ծանր կշռաքար և իջեցրել եյին ջրի մեջ, մյուս ծայրին ամրացրել եյին յերկու բռնակ,—ծանր կշռաքարը սղոցը շարժում եր դեպի ներքև — ջրի մեջ, իսկ յերկու նավաստի քաշելով բռնակը, սղոցը վեր եյին բարձրացնում։ Այս ձևով սկսվեց սառույցի սղոցումը։

Բժիշկ Կուկը հրամայեց սառույցի մեջ փորել մի յերկար յեռանկյունի և յերբ յերկու սղոցները մտնում եյին այդ յեռանկյան խորության մեջ, Կուկն ու Ամունդսենը սառույցի մեջ փոս եյին փորում, դնում եյին դինամիտ, անց եյին կացնում ժապավեն և կրակ եյին տալիս։ Ամենքը շտապ մի կողմի վրա եյին փախչում․ պայթում եր դինամիտը և սղոցված սառցակտորն ընկնում եր անցքի

մեջ։ Պայծառությունն ամենքին զվարճություն եր պատճառում և թարմացնում։ Դրանից հետո նավաստիները նորից գործի եյին կպչում։ Այդ առաջին որը սղոցեցին տասը մեծ յեռանկյուններ։ Ջրանցքն իսկույն նկատվեց,—այն քսան և հինգ մետր լայնություն ուներ։

Հոգնած, սակայն թարմացած, ամենքը վերադարձան նավը։ Առաջին որվա աշխատանքը նրանց ցույց տվեց, վոր համենայն դեպս կարելի յե ջրանցքը կառուցել, նշանակում ե և հնարավոր ե փրկությունը։ Այդ որից նրանք ավելի յեռանդուն ու հաճույքով եյին աշխատանքի գալիս։

Ջրանցքի գործն արագորեն առաջ եր ընթանում։ Չորրորդ շաբթում գործի կեսն արդեն պատրաստ եր։ Այդ ժամանակ որերը բավական յերկարել եյին։ Արեգակը յերկար ժամանակով կանգնում եր հորիզոնի վրա. մարդիկ վոր հոգնած եյին յերկար գիշերվա ընթացքում, ուրախ եյին, վոր լույս են տեսնում ու շարժումներ անում։ Բոլորն ել աշխատում եյին. մեկը սղոցում եր սառույցը, ուրիշները բոթում եյին այն դեպի անցքը։ Ամենքն աշխուժացել եյին, խոսում եյին ուրախ։ Իններորդ շաբթում աշխատանքն ավարտվեց։ Նավակազմը ձյունից մաքրեց նավը նրա շուրջը յեղած սառույցներից և ուշ յերեկոյան, ամենքը հոգնած, սակայն խիստ գոհ պառկեցին քնելու։

Նրանք հույս ունեյին, վոր հաջորդ որը, լուսաբացին, նավը պարանով ջրանցքի միջով կանցկացնեն դեպի բաց անցքը։

Վաղ առավոտյան տախտակամածի վրա հանկարծ լըսվեցին տագնապալից բացականչություններ։ Ամունդսենը շտապ հագնվելով դուրս յեկավ տախտակամածը։ Այնտեղ եյին խռնվել բոլոր նավաստիները։ Նրանք ինչ վոր բըղավում եյին, ինչ վոր մեկին սպառնում, մի ուրիշի անիծում։ Ամունդսենը հարցրեց.

— Ի՞նչ ե պատահել, տղերք։

Բազմաթիվ ձայներ աղաղակեցին.

—Նայեցե՛ք։ Ջրանցքը փակված ե։ Աշխատեցինք,

աշխատեցինք, չարչարեցիք մեզ և ամբողջ աշխատանքը ջուրն ընկավ։ Նայեցե՛ք։

Ամունդսենը բարձրացավ բաքի վրա։ Ջրանցքը փակված եր նավի առաջ. սառույցներն իրար եյին խփվել և մանր սառույցների մի մեծ կույտ հենց կանգնած եր այնտեղ, ուր յերեկ ջուր եր յերևում։ Տախտակամածի վրա դուրս յեկավ բժիշկ Կուկը, նրա հետ նավապետը և արշավախմբի պետը, ամենքը տխուր ու լուռ նայում եյին սառույցներին։

Արևմուտքից փչում եր քամին և հետզհետե ուժեղանում եր։ Այդ քամին եր սառույցները բերել ու փակել ջրանցքը։

— Ամեն հույս կորավ,—մռայլ կերպով ասաց նավապետը։

— Վո՛չ, նավապետ,—աշխույժ պատասխանեց բժիշկ Կուկը։—Քամին մեզանից խլեց ջրանցքը, սակայն կարող ե վերադարձնել այն։ Տեսնենք թե ինչ կլինի յերեկոյան կողմը։

Որն անցավ տանջալից։ Մութ գիշերին վոչ-վոք չեր յերևում տախտակամածի վրա, ամենքը նստել եյին իրենց սենյակում՝ մտահոգված, մռայլ։ Միայն Ամունդսենն ու բժիշկ Կուկն, ինչ-վոր բանի մասին հանդարտ զրուցում եյին, անց ու դարձ անում նավի շուրջը յեղած սառույցների վրա։

Արեգակը ծագելուց առաջ սառույցները կասկածելի կերպով սկսեցին ճաքճքել, շարժվել, և կես ժամ անց նավից դեպի անցքը ճեղքվածք առաջացավ։ Րոպե առ րոպե նա սկսեց ավելի ու ավելի լայնանալ։ Բժիշկը թռավ տախտակամածի վրա և ազդանշանի զանգը տվեց։

Ամենքը վազեցին դեպի այն կողմը և տեսնելով լայն ճեղքվածքը, ուրախ բացականչեցին.

—Շտապեցե՛ք, շտապեցե՛ք,—ստիպում եր բժիշկը։

Նավի կողերին, դեռևս նախորդ որից ամրացված եյին յերկար ճոպաններ և այժմ վողջ նավակազմը յերկու

Նավակազմը դուրս յեկավ սառույցների վրա։

մասի յեր բաժանվել. մի մասին ղեկավարում եր Ամունդսենը, իսկ մյուսին՝ բժիշկ Կուկը։ Նավապետը կանգնել եր կամրջակի վրա. նա տվեց ազդանշանը. Նավաստիները բաց թողին ճոպանները և նավն անմիջապես մտավ ջրանցքը։ Երկու ժամից հետո նավը բարեհաջող կերպով հասավ անցքին և որորվեց, շուռ յեկավ լայնարձակ ազատ ջրում։ Նավից իջեցրին նավակներ,— նավաստիներն ու Ամունդսենը նավեցին դեպի հետ — ձմեռած վայրը, վորտեղից հավաքեցին բոլոր իրերը, վորոնք մնացել եյին այնտեղ և նորից վերադարձան նավը։

Այս մի մեծ տոն եր նավակազմի համար։ Նավաստիները յերեք նավակներով նավեցին անցքի սառցային յեզրի յերկայնքով։ Այստեղ ու այնտեղ ծովափին գտնվում եյին փոկեր, նստոտել եյին պինգվիններ. վորսորդները վորս կատարեցին և այդ որը նավի վրա թարմ մսից հարուստ ճաշ ունեցան։

Այնուամենայնիվ ճանապարհը դեպի բաց ծովը դեռ ևս չեր գտնված։ Առաջվա նման նավի ճանապարհին ընկած եյին անանցանելի սառույցներ, վորից դենը, հեռու հորիզոնում յերևում եյին սառցապատնեշներ, իսկ նրանից այն կողմը փայլում եր ովկիանոսը։

Անցավ մեկ շաբաթ ևս, յերկրորդն ել, սակայն ամեն ինչ անփոփոխ եր մնացել, միայն ջրանցքը, վորի միջով անցավ նավը, յերբեմն ծածկվում եր խիտ սառույցներով և բացվում եր նորից։ Նավում նորից սկսվեց հուսահատությունը։

Բայց, ահա մի անգամ — դա նոյեմբերի սկզբին եր, — և արդեն ամբողջ մի շաբաթ եր, վոր փչում եյին հյուսիսային տաք քամիները — սառույցներն սկսեցին ճեղքվել և ճեղքվածքներն անցնում եյին հենց անցքի միջով։ Ամունդսենը հրամայեց պատրաստել մեքենան, վոր հարկ յեղած ժամին հնարավոր լինի գործի դնել։ Եվ հասավ այդ ժամը. սառույցն այնքան ճեղքվեց, վոր նավը կարող եր բաց ծովը դուրս գալ։ Իսկույն կաթսաներից սկսեց շոգի բարձրանալ և «Բելգիկա»-ն սկսեց արագորեն առաջ շարժվել դեպի բաց ծովը։ Նավն արդեն յելքի մոտ եր հասել, յերբ յերկու վիթխարի սառցասարեր կտրեցին նրա ճանապարհը։ Նրանց միջև յեղած անցքը շատ նեղ եր. Ամունդսենը, վոր դեռևս ղեկավարում եր նավը, վորոշեց ռիսկ անել։ Նա ինքն անձամբ ղեկավարեց նավն անցքի միջով։ Անցքը վոլոր-մոլոր եր և վորոշ տեղեր այնքան նեղ, վոր նավի կողքերը կպչում եյին սառցապատնեշներին։ Նավն ուժեղ կերպով առաջ եր ընթանում նրանց միջով։ Հանկարծ նավի տախտակամածի վրա ինչ-վոր մեկը գոռաց.

— Սառցալեռնե՜րը մոտենում են։ Դեպի յե՜տ։

Ամունդսենը գիտեց. այո՛, սառցալեռները մոտենում եյին. թերևս նրանք այժմ կզարնվեն և ջարդ ու փշուր կանեն նավը։ Նավի կողերն արդեն ճեղքվել եյին սառույցների ճնշումից։ Այստեղ օգնության հասավ բժիշկ Կուկը։ Նա այս ու այն կողմ եր վազում, հավաքում նավաստիներին, հրամայում տրյումից դուրս հանել փոկերի մորթիները և դարսել պինգվինների մորթու վրա այնպես, վոր ստացվի հաստ, կակուղ պարկեր, և այդ պարկերն իսկույն կախ տվին նավի աջ ու ձախ կողքերին։

Սառցապատնեշները կպչելով նավին, ճնշում եյին պարկերին։ Սակայն պարկերը պաշտպանեցին նավի կողերը։ Սառցասարերը քիչ-քիչ յետ քաշվեցին և վերջապես նավը դուրս յեկավ անծայր, լայնարձակ ովկիանոսը։ Նավը սառցային թակարդի մեջ եր մնացել տասներեք ամիս։

ՎԵՐԱԴԱՐՁ

Այսպես սկսվեց սառույցի սղոցումը:

Այժմ նավի վրա ամենքն զգում էին, որ իրենք փրկված են. վերջապես սարսափելի վտանգի օրերն անցել էին։ Նավն ազատորեն լողում էր ջրի մեջ, իսկ նրա ամբարում կար բավական քանակությամբ քարածուխ՝ մերձավոր նավահանգիստը հասնելու համար։

Տոնականորեն դրոշակներով զարդարված «Բելգիկա»-ն ամբողջ արագությամբ անցավ դեպի հյուսիս։ Նրանք, որ աշխատանքով չեյին զբաղված, բարձրացել էին նավի տախտակամածի վրա։ Ամունդսենը նավապետի կամրջակից դիտում էր նրանց։ Կեղտի մեջ կորած, լերկար մորուքներով, տանջված՝ նրանք նման չէին այն կայտառ և ուժեղ մարդկանց, վորոնք տասներեք ամիս առաջ մտան սառույցների մեջ։ Սոսկալի ձմեռն ուժասպառ էր արել նրանց։ Յերկու նավաստի ձեռներից բռնած դուրս բերին խելագարված Վիլյամսին. նա յերկար ժամանակ անթարթ նայում էր



Սղոցված սառցակտորը լողում էր:

ծովի անհուն տարածությանը, ալիքներին և ինչ-որ փնթփնթում։

Բժիշկը տվեց ազդանշանի զանգը:

Ղեկանիվային խցիկում ինչ որ աղմուկ կար։ Ամունդսենը գնաց այնտեղ։ Նավապետը բարձրաձայն հայհոյում էր։ Յերկրորդ շտուրմանն ինչ-որ արդարանում էր։

—Ի՞նչ է պատահել,—հարցրեց Ամունդսենը։

Նավապետը սրտնեղած դարձավ դեպի նա։

—Դուք փչացրել եք գործիքները։

—Գործիքները ցնցումից են փչացել, յերբ մեզ ճնշում էին սառցասարերը,—ասաց յերկրորդ շտուրմանը։

Ամունդսենը դիտեց նավային ժամանակաչափը, սեկստանտը (անկյունաչափ գործիք)։ Բոլորը փչացել էին։

Ամենքը վազ տվին, քայլելիս՝ հագնվելով:

Ամունդսենն ուսերը թոթվեց.

—Իհարկե, հաճելի բան չի, նավապետ, սակայն չպետք է հուզվել. ճանապարհը այժմ կգտնենք։

—Ձեր պատասխանատվությամբ,—խստորեն ասաց նավապետը։

—Այո՛ այո՛, պատասխանատուն յես եմ։

Ամունդսենը հասկանում էր, թե ինչպիսի վտանգի յէ յենթարկվում նավը՝ կուրորեն գնալով։

Սակայն ինչ կարելի էր անել։ Նա նավն առաջնորդում էր չենթադրությամբ։ Ամունդսենը հրամայեց ուղղությունը վերցնել դեպի արևելք։ Այնտեղ, թվում էր նրան, կհանդիպի Հրո Երկրին։

Յոթ օր շարունակ «Բելգիկա»-ն լողում էր լիակատար անհայտության մեջ։ Հերթապահ հսկիչ նավաստին շարունակ նստած էր նավային կայմի վրա և հեռադիտակով դիտում էր հորիզոնը։ Վերջապես մի անգամ կայմի վերևից հնչեց հանդիսավոր կանչը.

—Ցամաք։

Ամունդսենն ինքը բարձրացավ կայմի վրա. հեռվում չերևում էր մի սև, փոքրիկ բիծ. անկասկած այդ ցամաք էր։

Տասը ժամից հետո «Բելգիկա»-ն մոտեցավ անհայտ կղզուն։ Թե շտուրմանը, թե նավապետը, թե արշավախմբի պետը չկարողացան վորոշել, թե այդ ինչ կղզի է։ Կղզին միանգամայն ամայի էր. կղզու բարձր վայրերում ձյուն կար։ Կղզուց դարձան դեպի հյուսիս։ Այնտեղ կար մի փոքրիկ նեղուց, վորից դենը նույնպես կղզի էր։ Ամենքը տեսան, վոր այդ, այսպես կոչված, Ցեկեղեցական կղզին է։ Այդ կղզին ճշգրտորեն արդեն նշված էր քարտեզի վրա և նշանակում է, ճանապարհն այստեղից հայտնի էր։

Մի շաբաթից հետո նավն անցավ Մագելլանի նեղուցից և ուղղվեց դեպի Եվրոպա։ Այդ տեղի ունեցավ 1899 թվականին։ Ամբողջ ճանապարհորդությունը տևեց չերկու տարի։

ՆԱՆՍԵՆԻ ՄՈՏ

«Բելգիկա»-յով կատարած էքսպեդիցիայից հետո Ամունդսենը մի ամբողջ տարի ապրեց Քրիստիանիայում, հանգստացավ և պատրաստվում էր նավավարի կոչում ստանալու։ Նա բազմաթիվ հոդվածներ գրեց թերթերում ու ժուռնալներում և այժմ ամբողջ Նորվեգիան ճանաչում էր նրան։



Պինգվիններ:

Ամունդսենն ապրում եր այն փոքրիկ տանը, վորտեղ մի ժամանակ ապրում եր նրա մայրը: Նա նույն համեստ, աշխատանքային կյանքն եր վարում և գիշերները յերկար ժամանակ նրա սենյակում լույսը վառ եր: Հրապուրվելով աշխատանքով, նա քիչ տեղերում եր լինում: Նա շատ և յեռանդուն եր աշխատում: Նա այժմ ուներ նավաստու և շտուրմանի հսկայական փորձառություն: Անհրաժեշտ եր միայն այդ ուղղությամբ տեսական գիտելիքներ ձեռք բերել, և հաղթանակն ապահոված եր:

Ով մեծ ցանկություն ունի և լավ ե աշխատում, նա կհասնի իր նպատակին: Շտուրմանի կոչում ստանալու համար նա փայլուն քննություն տվեց: Այժմ նա ինքը կարող ե ղեկավարել իր ապագա նավը, ուր վոր կամենա և ուրիշին նավապետ չի վերցնի:

Քննություն տալը միայն մի քայլ եր, այն ել խոշոր քայլ, հիմնական նպատակին հասնելու համար: Այժմ շուտով նա ինքնուրույն կերպով կուղևորվի դեպի բևեռային յերկրները:

Այս վերջին տարին Ամունդսենը պատրաստվելով քննություններին՝ ուսումնասիրեց բևեռային ճանապարհորդությունների մասին լույս տեսած բոլոր գրքերը:

Նորվեգիան և վողջ աշխարհն այդ տարիներին տարվել եր Նանսենի հիշատակարաններով՝ «Ֆրամ»-ով կատարած նրա անսովոր ճանապարհորդության մասին:

Նանսե՜նը: Նանսե՜նը: Ահա մի մարդ, վոր վաղ պատանեկությունից բառացիորեն ուղեցույց աստղ եր դարձել Ամունդսենի համար: Քանի տարի յեր Ամունդսենը յերազել դառնալ այնպիսին, վորպիսին եր Նանսենը՝

Կոռսոռղները պինգվիններ եյին խփում:

խիզախ ու անվեհեր: Յեվ յերազում եր տեսնել նրան, խոսել նրա հետ:

Յեվ միայն այժմ Ամունդսենը կարող եր այդպիսի քայլ անել. նա կգնա Նանսենի մոտ՝ խորհուրդ հարցնելու:

«Այժմ յես ունեմ բևեռային ճանապարհորդի փորձ, նավապետի կոչում. յես կարող եմ նավապետ դառնալ, սակայն չունեմ տեսական գիտելիքներ: Առանց այդ գիտելիքների իմ ապագա եքսպեդիցիան կիսով չափ անգամ չի կարող արդարացնել իրեն: Նանսենը ցույց կտա, թե ինչ պետք ե անել»

Այս մտքերով տարված Ամունդսենը գնաց Նանսենի մոտ: Նա մի քիչ վախենում եր այդ հանդիպումից. արդյոք ինչպե՞ս կընդունի նրան հռչակավոր ճանապարհորդը: Իսկ յեթե հանկարծ ծաղրի յենթարկի նրա պլանները, հանկարծ վոչ մի ուշադրության չարժանացնի: Միևնույն ե, պիտի գնալ, յերբ նշված ե ուղին:

Ամունդսենը վճռականորեն սեղմեց Նանսենի դռան զանգը: Սպասուհին նրան առաջնորդեց նախասենյակ և խնդրեց սպասել այնտեղ: Ամունդսենը հուզված նստեց մի մեծ սեղանի մոտ. նա խոժոռ նայեց այն դռանը, վոր փակվեց սպասուհու յետևից: Նա վախեցավ: Նա այնպես վախեցավ, վոր յերբեք չեր պատահել նրա հետ, անգամ ամենասոսկալի վտանգի ժամանակ:

Դուռը բացվեց և ներս մտավ Նանսենը: Ամունդսենը հազար անգամ տեսել եր նրա նկարները, տեսել եր նրա կենդանի դեմքը, թե հեռվից և թե մոտիկից: Նա խիստ մարդ եր թվացել նրան, իսկ այստեղ նրա դեմ կանգնել եր ժպտադեմ մի մարդ, վորը սիրով պարզել եր իր ձեռքը դեպի իրեն:

— Ինչո՞վ կարող եմ ձեզ ծառայել։

Նա սևեռուն և զննող հայացքով նայում էր ուղղակի Ամունդսենի դեմքին։

— Ես լսել եմ ձեզանից խորհուրդ հարցնելու, — հուզվելով ասաց Ամունդսենը։ — Ես ուզում եմ ճանապարհորդել դեպի բևեռային երկրները։ Ես արդեն ձմեռել եմ «Բելգիկա»-յի վրա։



—Գեղեցիկ նպատակ, – ասաց Նանսենը:

— Դուք ձմեռե՞լ եք «Բելգիկա»-յի վրա։ Ո՞վ եք դուք։

— Ես՝ Ամունդսենն եմ. լեղել եմ առաջին շտուրմանը. այժմ ես ուզում եմ ինքնուրույն ճանապարհորդություն կատարել և լսել եմ ձեզնից խորհուրդ հարցնելու։

Նանսենն արագորեն մոտեցավ Ամունդսենին, բռնեց նրա ձեռքը և քաղցրությամբ ասաց.

—Ես պատրաստ եմ օգնելու, ինչով որ կարող եմ. գնանք ինձ մոտ։

Նա Ամունդսենին տարավ իր ընդարձակ առանձնասենյակը, որի երկու լայն պատուհանները նայում էին պարտեզի վրա։ Սենյակն արևի լույսով ողողված էր։ Լայն սեղանը ծածկված էր գրքերով և քարտեզներով։ Պատին կախված էր Արկտիկայի քարտեզը։ Սեղանի վրա դրված էր գորշ զանգակը։ Նանսենը հյուրին աթոռ առաջարկեց նստելու։

— Նստեցե՛ք։ Ի՞նչ եք ցանկանում։ Ի՞նչ են ձեր պլանները։

Ամունդսենն անվճռականորեն նստեց աթոռին. նա հասկանում էր, որ առաջին անգամ լինելով պետք

է բաց անի իր գաղտնիքը։ Ո՞ւմ առաջ։ Նանսենի։ Իր պատանեկական երազների հերոսի առաջ։

Ցավ Ամունդսենը շփոթվեց։

— Ես հասկանում եմ... Քիչ է միայն ճանապարհորդությունները, անհրաժեշտ է լինել նաև գիտության աշխատավոր, — ասաց նա։

— Այո, բայց նախ և առաջ ասացեք ինձ դեպի ո՞ւր եք պատրաստվում և հատկապես որտե՞ղ...

Ամունդսենը մեղմորեն ժպտաց:

— Մոտիկ տարիներում ես մտադիր եմ գտնել հյուսիսարևմտյան ճանապարհը։

Նանսենը բազկաթոռը լետ հրեց, սևեռուն հայացքով նայելով իր հյուրին, հետո աչքը հառեց Արկտիկայի քարտեզին, որը փակցված էր պատին։ Ամերիկայի հյուսիսային ափերը նշված էր կետերով — ոչ-ոք դեռևս երբեք չէր անցել այդ ափերի երկայնքով։

— Գեղեցիկ նպատակ, — ասաց Նանսենը։ — Դրա համար արժե և ապրել և աշխատել։

Ամունդսենը մեղմորեն ժպտաց։ «Նանսենն ասում է՝ գեղեցիկ նպատակ։ Արժե ապրել»։

— Ես ունեմ բևեռային նավարկման փորձ, սակայն գիտական պատրաստություն չունեմ։ Ես լսել եմ ձեզ

մոտ խորհուրդ հարցնելու, թե ինչպես անեմ իմ գիտական պաշարը լրացնելու համար։ Առաջին հերթին ինչն ուսումնասիրեմ։

Միայն յերկու ժամից հետո Ամունդսենը թողեց Նանսենի տունը։ Նա գնում եր այն հավատով, վոր իր ուղին ճիշտ ե, անհնարին բան չկա իր պլաններում։ Սովորել, աշխատել, պատրաստվել։ Յեվ հաղթանակն ապահովված ե։

ԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Խրախուսվելով Նանսենից, Ամունդսենը նույն յերեկոյան Կյուի բրիտանական դիտարանի դիրեկտորին մի յերկար նամակ գրեց։

«Յես մտադիր եմ մոտակա տարիներում ուղևորվել բևեռային յերկիրները՝ հետազոտական նպատակներով։ Յես կցանկանայի ձեր ղեկավարությամբ և ձեր դիտարանում ուսումնասիրել այն ամենը, ինչ վերաբերում ե մագնետիզմին, և այն բոլոր մեթոդները, վորով ոգտվում են մագնիսային դիտողություններ կատարելիս»։

Ամունդսենն իր նամակում պատմում եր այն սոսկալի ձմռան մասին, վորն անց եր կացրել հարավային բևեռային սահմաններում։ Յեթե նա գիտական պատրաստություն ունենար, կարող եր գիտությանը նոր նյութեր տալ։

Ամունդսենն այդ նամակում ուզում եր ընդգծել, վոր նա բոլորովին անփորձ մարդ չե, այլ ունի փորձ և պատրաստականություն բևեռային վորոնումների համար։ Նա սպասում եր, վոր բրիտանական դիտարանի դիրեկտորը սիրով կարձագանքի իր նամակին։ Գիտության մարդիկ պետք ե ոժանդակեն միմյանց։ Այդպես ասաց և Նանսենը։ Շուտով յեկավ նամակի պատասխանը։

«Դիտարանը ծանրաբեռնված ե իր անմիջական աշխատանքներով և չի կարող իր պրակտիկանտների թվում ընդունել ձեզ»։

Պատասխանը շշմեցրեց Ամունդսենին։ Ահա թե ինչ. նշանակում ե խոչընդոտներ, արգելքներ կան վոչ միայն

սառույցներում, բևեռում, այլ և այստեղ՝ կուլտուրական յերկրներում։

«Ի՞նչ արած, կփնտռենք այլ ուղիներ»—վճռեց նա։ Մի՞թե առաջին անգամն ե, վոր նա դժվարությունների յե հանդիպում։

Հենց նույն որն Ամունդսենը գնաց իր ծանոթ, յերիտասարդ պրոֆեսոր Ստեեննի մոտ։ Նա ցույց տվեց նրան բրիտանական դիտարանի դիրեկտորի պատասխանը։

— Դուք պետք ե ձեր բախտը փորձեք Գերմանիայում, յերբ այդ չհաջողվեց Անգլիայում։ Մեկնեցեք Համբուրգ՝ պրոֆեսոր Նեյմայերի մոտ։ Նա դիտարան ե ղեկավարում, թերևս կոժանդակի։

— Կոժանդակի՞ արդյոք,—կասկածեց Ամունդսենը։— Նեյմայերին վողջ աշխարհը ճանաչում ե վորպես հռչակավոր գիտնականի։

— Միևնույն ե, պետք ե փորձել։ Նորվեգիայում դուք ոգնություն չեք գտնի. մեր յերկիրը բավականին աղքատ ե։ Յես ձեզ նամակ կտամ Նեյմայերի անունով, նա ինձ մի քիչ ճանաչում ե։

Յերկար մտածելու ժամանակ չկար. պետք եր անմիջապես գործի անցնել և մի շաբաթից հետո Ամունդսենը մեկնեց Համբուրգ։ Դեռևս նավահանգստից քառասուն կիլոմետր հեռվից Ամունդսենը, վորը հեռադիտակը ձեռին կանգնել եր նավի տախտակամածի վրա, ծովում տեսնում եր բազմաթիվ շոգենավեր։ Մեկը դուրս եր գալիս նավահանգստից, իսկ մի ուրիշը՝ ներս մտնում։ Նավերը դուրս եյին գալիս ու գնում ամբողջ կարավաններով, կարծես թե ծովը նեղ լիներ նրանց համար։

Նավահանգստին մոտիկ սկսեցին հանդիպել խարիսխ գցած շոգենավերը, վորոնք սպասում եյին հերթի բեռ վերցնելու և վերանորոգման համար։ Ամբողջ հորիզոնը ծածկված եր ծխով. տասնյակ հազար շոգենավային ծխնելույզներ ծուխ եյին արձակում դեպի յերկինք։ Ծովափի յերկայնքով ամենայերկար նավերը կանգնել եյին յերեք-

չորս շարքով։ Ինչպիսի դրոշակներ ասես չկային այնտեղ։ Ամեն յերկրից նավեր կային։ Օվկիանոսային տիտանների կողքին կանգնած եյին նավահանգստային փոքրիկ շոգենավերը։ Հսկայական ամբարձիչ կռանները վագոններից քաշ եյին տալիս հսկայական բեռներ։ Ծովափին թրև եյին գալիս նավաստիների խմբեր, վորոնք խոսում եյին աշխարհի բոլոր լեզուներով։

Ամունդսենը ճամպրուկը ձեռքին նավահանգստից ուղևորվեց դեպի այն փողոց, ուր յուրաքանչյուր տան հյուրանոց կար։ Հյուրանոցի ցուցանակները գրված եյին տարբեր լեզուներով։

Ամունդսենը վերցրեց ամենահամեստ համարը և վճարելով ու տեղավորվելով՝ ուղևորվեց Համբուրգի դիտարանը, վոր գտնվում եր այդ հսկայական քաղաքի մյուս մասում։ Ամունդսենը գնում եր մեծ տագնապով, թե արդյոք կընդունի՞ իրեն հռչակավոր գիտնականը։ Խաղաղ մի թաղամասում, ուր այնքան շատ ծաղկած ծառեր կային, նա վորոնում եր դիտարանի սպիտակ շենքը։ Աղմկարար նավահանգստից հետո, այստեղ առանձնապես անդորրություն եր տիրում։

Ամունդսենն անվճռականաբար մտավ դիտարանի գրասենյակը։ Ակնոցավոր, ֆրանտ հագնված մի յերիտասարդ մարդ հարցրեց, թե ո՞ւմ ե ուզում։

— Յես ուզում եյի տեսնել պ. Գեորգ ֆոն-Նեյմայերին։ Ահա իմ հանձնարարականը։

Յերիտասարդը հրավիրեց նրան սպասելու, իսկ ինքը նախասենյակից ինչ-վոր մի ուրիշ սենյակ գնաց։

Ամունդսենը նստեց. նա պատրաստ եր սպասելու մեկ, յերկու ժամ, ինչքան վոր պետք եր։ Սակայն չեր անցել և մի րոպե, յերբ յերիտասարդը նորից հայտնվեց գրասենյակում։

— Խնդրեմ, պ. Նեյմայերը ձեզ ե սպասում։

Ամունդսենը սրտատրոփ ներս մտավ յերևելի գիտնականի առանձնասենյակը։ Սեղանի մոտ նստած եր յո-

թանասուն տարեկան մի ծերունի, յետ սանրված, հարուստ ալեզարդ մազերով և մաքուր ածիլված դեմքով։ Նա սիրով ժպտաց Ամունդսենին և հրավիրեց նստելու։

— Ինչո՞վ կարող եմ ձեզ ոգտակար լինել, յերիտասա՛րդ,— հարգալից հարցրեց նա։

— Յես ուզում եմ գիտություն ձեռք բերել, վորպեսզի բևեռային հետազոտող դառնամ,— հուզված պատասխանեց Ամունդսենը։ — Յես յերկու տարի յեղել եմ անտարկտիկական արշավախմբում և պատրաստվում եմ նոր, ինքնուրույն արշավ կազմակերպել։ Յես ցանկանում եյի մագնիսային դիտողությունների գիտելիքներ ձեռք բերել։

Ծերունին սիրալիր շարժեց գլուխը, սևեռուն հայացքով նայեց Ամունդսենին և, վերջապես, ասաց։

— Իսկ դուք, յերիտասա՛րդ, ի՞նչ մտադրություն ունեք. ասացեք ինչո՞ւմն ե բանը։

Ամունդսենը մի րոպե շփոթվեց. «հայտնե՞լ իր յերազների մասին»։

— Յես մտադիր եմ փորձել... գտնելու հյուսիս արևմտյան ճանապարհը,— դժվարությամբ պատասխանեց Ամունդսենը։

— Լա՛վ, լա՛վ, շատ լավ։ Սակայն յես ձեր աչքերում տեսնում եմ, վոր դուք ինչ վոր դիտավորություն ունեք, ավելի կարևոր. մի թաքցնեք ինձանից։

Ամունդսենն առաջին անգամից ավելի շատ շփոթվեց և ցածրաձայն ասաց։

— Յես կցանկանայի... Յես ուզում եմ գտնել նաև հյուսիսային բևեռը։

Ծերունին հանկարծ բազկաթոռից վեր կացավ և, հեռանալով սեղանից, մոտեցավ Ամունդսենին, սեղմեց նրա ձեռքը և ջերմորեն ասաց։

— Յերիտասարդ, դա մեծ սխրագործություն ե, յես պատրաստ եմ ձեզ ոգնելու։ Ինչ վոր հնարավոր ե պատրաստ եմ ձեզ տալու։ Դուք ուզում եք սովորել իմ դիտարանում, խնդրեմ, թեկուզ և վաղվանից։

ԱՄԵՆ ԻՆՉ ՊԱՐՏՔՈՎ

Ամունդսենը շատ քիչ փող ուներ։ Կարիքն ամեն կողմից խեղդում էր նրան. սակայն ինչ բան է կարիքն այն մարդու համար, որ աշխատում է մեծ նպատակների հասնելու։ Այդպիսի մարդու համար հեշտ է պայքարել կարիքի դեմ։

Ամունդսենն ապրում էր Համբուրգի ծայրամասի ամենաաղքատ բնակարանում, դիտարանից ոչ շատ հեռու և իր ամբողջ օրը սովորելուն էր նվիրել։ Նա ամենից շուտ էր դիտարան գալիս և բոլորից ուշ վերադառնում. իսկ տանը միայն գրքեր էր կարդում և հոդվածներ էր գրում «Բելգիկա» նավով իր կատարած ուղևորության մասին։

Դիրեկտոր Նեյմայերն առաջին իսկ շաբաթից նկատեց Ամունդսենի ջանադրությունը։ Հանդիպումների ժամանակ նա սիրալիր խոսում էր նրա հետ,— հարցնում էր, թե ինչպես է ապրում և ինչպես են ընթանում նրա աշխատանքները։

— Երիտասարդ, այսօր պարապմունքից հետո դուք կմնաք և կգաք ինձ հետ ճաշելու,— ասաց նա մի անգամ Ամունդսենին։

Ամունդսենը հնազանդվեց։ Ծերունի Նեյմայերն ամուրի էր, ճաշում էր ոչ թե տանը, այլ ճաշարանում։ Երբ նրանք երկուսը միասին մտան ճաշարանի գեղեցիկ դահլիճը, Ամունդսենը շփոթվեց և ինքնիրեն կորցրեց։ Նրան թվաց, թե ինքը պալատում է գտնվում,— հսկայական պատուհաններ, քանդակած առաստաղ, շքեղ կահ-կարասի, սքանչելի ամանեղեն։ Ամունդսենը մանկությունից ընտելացել էր աղքատության, համեստության։ Նա հիշեց «Բելգիկա» նավի իր աղքատիկ խուցը, որը շան բնի էր նման, կամ այժմյան աղքատիկ բնակարանը, որի պատուհանները նայում էին ալյուսե պատերին, և այս դահլիճը նրան հեքիաթային բան թվաց։

— Նստեք այստեղ, երիտասարդ, ինձ մոտ,— ասաց Նեյմայերը։— Պատմեցեք ինձ, ինչպես ձմեռեցիք սառույցների վրա...

Ամունդսենը շատ կերավ իր բաժինը,— ճաշը նրա համար միայն պարտականություն էր,— և պատմեց, թե ինչ ապրումներ է ունեցել երկար, սարսափելի ձմեռվա ընթացքում՝ «Բելգիկա»-յի վրա։ Արդեն վաղուց էր վերջացել ճաշը, սակայն Նեյմայերն ու Ամունդսենը դեռևս նստել ու զրուցում էին։

Այսպես սկսվեց հռչակավոր գիտնականի և երիտասարդ պրակտիկանտի բարեկամությունը։ Այդ օրից Ամունդսենը գրեթե ամեն օր Նեյմայերի հետ էր ճաշում։ Զրուցելու հետ միասին նա չէր մոռանում նաև հարցեր տալ։ Նա Նեյմայերին հարցնում էր, թե բևեռային շրջանում ինչպիսի գիտական դիտումներ պիտի կատարել։ Նեյմայերը նրան հարյուրավոր խորհուրդներ էր տալիս։

Հաճախակի Նեյմայերի մոտ էին գալիս զանազան երկրների հռչակավոր գիտնականներ։ Նեյմայերը հարգանքով էր նրանց դիմավորում, բանկետներ էր կազմակերպում նրանց համար և այդ բանկետներին անպայման հրավիրում էր նաև Ամունդսենին, որին և ծանոթացնում էր հյուրերի հետ։

Անցավ հինգ ամիս և Ամունդսենը սովորեց այն, ինչ ուզում էր սովորել։

Նա ինքնուրույն կերպով կարող էր դիտողություններ կատարել երկրի մագնետիզմի գործողության և յեղանակի վերաբերյալ։ Եվ, բացի այդ, նա ամուր կապ էր պահպանում գիտական աշխարհի հետ։ Համբուրգից հետո նա անցավ ելի երկու դիտարան, ծանոթացավ նրանց աշխատանքին։ Այժմ նա, ինչպես հարկն է, զինված էր գիտությամբ։

1900 թվականի աշնանը նա վերադարձավ Նորվեգիա։ Թերթերում և ժուռնալներում տպագրած իր հոդվածների համար նա բավական փող ստացավ և վորոշեց այդ գու-

մարով գնել մի նավ՝ ինքնուրույն ճանապարհորդություններ կատարելու համար։

Բերգեն նավահանգստում նա գտավ մի փոքր հյուսիսային ձկնորսական նավ՝ «Իոա» անունով, վորը վաճառվում եր։ Նավը հին եր, յերեսուն տարի գործածված, դրա համար ել եժան եր վաճառվում։ Ամունդսենն ամեն կողմից զննեց նավը և փորձեց՝ նավելիս։ Դուրս յեկավ, վոր հարմար նավ եր։

— Բայց միայն թե հին ե,— զգուշորեն նկատեց վաճառողը։

— Վոչինչ, նավն իմ տարիքն ունի,— պատասխանեց Ամունդսենը։

Այդ նավով Ամունդսենը վերադարձավ Քրիստիանիա։ Վերջապես նա ունեցավ իր նավը, անհրաժեշտ գիտելիքները, նա զինված եր լիակատար վճռականությամբ, պատրաստ եր հեռավոր ճանապարհորդություններ կատարել՝ հյուսիս-արևմտյան ճանապարհը գտնելու համար։

Սակայն փող ե պետք, փո՜ղ։ Նա իր ամբողջ փողերը ծախսեց նավ գնելիս, իսկ փող ե պահանջվում հանդերձանք ու մթերապաշար գնելու համար։ Ինչքան ժամանակ կխլի ճանապարհորդությունը. թերևս յերեք, չորս տարի։ Անհրաժեշտ ե առնվազն յերեք տարվա հանդերձանք ունենալ։

Ամունդսենն ընտրեց իր համար վեց ընկեր՝ իր նման վճռական և նրանց հետ ուղևորվեց Սառուցյալ ովկիանոս՝ փոկեր վորսալու։ Նա ուզում եր վորսի միջոցով փող ձեռք բերել։ Ամբողջ ամռան «Իոա»-ն նավում եր Գրենլանդիայի ափերով։

Վորսորդությունը հաջող անցավ։ Նրանք Նորվեգիա վերադարձան վորոշ գումար դիզած։ Այնուամենայնիվ այդ փողը քիչ եր և Ամունդսենն ստիպված եր պարտք վերցնել ումից հնարավոր եր։ Նրան պարտք տալիս եյին, բայց փոքր գումարներով։

Ամբողջ մի ձմեռ նա կորցրեց պատրաստություններ

տեսնելով։ Ամունդսենը տնտեսաբար եր ծախսում յուրաքանչյուր կոպեկը։ Նա գնեց պարեն, զենք, հագուստ, գիտական աշխատանքի գործիքներ և գարնանը պատրաստ եր ուղևորվելու դեպի անհայտ ճանապարհը։ «Իոա»-ն խիստ ծանրաբեռնված կանգնել եր նավահանգստում։ Սակայն այստեղ մի դժբախտություն պատահեց, վոր քիչ եր մնացել խորտակեր ամբողջ գործը։

Ինչ-վոր մեկը լուր եր տարածել, թե Ամունդսենն անմիտ գործ ե բռնել։ Ինչպե՞ս կարելի յե այդպիսի փոքր, հին նավով հյուսիս-արևմտյան ճանապարհը վորոնելու գնալ, յերբ խոշոր նավերն անգամ խորտակվում են այնտեղ։ Չորս հարյուր տարի շարունակ մարդիկ խոշոր միջոցներ ծախսելով, խոշոր նավերով փնտրում են այդ ճանապարհը և չեն կարողանում գտնել. ել ինչ կարող ե անել թշվառական Ամունդսենը։

Ամունդսենի վարկատուներն անհանգստացան և պահանջում եյին վերադարձնել իրենց փողերը։ Ամունդսենը վիճում եր, համոզում, բայց վոչինչ չեր ոգնում։

— Փողը վերադարձրեք։

Առանձնապես կատաղորեն հարձակվում եր մի վարկատու, վոր պահածոների առևտրական եր։

— Յեթե փողը չվճարեք, յես ձեր նավը կալանքի տակ կառնեմ,— վորոշակի հայտարարեց նա Ամունդսենին։

Խեղճ Ամունդսենն իրան կորցրել եր։ Ինչքան նեղություն, ինչքան պատրաստություն և բոլորն իզուր պիտի կորչեր։ Այդ որերում նա նիհարեց, գիշերները չեր քնում և յելք եր վորոնում, իսկ առևտրականն իր ասածն եր պնդում։ Վերջապես, նա հայտարարեց.

Առանձնապես կատաղորեն հարձակվում եր մի վարկատու։

մարով գնել մի նավ՝ ինքնուրույն ճանապարհորդություններ կատարելու համար։

Բերգեն նավահանգստում նա գտավ մի փոքր հյուսիսային ձկնորսական նավ՝ «Իոա» անունով, վորը վաճառվում եր։ Նավը հին եր, յերեսուն տարի գործածված, դրա համար ել եժան եր վաճառվում։ Ամունդսենն ամեն կողմից զննեց նավը և փորձեց՝ նավելիս։ Դուրս յեկավ, վոր հարմար նավ եր։

— Բայց միայն թե հին ե,— զգուշորեն նկատեց վաճառողը։

— Վոչինչ, նա՛ իմ տարիքն ունի,— պատասխանեց Ամունդսենը։

Այդ նավով Ամունդսենը վերադարձավ Քրիստիանիա։ Վերջապես նա ունեցավ իր նավը, անհրաժեշտ գիտելիքները, նա զինված եր լիակատար վճռականությամբ, պատրաստ եր հեռավոր ճանապարհորդություններ կատարել՝ հյուսիս-արևմտյան ճանապարհը գտնելու համար։

Սակայն փող ե պետք, փո՛ղ։ Նա իր ամբողջ փողերը ծախսեց նավ գնելիս, իսկ փող ե պահանջվում հանդերձանք ու մթերապաշար գնելու համար։ Ինչքան ժամանակ կխլի ճանապարհորդությունը. թերևս յերեք, չորս տարի։ Անհրաժեշտ ե առնվազն յերեք տարվա հանդերձանք ունենալ։

Ամունդսենն ընտրեց իր համար վեց ընկեր՝ իր նման վճռական և նրանց հետ ուղևորվեց Սառուցյալ ովկիանոս՝ փոկեր վորսալու։ Նա ուզում եր վորսի միջոցով փող ձեռք բերել։ Ամբողջ ամառն «Իոա»-ն նավում եր Գրենլանդիայի ափերով։

Վորսորդությունը հաջող անցավ։ Նրանք Նորվեգիա վերադարձան վորոշ գումար դիզած։ Այնուամենայնիվ այդ փողը քիչ եր և Ամունդսենն ստիպված եր պարտք վերցնել ումից հնարավոր եր։ Նրան պարտք տալիս եյին, բայց փոքր գումարներով։

Ամբողջ մի ձմեռ նա կորցրեց պատրաստություններ

տեսնելով։ Ամունդսենը տնտեսաբար եր ծախսում յուրաքանչյուր կոպեկը։ Նա գնեց պարեն, զենք, հագուստ, գիտական աշխատանքի գործիքներ և գարնանը պատրաստ եր ուղևորվելու դեպի անհայտ ճանապարհը։ «Իոա»-ն խիստ ծանրաբեռնված կանգնել եր նավահանգստում։ Սակայն այստեղ մի դժբախտություն պատահեց, վոր քիչ եր մնացել խորտակեր ամբողջ գործը։

Ինչ-վոր մեկը լուր եր տարածել, թե Ամունդսենն անմիտ գործ ե բռնել։ Ինչպե՞ս կարելի յե այդպիսի փոքր, հին նավով հյուսիս-արևմտյան ճանապարհը վորոնելու գնալ, յերբ խոշոր նավերն անգամ խորտակվում են այնտեղ։ Չորս հարյուր տարի շարունակ մարդիկ խոշոր միջոցներ ծախսելով, խոշոր նավերով փնտռում են այդ ճանապարհը և չեն կարողանում գտնել. ել ինչ կարող ե անել թշվառական Ամունդսենը։

Ամունդսենի վարկատուներն անհանգստացան և պահանջում եյին վերադարձնել իրենց փողերը։ Ամունդսենը վիճում եր, համոզում, բայց վոչինչ չեր ոգնում։

— Փողը վերադարձրեք։

Առանձնապես կատաղորեն հարձակվում եր մի վարկատու։

Առանձնապես կատաղորեն հարձակվում եր մի վարկատու, վոր պահածոների առևտրական եր։

— Յեթե փողը չվճարեք, յես ձեր նավը կալանքի տակ կառնեմ,— վորոշակի հայտարարեց նա Ամունդսենին։

Խեղճ Ամունդսենն իրան կորցրել եր։ Ինչքան նեղություն, ինչքան պատրաստություն և բոլորն իզուր պիտի կորչեր։ Այդ որերում նա նիհարեց, գիշերները չեր քնում և յելք եր վորոնում, իսկ առևտրականն իր ասածն եր պնդում։ Վերջապես, նա հայտարարեց.

— Ցեթե մի օրից հետո պարտքդ չվճարես, ես կհայտնեմ ոստիկանությանը։

Ամունդսենը հասկացավ, որ հասել է վճռական րոպեն։ Նա իսկույն հրավիրեց իր ընկերներին և, երբ վեց հոգին էլ եկան նրա մոտ, նա ասաց.

— Դրությունն ահա այսպես է, կամ մենք այս գիշեր գաղտնի պիտի մեկնենք, կամ վաղը մեզանից կխլեն և՛ գրասանավը, և՛ ամեն ինչ։ Համաձա՞յն եք իսկույն մեկնելու։

— Իհարկե, համաձայն ենք։

— Այն ժամանակ, կես գիշերին նավի վրա եղեք։

Ցերեկոյան հորդ անձրև սկսվեց։ Փողոցներն ու նավահանգիստը դատարկվեցին։ Ամունդսենը և իր ընկերները վերարկուների մեջ փաթաթված՝ տեղատարափ անձրևի տակ գնացին նավահանգիստ և մտան նավը։ Վերջինս հանդարտորեն օրորվեց և ծովախորշից դուրս եկավ ծով։

Կարծես թե ծովահեններ էին փախչում գերությունից։

Առավոտյան նավն արդեն շատ էր հեռացել։ Խիզախ ծովագնացները ծիծաղում էին. նրանք պատկերացնում էին, թե ինչպես լուսաբացին առևտրականը եկել է նավահանգիստ, իսկ իրենք արդեն ծովում են, ազատության մեջ, մեծ նպատակի ճանապարհին։

ՆՊԱՏԱԿԻՆ ՀԱՍՆԵԼՈՒ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ

«Իոա» նավն ութ շաբաթ անընդհատ լողում էր Ատլանտյան օվկիանոսում։ Խիզախ նավորդներն առաջին հերթին մտան Դիսկ կղզու Գոդթհավն ծոցը, Գրենլանդիայի արևմտյան ափերին։ Այստեղ Ամունդսենը գնեց քսան շուն, որը նրան ծախեց դանիական առևտրական մի ընկերություն։ Այստեղից արշավախումբն ուղևորվեց դեպի հեռու հյուսիս, մտավ Դեյլրիմպլ բնակավայրը, ուր կանգնած էին շոտլանդական կետորսական նավեր։ Ամունդսենն իր աղքատիկ միջոցների հաշվին նրանցից

Դիսկ կղզում Ամունդսենը շներ գնեց։

ելի պարեն գնեց և լրացրեց բենզինի ու նավթի պաշարը, որ ծախսվել էր Ատլանտյան օվկիանոսով անցնելիս։

Այս կողմերում փոքրիկ նավն ընկավ լողացող սառույցների մեջ և մի քանի անգամ խիստ վտանգի ենթարկվեց։

Նավը պատվով դիմացավ այդ առաջին փորձությանը—բևեռային սառույցներին հանդիպելուն։ Նա շատ խոր էր նստել ջրի մեջ, որովհետև չափից ավելի բեռնված էր։ Նավամբարն ամբողջովին լցված էր պարենի, հագուստի արկղներով. Նույնպիսի արկղներ կային նաև տախտակամածի վրա։ Ամունդսենը ծիծաղով, իր նավը համեմատում էր կահույքով բեռնված սայլի հետ։

— Կարծես տեղափոխվում ենք բնակարանից-բնակարան. մեզ հետ վերցրել ենք այն բոլորը, ինչ հնարավոր է։

Սակայն նրանք արտաքին տեսքի մասին հոգալու կարիք չունեին. Նրանց անհրաժեշտ էր, որքան հնարավոր է, շատ պաշար վերցնել, որովհետև իրենք էլ չգիտեին, թե քանի տարի ստիպված կլինեն մնալ բևեռային երկրներում։

1904 թվականի օգոստոսին փոքրիկ էքսպեդիցիան հասավ Բիչի կղզին։ Այդ այն ամենահյուսիսային կետն էր, որին երբևիցե հասել էին նավերը։ Դրանից ավելի հյուսիս դեռևս ոչ ոք չէր անցել։ Կղզին իրենից ներկայացնում էր բազալտի սև ժայռ, որի բարձունքները պատած էին հավիտենական վիթխարի սառցադաշտերով։

Նավը կանգ առավ փոքրիկ ծովածոցի ափին։

Նրանք ամենամանրամասն մագնիսային դիտողություններ կատարեցին, որպեսզի ճշգրիտ որոշեն, թե ինչ ուղղության վրա է գտնվում հյուսիսային մագնիսային բևեռը։ Դիտողությունները ցույց տվին, որ բևեռը գտնվում է նրանցից հեռու դեպի արևմուտք՝ ինչ-որ

մի տեղ։ Ձմեռը դեռ չէր սկսվել և կարելի էր առաջ շարժվել։

Բազմաթիվ մանր կղզիների կողքով, նեղուցների միջով «Իոա»-ն շարժվեց դեպի արևմուտք։ Այդ վայրերը բոլորովին չէին հետազոտված։ Ամունդսենն այդ տեղերի մասին չուներ իր մոտ և ոչ մի քարտեզ, չնայած նա հավաքել էր այն ամենը, ինչ որ կար այդ երկրների մասին։ Նավը պետք է շարունակ առաջ գնար խարխափելով։ Ամունդսենը վախենում էր, թե ճանապարհին որևէ տեղ խութերի կհանդիպեն և նավը կխորտակվի։ Ամունդսենի ընկերները խորաչափով անընդհատ չափում էին ծովի խորությունը, և ահա այստեղ պարզվեց մի շատ զարմանալի բան. փոքրիկ նավի մի կողմից խորաչափը ցույց էր տալիս անհավատալի խորություն, իսկ մյուս կողմից՝ ալիքների տակից դուրս էին ցցվել խութեր։ Ինքը՝ Ամունդսենը շարունակ լինում էր կայմի վրա ամրացված տակառում և ուշադիր նայում էր, թե ինչ ճանապարհով պիտի ընթանալ։

Մի անգամ, ի դժբախտություն մեր ճանապարհորդների, նեղուցում սոսկալի փոթորիկ բարձրացավ։ Մի վիթխարի ալիք նավը գրկեց և քարշ տվեց դեպի ստորջրյա ժայռը։ Թվում էր, թե կործանումն անխուսափելի էր։ Մի րոպե ևս, և ալիքն ստորջրյա քարերին պիտի զարներ նավը և խորտակեր այն։ Բայց ալիքը վեր բարձրացրեց նավը և... ժայռի վրայով շպրտեց խոր տեղը։ Նավում լսվեցին ուրախության ճիչեր։ Վտանգն անցավ։ Ամունդսենը, որ նստած էր կայմի տակառի մեջ, նշաններով շնորհավորեց իր ընկերներին։ Հանկարծ ղեկակալը հուսահատված գոռաց.

— Ղեկը չի՛ աշխատո՛ւմ...

Ամունդսենն շտապ իջավ տախտակամածը և վազեց դեպի ղեկը։ Ղեկը թուլացած տատանվում էր նավախելի կողմը։ Պարզվեց, որ փոթորկի ժամանակ, երբ ալիքը նավը շպրտել էր ժայռի վրայով, ղեկը կպել էր

քարի և նա ցածից այնպիսի ուժեղ հարված էր ստացել, որ վեր էր բարձրացել և նրա պողպատյա թևերը ցած էին սահել հանգույցից։ Բոլորը, ով որ կարող էր վազեցին դեպի նավախելը, կպան ղեկին, աշխատում էին պահել այն իր տեղը։ Այդ րոպեին բարձրացավ մի նոր ալիք, բարձրացրեց նավը և մեր ծովագնացներին հաջողվեց այնպես շուռ տալ ղեկը, որ նա նորից հանգույցի մեջ ընկավ։ Ամեն ինչ փրկված էր։ Սակայն այս բանն այնքան վախեցրեց Ամունդսեններին, որ նա որոշեց շուտով հասնել մոտակա ժայռին և սպասել, մինչև որ փոթորիկը հանդարտվի։ Նրանք կանգ առան մի հարմար տեղ՝ մի փոքր ժայռոտ կղզու մոտ և տանջված այդ ապրումներից՝ որոշեցին պառկել քնելու։

Ամունդսենն արդեն գնացել էր իր խցիկը։ Հանկարծ նա իր յետևում մի սոսկալի ճիչ լսեց.

— Հրդեհ։

Նա վազեց դեպի տախտակամածը։ Հսկայական բոց էր բարձրանում մեքենայական բաժնից։ Բոլորը վազեցին դեպի իջնելու անցքը։ Ամունդսենը ձայն տվեց ընկերներին, որ իրեն օգնեն բարձրացնելու հագուստով լցված ծանր արկղը։ Արկղը դրին անցքի դեմ և դրանով դադարեցրին օդի հոսանքը դեպի կրակը։ Այնուհետև Ամունդսենը վերցրեց դույլը և, ջրով լցնելով, օդանցքի միջով շաղ տվեց մեքենայական բաժնում։ Հատակին բենզին էր թափված։ Բարակ շիթով այն դուրս էր թափվում տակառից, որ ջարդվել էր որորման ժամանակ։ Բավական էր մի րոպե ուշանալ և նավն ամբողջովին կայրվեր, ու այն ժամանակ անվեհեր ճանապարհորդները կամ զոհ կգնային կրակին, կամ սովամահ կլինեյին ամայի ծովափում։

Փոթորիկը վերջացավ միայն հինգերորդ օրը և «Իոա»-ն Ռե նեղուցով առաջ շարժվեց դեպի հեռուն։

ՁՄԵՌՈՒՄԸ

Արդեն վրա հասավ սեպտեմբեր ամիսը, օրերն ավելի ու ավելի կարճացան, հյուսիսից սկսեցին փչել սառցային քամիները։ Պարզ էր, որ ահա շուտով վրա կհասնի բևեռային յերկար ձմեռը և նրա հետ ամիսներ տևող գիշերը։ Ամունդսենը որոշեց պատրաստվել ձմեռելու։

Սեպտեմբերի իններին նրանք մոտեցան Վիլյամս կղզու հարավային ափին։ Կղզին ամբողջովին շրջապատված էր ոչ միայն հին այլ և նոր, վերջին ընթացքում առաջացած սառույցներով։ Կղզու բոլոր ժայռերը ծածկված էին նոր նստած ձյունով։ Ափերի յերկարությամբ նավն անցավ քսան կիլոմետր՝ ձմեռելու համար հարմար տեղ որոնելով։ Կղզու ափը զառիթափ էր և ջրից բարձրանում էր պատի պես։ Միայն մեկ տեղ, յերկար ու նեղ մի ծովածք կար, որը հրաշալի ու բնական մի ծովածոց էր կազմում։ «Իոա»-ն մտավ այդ ծովածոցը։ Ծովածոցի խորքում ափը բոլորովին հարթ էր ու շատ հարմար կանգ առնելու համար։

— Այստեղ մենք կձմեռենք, — որոշեց Ամունդսենը։

Նավը մոտեցրին ծովափին և ամրացրին հուսալի, ամուր ճոպաններով. նավի կողքից մինչև ափը կամրջակ դրվեց և անվեհեր ճանապարհորդներն սկսեցին բեռնաթափել նավը։ Արկղները տախտակամածի վրա բաց արին և մաս-մաս տեղափոխեցին ծովափը։ Այդ արկղները շինված էին ամուր փայտից, իսկ տախտակները մեխված էին պղնձե մեխերով։ Ամունդսենն այնպես էր հոգ տարել, որ ապագա հյուղակներում, ուր նրանք ստիպված կլինեն մագնիսային դիտողությունները կատարել, ոչ մի յերկաթե մեխ չլինի, որ ազդի մագնիսային ասեղի վրա։ Ծովափի զանազան վայրերում ճանապարհորդները դրին մարմարյա հաստ տախտակներ և նրա վրա հաստատեցին գործիքներ՝ դիտողություններ կատարելու համար, իսկ նրանց վրա տախտակե ծածկոցներ դրին ու մեխեցին

Կղզում կային բազմաթիվ յեղջերուներ:

պղնձե մեխերով։ Յերբ գործիքները դրվեցին, ճանապարհորդներն սկսեցին տեղ կառուցել շների համար և խրճիթներ՝ իրենց համար։ Ամունդսենն ամեն ինչ նախապես հաշվի յեր առել. վոչ մի մանրուք անգամ չեր մոռացվել։ Խրճիթները կառուցվեցին հարմար ձևով և տաք եյին. ճանապարհորդներն ամեն հարմարություն ունեյին։ Կառուցումը գրեթե մի ամբողջ ամիս տևեց։

Ամունդսենի յերկու ուղեկիցները լավ նշան խփել գիտեյին։ Կանգ առնելու հենց առաջին որերը նրանք սկըսեցին վորսորդությամբ զբաղվել։ Կղզում բազմաթիվ յեղջերուներ կային։ Հավանաբար նրանք յերբեք մարդու յերես չեյին տեսել. վորսորդներին շատ եյին մոտենում և վորսորդները յերկու շաբթում հարյուրից ավելի յեղջերու խփեցին։ Սպանած յեղջերուները մաշկեցին, միսը

թաղեցին խրճիթից վոչ հեռու՝ սառույցների մեջ։ Ամբողջ ձմեռվա համար պարենի պաշար պատրաստեցին։

Մի անգամ առավոտյան Ամունդսենն իր յերկու ընկերոջ հետ կանգնել եր նավի տախտակամածին. նրանցից մեկը հանկարծ գոռաց.

—Նայեցե՛ք, յեղջերո՛ւ։

Յեվ մատով ցույց տվեց մի սև բիծ, վոր յերևում եր լեռան լանջին։ Մյուս ընկերը ծիծաղեց.

— Այդ յեղջերուն յերկու վոտի վրա յե ման գալիս։

— Ինչպե՞ս թե յերկու վոտի վրա,— հարցրեց Ամունդսենը։

— Այդ մարդ ե։

Ամունդսենը հեռադիտակը մոտեցրեց աչքերին։ Իսկապես, լեռան լանջով մի մարդ եր գալիս դեպի իրենց իջևանը, փաթաթված գազանի մորթու մեջ։ Հետո լեռան հետևից յերևացին ելի չորս մարդ, վորոնք զինված եյին նիզակներով ու նետ-աղեղներով։ Նրանք վստահորեն գալիս եյին դեպի իջևանը։

—Կարող ե պատահի, վոր նրանք մեզ վրա հարձակվեն,— ասաց Ամունդսենը։

—Հապա, ընկերներ, վերցրեք հրացանները։

Ամունդսենի յերկու ընկերներն շտապ խցիկը գնացին և այնտեղից դուրս յեկան հրացանները ձեռներին։ Ամունդսենը նույնպես վերցրեց իր հրացանը և յերեքով առաջ շարժվեցին՝ դիմավորելու անծանոթներին։ Ի՞նչ մտադրությամբ են նրանք այստեղ գալիս. բարեկամնե՞ր են, թե՞ թշնամիներ։

Ընկերներից մեկն ասաց.

—Սրանք եսկիմոսներ են. մեզ ի՞նչ կարող են անել իրենց նետերով։

Յերկու փոքրիկ ջոկատներն իրար մոտեցան և տասնհինգ քայլի վրա կանգ առան։ Ամունդսենը նկատեց, վոր եսկիմոսները շարունակ պատրաստ դրությամբ են պահում իրենց նետ և աղեղները։ Սակայն նա չեր ուզում խախտել խաղաղությունը։ Նա դարձավ իր ընկերներին ու ասաց.

Եսկիմոսները։

— Յեկեք դեն գցենք հրացանները և ցույց տանք նրանց, որ մենք չենք ցանկանում կռվել։

Յեվ յերեքն էլ մի կողմ գցեցին հրացանները։ Եսկիմոսներն էլ անմիջապես նետեցին իրենց նետ-աղեղները։ Այդ ժամանակ Ամունդսենը մենակ մոտեցավ նրանց առաջնորդին, ձեռք մեկնեց, սեղմեց նրա ձեռքը, գլխով արեց, թափահարեց ձեռները, աշխատելով ցույց տալ եսկիմոսին, որ իրենք վոչ մի թշնամական մտադրություն չունեն։ Եսկիմոսները հասկացան նրան։ Նրանք նույնպես գլխով արին, ծիծաղեցին։ Եսկիմոսներն ու ծովագնացները մոտեցան իրար և զանազան շարժումներով ու ժպիտներով սկսեցին խաղաղ զրուցել իրար հետ։

Ամունդսենը հյուրերին տարավ իրենց իջևանը, հրավիրեց խրճիթը, այնտեղ նրանց հյուրասիրեց մսով ու շոկոլադով, և բարեկամություն հաստատվեց։ Ամունդսենն եսկիմոսներին ցույց տվեց դանակներ, կացիններ, ասեղներ։ Այդ վայրերում շատ քիչ ե ծառ պատահում, յեղածն էլ գալիս ե սիբիրյան գետերով, սառույցների միջով՝ հյուսիսային բևեռի վրայով։ Իսկ յերկաթի մասին այստեղ

Ամունդսենը կրակեց յեվ շուռ յեկավ:

գաղափար անգամ չունեյին։ Էսկիմոսներն իրենց զենքերը շինում են ծովային կենդանիների վոսկրից։ Նրանց աղեղները շինված եյին կետի կողոսկրներից։ Նրանք անհավատ սարսափով եյին դիտում, թե ինչպես Ամունդսենը յերկաթե սղոցով կտրում և ծառը և կացնով տաշում տախտակը։

Այս ամենը նրանց միանգամայն անծանոթ եր։

Նավից մի քիչ հեռու, ծովածոցում, լողում եյին կայիրներ։ Ամունդսենը վերցրեց հրացանը, նշան բռնեց և կրակեց նրանց վրա. մի քանի կայիր սպանվեցին։ Նրանք ջրի մեջ շուռ յեկան և կտուցները վեր բարձրացրին։ Ամունդսենը շուռ յեկավ, վոր տեսնի, թե հրացանի կրակոցն ինչ տպավորություն թողեց էսկիմոսների վրա։ Էսկիմոսները — բոլոր հինգն էլ — յերեսնիվայր պառկած եյին գետնին։ Սպիտակ մարդիկ նրանց աչքում ահավոր աստվածներ եյին թվում։ Ամունդսենը մոտեցավ նրանց, հերթով վերցրեց յուրաքանչյուրին, հանգստացրեց և նորից հյուրասիրեց։ Յերբ էսկիմոսները մի քիչ հանգստացան, նրանք զանազան նշաններով սկսեցին խնդրել, թե արդյոք չի՞ կարելի, վոր նրանք ամբողջ ցեղով գան այստեղ և նրանց մոտ բնակություն հաստատեն։ Ամունդսենը խորհրդակցեց իր ուղեկիցների հետ և թույլ տվեց գալ։ Էսկիմոսները մեկնեցին, իսկ յերկու որից հետո նրանց իջևանից կես կիլոմետրը հեռու տեղծվեց մի ամբողջ գյուղ, բաղկացած

հիսուն էսկիմոսական խրճիթներից, վոր կառուցված եյին ձյունից ու սառույցից։ Յեկել եյին ընդամենը յերկու հարյուր հոգի — տղամարդիկ, կանայք և յերեխաներ։

Դեռևս Նորվեգիայում, արշավի պատրաստվելիս, Ամունդսենը յենթադրում եր, վոր վաղ թե ուշ ինքը հանդիպելու յե էսկիմոսներին և թերևսստիպված կլինի նրանց հետ բան փոխանակելու։ Դրա համար էլ նա գնել եր դանակներ, ասեղ, կեռեր, այս բոլոր իրերը գտնվում եյին նավում, առանձին արկղների մեջ։ Այժմ արկղները դուրս բերին ու բաց արին։ Ամունդսենը վորոշեց հավաքել էսկիմոսների տնային և վորսորդական կենցաղի առարկաներ, նա գիտեր, վոր դրանք կհարստացնեն իր գիտությունը։ Դանակի, կեռի, ասեղների փոխարեն նա ժողովեց ամենաբազմազան զգեստներ, զենքեր, ձկնորսական ուռկաններ և զանազան իրեղեններ։ Էսկիմոսներն ուրախությամբ ամեն ինչ փոխանակում եյին։ Մետաղից շինված ամեն մի չնչին բան էսկիմոսներին թըվում եր մեծագույն, թանկարժեք բան։ Այլ իրերի թվում Ամունդսենն ստացավ կանացի յերկու լրիվ հագուստ, վոր պատրաստված եյին գեղարվեստական մեծ ճաշակով և կարված սպիտակ ու սև յեղջերուների մորթուց։



Բոլոր հինգ հոգին էլ պառկել էյին գետնին՝ յերեսները ներքև:

Ամբողջ ձմեռն Ամունդսենն ու նրա ընկերները կողք-կողքի ապրեցին էսկիմոսների հետ։ Նրանք դիտեցին, ուսումնասիրեցին նրանց կյանքի բոլոր մանրամասնու-

թյունները: Ամունդսենը նըրանց հետ վորսորդության եր գնում. Նա տեսնում եր, թե եսկիմոսներն ինչպիսի ճարպկությամբ վոսկրները դուրս են քաշում հենց նոր սպանված կենդանու մարմնից, ինչպես են ծռում կամ շտկում, վորպե զի նրանից ստանան նետ, աղեղ, ասեղ կամ դանակ:

Ձմռան կեսերին կղզուց սկսեցին գալ եսկիմոսների նոր խմբեր: Նրանք խմբերով յերկար ժամանակ կանգ առան ծովածոցից վոչ հեռու: Նրանք մեր ճանապարհորդներին առաջարկում եյին բեվեռային աղվեսի մորթիներ, և Ամունդսենը վորսորդական մեծ դանակը (շվեդական պողպատից շինված) փոխանակում եր տասներկու բևեռային աղվեսի լավագույն մորթիների հետ:

Վաղուց արդեն սկսվել եր բևեռային գիշերը, ժամանակը տխուր եր անցնում և, վորպեսզի իրենց կյանքում վորևե փոփոխություն մտցնի, Ամունդսենը հաճախ խնջույքներ եր սարքում եսկիմոսների հետ: Լուսնի կամ հյուսիսափայլի լույսով, նորվե-

Դանակի, գդալի յեվ պահածոների փոխանակությունը…

գացիները և եսկիմոսները նշան եյին խփում, վորսի եյին գնում և գրազ բռնելով, դահուկներով վազ եյին տալիս:

Բևեռային գիշերը տևեց յերեք ամիս: Ամունդսենը և իր ընկերները շարունակ աշխատանքով եյին զբաղված. Նրանք մագնիսային և ոդերևութաբանական դիտողություններ եյին կատարում, ուսումնասիրում եյին եսկիմոսների կենցաղը: Ձմեռելու ընթացքում նրանք այնքան գիտական նյութ հավաքեցին, վոր հետո նորվեգիայում գիտնականները մոտ քսան տարի այդ նյութերի ուսումնասիրությամբ եյին զբաղված: Դեռևս գիտությունը յերբեք հյուսիսային մագնիսային բևեռի յերևույթների մասին այնքան լրիվ դիտողություններ չեր ստացել, վորքան այդ ամիսների ընթացքում, այս փոքրիկ արշավախումբն եր ձեռք բերել:

Փետրվարի կեսերին արևը դուրս յեկավ, ցերեկներն սկսեցին արագորեն յերկարել և, վերջապես,


…Ամունդսենն եսկիմոսներից ստացավ զանազան իրեր:

Բևեռային աղվես։

չեկավ բևեռային գարունը։ Սակայն Ամունդսենը դեռևս յերկար պետք է սպասեր իր նախկին տեղում։ Սառույցներն ամուր կաշկանդել եյին ծոցն ու նեղուցները։

Անցավ մայիսը, հունիսը, իսկ սառույցները դեռևս չեյին հալվում։ Միայն հուլիսին սկսվեց սառույցի շարժումը և կղզիների միջև ընկած նեղուցներում յերևաց ջուրը։ Ամունդսենն սկսեց պատրաստվել նոր արշավի, դեպի արևմուտք, դեպի նպատակը։

Ոգոստոսի սկզբին հնարավորություն ստեղծվեց նեղուցն անցնելու։ Եսկիմոսները հասկացան, վոր սպիտակները վորտեղ վոր ե, պետք ե թողնեն ու հեռանան իրենցից։ Նրանք ամեն կերպ իրենց տխրությունն եյին արտահայտում։ Ամունդսենը նրանց նվիրեց այն ամբողջ փայտեղենը, վորից նրանք շինել եյին իրենց խրճիթները, այդպիսի նվերն եսկիմոսներին աներևակայելի բան եր թվում։

Վերջապես, ոգոստոսի 13-ին բոլոր պատրաստությունները ավարտված եյին, և նավը մտավ նեղուցը։ Եսկիմոսները յերկար ժամանակ ափերով ուղեկցում եյին նրանց։

ՃԱՆԱՊԱՐՀԸ ԳՏՆՎԱԾ Ե

Արևելյան բարեհաջող քամու ժամանակ «Իոա»-ն մեկ որում կտրում եր գրեթե հարյուր կիլոմետր ճանապարհ։ Սկզբում նավը գնում եր Սիմպսոնի նեղուցով։ Այդ նեղուցով դեռևս չեր անցել և վոչ մի նավ։ Նեղուցն այնքան կեռ ու մեռ եր, վոր ամեն րոպե թվում եր, թե, ահա, վորտեղ վոր ե, կվերջանա և նավը կընկնի փակ ծովածոցի մեջ։

Յերեք շաբաթ շարունակ նավն այս տեղերով եր

անցնում և շարունակ չափում եր ջրի խորությունը։ Սա շատ քրտնաջան աշխատանք եր։ Բարձր ծովափերի միջև քամին հազիվ եր նկատվում. նավը շարունակ պտուտակի ոգնությամբ եր առաջ ընթանում։ Յերբեմն նեղուցը ճյուղավորվում եր, ճյուղերը գնում եյին տարբեր ուղղությամբ և այդ ժամանակ Ամունդսենի առաջ հարց եր ծագում՝ վո՞ր նեղուցով գնալ։ Դեռևս Գերմանիայում, Նորվեգիայում, իսկ հետո և վերջին ձմեռվա իջևանում նա մանրամասն ուսումնասիրել եր այն բոլոր գրքերը, վոր յերբևե գրվել եյին այդ վայրերի մասին։ Չորս հարյուր տարվա ընթացքում մարդիկ բազմիցս փորձել եյին անցնել այդ նեղուցներով, բայց ամեն անգամ անհաջողության եյին մատնվել. վորևե նեղուցում նրանք խրվել եյին կամ խորտակվել և կամ վերադարձել հետ։ Բազմաթիվ մանր կղզիները մոլորեցրել եյին բոլոր ճանապարհորդներին. իսկ ամառն այստեղ շատ կարճ եր. բաց ծովում կարելի չեր նավել միայն մեկ ու կես ամիս, և Ամունդսենն այժմ վախենում եր, թե յերկրորդ ձմեռը վրա կհասնի մերձակա նեղուցներից վորևե մեկում։ Մի ժամանակ, ահա այստեղ, հատկապես այս վայրերում, խորտակվեց անվեհեր Ջոն Ֆրանկլինը. նա հենց այս հյուսիս-արևմտյան ճանապարհն եր վորոնում։ Ամունդսենը հիշեց իր պատանեկության որերը, յերբ նա առաջին անգամ կարդաց անվեհեր Ֆրանկլինի մասին գրված գիրքը։

Յեվ այժմ, դիտելով կղզիները, վորոնք սև կողերով շրջապատել եյին նեղուցը, նա կարծես թե տեսնում եր անվեհեր ճանապարհորդների ստվերները, վորոնք մի ժամանակ անցել եյին այս տեղերով։

Ջոն Ֆրանկլինն ու նրա ուղեկիցները սովամահ յեղան։ Բայց ինչպե՞ս կարող եր պատահել այդ։ Կղզում յերևում եյին վայրի յեղջերուների հոտեր, նեղուցում սառույցների վրա պատահում եյին փոկեր, ամեն մի ծովախորշում կային բազմաթիվ ձկներ։ Ամունդսենը չեր կարողանում հասկանալ, թե ինչպես Ֆրանկլինը և նրա ըն-



Ամբողջ օրն Ամունդսենն անց էր կացնում կայմի տակառում:

կերները սովամահ չեղան, յերբ նրանց շրջապատում այնքան շատ սնունդ կար։

Նեղուցի ճյուղավորումներն սկսեցին ավելի հաճախակի դառնալ։ Ամունդսենը նկատել եր, վոր այդ նեղուցներում հոսանքը տարբեր ե լինում՝ մեկում ուժեղ, իսկ մյուսներում՝ թույլ։ Ամենաուժեղ հոսանքն ամենահարավային նեղուցներումն եր։ Նա նավեց այդ նեղուցներով, թեև յերբեմն շատ նեղ եյին լինում։ Նեղուցի խորությունն որից որ նվազում եր։ Ճանապարհին պատահում եյին ստորջրյա քարեր։ Մի տեղից նավը հազիվ կարողացավ անցնել. Նրա տակ միայն մի մատնաչափ ազատ ջուր կար։ Ամունդսենն այնպես եր հուզվում, վոր չեր կարողանում վոչ քնել և վոչ ել ուտել։ Կերակուրը նրա կոկորդումն եր մնում, նրա ջղերը ծայրահեղորեն լարված եյին։ Նա հասկանում եր, վոր յեթե այժմ, այս որերին, չգտնի յելքը դեպի արևմուտք, դեպի Խաղաղ ովկիանոս, նա ինքն ել, իր ուղեկիցներն ել կկործանվեն։

Ամբողջ որերով նա նստում եր կայմի վրա սարքված դիտատակառում, աշխատելով ժամանակին նկատել յուրաքանչյուր մի թակարդ, վոր լարել եր բնությունը նրանց համար։

Չորրորդ շաբաթվա սկզբում նեղուցն սկսեց լայնանալ։ Բացվեց ջրի լայն տարածությունը և հեռվում փայլեց ինչ-վոր մի սպիտակ բիծ։ Ի՞նչ եր այդ. առագաստանա՞վ, թե՞ սառցասար։ Ամունդսենը սրտատրոփ հեռադիտակով հետևում եր այդ բծը։ Նավն այժմ լողում եր ազատ, լայնարձակ ջրում։ Խորությունը գնալով մեծանում եր։ Ամունդսենի ընկերներն, աշխատանքից հոգնած, հանգստանում եյին նավի տախտակամածի վրա։ Նրանք նույնպես անթարթ աչքերով դիտում եյին հեռուն, սպիտակ բիծը և հանկարծ մեկը բացականչեց.

—Առագաստանա՛վ, առագաստանա՛վ։

Այո՛, այդ առագաստանավ եր, կետ վորսող նավ, վոր այստեղ եր յեկել արևմուտքից։

Նավի վրա ամենքը կարծես ցնորվել եյին. պարում եյին ուրախությունից, շնորհավորում իրար, գրկախառնվում։ Իսկ ամենից շատ ուրախացել եր Ամունդսենը։ Հաղթանակը նրա ձեռքին եր։ Նա առաջինն եր, վոր նավեց Ատլանտյան ովկիանոսից դեպի Խաղաղ ովկիանոս՝ հյուսիս-արևմտյան ճանապարհով։ Նա հասավ իր նպատակին։

Յերբ ուրախության առաջին ալիքն անցավ, Ամունդսենը հանկարծ հիշեց, վոր մի քանի որ շարունակ վոչինչ չեր կերել։ Կայմի ճոպանների վրա կախված եյին յեղջերվի թարմ մսեղիք։ Ամունդսենը մի տեսակ մոլեգնությամբ վազեց դեպի մսեղիքը, սկսեց կտոր-կտոր կտրել և կուլ տալ քաղցած գազանի պես։

Այդ ժամանակամիջոցում նա այնքան եր տանջվել, վոր բոլորովին անճանաչելի յեր դարձել։ Նա դեռ յերեսուն յերեք տարեկան եր, սակայն տեսքով նման եր յոթանասունամյա ծերունու։

Նա բոլորովին ուժասպառ եր յեղել, խոր կնճիռներն ակոսել եյին նրա ճակատն ու այտերը:

Յերեք ժամից հետո «Իտա»-ն հասավ կետորսական նավին: Այդ նավը Սան-Ֆրանցիսկոյից եր դուրս յեկել. նա կոչվում եր «Չարլս Հանսոն»: «Իտա»-ն մոտեցավ նավին և կանգ առավ նրա կողքին: Ամունդսենը փոքր մակույկով գնաց այդ նավը, վորպեսզի այցելի նավապետին:

ԴԵՊԻ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԲԵՎԵՌԸ

Յերկու տարի շարունակ Ամունդսենը շրջում եր Յեվրոպայում և Ամերիկայում, բոլոր խոշոր քաղաքներում զեկուցումներ եր տալիս հյուսիս-արևմտյան ճանապարհով իր կատարած ճանապարհորդության մասին: Նա խոշոր գումար հավաքեց և վճարեց իր բոլոր պարտատերերին, ինչպես և նրան, վոր քիչ մնաց պիտի խանգարեր նրան այդ հռչակավոր արշավանքը կատարելու: Նրա մոտ դեռևս վորոշ գումար մնաց նոր, խիզախ ճանապարհորդությունների համար:

Դեպի ո՞ւր ուղևորվի այժմ: Իհարկե, դեպի հյուսիսային բևեռ — այդ նրա վաղուցվա յերազն ե յեղել: Յեթե նրա հայրենակից Նանսենին չհաջողվեց լինել բևեռում, թերևս, իրեն հաջողվի: Նա վորոշեց կատարել նույն ճանապարհորդությունը, վոր կատարել եր Նանսենն իր «Ֆրամ»-ով, այսինքն մի ամուր սառույցում, Սիբիրի հյուսիսային ափերի մոտ, խրվել մի վորևե սառույցի մեջ և այդ սառույցի հետ լողալ դեպի բևեռը: Այս ուղին ամենապահով ուղին եր թվում նրան:

Այն ժամանակ պատահմունք եր, վոր Նանսենը բևեռ չհասավ, նա սառույցի մեջ խրվեց. նա թաղվեց շատ շուտ և բավական հեռու դեպի արևմուտք այն տեղից, ուր պետք ե կատարեր այդ: Նանսենի կատարած սխալից խուսափելու համար, Ամունդսենը վորոշեց այդ տեղին հասնել արևելյան կողմից, Խաղաղ օվկիանոսից՝ Բերինգյան նեղուցով: Այդպիսի արշավանքի համար, իհարկե, անհրա-

ժեշտ եր համապատասխան նավ, բայց նավն արդեն կար. այդ նույն «Ֆրամ»-ն եր: Այդ նավն անգործ կանգնած եր Քրիստիանիայի նավահանգստում: Նա արդեն հնացել եր, նրան ժամանակը մաշել եր, սակայն դեռևս բավականին ամուր եր:

Ամունդսենը մի անգամ ևս ստուգեց նավը և գնեց:

Նա նորից վերանորոգեց նավը, գընեց բոլոր անհրաժեշտ իրերը, մեծ քանակությամբ պարեն ու սկսեց մարդիկ ընտրել:

Ամունդսենը շրջում եր Յեվրոպայում յեվ Ամերիկայում ու զեկուցումներ կարդում:

Նրա վեց անվեհեր ուղեկիցները, վորոնց հետ նա անցել եր հյուսիս-արևմտյան ճանապարհը, առաջին իսկ հերթին գրվեցին այդ ճանապարհորդությանը մասնակցելու: Հրավիրվեցին ելի ութ նավաստի և չորս գիտական աշխատավոր, ինչպես նաև մի փորձված խոհարար: «Ֆրամ»-ով պիտի գնային ընդամենը 20 մարդ:

Նախապատրաստությունը տևեց մեկ ու կես տարի:

Կարեվոր նորություններ:

Բայց ահա, 1909 թվականի ապրիլին, ամբողջ աշխարհում լուր տարածվեց, որ ծովակալ Պիրին շնորհավ հասել է հյուսիսային բևեռը։ Ամունդսենն այդ որը «Ֆրամ»-ումն էր և զբաղված էր գնված մըթերքները դասավորելով։ Հանկարծ ծովափից ինչ որ մեկը բարձր ձայնով կանչեց նրան։ Ամունդսենը մոտեցավ նավեզրին։ Ծովափին կանգնած էր մի նավաստի և ձեռքին թափահարում էր մի լրագիր։

— Կարևոր նորությունններ։

Նավաստին մակույկ նստեց, գնաց դեպի «Ֆրամ»-ը և նավեզրից թերթը մեկնեց Ամունդսենին։ Ամունդսենը կարդաց՝ «Պիրին հասել է հյուսիսային բևեռը» և այնքան հուզվեց, որ նրա աչքերը մթնեցին։ Նա ուժասպառ ձեռքից բաց թողեց լրագիրը։ Ի՞նչ է սա։ Մի՞թե ճիշտ է՝ ծովակալ Պիրին կանխել է նրան։ Այո, այո։ Լրագրերում վորոշակի գրված է՝ «Հյուսիսային բևեռն արդեն գտնված է»։

Ամունդսենն իսկույն թողեց «Ֆրամ»-ը և գնաց քաղաք։ Այստեղ ևս ծովափին նա գնեց ելի տասնյակ տարբեր լրագրեր։ Բոլոր թերթերումն էլ միևնույն հեռագիրն էր տպված՝ «Պիրին հասավ հյուսիսային բևեռը»։

Այդ տանջալի գիշեր էր Ամունդսենի համար։

Այժմ ի՞նչ անել, ու՞ր գնալ։ «Յեթե հյուսիսային բևեռը գտնված է, դեռևս չի գտնված հարավային բևեռը, — ինքն իրեն մտածեց նա։ — Իսկ յեթե իմ ընկերները հրաժարվե՞ն. այն ժամանակ նորից հետաձգիր ուղևորությունը,

թերևս յերկու տարի։ Լավ չի՞ լինի առաժմ չասել նրանց, որ յես փոխում եմ իմ ճանապարհը»։ Նա մտածեց, թե ինչպես վարվել և վորոշեց՝ ավելի լավ է չասել։

Նշանակված ժամկետին, 1910 թվականի օգոստոսին, «Ֆրամ»-ը հեռացավ Նորվեգիայից։ Եքսպեդիցիան կարծես թե ուղևորվում էր հյուսիսային բևեռը, համենայն դեպս Ամունդսենն այդպես ասաց թերթերի աշխատակիցներին։

— Պիրին բավական քիչ գիտական նյութեր է ձեռք բերել, դրա համար էլ, յես վորոշել եմ չհրաժարվել իմ սկզբնական պլանից։ Յես կուղևորվեմ հյուսիսային բևեռ և կբերեմ գիտական նյութեր։

«Ֆրամ»-ն Ատլանտյան օվկիանոսը մտավ, անցնելով Յեվրոպայի և Աֆրիկայի յերկայնքով դեպի հարավ։ Ճանապարհին «Ֆրամ»-ը կանգ առավ Մադեյրա կղզու նավահանգստում։ Այստեղ Ամունդսենը հայտնեց իր ուղեկիցներին, որ նա վորոշել է գնալ դեպի հարավային բևեռը։ Ով որ համաձայն չի, կարող է մնալ այստեղ — Մադեյրայում և առաջին իսկ պատահած նավով վերադառնալ Նորվեգիա։ Սակայն ամենքն էլ հիացմունքով համաձայնեցին Ամունդսենի հետ՝ դեպի հարավային բևեռ գնալու։ Մադեյրայից նավը դարձավ Ավստրալիայի կողմը և ուղևորվեց Կիտային ծովածոցը, որ հայտաբերվել էր դրանից 70 տարի առաջ։

Ամունդսենն արդեն վաղուց էր մտածել, թե ուր պիտի կանգ առնի նավը՝ ձմեռելու համար։ Նա ուսումնասիրել էր այն գրքերը, վորոնք ինչ-ինչ ժամանակ գրվել եյին բևեռային յերկրների մասին. այդ յերկրների վերաբերյալ նա ամեն ինչ գիտեր։

Հարավային բևեռի շուրջը տարածվում է մի հսկայական մայր ցամաք, նշանակում է նավով չի կարելի հարավային բևեռ գնալ, ինչպես այդ կարելի յե անել հյուսիսային բևեռում։ Այստեղ լողացող սառույցներ էլ չկան։ Ամբողջ մայր ցամաքը ծածկված է հավիտենական

ցամաքային սառույցներով։ Շատ տեղ սառույցները բարձրանում են ինչպես բարձր պատնեշներ։ Հարավային բևեռը ծովի կողմից շրջապատված է սառցային պատնեշներով։ Կիտային ծովածոցը, ինչպես և ափի մյուս մասերը, սառույցներով է ծածկված, սակայն այդ սառույցները տասնյակ տարիներով անշարժ են մնացել, նշանակում է այստեղ միանգամայն անվտանգ է ձմեռելը։ Սառցային պատնեշները կարող են նավը պաշտպանել հարավային դաժան քամուց։

«Ֆրամ»-ը գնաց մինչև Կիտային ծովածոցը և այնտեղ կանգ առավ։ Ուղղակի սառույցի վրա կառուցվեց մի փոքր տնակ՝ շների համար, մի մեծ խրճիթ՝ մարդկանց համար և զանազան վայրերում փայտից ու սառույցից կառուցվեցին տնակներ՝ զանազան գիտական ապարատների համար։ Այստեղից մինչև հարավային բևեռը 1100 կիլոմետր եր։

Դեռ հունվար ամիսն եր, ամռան ամենատաք յեղանակն այս կողմերում։ Շրջապատում և Կիտի ծովախորշում և ծոցի մոտ յեղած սառույցների վրա, յերևում եյին բազմաթիվ փոկեր, թռչկոտում եյին պինգվինների յերամներ, և անվեհեր ճանապարհորդներն ամեն որ գնում եյին վորսի, վորպեսզի լրացնեն իրենց սննդի պաշարը։

Ինքը՝ Ամունդսենն զբաղված եր ճանապարհի պատրաստությամբ դեպի բևեռ։ Նա կազմեց այսպիսի պլան. յուրաքանչյուր հարյուր կիլոմետրի վրա պարենի պահեստ շինել, վորպեսզի մեծ բեռ քարշ չտան դեպի բևեռ և հեշտությամբ գնան, իսկ ճանապարհին, պահեստների միջև, նշանաձողեր դնել։

Մի անգամ — այդ փետրվարի սկզբին եր — Կիտի ծովախորշից դեպի հարավ դուրս յեկան չորս մարդ՝ յերեք սահնակով, վորոնց լծված եյին 18 շուն։ Սահնակները ծանր բարձված եյին պարենով։ Արեգակը, վոր յերրորդ ամիսն եր, ինչ մայր չեր մտնում, լուսավորում եր պայծառ։ Ուղևորները գնացին մի նեղ կածանով, բարձրացան լեռը և անսահման սառցադաշտերի վրայով անցան

դեպի հարավ։ Բոլորից առաջ դահուկով գնում եր ինքը՝ Ամունդսենը։ Նա ցույց եր տալիս ճանապարհը։ Նա կողմնացույցով ստուգում եր ուղղությունը և ճանապարհը նշում քարտեզի վրա։ Նրա յետևից, կառավարելով շներին, սահնակի հետևից գնում եր Ամունդսենի բարեկամ Վիստինգը և հետո ելի մի քանի սահնակներ։ Փոքրիկ քարավանն արագորեն առաջ եր շարժվում սառցադաշտով։ Շուրջն ամեն ինչ լուռ եր և չեր յերևում վոչ մի կենդանի եյակ։ Մարդիկ, շները և սահնակներն այդ սպիտակ անծայր տարածության մեջ սև կետեր եյին թվում։ Քարավանն անցավ դաշտավայրը և մտավ մի բլրաշատ տեղ։ Այստեղ առաջին դադարն առան։ Մարդիկ պեմիկանի ալյուրի հետ աղացած մսի բլիթներ տվին շներին և սպիրտայրոցի վրա ապուր յեփեցին իրենց համար։ Մինչև ապուրի յեփելը նրանք սառույցից և ձյունից տասը վոտնաչափ բարձրությամբ մի սյուն պատրաստեցին։ Այս սյունն առաջին նշանաձողն եր նրանց ճանապարհին։

Ամենից առաջ դահուկով գնում եր ինքը Ամունդսենը։

Վեցերորդ որն եր, վոր քարավանն առաջ եր շարժվում դեպի հարավ, յուրաքանչյուր տասնհինգ կիլոմետրից հետո դադար եր առնում և այդտեղ սառցե սյուն դնում։



Մտացվեց բարձր բլուր:

Փետրվարի տասնչորսին քարավանը հասավ մինչև հարավային լայնության ութսուն աստիճանը: Շուրջը փռված էր սառույցե անծայն անապատը: Ամունդսենը նշեց վայրը և չորս հոգին միասին սկսեցին թափել սահնակների բեռը: Մթերքով լցված արկղները, շորերով լի պարկերը դրին բրեզենտի մեջ, ամեն կողմից փաթաթեցին փոկի մորթիներով, վերևից բրեզենտով և պատեցին սառույցով այնպես, որ ստացվեց բարձր բլուր, որի գագաթին տնկեցին նորվեգական դրոշակ:

Ամունդսենը դահուկով հեռացավ պահեստից. նա ուզում էր ճշգրիտ կերպով հիշել այն վայրն, ուր պահեստն էր շինված: Նա մի կիլոմետր գնաց և սկսեց դիտել. պահեստը հազիվ էր յերևում. նա մի փոքրիկ բլրակ էր թվում:

«Բևեռից վերադառնալիս հազիվ թե գտնենք պահեստը»—մտածեց Ամունդսենը:

Նա վերադարձավ պահեստը: Յերեք ընկերները խաղաղ պառկած հանգստանում եյին: Ամունդսենն ասաց.

— Պահեստը բոլորովին նկատելի չէ: Բևեռից վերադառնալիս մենք այն չենք գտնի: Պետք է նշանաձողեր տնկել: Ահա թե յես ինչ եմ մտածել. ամեն մի կիլոմետրից հետո, թե արևելյան կողմում և թե արևմտյան կողմում, մենք պետք է դնենք սառցասյուներ և նրանց վրա դրոշակներ: Այն ժամանակ նկատելի կլինի: Այդպիսի նշանաձողեր պիտի դնենք ութ կիլոմետրի վրա դեպի արևելք և ութ՝ դեպի արևմուտք: Մենք կունենանք ամբողջ մի ցանկապատ:

—Ճիշտ է մտածված,—հաստատեց Վիստինգը:—Սառույց շատ կա, ինչ տեսակ սար ուզենանք, կկառուցենք:

Յերկու խմբի բաժանվեցին. յերկու հոգի գնացին դեպի արևմուտք, յերկուսը՝ արևելք, վորպեսզի սյուներ կառուցեն յուրաքանչյուր կիլոմետրի վրա: Այդ աշխատանքն ամբողջ յերկու որ տևեց և մի որից հետո արդեն քարավանը դատարկ սահնակներով վերադարձավ: Կայտառ ու կուշտ շները վազում եյին. յերբ անցել եյին հինգ կիլոմետր, նայեցին ու տեսան, վոր սառցասյուները յերկար շարքերով կանգնած եյին անապատում և վառ դրոշակները ծածանվում եյին նրանց ծայրերին:

Քարավանը վերադարձի ճանապարհն անցավ յերկու որում. շները դատարկ սահնակներով վազում եյին գլխակոտոր:

Այդ ժամանակ կիտի ծովածոցում ձմեռելու բոլոր պատրաստությունններն արդեն տեսնվել եյին, դրա համար էլ այս անգամ պահեստներ շինելու գնացին բոլոր մարդիկ ու շները: Նավում և խրճիթում թողին միայն մի մարդ և յերեք տասնյակ շուն, վորպեսզի նավը պաշտպանեն գազանների հարձակումից:

Այս անգամ քարավանը շարժվեց յերկար ժապավենի ձևով: Ամունդսենը նորից առաջից եր քայլում, իսկ նրա յետևից յոթ սահնակ, յուրաքանչյուր սահնակին լծված եր վեց շուն, և ամեն մի լծասարքի մոտից գնում եր մի մարդ:

Ճանապարհն այժմ ծանոթ եր: Դրոշակակիր սառցասյուները շատ հեռավորությունից յերևում եյին և հինգերորդ որը քարավանը հասավ հարավային լայնության ութսուն աստիճանի վրա դրված առաջին պահեստին: Այստեղ մնդի հին պաշարի վրա Ամունդսենն ավելացրեց ևս վեց հարյուր կիլոգրամ մթերապաշար: Այստեղից յերկու մարդ յերկու սահնակով վերադարձան «Ֆրամ»-ը, իսկ մնացած վեցն առաջ շարժվեցին դեպի հարավ: Հարյուր կիլոմետրից հետո նորից շինեցին № 2 պահեստը և էլի հարյուր կիլոմետրից հետո՝ № 3 պահեստը:

Այժմ բոլոր պահեստների վրա ծածանվում եյին

Դրին չորացրած ձողաձուկ:

դրոշակներ և յուրաքանչյուր պահեստի մի կողմի վրա (16 կմ. հեռավորության վրա) սառցե նշանաձողերն էին գտնվում։ Վերջին պահեստի համար պակասեցին թե հնդկեղեգնի ձողեր և թե տախտակներ. դրա համար էլ սյուների գագաթին դրին չորացրած ձողաձուկ։

Այդ ժամանակ յեղանակը խիստ փոխվեց, հարավից փչում էին սուր քամիներ և քարավանն ըստիպված էր «Ֆրամ» վերադառնալ՝ ձմեռելու։

Ճանապարհն այժմ նշված էր և Ամունդսենը լիովին հավատացած էր, որ գարունը հաջողություններ կբերի իրեն։

Ամբողջ ձմեռն անցավ պատրաստություններ տեսնելու վրա։ Ամունդսենը հաշվի յեր առնում ապագա արշավի ամեն մի մանրամասնությունը։ Դեպի հարավ կատարած իր յերկու արշավը նրան նոր փորձառություն էին տվել։ Այժմ նա հասկանում էր, թե վորն է իր պատրաստության թերությունը։ Հագուստը պետք է տաք լինի, սակայն թեթև. կոշիկներն ամուր, վորովհետև շարունակ ստիպված ես սառույցների վրայով գնալ։ Վիստինգն ամբողջ ձմեռն զբաղված էր նրանով, վոր կարում, կարկատում էր բոլոր հագուստներն ու վոտնամանները։ Նա քանդեց բոլոր կոշիկները, լայնացրեց, վորպեսզի հնարավոր լինի ավելի շատ գուլպաներ հագնել։ Նա ֆլանելից կարեց փափուկ սպիտակեղեն, իսկ բրդի կտորից՝ բաճկոններ։

Հյուսն Բոլանդը վերանորոգեց սահնակներն ու արկղները, ռանդեց վորքան հնարավոր է, վորպեսզի թեթև լինեն։ Յեվ, վերջապես, նոյեմբերի վերջին,— ամռան

գալու հետ — Ամունդսենը ճանապարհ ընկավ դեպի բևեռը։ Նրա հետ գնում էին յերեք մարդ՝ Վիստինգը, Բոլանդը և Հասսելը։ Նավից մինչև առաջին իջևան նրանց ճանապարհ էր դնում «Ֆրամ»-ի ամբողջ նավակազմը։ Մարդիկ յերգելով ու կատակելով էին գնում դեպի հարավ։ Այդքան վստահություն և ույժ ունեյին ամենքը։ Շները լծված չորս սահնակ ծանր բարձված էին պարենով, հագուստով, վրաններով, նավթի ամաններով և ճանապարհորդական խոհանոցով։ Սակայն կուշտ շները, վոր ձմեռվա ընթացքում հանգստացել էին, բեռը տանում էին թեթև ու զվարթ։ Շները քառասուն յերկու հատ էին,— սա շատ-շատ էր չորս սահնակի համար, սակայն Ամունդսենն իր հաշիվներն ուներ…

Առաջին իջևանում ճանապարհ գցողները մնացին, իսկ չորս անվեհեր ճանապարհորդներն, արդեն մի մարդու պես, շարունակեցին իրենց ճանապարհը։ Ճանապարհ դնողները յերկար ժամանակ նայում էին նրանց յետևից։ Ահա նրանք հետզհետե փոքրացան, փոքրացան նրանց աչքին, աննկատելի դարձան այդ սարսափելի սառցային անհուն տարածության մեջ և հետո անհայտացան մառախուղում։ «Կվերադառնա՞ն արդյոք,— մտածում էր յուրաքանչյուրը։ — Անապատը վորչափ մեծ է, իսկ մարդիկ՝ վորքա՜ն թույլ»։

Ցածրաձայն զրուցելով, նրանք վերադարձան նավը։

Իսկ փոքրիկ քարավանը ծանոթ ճանապարհով արագորեն առաջ շարժվեց դեպի հարավ։ Յուրաքանչյուր 15 կիլոմետրից հետո պահապանի նման կանգնել էին սառցասյուները, վորոնք ճանապարհ էին ցույց տալիս։ Յերրորդ որը քարավանն արդեն ա սել էր № 1 պահեստին։ Այստեղ ամեն ինչ կարգին էր։ Բուքը ձյունով ծածկել էր պահեստն ամեն կողմից, բայց դրոշակը պոկ չէր յեկել, չէյին գլորվել այն սյուները, վորոնք կանգնած էին նրա աջ և ձախ կողմերում։ Պահեստի մոտ մեր ճանապարհորդները յերկարատև հանգիստ սարքեցին։ Նրանք վրան

խփեցին, պահեստից շների համար կեր բերին, իրենց համար սնունդ և խոհանոցի համար նավթ։ Սահնակի վրա յեղած բեռն անձեռնմխելի մնաց։ Շներն այստեղ տրաքվելու չափ կերան, վորովհետև նրանց համար ուտելիք շատ կար։

Հանգստանալուց հետո առաջ շարժվեցին և յերկու որից հասան № 2 պահեստին։ Այստեղ ևս ամեն ինչ կարգին եր. վոչինչ չեր կորել, վոչ մի բան չեր փչացել։ Նույն դրության մեջ եր № 3 պահեստը, վորը 300 կմ. հեռու չեր «Ֆրամ»-ից։ Նույնիսկ անվնաս եր մնացել սառցասյունի գագաթին տնկված ձողաձուկը։ Մեր ճանապարհորդներն այս պահեստից վերցրին գրեթե ամբողջ պարենը, թողնելով շատ քիչ բան։ Այստեղից արդեն սկսեցին անծանոթ ճանապարհով գնալ։ Ամունդսենը գնում եր առաջին սահնակի կողքով, նա ցույց եր տալիս և՛ ճանապարհը, և՛ իջևանելու վայրը։ Շրջապատը միապաղաղ ալեծածան հարթավայր եր, ծածկված ձյունով և սառույցով։

Հարյուր կիլոմետրից հետո, ելի կառուցվեց մի նոր, № 4 պահեստը, հետո նորից հարյուր կիլոմետրից հետո № 5 պահեստը։ Սա արդեն գտնվում եր հարավային լայնության 85 աստիճանի վրա։ Սահնակները թեթև եյին բարձված։ Շները բոլորն ել անվնաս եյին։ Քարավանն առանց հոգնելու առաջ եր շարժվում։ Արեգակը բոլորովին չեր իջնում յերկնքից։ Կես գիշերին նա կանգնած եր լինում հորիզոնի այն բարձրության վրա, ինչպես Նորվեգիայում ամռան որվա ժամը հինգին։ Շուրջը դեռևս տարածված եր միապաղաղ փայլող հարթ տարածությունը։ Բայց ահա նրանց առջև սպիտակին տվին լեռները, վորոնք ամպերի եյին նման։ Շուտով նրանք հասան մի խիտ զառիվայրի։ Ամունդսենը քարավանը կանգնեցրեց և ինքն ու Վիստինգը դահուկներով գնացին առաջ՝ վերելքի ճանապարհ վորոնելու։ Կես որ նրանք թափառում եյին լեռան լանջին։ Վերելքի համար ճանապարհը

գտնված եր և մի որ հետո քարավանն արդեն սարահարթի վրա յեր։ Ճանապարհի ամենադժվար մասն անցել եյին։ Մինչև բևեռը մնացել եր միայն 470 կիլոմետր։

Ճանապարհորդները յերկարատև հանգիստ կազմակերպեցին։ Սահնակները մինչ այդ արդեն շատ եյին դատարկվել։ Շների համար քիչ կեր եր մնացել, ինչպես և մարդկանց համար՝ քիչ ուտելիք։ Ավելորդ շներն այժմ բեռ եյին դարձել. այդ վաղուց գիտեր Ամունդսենը և նախապես իր հաշիվները տեսել եր։ Շները լծից արձակված և յերկու խմբերի եյին բաժանված։ Քսան չորս շներից բաղկացած մի խումբ տարան մի կողմ, բլուրի հետևը։ Նրանց տարան յերեք հոգի — ինքը՝ Ամունդսենը, Վիստինգը և Բոլանդը։ Շուտով բլուրի յետևում լսվեցին կրակոցներ և շների կարճ կաղկանձ։ Շներն սպանված եյին։ Քարավանը խնճույք սարքեց։ Վիստինգը ճանապարհորդական խոհանոցում շան մսից ապուր յեփեց և նույն մսից կատլետներ տապակեց։ Ճանապարհորդական վրանում մեր ճանապարհորդները նստեցին ճաշելու։ Նրանք սկզբում զզվանք զգացին. առաջին անգամն եր, վոր ստիպված եյին այդպիսի ապուր ուտել, սակայն համը տեսնելով բոլորն ել սկսեցին ուտել։ Ապուրը կերան մի քանի րոպեյում։ Ինքը՝ Ամունդսենը հինգ կատլետ կերավ։ Կենդանի մնացած շներին կուշտ կերակրեցին մնացած շան մսով։

Այս իջևանում քարավանը մի սահնակ թողեց, մնացած յերեքին բարձեցին ամբողջ պարենը, յուրաքանչյուր սահնակին լծեցին վեց շուն և քարավանն առաջ շարժվեց։ Այժմ այնպիսի արագությամբ եյին գնում, ինչպես յերբեք չեյին գնացել։ Ծակում եր ուժեղ սառնամանիքը, սակայն ուղևորները լավ հագնված եյին և հեշտությամբ եյին դիմանում։ Իջևանելու և գիշերելու վայրերում, կուշտ ուտելուց հետո, նրանք փաթաթվում եյին քնելու տաք պարկերում և լավ հանգստանում։

Ամեն մի իջևանում Ամունդսենն ու իր ընկերները գիտական դիտողություններ եյին կատարում։ Զափող



Ուղիղ բևեռում Ամունդսենը վրան խփեց։

գործիքները ցույց եյին տալիս, վոր հարավային բևեռն ավելի ու ավելի յե մոտենում։ Վերջապես, դեկտեմբերի 14-ին քարավանը հասավ բևեռը։ Գործիքները ճշգրիտ ցույց տվին, վոր բևեռն այստեղ ե ահա, այս կետում, վոր ամուր կերպով ծածկված ե սառույցով ու ձյունով։ Շուրջը տարածված եր նույն միապաղաղ սառցադաշտը։ Ուղիղ բևեռի վրա Ամունդսենը վրան խփեց, վրանում մի փոքր սեղանի վրա դրեց մի գիրք, վորի առաջին եջում գրված եր.

«1911 թ. դեկտեմբերի 14-ին այստեղ յեղել են Ամունդսենը, Վիստինգը, Հասսելը և Բոլանդը»։

Յերեք որ նրանք բևեռում անցկացրին և հետազոտեցին տասը կիլոմետրի վրա շրջապատի բոլոր վայրերը։

Այստեղից արդեն նրանք վերադարձի ճանապարհը բռնեցին ծանոթ, անցած ուղիով։ Յերեք որը մեկ անգամ նրանք մի շուն եյին սպանում և դրանով կերակրում եյին մյուս շներին։ Քսաներորդ որը նրանք բարեհաջող հասան առաջին պահեստը։ Նրանց շատ ոգնեց պահեստի գագաթին դրված դրոշակը։ Վերադարձին այդ վայրերը կարծես անծանոթ լինեյին,—այնքան փոխվել եյին։ Յեվ

միայն դրոշակն եր ցույց տալիս, թե վորտեղ ե գտնվում պահեստը։ Այնուհետև արդեն շնորհիվ սառցասյուների, հեշտ եր ճանապարհ գտնելը։

Տասներկու շներով առողջ ու անվնաս ճանապարհորդները հասան «Ֆրամ» նավը։

ԴԵՊԻ ՆՈՐ ԱՐՇԱՎ

Ամունդսենը նորից տարի ու կես ճանապարհորդեց Յեվրոպայում ու Ամերիկայում, բոլոր խոշոր քաղաքներում զեկուցումներ կարդաց՝ հարավային բևեռը գտնելու մասին։ Ամենուրեք նրան դիմավորում եյին հազարավոր մարդիկ։ Սա հերոսի շքերթ եր։ Մարդկությունը պարծենում եր նրանով։ Նա հայտաբերեց հարավային բևեռը — հազարամյա այդ գաղտնիքը։ Շատ մարդիկ կարծում եյին, վոր բևեռի վրա մինչև յերկնահաս լեռ կա կանգնած։ Ուրիշները յենթադրում եյին, վոր այնտեղ լեռ չկա, այլ մինչև յերկրի կենտրոնն իջնող անդունդ։ Ամունդսենն առաջինն եր, վոր ցույց տվեց, թե հարավային բևեռում վոչ լեռներ կան և վոչ ել անդունդ, այժմ այնտեղ հավիտենական սառույցներով ծածկված գետնի վրա կանգնած ե նրա վրանը։

Զեկուցումներից ստացված դրամը Ամունդսենը հավաքեց նոր արշավ սկսելու համար։ Այժմ նա մտադիր եր ուղևորվել հյուսիսային բևեռը, ելի նույն հին «Ֆրամ» նավով։

Յեվ նորից, ինչպես միշտ, նա ուսումնասիրեց այն ամենը, ինչ վոր գրվել եր սառցային արշավների մասին՝ այն տարիների ընթացքում, յերբ ինքն ելսառույցների վրա յեր։ Իր շատ հարուստ փորձին, նա ավելացրեց նաև ուրիշների փորձը։

Այդ ժամանակ ամբողջ աշխարհը հրապուրվեց ոդագնացությամբ։ Սավառնակները հենց նոր եյին թռչում յերկրի վրա, այդ նոր և շատ մոդայական գործ եր։

Ամերիկայում ճանապարհորդելիս, Ամունդսենը յերեք

քաղաքում դիտեց սավառնակների թռիչքները։ Սավառնակներ էին բարձրանում օդում, շրջանաձև թռիչքներ էին կատարում, նրանց վրայից մի քանի տասնյակ կիլոմետր հեռուները կարելի էր տեսնել։ Մի անգամ, դիտելով թռիչքները, նա ասաց.

«Արդյոք սավառնակն օգտակար չի՞ լինի իմ նպատակների համար»։

Նա պատկերացրեց այսպես. սավառնակը վեր է բարձրանում սառույցներից, թռչում է բարձր երկնքում, նա տեսնում է սառույցներում եղած ճեղքվածքները, բոլոր չսառած տեղերը,— այդպիսի սավառնակով շատ լավ կարելի յէ հետազոտել սառույցները։

Ամունդսենը մտածեց, չափ ու ձև արավ և գնեց մի սավառնակ։ Այդ սավառնակը «Ֆրամ»-ի վրա դրված կգնա հյուսիսային բևեռը։ Երբ կարիք կլինի օդաչուն և նրա հետ Ամունդսենը կթռչեն սառույցների վրայով՝ հետազոտություններ կատարելու։ Իհարկե, լավ կլինի թռչել դեպի բևեռը։ Շվեդացի ինժեներ Անդրեն օդապարիկով թռավ դեպի բևեռը, սակայն արդեն տասնվեց տարի յէ, ինչ նրանից վոչ մի լուր չկա։ Պարզ է, որ նա զոհվել է։ Օդապարիկն անպետք է բևեռ թռչելու համար, իսկ այսպիսի մեքենան, ինչպիսին սավառնակն է, իհարկե, նույնպես պետքական չէ, քանի դեռ նա թռչում է հարյուր, երկուհարյուր կիլոմետր։ Հետախուզական աշխատանքների համար նա լավ է, սակայն երկարատև թռիչքների համար՝ վո՛չ։

«Ֆրամ»-ից վստահելի դեռևս ուրիշ բան չկա։ Սիբիրի ափերի մոտ, վորևէ տեղ մտնել սառույցի մեջ և նրա հետ լողալ դեպի բևեռ։ Այս եղանակն առայժմ ամենավստահելին ու միակն է։

«Ֆրամ»-ն արդեն Նորվեգիայումն էր։ Ամունդսենը դեռևս ճանապարհորդում էր Ամերիկայում և աշխատում էր, վորքան հնարավոր է, ավելի շատ միջոցներ հավաքել՝ դեպի բևեռ արշավ կազմակերպելու համար։



Վերջապես, 1914 թվականի ամռանը, նա վերադարձավ Նորվեգիա, վորպեսզի ավարտի նախապատրաստությունը և աշնանն ուղևորվի։

Նորվեգիան նրան դիմավորեց վորպես հերոսի։ Ծովում, Ամունդսենի շոգենավին դիմավորելու յեկան հազարավոր առագաստանավեր, շոգենավեր ու նավակներ։ Ծովախորշի ափերը, ջրանցքի կամուրջը, հին բերդի պատերը, ծովափը ծածկված եյին հազարավոր մարդկանց խմբերով։ Նվագում եյին հարյուրավոր նվագախմբեր։

Շոգենավը դանդաղորեն մոտենում եր նավամատույցին։ Ամունդսենը կանգնած եր բաքի վրա։ Տասնյակ հազարավոր աչքեր վողջունեցին նրան... Ճիշտ այնպես, ինչպես շատ տարիներ առաջ Նորվեգիան դիմավորում եր Նանսենին, դեպի Գրենլանդիա կատարած նրա արշավից հետո։ Այն ժամանակ Ամունդսենը փոքրիկ նավակով ընկերների հետ դուրս յեկավ դիմավորելու հերոսին։ Այժմ Նորվեգիան դիմավորում եր Ամունդսենին։ Ահա նավը մոտեցավ նավամատույցին։ Գեղեցիկ կտորով զարդարված կամրջակով Ամունդսենն ափ իջավ։ Հազարավոր ամբոխն աղաղակեց ուռա, նվագում եյին յերաժշտախմբերը։ Քաղաքային խորհրդի շենքում նրա պատվին հանդիսավոր ճաշկերույթ տրվեց։ Հավաքվել եյին ամբողջ Նորվեգիայի գիտնականները, գրողները, կառավարության անդամները,—ամենքը հիացմունքով եյին խոսում մեծ ճանապարհորդի մեծ հաղթանակի մասին։

Սակայն այս հաջողությունը չշշմեցրեց նրան։ Այդ հանդիսավոր հանդիպման հաջորդ որն առավոտյան, նա արդեն «Ֆրամ» նավի վրա յեր գտնվում և անձամբ ստուգում եր, թե ինչպես ե ընթանում բեռնելու գործը։

Ամբոխն ուղեկցում եր նրան։ Ով վոր հանդիպում եր, հանում եր գլխարկը և բարևում։ Հանկարծ մի փոքրիկ լրագրավաճառ սուր ձայնով կանչեց․

— «Լուրեր պատերազմի մասին։ Լուրեր պատերազմի մասին։

Բազմությունը ներողամիտ ժպտալով գնեց թերթերը։ Ամունդսենը լրագիրը ձեռքին մակույկ նստեց, վորպեսզի գնա «Ֆրամ»։ Նա կարդաց լրագիրը․ թախիծը ծակեց նրա սիրտը․ «Մի՞թե պատերազմ կլինի․ այն ժամանակ անհնար կլինի մեկնել»։

Յերեկոյան լրագրերը նոր լուրեր բերին՝ «Պատերազմը Գերմանիայի և Ֆրանսիայի միջև անխուսափելի յե։ Ռուսաստանը զորահավաք ե հայտարարել»։

Իսկ մի շաբաթ հետո լրագրերը հենց միայն պատերազմի մասին եյին գրում․ սոսկալի սպանդը բռնել եր վողջ աշխարհը։ Յեվ, բացի պատերազմից, մարդկությունը կարծես այլևս վոչ մի բանով չեր հետաքրքրվում։ Նույնիսկ փոքրիկ Նորվեգիան, թեկուզ և չեր խառնվում պատերազմին, սակայն պատրաստ եր մնում, միջոցներ եր հավաքում պատերազմի համար։ Նորվեգական զինվորական իշխանությունը վերցրեց Ամունդսենից նրա սավառնակը։ Յեվ ամեն մի որ կարող եյին բանակ կանչել նաև Ամունդսենին։ Այլևս անհնարին դարձավ Նորվեգիայից մեկնելը և դեպի հյուսիսային բևեռ շուտով արշավ կազմակերպելու նրա բոլոր ծրագրերը խորտակվեցին։

Ի՞նչ եր մնում անելու նրան այդ սոսկալի տարիներին։ Նա սովոր չեր ձեռները ծալած նստելու։ Նա միշտ աշխատում եր մի՛ նպատակի համար,—իր բևեռային հետազոտությունների համար։

Առաջին յերեք ամիսն Ամունդսենը չգիտեր ինչ վճռել։ «Թերևս, մեկնել դեպի բևեռը։ Ճանապարհորդությունը կտևեր յերեք տարի։ Կարելի յե վերադառնալ, յերբ ամեն ինչ հանդարտված կլինի։ Վո՛չ, չի կարելի մեկնել․ պետք ե սպասել»։

Մինչդեռ պատերազմը բորբոքվում եր։ Պատերազմող յերկրներում սկսեց սովը։ Վշտով ու զայրույթով եր դիտում Ամունդսենը մարդկային զարհուրելի սպանդը։ Միլիոնավոր բանվորներ ու գյուղացիներ եյին զոհվում պատերազմի դաշտում, նրանց ընտանիքները մեռնում եյին քաղցից

ու հիվանդություններից, իսկ նրանք, ովքեր հրահրել եյին սպանդը,— ցարերը, թագավորները, մինիստրները, կապիտալիստները,— նրանք նստել եյին թիկունքում և յերջանիկ կյանք եյին վարում։

ՍԱՎԱՌՆԱԿՆԵՐՈՎ ԴԵՊԻ ԲԵՎԵՌԸ

1916 թվականին Ամունդսենը նորից սկսեց բևեռային արշավի պատրաստվել։ Նա ձեռնարկեց կառուցելու նոր նավ։ Հին «Ֆրամ»-ն արդեն քիչ պետքական եր թվում նրան. նավը մաշվել եր, սառույցներն ու ժամանակը բավական կրծոտել եյին նրա կողերը։ Անհրաժեշտ եր նոր նավ։

Յերկու տարվա ընթացքում Ամունդսենը կառուցեց մի նոր, մեծ նավ՝ «Մոդ»-ը, վոր հարմարություններ ունեցող մի տան նման եր։ Ուներ հարմար սենյակներ և ընդհանուր մեծ նավասենյակ, պահեստներ՝ հինգ տարվա ամեն տեսակի պարենի համար, և դիտողություններ կատարելու համար ամեն տեսակի գործիքներ։ 1918 թվի ամռանը «Մոդ»-ը դուրս յեկավ Քրիստիանիայից, ուղղվեց դեպի Կարայան ծովը և այնուհետև դեպի արևելք՝ Ասիայի ափերի յերկայնքով։ Այս ճանապարհը կոչվում ե հյուսիս-արևելյան ճանապարհ. նա միշտ սառույցներով ե ծածկված և դժվար ե նավելու համար։ Ամունդսենից առաջ այդ ճանապարհով անցել եր միայն յերկու արշավախումբ— Նորդենշելդի և Վիլկիցկու արշավախմբերը։ Ամունդսենը յերրորդն եր, վոր գնաց այդ ճանապարհով։ Յերկու տարի «Մոդ»-ը նավում եր ափերի յերկայնքով և միայն 1920 թվի ամռանը դուրս յեկավ Բերինգյան նեղուցը։ Այս նույն նեղուցն Ամունդսենն անցել եր արևելյան կողմից «Իոա» նավով, 17 տարի առաջ։ Նշանակում ե առաջինն եր, վոր շուրջերկրյա ճանապարհորդություն կատարեց Արկտիկյան Սառուցյալ ովկիանոսով։

«Մոդ»-ը հասավ Ալյասկա, Սիետլ գյուղաքաղաքը։ Այստեղ Ամունդսենը վորոշեց պարենի նոր պաշար վերցնել արդեն յոթ տարվա համար, սավառնակ ձեռք բերել

հետախուզության համար և միայն այն ժամանակ ճանապարհ ընկնել բևեռի վրայով։

Սակայն այդ ճանապարհորդությունը պատրաստելիս նրա մեջ նոր միտք հղացավ. չի՞ կարելի արդյոք դեպի բևեռ թռչել սավառնակով։ Այժմ արդեն սավառնակը կարող ե թռչել մեծ տարածություններ՝ ամենակարճ ժամանակում։ Թող «Մոդ»-ը գնա իր ճանապարհով, իսկ ինքը կթռչի սավառնակով։

Նա այդպես ել արավ. «Մոդ»-ն ուղարկեց նավելու սառույցներով դեպի հյուսիս՝ Սառուցյալ ովկիանոսով, իսկ ինքն սկսեց պատրաստվել թռիչքի դեպի բևեռը։

Նա նորից շրջեց Յեվրոպայում ու Ամերիկայում, զեկուցումներ կարդաց իր նախկին ճանապարհորդությունների մասին, լրագրներում և ժուռնալներում հոդվածներ տպագրեց և մտադիր եր այդ միջոցներով հավաքված փողերով մի լավ սավառնակ գնել։ Սակայն փողը քիչ եր, չեր բավականացնում սավառնակ գնելու համար։

Մի անգամ, Ամերիկայում շրջագայելուց հետո, Ամունդսենը նստած եր Նյու-Յորքի հյուրանոցի մի համարում։ Նրա զեկուցումները վերջին կես տարում լիովին ձախողվել եյին։ Նա ամենաանհուսալի տրամադրության մեջ եր։ Նրան թվում եր, վոր իր առաջ փակվել են բոլոր ճանապարհները, իսկ բևեռային հետազոտողի իր կարյերայի վախճանը հասել ե։

Յեվ ահա, յերբ նա այդպիսի մռայլ մտքերով եր տարված, հանկարծ հնչեց հեռախոսի զանգը և մի անծանոթ ձայն ասաց.

— Միստեր Ամունդսենը տա՞նն ե։

— Այո, ինքն ե խոսում։

— Յես հանդիպել եմ ձեզ Ֆրանսիայում՝ պատերազմի ժամանակ։ Յես Լինկոլն Ելլսվորտն եմ, ձեր յերկրպագուն և հարգողը։ Յես սկսնակ եմ բևեռային ճանապարհորդությունների բնագավառում, սակայն դրանով շատ եմ հետաքրքրվում։ Յես կարող եմ միջոցներ տրամադրել նոր եքսպեդիցիայի համար։

Կես ժամից հետո Եյլսվորտն արդեն Ամունդսենի մոտ եր։ Նա պատմեց Ամունդսենին, վոր դեպի հյուսիս ճանապարհորդելու մեծ ձգտում ունի, և, յեթե Ամունդսենը համաձայն ե, նա կճարի յերկու հիդրոպլան։

Ամունդսենը շատ ուրախ եր։ Նախորդ որերի վիշտն իսկույն չքացավ։

—Թռիչքի համար մեզ անհրաժեշտ ե գնել յերկու մեծ թանգարժեք սավառնակ, «Դորնյե-վալ» սիստեմի,— ասաց նա։

— Յես կճարեմ փողը, վորքան պահանջվում ե,— պատասխանեց Եյլսվորտը։

Յեվ հենց նույն ժամին նրանք ծրագիր կազմեցին, թե ինչպես պիտի գործել։ Ամունդսենը հեռագիր տվեց Նորվեգիա՝ իր ոդաչու և մեխանիկ բարեկամներին, վորոնց հետ նա արդեն վաղուց բանակցություններ եր վարում։ Յուրաքանչյուր սավառնակին անհրաժեշտ եր մի ոդաչու և մի մեխանիկ։

Իսկ յերեք ամսից հետո—այդ 1925 թ. մայիսի սկզբին եր—Ամունդսենը և Եյլսվորտն արդեն Շպիցբերգեն կղզումն եյին, վորտեղից, վորոշված եր, սկսել թռիչքը դեպի բևեռ։ «Դորնյե-վալ» տիպի յերկու սավառնակ՝ № 24 և № 25 արդեն այնտեղ եյին։ Այդ սավառնակները բերել եյին ովկիանոսային նավերը և իջեցրել ծովափ։ Սրանք սքանչելի մեքենաներ եյին՝ լավ մոտորներով և ազատ, լայն կաբիններով։ Նրանք կարող եյին լողալ ջրում և սահել սառույցի ու ձյան վրա։ Սավառնակներով յեկան յերկու ոդաչու—Դիտրիխսոնը և Ռիսեր-Լարսենը, և յերկու մեխանիկ՝ Ոմդայլը և Ֆոյխտը։ Սրանք բոլորն ել խիզախ, վճռական, տոկուն մարդիկ եյին և Ամունդսենը նրանց կարող եր վստահել այնպես, ինչպես իրեն։ Նրանցից մեկի՝ Ոմդայլի հետ, Ամունդսենն արդեն մի անգամ թռիչք եր կատարել 1922 թ. մայիս ամսին։

Նա այն ժամանակ ուզում եր «Մոդ» նավի վրա իր հետ սավառնակ վերցնել հյուսիսային բևեռի վրայով ճանապարհորդելու համար։ Նրանք յերկուսով այդ սավառնակով թռիչք կատարեցին Նյու-Յորքից վողջ Ամերիկայի վրայով դեպի Սիետլ գյուղաքաղաքը, ուր կանգ եր առել «Մոդ»-ը։ Սակայն ճանապարհին սավառնակի մոտորը փչացավ այն րոպեյին, յերբ ոդաչուները գտնվում եյին Կորինտ քաղաքի վրա։ Ստիպված յեղան իսկույն նեթ ցած իջնել։ Վայրեջքը տեղի ունեցավ նավթահանքերի մեջ։ Սավառնակն այն ժամանակ ջարդ ու փշուր յեղավ, սակայն Ամունդսենը և Ոմդայլը չվնասվեցին, վորովհետև Ոմդայլը վարպետությամբ վայրեջք կատարեց։

Ամունդսենը նկատել եր, վոր Ոմդայլը բոլորովին միանման եր՝ և՛ անհաջողության և՛ հաջողության ժամանակ, նրան վոչ մի բան չեր կարող ընկճել։ Ոմդայլը միշտ քաջարի յեր, միշտ հնարագետ։ Այդպես եյին նաև Ամունդսենի մյուս ուղեկիցները, արի, ամրապինդ, պատրաստ ամեն մի գրկանքի։

Առաջին խորհրդակցությանը, յերբ բոլորն ել հավաքվել եյին Շպիցբերգենում, նրանք իրենց առաջ խնդիր դրին հետազոտություններ կատարել սառցային անհուն տարածությունների վրա, վորքան հնարավոր ե դեպի հյուսիս, մինչև բևեռը։ Ի՞նչ կա Շպիցբերգենից դեպի հյուսիս։ Ծո՞վ, թե՞ ցամաք։ Այդ դեռևս պարզ չեր բևեռային հետազոտողներին։

Յերեք շաբաթ շարունակ ոդաչուները կարգի եյին բերում սավառնակները և սարքավորումը։ Նրանք իրենց հետ վերցրին մեծ քանակությամբ պարեն, բևեռային սահնակներ, ծալովի նավակներ, վորպեսզի, յեթե անհրաժեշտ լինի, իջնեն սառույցների վրա և վոտքով յետ գնան դեպի ցամաք։ Եյլսվորտն ու Ամունդսենն ունեյին յերեքական ժամացույց, վորոնցով նրանք պիտի ոգտվեյին թռիչքի ընթացքում՝ վորոշելու համար ժամանակը և տեղը։

Վերջապես, մայիսի 21-ին հասավ այն ժամը, յերբ ոդաչուները վորոշեցին, թե թռիչքի ժամանակն ե։ Փչում եր մեղմ քամին, վորին և սպասում եյին ոդաչու-

ները։ Նրանք շտապ ավարտեցին վերջին նախապատրաստական աշխատանքը և ցերեկվա ժամը 3-ին բոլորը հավաքվեցին մեքենաների մոտ։

Մոտակա Կինգսբեյ գյուղակից նրանց ճանապարհ դնելու յեկան քարածխի հանքերում աշխատող բանվորները և ճարտարապետները։ Չորս ժամ մոտոռներն աշխատեցրին տաքացնելու համար։ Վեց ճանապարհորդներն էլ հագան իրենց հսկայական, ծանր մորթե հագուստները և տաք մուշտակե կոշիկները։

Ոդաչուներն այսպես դասավորվեցին. Եյլսվորտը, Դիտրիխսոնը և Ոմդալը պետք թռչեյին № 24 սավառնակով, իսկ ինքը՝ Ամունդսենը ոդաչու Ռիսեր-Լարսենի և մեխանիկ Ֆոյխտի հետ՝ № 25 սավառնակով։

Նրանք հրաժեշտ տվին ճանապարհ դնողներին և ամեն մեկը գրավեց իր տեղը։ № 25 սավառնակը առաջինը ճանապարհ ընկավ։ Նա արագորեն անցավ սառույցի վրայով և բարձրացավ ոդի մեջ։ Բարձրանալու ժամանակ սառույցը ճաքեց և ճեղքից ջուրը շատրվանի պես խփեց, սակայն ոդաչու Լարսենը գիտեր իր գործը,— հանգիստ ու վստահ նա ժամանակին ղեկը թեքեց բարձրացման համար և սավառնակը կտրվեց սառույցից ու բարձրացավ ոդի մեջ։

Ամունդսենը նստած եր առջևի խցիկում՝ դիտողի տեղը՝ ոդաչուն գտնվում եր նրա հետևի խցիկում, իսկ մեխանիկ Ֆոյխտն անընդհատ պտտվում եր բոլոր տեղերը և դիտում, թե ինչպես են աշխատում մոտոռները, ինչքան բենզին ե ծախսված և արդյոք ամեն ինչ կարգին ե։ Հայելապատ խոշոր պատուհաններից ոդաչուները Շպիցբերգենը տեսնում եյին իրենց առաջ, ինչպես ափի մեջ։

Համարյա ամբողջ կղզին ձյունով ու սառույցով եր պատած։ Միայն փոքր հողաշերտի և քարերի մուգ բծեր եյին յերևում արևմտյան ափում։ Լեռների սառույցե ատամները բարձրանում եյին հեռու արևելքում և հյուսիսում։ Ամենուրեք փայլատակող սառույց եր։

Սավառնակն արդեն մեծ տարածություն եր անցել, յերբ հանկարծ Ամունդսենը նկատեց, վոր նրանց յետևում չեր յերևում № 24 սավառնակը։ Ո՞ւր կորավ այն։ Թերևս, նա չբարձրացավ սառույցից, մնաց իր տեղը, կամ՝ ոդը բարձրանալով ընկավ նորից։ Ամունդսենը նշան արավ, և Լարսենը յետ դարձավ։ Մի սավառնակով չեր կարելի այդպիսի ճանապարհորդություն կատարել։ Սակայն հազիվ եյին նրանք յետ դարձել մի տասը կիլոմետր, յերբ ինչ վոր բան փայլեց նրանց առաջ,— այդ արևի ճառագայթներն եյին խաղում № 24 սավառնակի թևերի հետ։ Սավառնակները հավասարվեցին, յերկուսով էլ դարձան դեպի հյուսիս և թռան իրարից քիչ հեռավորության վրա։

Թռիչքն սկսվեց շատ հաջող։ Արեգակը շարունակ պայծառորեն փայլում եր։ Շուտով ոդաչուները հասան վերջին՝ Ամստերդամի կղզուն։ Այնտեղ նրանց դիմավորեց բամբակի պես խիտ մառախուղը։ Սկզբում նա ոդաչուներին եր հասնում ծվեններով, խոնավ և ցուրտ, հետո ավելի ու ավելի խտացավ և վերջապես ամեն ինչ ծածկեց, այնպես վոր Ամունդսենն արդեն չեր կարող տեսնել մյուս սավառնակը։

Ռիսեր-Լարսենը ղեկը թեքեց բարձրացման, սավառնակը վեր բարձրացավ, արեգակը նորից յերևաց, և մի կողմի վրա, մառախուղի մեջ Ամունդսենը տեսավ սավառնակի լրիվ արտացոլումը, վոր բոլոր կողմերից շրջապատված եր ծիածանի բոլոր գույների լուսապսակով։ Այսպես նրանք թռչում եյին և սավառնակն ու նրա փայլող ստվերներն արտացոլում եյին ամպերի վրա։ Յերբեմն մառախուղը ցրվում եր և այն ժամանակ Ամունդսենը ներքևում տեսնում եր հսկայական սառցադաշտը։ Նա մշտական շարժման մեջ եր, ամենուրեք յերևում եյին բազմաթիվ մանր սառույցներ։ Սառույցների արանքում մուգ ոձերի նման յերևում եր գալարուն ջուրը։

Յերեկոյան ժամը 8-ին մառախուղը հանկարծ սկըսվեց նոսրանալ և մի վայրկյանում անհետացավ։ Ոդաչուների աչքի առաջ բացվեց մի նոր հսկայական փայլուն

տարածությունն։ Այդ սպիտակ անապատում չեր նկատվում վոչ մի հետք, վոչ մի նշան։ Սառույցները բաղկացած եյին առանձին փոքր մասերից, վորոնք տարածված եյին ամբողջ մակերեսի վրա՝ անվերջ ու անսահման։ Այստեղ ու այնտեղ յերևում եյին կողքի վրա ընկած սառույցներ։ Նրանք նման եյին ցցապատերի. վոչ մի հարթ տեղ չկար։ Յերբեմն սառույցների միջև պատահում եյին փոքր գետակներ, բայց նրանց վրա իջնել խիստ վտանգավոր եր։

Ոդաչուներն ոդում թռչում եյին մի ժամում 150 կիլոմետր արագությամբ։ Նրանք յերկու ժամ թռչում եյին պարզ յեղանակին։

Վերջապես, յերեկոյան ժամը մոտավորապես 10-ին հյուսիսից առաջ շարժվեց շերտավոր ամպերի բարակ քողը։ Սակայն նա շատ բարձր եր գտնվում և ամենևին չեր խանգարում ոդաչուներին։ Ամունդսենը շարունակ լարված դիտում եր սառույցները,— նա վոչ մի տեղ դեռևս չեր տեսել այդպիսի տեսարան։ Այդպիսի սառույցներով անցնելիս նա հաճախ եր հանդիպել ծովորորների, սպիտակ արջերի, կամ, վերջապես, վորևե հետքի, իսկ այժմ սավառնակից նա չեր կարող տեսնել վո՛չ թռչուն, վո՛չ արջ, վո՛չ հետքեր, և նայելով այդ տեսարանին, նա ինքն իրեն մտածեց.

«Վոչ մի տեղ կենդանություն չկա, գոնե մի լու վերցրած լինեյինք հետներս, վորպեսզի վորևե կենդանի եյակ ունենայինք»։

№ 24 սավառնակը մի քիչ յետևից եր թռչում, մոտավորապես կես կիլոմետր։

Մայիսի 22-ին գիշերվա կեսին յերկու սավառնակն էլ արդեն հյուսիսային լայնության 87 աստիճանի վրա եյին գտնվում։ Ելի մի յերեք հարյուր կիլոմետր և նրանք հյուսիսային բևեռում կլինեյին։ Գիշերվա կիսին արեգակը գտնվում եր բարձր յերկնքի վրա։ Սառույցները մռայլորեն փայլփլում եյին։ Սառցային ցցապատերից տարածվում եյին կարմրավուն ստվերներ։

Ժամի 2-ին մոտ սավառնակները հասան սառույցից ազատ առաջին տարածությանը,— սա մի ամբողջ լիճ եր՝ զանազան ուղղությամբ ձգված նեղ թևերով։

Այդ ժամանակ մեխանիկ Ֆոյխտը մտավ ոդաչվի կաբինը և գոչեց.

— Բենզինի կեսը ծախսված ե։

Ոդաչուն մոտեցավ Ամունդսենին և հաղորդեց նրան.

— Բենզինի կեսը ծախսված ե. անհրաժեշտ ե դադարեցնել հետագա թռիչքը դեպի հյուսիս։

Ամունդսենն ասաց Լարսենին.

— Իջեք այստեղ, ջրի վրա։

Ոդաչուն իսկույն դարձրեց ղեկը և լայն շրջաններ կատարելով սկսեց իջնել դեպի ջուրը։ Գլխավոր լիճը, վոր տեսել եյին մեր ոդաչուները, բավական հեռու յեր գտնվում, յերբ հանկարծ մոտորներից մեկն սկսեց վատ աշխատել և ոդաչուն ստիպված յեղավ անմիջապես մեքենան իջեցնել լճի առաջին իսկ պատահած թևի վրա։ Սարսափելի արագությամբ մեքենան ներքև եր իջնում։ Ջրանցքում լողում եյին բազմաթիվ մանր սառույցներ և յերբ սավառնակի մակույկն իջավ ջրի մեջ, սառույցները ճաքճքեցին և կպան կողերին։ Սառույցի վրա գտնված ձյունը բարձրացավ հողմի արագությամբ. հետո մեքենայի վազքն սկսեց հետզհետե դանդաղել և սավառնակի քիթը դեմ առավ մի հաստ սառցակտորի։ Ամունդսենը բացեց իր կաբինը և դուրս յեկավ սառույցի վրա։ Նրա հետ դուրս յեկան ոդաչուն և մեխանիկը։ Ամենից առաջ նրանք դիտեցին ջրանցքը, վորի ամբողջ ջուրը ծածկված եր նոր առաջացած խիտ սառույցներով։

Սառույցն ու մանր սառցակտորները ամուր կերպով կպել եյին սավառնակին։ Սավառնակը կարծես թե ընկել եր ձկան խեժի մեջ։ Ոդաչուները սավառնակը շուռ եյին տալիս աջ ու ձախ, աշխատում եյին դուրս քաշել հաստ սառույցի վրա։ Սակայն սավառնակը բավականին ծանր եր։ Վերջապես տանջվելով նրանք սկսեցին սավառնակից

դուրս բերել մթերապաշարը և հանդերձանքն ուղղակի սառույցի վրա։ Յեթե սավառնակը վերջնականապես խրվի, նրանք գոնե սնունդ և սահնակ կունենան։

Սառույցներն ամենուրեք ճաքճքած եյին։ Տեղ-տեղ սառույցներից բլրակներ եյին գոյացել։ Ամունդսենը բարձրացավ այդպիսի մի բլուր և հեռադիտակով յերկար դիտում էր ամբողջ տարածությունը։ Նա նայում էր, թե ո՞ւր իջավ № 24 սավառնակը. վոչ շատ հեռու, ինչ-վոր մի տեղ իջած պիտի լիներ։ Սակայն շրջապատում վոչինչ չէր յերևում։ Սառցային անապատում համր լռություն էր տիրում։

Ամունդսենին թվաց թե ինչ-վոր մի տեղ հրացան կրակեցին։ Սակայն, գուցե այդ լոկ սառույցի ճաքո՞ց էր, ի՞նչ է պատահել № 24 սավառնակին։ Իջնելիս չի՞ ջարդվել արդյոք։

Թողնելով իր տագնապը, Ամունդսենը վերադարձավ իր ընկերների մոտ։ Նրանք բոլորն էլ բոլորովին տանջված եյին, հարկավոր էր հանգստանալ։ Նրանք մտան սավառնակի մեջ, վառեցին ջեռակը կաբիններում և փաթաթվելով քնելու տաք պարկերում՝ քնեցին։ Յերկու ժամից հետո նրանք նորից վոտքի վրա եյին։ Ամունդսենն անցավ ջրանցքի յերկայնքով։ Ջրանցքն այժմ նեղացել էր և ամեն րոպե կարող էր փակվել ու այդ ժամանակ սառույցները կփշրեյին սավառնակն ընկույզի պես։ Անհրաժեշտ էր անմիջապես մեքենան դուրս քաշել հին սառույցի վրա։ Բայց ինչպե՞ս անել այդ։ Յերեք մարդու համար նման աշխատանք կատարելն անհնարին էր. հարկավոր էր մեքենան ջրի միջով տեղափոխել մի ապահով տեղ։ Այդպիսի տեղ կար վոչ հեռու, հիսուն մետրի վրա։ Ջրանցքն այնտեղ մի ամբողջ ծովածոցի նման լայնացել էր, սակայն մինչև այնտեղ ճանապարհը փակված էր մի մեծ սառույցով։ Անհրաժեշտ էր նախ հեռացնել այդ սառույցը։ Ոդաչուները վոչ քլունգ ունեյին, վոչ բահ, վորպեսզի սառույցը ջարդեն։ Ունեյին միայն մի փոքրիկ կացին, յերեք ֆիննական դանակ

և մի փոքրիկ խարիսխ։ Յեվ ահա, այս գործիքներով ոդաչուներն արագորեն գործի անցան։ Տասը ժամ շարունակ նրանք ծակում եյին սառույցը և պոկված կտորները շալակով հեռացնում եյին։ Սկզբում աշխատանքը շատ դանդաղ էր առաջ գնում։ Ժամանակ առ ժամանակ Ամունդսենն ընդհատում էր աշխատանքը, բարձրանում էր մեքենայի բարձր մասը կամ բարձր սառույցի վրա և այնտեղից հեռադիտակով դիտում էր, թե արդյոք չի՞ յերևում մյուս սավառնակը։ Յերբ նա վերադառնում էր իր ընկերների մոտ, նրանք հարցական հայացք եյին գցում նրա վրա և Ամունդսենը կարճ ասում էր.

— Վո՛չ։

Յեվ բոլոր յերեքն էլ նորից կատաղորեն աշխատանքի եյին լծվում, վորպեսզի աշխատանքի մեջ խեղդեն իրենց տագնապը։ 15 ժամից հետո սառույցը հեռացված էր։ Ոդաչուները սավառնակի թևերին ամրացրին յերկար պարանները և այս պարաններով սավառնակը տեղափոխեցին ջրանցքից դեպի ծոցը։ Այժմ կարծես թե սավառնակն անվտանգ դրության մեջ էր։ Սակայն այստեղ նոր դժբախտություն վրա հասավ. հազիվ էր սավառնակը կանգ առել ազատ ջրում, յերբ նա նորից չորս կողմից սառեց ու մնաց նոր սառույցի ու մանր սառցակտորների մեջ։ Նա այնքան ծանրացել էր, վոր յերեք մարդ դժվարությամբ եյին շուռ տալիս։

— Յերևում է, ստիպված ենք լինելու վոտքով վերադառնալ, — ասաց Ամունդսենը։

— Մինչև վո՞րտեղ, — հարցրեց Լարսենը։

— Կգնանք մինչև Կոլումբիա հրվանդանը։ Մենք ունենք սահնակ և մի ամբողջ ամսվա պարեն, յեթե յուրաքանչյուր մարդուն որական հաշվենք մեկ կիլոգրամ։

— Համենայն դեպս պետք է փորձել դուրս քաշել մեքենան, — ասաց Լարսենը։

— Հեշտ է ասել, բայց ինչպե՞ս անել։

— Սառույցի վրա թեքություն սարքենք և այդ թեքությունով քաշենք մեքենան։

Յերեք հոգով անցան ծովածոցի շուրջը, վորոնելով, թե վորտեղ հարմար կլինի թեքություն սարքել: Այդպիսի տեղ շուտով գտնվեց և ոդաչուներն իսկույն աշխատանքի անցան: Ծարխխով և կացնով կտրում եյին սառույցը և կտորները մի կողմի վրա տանում: Ամունդսենը վերցրեց հեռադիտակը և բարձրացավ սավառնակի վերին մասը, վորպեսզի դիտի հորիզոնը, թե չի՞ յերևում արդյոք № 24 սավառնակը: Յեվ հենց վոր հեռադիտակն աչքերին դրեց, մեծ լճի մյուս կողմը, հինգ կիլոմետրի վրա պարզ տեսավ սավառնակը:

Նրանից մի քիչ ձախ վրան եր խփած, իսկ ավելի հեռու, սառցաբլրի վրա ծածանվում եր դրոշակը:

Ամունդսենը գոչեց.

— Յես տեսնում եմ սավառնակը:

Լարսենն ու Ֆոյխտը վազեցին դեպի բարձր սառույցը: Այո, սավառնակն իրոք վոր յերևում եր հեռվում: Ֆոյխտն իսկույն բլրի գագաթը բարձրացավ և սկսեց նշաններ անել, իսկ Ամունդսենը հեռադիտակով դիտում եր, թե արդյոք Ելլսվորտն ու իր ընկերները կնկատեն այդ:

Սկզբում մյուս սավառնակի մոտ վոչ մի շարժում չկար, սակայն ահա այստեղ մի մարդ վազեց դեպի դրոշակը, վերցրեց և սկսեց թափահարել այն,—նրանք սկսեցին իրար ազդանշաններ տալ Մորզեյի այբուբենով: Ոդաչու Դիտրիխսոնն իսկույն հաղորդեց.



Յես տեսնում եմ սավառնակը:

— № 24 սավառնակը ճեղքվածք է ստացել: Թռչելու ժամանակ գոնդոլը պատռվել է. աշխատում ենք քաշել սառույցի վրա:

Նա ելի ինչ վոր բան ասաց, սակայն այդ ժամանակ մառախուղը թանձրացավ և յերկու սավառնակների միջև կապը խզվեց: Ամունդսենն ու իր ընկերները նորից աշխատանքի անցան: Սառույցը քարի նման պինդ եր և դժվար եր ջարդվում: Նրանք մեծ դժվարությամբ եյին սառույցից կտորներ պոկում: Յերբ մառախուղը ցրվեց, Ամունդսենը նորից հեռադիտակը ձեռքին բարձրացավ սավառնակի վերին մասը և հանկարծ նկատեց, վոր ոդաչուներն այնտեղ շտապ վազվզում են իրենց մեքենայի շուրջը և ինչ վոր բան են կատարում նրա հետ: Այնուհետև յերևաց, թե ինչպես Ելլսվորտն ու իր ընկերները դահուկներ հագան, մի-մի հսկայական բեռ մեջքներին ուղղվեցին դեպի Ամունդսենի ճամբարը: Ամունդսենը գոռաց.

— Նրանք մեզ մոտ են գալիս:

Նա հեռադիտակով անհանգիստ դիտում եր նրանց: Յերեք մարդ, սև փոքր միջատների նման, առաջ եյին շարժվում սառույցների վրայով: Նրանք դժվարությամբ եյին առաջ գնում. յերևում եր վոր նրանք մեծ ծանրություն եյին կրում: Նրանք սկզբում ուզեցին գնալ դեպի սավառնակը լճի վրայով, վոր ծածկված եր նոր, նուրբ սառույցով, սակայն հետո նորից դարձան հին, ամուր սառույցի կողմը: Նրանց ճանապարհին հանդիպեց մի փոքր նեղուց, վորի վրայով չեյին կարող անցնել: Այն ժամանակ Ամունդսենն ու Լարսենը թողին իրենց աշխատանքը, վերցրին բրեզենտե մակույկը և գնացին նրանց դիմավորելու: Լարսենը մակույկ նստեց և անցավ նեղուցով: Յերեք ուղեկիցներն արդեն գտնվում եյին հին սառույցի յեզրին: Հանկարծ նրանց վոտքի տակ սառույցը կոտրվեց: Դիտրիխսոնը և Ոմդալն ընկան ջրի մեջ և սկսեցին խեղդվել. Ելլսվորտը նետվեց նրանց ոգնելու և մեկը մյուսի հետևից դուրս քաշեց սառույցի վրա: Լարսենը նրանց շտապով անցկացրեց նե-

ղուցից և բոլորը միասին վազեցին դեպի № 25 սավառնակը: Դիտրիխսոնը և Ոմդալը փոխեցին իրենց թաց շորերը, խմեցին մի բաժակ գինու սպիրտ, վորպեսզի տաքանան: Այս փոքրիկ անհաջողությունը չփչացրեց նրանց ուրախությունը. բոլոր վեց հոգին էլ նորից միասին եյին:

ՊԱՅՔԱՐ ԿՅԱՆՔԻ ՀԱՄԱՐ

Հազիվ եյին ամենքը տաքացել, իսկույն խորհուրդ արին, թե ինչպես անել: Պլանն արագորեն կազմվեց: Նրանք սառույցի վրա ճանապարհ կհարթեն թռչելու համար, սավառնակից դեն կգցեն ամբողջ ավելորդ ծանրությունը և ճանապարհ կընկնեն: № 25 սավառնակը կարող է վեց հոգուն էլ վերցնել: Թռիչքի ճանապարհը պետք է ունենար 500 մետր յերկարություն և 20 մետր լայնություն: Ամբողջ սառույցի վրա մոտ մի մետր հաստությամբ ձյուն կար: Անհրաժեշտ եր այդ ամբողջ ձյունը վերցնել, սառույցը հարթել և կտոր-կտոր անելով հեռացնել այն մեծ պատնեշ-

Ֆոյխտը նշան արավ դրոշակով:

ները, վոր կազմվել եյին առանձին խոշոր սառցակտորներից:

Այդ աշխատանքը մեծ և շատ դժվար աշխատանք եր, իսկ մեր ճանապարհորդներն ունեյին միայն մի փոքր կացին, ֆիննական դանակներ և խարիսխը: Սակայն այս մարդիկ վարժված եյին վտանգի ու զրկանքների, կարող եյին արիությամբ նայել մահվան աչքերին և այժմ նրանք գիտեյին, վոր այդ աշխատանքից է կախված իրենց կյանքը: Ուրախ կատակներով նրանք լծվեցին աշխատանքի: Նրանք արագորեն թեքություն սարքեցին սառույցի վրա և այդտեղով սավառնակը դուրս բերին հաստ և ամուր սառույցի վրա: Վեց հոգու համար դժվար չեր այդ աշխատանքը կատարել:

Նրանք չափեցին ովկիանոսի խորությունը, այդտեղ խորությունը մոտ չորս կիլոմետր եր, նշանակում եր մոտակայքում վոչ մի տեղ գետին չկար: Արեգակը տաքացնում եր, սակայն ջերմաստիճանը համենայն դեպս մինուս 10 աստիճան եր: Շարժվող սառույցները № 24 սավառնակը մոտ եյին բերել և Դիտրիխսոնը, Ելսվորտը, Ֆոյխտը և Ոմդալը իսկույն գնացին սավառնակի մոտ ու ձեռնասահնակներով այնտեղից փոխադրեցին բենզինի տակառը և այն բոլոր պարենը, վոր գտան այնտեղ: Ամբողջ հաջորդ որը նրանք սավառնակի շուրջը սառույցների հետազոտություն կատարեցին: Նրանք ընտրեցին հյուսիս-արևմտյան ուղղությունը և սկսեցին փոքր հրապարակ պատրաստել: Սակայն նրանք հազիվ եյին 20 մետր պատրաստել, յերբ սառույցն սկսեց շարժվել, ուղիղ սավառնակի մոտ ճեղքվածք առաջացավ, իսկ մի քիչ հեռու սառույցները սեղմվեցին և վեր բարձրացրին մի մեծ սառցաբեկոր, վորը ցցվեց պատնեշի նման: Հին ճանապարհը փակված եր:

Դիտրիխսոնն առաջարկեց սավառնակը քարշ տալ դեպի բևեռային լճի ծայրը: Այնտեղ ջուրը սառել եր, առաջացել եր հարթ սառույց, վորի վրայով սավառնակը կարող եր հեշտությամբ առաջ շարժվել և թերևս հաջողվեր թռիչք կատարել: Վորոշեցին փորձել իրենց բախտը:



Դիտրիխսոնը, Եյլսվորտը, Ֆոյխտը յեվ Օմդալը բերին բենզինով լիքը տակառը:

Սավառնակն շտապ տեղափոխեցին նոր սառույցի վրա։ Լարսենը կաբինում ղեկչի տեղը գրավեց, Ֆոյխտը մտավ մոտորների կաբինը, իսկ մնացյալ չորս հոգին մնացին սառույցի վրա, վորպեսզի օգնեն շարժելու, առաջ հրելու ապարատը և ուղղելու ճանապարհի վրա։

Սակայն հազիվ էր սավառնակը ճանապարհ ընկել, սառույցը նրա տակ կոտրվեց և կրկին ստիպված յեղան հին սառույցի վրա տեղափոխել։ Բոլորն էլ հոգնել էին աշխա-

տանքից և վորոշեցին մի քիչ հանգստանալ։ Սակայն որն անհանգիստ անցավ։ Սառույցներն ամենուրեք շարժվում էին և վտանգ կար, վոր վորևէ սառույց հանկարծ կբարձրանա մի ուրիշ սառույցի վրա և ապարատը կխտավի։ Այն ժամանակ վորոշեցին հերթապահություն սահմանել։ Մեխանիկ Ֆոյխտը հերթապահ կանգնեց, իսկ մյուս հինգ հոգին մտան սավառնակը և քնեցին։

Սառույցներն ամենուրեք կամաց-կամաց ճաքճքում էին։ Հանկարծ լսվեց Ֆոյխտի գոռոցը.

— Դուրս յեկեք շուտ, սառույց է գալիս։

Ամենքը դուրս թափվեցին սառույցի վրա և տեսան մի սարսափելի պատկեր. սառցաբեկորներն ամեն կողմից շարժվում էին դեպի սավառնակ և թվում էր, թե ահա վորտեղ վոր է, կճխլեն այն։ Սավառնակով սառույցի վրա բացած ճանապարհն արդեն փակված էր, իսկ առանձին սառցաբեկորներ հասնում էին սավառնակի կողերին։

Լարելով իրենց բոլոր ջանքերը՝ ոդաչուներն սկսեցին հրել սավառնակը սառույցի վրա և քիչ-քիչ տեղափոխեցին մի անվտանգ տեղ։ Կարելի չէր հուսահատության հասնել, տեսնելով այն պատկերը, վոր այժմ փռված էր նրանց աչքի առաջ. սառույցը չորս կողմից ճաքճքել էր և բազմաթիվ ճեղքեր էին առաջացել. թվում էր, վոր այլևս վոչ մի ճանապարհ շինել չեր կարելի։

Վեց հոգին նորից սկսեցին հետազոտել սառույցի չորս կողմը։ 400 մետրի վրա նրանք մի մեծ սառույց գտան, վորի վրա նոր սառցաշերտեր էին բռնել։ Նրանք այստեղ քաշ տվին սավառնակը։

Այդ որը փչում էր շատ ուժեղ քամի, շրջապատում ամեն ինչ սուլում էր ու վոռնում։ Մանր սառույցները բարձրանում էին սառցադաշտի վրա և թվում էր, թե նրանք նորից քարուքանդ կանեն ճանապարհը։

Ամբողջ գիշերը և առավոտյան շարունակվում էր բուքը, սակայն հին, հաստ սառույցը դիմացավ։

Հունիսի 6-ին, վաղ առավոտյան մարդիկ նորից գործի անցան։ Նրանք վստահ չէին, թե այս անգամ կհաջողվի

գործը գլուխ բերել. սառույցը բավական անհուսալի եր։ Ամունդսենը մի քանի անգամ ինքն իր մեջ վճռեց, վոր ամենից լավ կլինի թողնել այս աշխատանքը և անմիջապես վոտքով ու սահնակներով մեկնել դեպի հարավ։ Սակայն վոչինչ չասաց իր ընկերներին, վորպեսզի չշփոթեցնի նրանց։ Ամենքը յեռանդով աշխատում եյին։ Յեվ վորովհետև գործիքները քիչ եյին ու ամենքը չունեյին, Ոմդալը կինեմատոգրաֆիայի ապարատի վոտները սարքեց, հարմարացրեց և գործ եր ածում վորպես քլունգ։ Դիտրիխսոնը զինվեց ալյումինե ձողով,— այս գործիքներով նրանք սառույցները կտոր-կտոր եյին անում և ճանապարհից հեռու գցում։

Յերկրորդ որն այս սառույցը նա սկսեց ճեղքվածք տալ։ Ամունդսենը և Ոմդալը սահնակներով ձյունը կրում եյին և թափում ճեղքվածքների մեջ։ Մի ճեղքն այնքան լայն եր, վոր հնարավոր չեղավ ձյունով ծածկել։ Անհավատալի ջանքերով բոլորը միասին քարշ տվին մի մեծ սառույց և նրանից պատրաստեցին մի ամբողջ կամուրջ։ Նրանք ամբողջ ուժով աշխատում եյին, այնինչ նրանց ստացած սնունդը շատ չնչին եր. ամեն մեկն որական ստանում եր միմիայն 250 գրամ սնունդ։

Հունիսի 8-ին հանկարծ մառախուղը փավեց և տաքություն սկսվեց։ Ձյունն ամենուրեք սկսեց հալվել և այս բանն իսկույն վատացրեց գործը։ Սավառնակն այդպիսի ձյան վրա յերբեք չեր կարող վեր բարձրանալ, անհրաժեշտ եր այնքան խորացնել, վոր հասնեն իսկական սառույցին։

Յերեք որից հետո հրապարակի կեսն արդեն պատրաստ եր։ Մի անգամ Ոմդալը դեռևս չմաքրված սառույցի վայրերով յետ ու առաջ գնալիս նկատեց, վոր յեթե ձյունը կոխոտեն, տափակացնեն, նա ավելի կամրանա և թեթև ցրտի դեպքում հարթ մակերես կկազմի։ Այն ժամանակ վորոշեցին ճանապարհի մի մասը չհարթել, այլ միայն կոխոտել ու ամրացնել։

Արդեն տասնութերորդ որն եր, ինչ մեր ճանապար-

հորդները սառույցի վրա եյին գտնվում։ Յեթե յերկու որ ևս մնային և չթռչեյին այստեղից, նրանք քաղցից կմեռնեյին։

Թռիչքը նշանակված եր հունիսի 15 ին։ Թռիչքի նախորյակի յերեկոյան նրանք սավառնակից դուրս գցեցին ամեն բան, բացի ամենաանհրաժեշտ իրերից,— սավառնակում մնաց միայն բենզին և յուղ՝ ութ թռիչքային ժամի համար, բրեզենտե մակույկը, յերկու հրացան, 200 փամփուշտ, վեց հատ քնելու պարկ, վրանը և սննդամթերքը։

Նրանք նույնիսկ ավելորդ կոշիկները դեն գցեցին, վորովհետև սավառնակն առանց այն էլ խիստ ծանրաբեռնված եր։ Հագուստեղենից թողին միայն այն, ինչ վոր հագած ունեյին։

Հունիսի 15-ին վաղ առավոտյան նրանք պատրաստվեցին թռչելու։ Գիշերը հրապարակի մակերեսը լավ սառել եր և պատել ամուր սառցաձյունով։ Յերկինքն այդ որը բոլորովին պարզ եր։ Սառնամանիքը միայն յերեք աստիճան եր։ Լարսենը մտավ ոդաչվի կաբինը և մատորը շարժման մեջ դրեց, վորպեսզի մեքենան տաքանա. մյուսները մի վերջին անգամ վազ տվին բաց արած հրապարակի յերկայնքով և դես ու դեն նետեցին ճանապարհի վրա յեղած սառցակտորները, վորպեսզի ոդաչուն ճանապարհը լավ տեսնի։ Այսպես նրանք դեն գցեցին դահուկները, հագուստները, վրանի կտորները։ Վերջապես մեքենան տաքացավ և ամենքը մտան սավառնակը։

Լարսենը նստած եր ոդաչուի տեղը։ Նրա յետևը, ուղիղ հատակին, նստեցին Դիտրիխսոնն ու Ամունդսենը։ Յերկու մեխանիկները տեղավորվեցին բենզինի մասում, իսկ Ելլսվորտը նստել եր ընդհանուր սենյակում։

Լարսենը նայեց, թե ամեն ինչ պատրաստ ե և մեքենան շարժման մեջ դրեց։ Սավառնակը սահեց հրապարակի վրայով՝ մի կողմից մյուս կողմը շուռ գալով, դողաց և տնքաց։ Ահա նա անցավ կամրջակով և դյուրությամբ կտըր-տնքաց։ Ամենքն ուրախ բղավեցին, վերցրին գլխարկները, թափահարեցին. փրկությունը մոտ եր։

Հինգ րոպեյից հետո նրանք արդեն սառույցներից շատ բարձր եյին գտնվում։ Սավառնակը սլանում եր դեպի հարավ։ Յերկինքը ծածկվեց ամպերով։ Սավառնակն սկզբում շատ ցածր եր թռչում, սառույցներից 50 մետր բարձր։ Վոչ մի տեղ ջրի մի կաթիլ անգամ չեր յերևում, — միայն կտոր-կտոր յեղած սառույցներ եյին։

Յերեք ժամից հետո սավառնակը մեծ մառախուղի մեջ ընկավ, — ոդաչուն յերկու հարյուր մետր վերև բարձրացավ և մառախուղը ներքևում մնաց։ Մի ժամ ել անցավ, մառախուղն անհետացավ և նորից սավառնակի ներքև բացվեցին անսահման սառցային տարածությունները։ Բաց ջրեր այժմ սկսեցին ավելի հաճախ հանդիպել. տեղ-տեղ յերևում եյին ամբողջ լճեր, վորոնց վրա լողում եյին մանր սառույցներ։ Սակայն դեռևս վոչ մի տեղ ցամաքի նշույլ անգամ չկար։

Յոթ ժամ շարունակ սավառնակն առավելագույն արագությամբ թռչում եր դեպի հարավ և ահա, վորտեղ վոր ե պիտի յերևար Շպիցբերգենը։ Ճանապարհին նորից ամպեր հանդիպեցին։ Ամբողջ մի ժամ սավառնակը թռչում եր՝ իր առաջ վոչինչ չտեսնելով։ Հետո մառախուղի վիթխարի շերտը ճեղքվեց, դես ու դեն ցրվեց և հեռվում յերևաց բարձր, փայլուն մի լեռնագագաթ։ Այդ Շպիցբերգենն եր։ Նրա հյուսիսային կողմը յերևում եյին յոթ մանր կղզիներ, իսկ կղզիների մոտ փռված եր ջրի մի մութ շերտ։ Այդ արդեն բաց ովկիանոսն եր։ Ոդաչուն շուռ տվեց սավառնակը դեպի բաց ծովը և տասը րոպեյից հետո սավառնակն արդեն թռչում եր ովկիանոսի վրայով։

Կղզու կողմից ուժեղ քամի յեր փչում, ծովը խիստ փոթորկված եր, — ջրի վրա իջնելը՝ վտանգավոր։ Հանկարծ ոդաչուն ինչ-վոր նշան արավ, ցույց տալով ղեկը. վերջինիս հետ ինչ-վոր բան եր պատահել, նա այլևս չեր գործում։ Ոդաչուն սավառնակը ներքև ուղղեց և մի րոպեյից հետո սավառնակն որորվում եր ալիքների վրա։ Ալիքները մեկը մյուսի յետևից խփում եյին նրա կողերին,

ջրի շիթերը թռչում եյին նրա թևերի վրայով և թվում եր, ուր վոր ե սավառնակը ջարդ ու փշուր կլինի։

Քամին սավառնակը քշեց ցամաքի կողմը, հասցրեց ծովափնյա սառույցներին։ Ամունդսենը, Դիտրիխսոնը և նրանց յետևից մնացյալ բոլորը դուրս յեկան սառույցի վրա, սավառնակը պարանով ամրացրին սառույցին և ուղևորվեցին դեպի ափը։ Արեգակն այրում եր այն հսկայական քարերը, վորոնցով ծածկված եր ծովափը։ Տեղ-տեղ քարերի միջով յերևում եր թարմ մամուռը. լեռների լանջերից ջուրը քչքչալով ցած եր հոսում։ Ափի վրայով թռչում եյին ծովորորներ և կայրներ — այստեղ արդեն կյանք կար։

Ոդաչուներն ուրախ թռչկոտում եյին մեծ քարերի վրայով, կարծես թե յերեխաներ եյին դարձել, — այնքան մեծ եր նրանց ուրախությունը։ Ընդամենն ութ ժամ առաջ նրանք գտնվում եյին սառցային անապատում, իսկ հիմա նրանք նորից ամուր հողի վրա եյին կանգնած։

Ծովափին ընկած եյին լողացող ծառերի բներ, վոր ովկիանոսի ալիքներն այստեղ եյին բերել հեռավոր Սիբիրի ափերից։ Այս փայտերից նրանք հավաքեցին և խարույկ վառեցին։ Ոմդալն սկսեց ճաշ պատրաստել, բայց հենց վոր պրիմուսը տաքացրեց, Լարսենը գոռաց.

— Նայեցե՛ք, նա՛վ։

Յեվ ձեռքով ցույց տվեց դեպի արևելք։

Ամենքը վեր թռան. իսկապես, մոտիկ հրվանդանի հետևից դուրս յեկավ մի փոքրիկ ձկնորսական նավ, ուղղությունը վերցրեց դեպի ծովը և չնկատեց վո՛չ սավառնակը կղզու մոտ և վո՛չ ել մարդկանց կղզու վրա։ Նա բավական արագ եր գնում և ահա, վորտեղ վոր ե, պիտի թագնվեր կղզու քթի յետևը։

Ի՞նչ կարելի յե անել նավը կանգնեցնելու համար։

Լարսենը բղավեց.

— Նստեցեք, շո՛ւտ, մենք նրան կհասնենք։

Մի րոպեյում ամեն ինչ սավառնակի մեջ հավաքվեց, մոտորը շարժման մեջ դրվեց և սավառնակը շաչյունով ու սուլոցով սլացավ ովկիանոսով՝ նավին հասնելու համար։

Տասը րոպեյում սավառնակը հասավ նրան։ Այդ նորվեգական նավ էր և կոչվում էր «Ծովային կյանք»։ Նա իսկույն կանգ առավ, նրանից ցած իջեցրին մի նավակ և յերկու ձկնորս մոտեցան սավառնակին։ Նրանք զարմանքով եյին նայում մազակալած, տարօրինակ մարդկանց, վորոնք դուրս եյին նայում սավառնակի կաբինի պատուհանից։

Հանկարծ ձկնորսներից մեկը գոռաց.

— Սա Ամունդսենն է։

Ամունդսենը բաց արավ կաբինի պատուհանը և ասաց.

— Հարցրեք նավապետին, բուքսիրի չի՞ վերցնի մեզ մինչև Շպիցբերգեն, վորովհետև մեր բենզինն սպառվում է։

Ձկնորսները վերադարձան նավը, իսկ յերկու րոպեյից հետո ինքը՝ նավապետը նավակով յեկավ սավառնակի մոտ։ Նա համաձայնեց անմիջապես ձուկ վորսալը թողնել և սավառնակը տանել դեպի Շպիցբերգեն, հասցնել մինչև Կինգսբեյ։

Ձկնորսները բուքսիրի վերցրին սավառնակը և վեց անվեհեր ճանապարհորդները փոխադրվեցին «Ծովային կյանք» նավի վրա։ Յեվ միայն այստեղ նրանք առաջին անգամ զգացին, վոր արշավը ավարտված է։ Լուռ և հանդարտ նրանք սեղմեցին միմյանց ձեռքը, նայեցին իրար աչքերի մեջ։ Այս յերեք շաբաթվա ընթացքում նրանցից յուրաքանչյուրն իր մտքում արդեն պատրաստվել եր մահվան, և ահա նորից կյանք։

Վեց հոգին եւ իջան ներքև, նավասենյակը։ Նավի անձնակազմն ամբողջովին ազատեց նավասենյակը և լիովին նրանց տրամադրության տակ դրեց։ Բոլոր վեց հոգին եւ տեղավորվեցին լայն մահճակալներում, նրանց համար իսկույն բերին սուրճ, ձվաձեղ և փոկի բիֆշտեքս։ Յերկար քաշված օրերից հետո սկսվեց խնճույքը։ Նավը ճանապարհ ընկավ, սակայն կես որ նավելուց հետո այնպիսի փոթորիկ սկսվեց, վոր նավն ստիպված յեղավ մտնել ծովածոցը։ Այստեղ, ծովածոցում սավառնակը կապեցին մի քարի, իսկ նավն յարդեն մենակ լիակատար



«Կրասին» սառցահատը։

արագությամբ ուղևորվեց դեպի Նինգսբեյ՝ օգնություն ստանալու։

Հունիսի 17-ին «Ծովային կյանք»-ը հասավ Նինգսբեյ նավահանգիստը։ Այստեղ կանգնած էյին յերկու նավ, իսկ ծովափին յերևում էր յերկու սավառնակ։ Ամունդսենը և իր ուղեկիցները զարմացան, վորտեղի՞ց էյին այս սավառնակները և այս նավերը։

Յերբ «Ծովային կյանք»-ը մոտեցավ ափին և նավաստիները ճանաչեցին Ամունդսենին, ամբողջ նավահանգստում իրարանցում սկսվեց։ Մարդիկ ծիծաղում էյին, լաց լինում, շոշափում էյին Ամունդսենին. նրանք չէյին հավատում իրենց աչքերին։

— Միթե այդ դուք եք, — հարցնում էյին նրանք։

Մարդիկ իրար առաջ կտրելով պատմում էյին, թե ինչպես էյին սպասում, ինչպես պատրաստվում գնալ վորոնելու նրանց։ Դրա համար էյին այստեղ յեկել այդ յերկու նավն ու սավառնակները։

— Մենք արդեն մտածում էյինք, թե դուք չեք վերադառնա։

ԴԵՊԻ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԲԵՎԵՌԸ

Թվում էր, թե դեպի բևեռ կատարած այս վտանգավոր թռիչքը պետք է հետ կանգնեցնի Ամունդսենին այդ մտքից։ Սակայն հազիվ էյին նրանք ժամանել Նորվեգիա, յերբ Ամունդսենն ու իր ուղեկիցներն իսկույն նորից սկսեցին պատրաստվել դեպի բևեռ արշավելու։ Ամունդսենը չէր նահանջում վտանգների առաջ։ Այժմ վորոշված էր թռչել դիրիժաբլով։ Ամունդսենը գտնում էր, վոր դիրիժաբլն ամենահարմար օդանավն է այդպիսի հեռավոր և վտանգավոր ճանապարհորդության համար։

Դեռևս իր առաջին թռիչքից առաջ Ամուդսենը տեղեկացել էր, վոր իտալական կառավարությունը դիրիժաբլ է վաճառում։ Այժմ նա և Եյլսվորտը վորոշեցին դիրիժաբլ գնել։

Մի ամիս Նորվեգիայում հանգստանալուց հետո, նրանք մեկնեցին Իտալիա և այնտեղ, Հռոմում, դիտեցին ու փորձեցին դիրիժաբլը։ Նա լիովին պիտանի չէր հեռավոր թռիչքի համար։ Նրանք իբրև կապիտան հրավիրեցին ինժեներ Նոբիլեյին, վորը կառուցել էր այդ դիրիժաբլը։

Հանդիսավոր կերպով դիրիժաբլից հանեցին իտալական դրոշը և բարձրացրին նորվեգականը։ Դիրիժաբլին տվին «Նորգե» անունը, վոր նշանակում է Նորվեգիա։

Նոբիլեյի հրամանատարությամբ դիրիժաբլը թռիչք կատարեց ամբողջ Յեվրոպայի վրայով և կանգ առավ միայն Գերմանիայում ու ԽՍՀՄում՝ Կրասնոարմեյսկ քաղաքում (նախկին Գատչինո) և Կրասնոարմեյսկից ուղիղ ճանապարհով թռավ դեպի Շպիցբերգեն։ Եյլսվորտն ու Ամունդսենն ավելի առաջ էյին նավով յեկել Շպիցբերգեն։

Դիրիժաբլում իբրև մեխանիկ և օդաչու յեկել էյին Ամունդսենի ուղեկիցները — Լարսենը և Օմդալը։ Նինգսբեյ գյուղաքաղաքում, Շպիցբերգենի վրա, դիրիժաբլի համար կառուցված էր հատուկ անգար (օդանավակայան)։

Մայիսի 7-ին «Նորգեն» թռավ Շպիցբերգեն։ Ամբողջ ժամանակ Ամունդսենն ու Եյլսվորտն ռադիոյով շարունակ տեղեկություն էյին ստանում դիրիժաբլի թռիչքի մասին։ Դիրիժաբլի ժամանումից մի ժամ առաջ նրանք ստացան վերջին ռադիոհեռագիրը՝ «Նորգե»-ն մոտենում է Շպիցբենրգենին։

Շուտով հորիզոնի վրա յերևաց դիրիժաբլը, նա թռչում էր մի ժամում 120 կիլոմետր արագությամբ։ Շպիցբերգենի քարածխային հանքերի բանվորները գնացին դիմավորելու դիրիժաբլին։ Նրանց միացան նաև ձկնորսական նավերի նավաստիները, վորոնք կանգնած էյին ծովածոցում։ Դիրիժաբլը պտույտներ արավ նավահանգստի վրա, նրանից բաց թողին պարաններ և այդ պարաններով նա իջավ օդանավակայանում։

Դեպի բևեռ թռիչք կատարելու պատրաստությունները տևեցին յերեք օր։ Այդ ժամանակ նավով և յերկու սավառնակով Շպիցբերգենի նույն նավահանգիստը ժամանեց

ամերիկացի օդաչու Բերդը, վորը նույնպես ուզում եր թռչել դեպի բևեռ: Մի ամբողջ որ նա իր սավառնակը պատրաստեց և առանց պարեն ու տաք հագուստ վերցնելու թռավ դեպի բևեռ: 16 ժամից հետո նա վերադարձավ: Նա հասավ բևեռ, սակայն նրա ճանապարհորդությունը միայն սպորտիվ բնույթ ուներ և վոչ թե գիտական: Խիզախ ամերիկացին շատ մեծ ռիսկ արեց. յեթե նրա սավառնակին վորևե բան պատահեր և նա ստիպված լիներ իջնել սառույցի վրա, ինչպես այդ պատահեց Ամունդսենի հետ, նա անպայման քաղցից ու ցրտից կմեռներ:

Այնուամենայնիվ Բերդն առաջին մարդն եր, վոր օդային ճանապարհով հասավ բևեռը: Ամունդսենը չեր սիրում անպատրաստ ճանապարհորդել: Նա չեր սիրում անիմաստ ռիսկ անել: Յուրաքանչյուր ճանապարհորդությունից նա բերում եր բազմաթիվ գիտական տվյալներ: Յեվ Բերդի թռիչքը բնավ չսառեցրեց դեպի բևեռ և ավելի հեռու, Սառուցյալ ովկիանոսից դեպի Ալյասկա թռչելու նրա ցանկությունը:

1926 թվի մայիսի 11-ի առավոտյան ժամը 10-ին «Նորգե»-ն դուրս յեկավ իր պատմական ճանապարհորդությանը: Դիրիժաբլը ուղևորվեց ուղիղ դեպի հյուսիս: Կես ժամից հետո Շպիցբերգենի լեռները թաղնվեցին ճանապարհորդների աչքերից, դիրիժաբլը թռչում եր սառցային տարածությունների վրայով, վոր տեղ-տեղ կտրված եյին



«Նորգեն»-ն դուրս յեկավ իր պատմական ճանապարհորդությանը:

ջրի մուգ շերտերով: Յեղանակը շարունակ շատ հաջողակ եր: Արեգակը փայլում եր, քամին մեղմ եր և ճանապարհորդներն իրենց առջև տեսնում եյին սառույցի հսկայական անհուն տարածություն, վոչ մի տեղ չեր յերևում ցամաքի և վոչ մի կտոր: Միայն սառույց եր ու սառույց:

Դիրիժաբլում գտնվում եյին գիտական աշխատավորներ. նրանք դիտողություններ եյին կատարում. յուրաքանչյուր կես ժամը մեկ անգամ նրանք վորոշում եյին, թե վորտեղ ե գտնվում դիրիժաբլը:

Դիրիժաբլը կառավարում եր Նոբիլեն, իսկ նրա կողքին շարունակ նստած եր Լարսենը: Ինքը՝ Ամունդսենն աշխարհագրական դիտողություններ եր կատարում:

Տասը ժամ թռիչքից հետո դիրիժաբլը հասավ բևեռը: Սառցային տարածություններն այժմ ել փռված եյին նրանց տակ: Ամենուրեք սառույց և սառույց, ակոսված՝ ճեղքվածքներով. ճեղքվածքներում սևին եր տալիս ջուրը:

Դիրիժաբլը դանդաղեցրեց իր ընթացքը, սկսեց պըտույտներ գործել բևեռի վրա և շատ մոտեցավ սառույցին:

Ամունդսենը, Ելսվորտը և Նոբիլեն բաց արին իրենց կաբինի պատուհանները և դրոշներ գցեցին: Ամունդսենը նետեց նորվեգական դրոշ, Ելսվորտը՝ ամերիկյան, իսկ Նոբիլեն՝ իտալական և Միլան քաղաքի դրոշակը: Այնուհետև բաց թողնվեց կաշվե ծրար՝ մագաղաթով, վորի վրա գրված եր, թե 1926 թ. մայիսի 11-ին դիրիժաբլ «Նորգեն» թռավ հյուսիսային բևեռի վրայով:

Մի քանի պտույտ կատարելով բևեռի վրա՝ դիրիժաբլը թռավ հեռուն, դեպի հարավ, դեպի Ամերիկայի ափերը: Սակայն շուտով յեղանակը փչացավ, սկսեց քամի փչել, մեծ շերտերով մառախուղ եր անցնում: Դիրիժաբլը հաճախ թռչում եր առանց բան տեսնելու: Նա մառախուղից շատ վերև բարձրացավ, թռավ և մարդիկ չեյին տեսնում, թե ինչ ե կատարվում ներքևը, ովկիանոսի վրա:

10 ժամից հետո օդաչուները հեռվում նկատեցին մութ լեռներ,—այդ Բարրո հրվանդանն եր՝ Ալյասկա թե-

բակղզու հյուսիսային ափին։ Ամունդսենը սևեռուն հայացքով նայում եր այն տեսարանին, վոր փռված եր իր առաջ։

Դիրիժաբլը թռավ մինչև Բարրո հրվանդանը և ափի յերկայնությամբ ուղղվեց դեպի հարավ։ Ծովը այժմ բաց եր, դիրիժաբլը գնում եր Բերինգյան նեղուցի յերկայնքով։ Այստեղ՝ Ոխոտյան ծովից յեկավ շատ խիտ մառախուղ և ամեն ինչ ծածկեց իր մեջ։ Դիրիժաբլն սկսեց մի կողմի վրա գնալ. օդաչուները չգիտեյին, թե իրենք վորտեղ են գտնվում։

Յերբ մառախուղը ցրվեց, ներքևում յերևաց գետինը։ Այդ Սիբիրի ափերն եյին։ Դիրիժաբլն այդ ժամանակ դարձավ դեպի արևելք՝ աշխատելով վորքան հնարավոր է շուտ դուրս գալ մառախուղի միջից։

Այսպես նրանք մի քանի ժամ թափառեցին։ Հետո քամին ցրիվ տվեց մառախուղը և հեռվում, Ալյասկայի ափին, օդաչուները տեսան անծանոթ մի գյուղ, վոր գտնվում եր խոր ծովածոցի մոտ։ Դիրիժաբլն ուղղվեց ուղղակի դեպի այդ կողմը։ Ամունդսենը մոտեցավ կապիտան Նոբիլեյի կաբինին և հարցրեց, թե դիրիժաբլը կարող է այստեղ իջնել։ Նոբիլեն հեռադիտակով դիտելով այդ վայրը, պատասխանեց.

— Կարող է։

Իսկույն հրաման տրվեց պատրաստվել իջնելու։ Դանդաղեցնելով թռիչքը՝ դիրիժաբլը շատ մոտեցավ գյուղին։ Քամին բոլորովին հանդարտվեց և վայրեջքը շատ հաջող անցավ։ Գյուղի բոլոր բնակիչները վազեցին դեպի դիրիժաբլը։ Նրանք բռնեցին դիրիժաբլից նետված պարանները և օգնեցին գետնի վրա իջնելու։ Բոլորն ուռա եյին գոչում և շնորհավորում օդաչուներին։

Այս գյուղը կոչվում եր Թելլեր, և գտնվում եր 150 կիլոմետր դեպի հյուսիս-արևմուտք Ամերիկայի ամենահյուսիսային փոքր քաղաքից – Նոմից։

Յերբ դիրիժաբլը կանգ առավ, Գոնդոլից առաջինը

դուրս յեկավ Ամունդսենը։ Նրան ճանաչեցին և ներքևից կանչում եյին.

— Վողջույն ձեզ, կապիտան Ամունդսեն։

Նույնիսկ այստեղ, այս հեռավոր գյուղում, նա այդքան ժողովրդական մարդ եր դարձել։

Ամունդսենը նավով գնաց Նոմ, վորտեղից և ուղարկեց առաջին հեռագիրը՝ բարեհաջող ժամանելու մասին։ Իսկ դիրիժաբլը քանդեցին, նրա ամենաարժեքավոր մասերը բեռնեցին նավին և ուղարկեցին Յեվրոպա։

ՓԱՌԱՎՈՐ ՄԱՀ

Դեպի հյուսիսային բևեռը կատարած թռիչքով Ամունդսենը վորոշեց ավարտել բևեռային հետազոտությունները։ Նա կատարեց այն ամենը, ինչ յերազել եր։ Նա հայտնաբերեց հարավային բևեռը, հյուսիս-արևմտյան ճանապարհը, նա իր ընկեր Վիստինգի հետ միասին յեղավ յերկու բևեռներումն ել՝ հարավային և հյուսիսային, նա անցավ հյուսիս-արևելյան ճանապարհը։ Մի մարդու համար այս բոլորը բավական շատ եր, — այս սխրագործություններից նույնիսկ մեկը բավական կլիներ, վորպեսզի նրա անունն ընդմիշտ մնար մարդկանց հիշողության մեջ։

Իր կյանքի մնացյալ մասն Ամունդսենը վորոշեց նվիրել գիտությանը։ Նա բնակություն հաստատեց Քրիստիանիայի ծայրամասում, վոր այժմ վերանվանվել է Ոսլո, և այստեղ, խաղաղության մեջ աշխատում եր այն գիտական նյութերի վրա, վորը նա հավաքել եր ճանապարհորդությունների ժամանակ։

Սակայն չեր անցել և յերկու տարի իր վերջին թռիչքից, յերբ 1928 թվականի գարնանը լրագրերում հաղորդագրություն տպվեց, թե ինժեներ Նոբիլեն վորոշել է նորից թռչել դեպի հյուսիսային բևեռը «Իտալիա» դիրիժաբլով։ Այս անգամ ամբողջ նավակազմը բաղկացած եր իտալացիներից և միայն յերկու արտասահմանցի կար նրանց մեջ. մեկը շվեդացի Մալմգրենը — գիտնական

ղերևույթաբան, վորն արդեն Ամունդսենի հետ մի անգամ թռել էր հյուսիսային բևեռի վրայով, և մյուսը չեխ պրոֆեսոր Բեգունեկը։

Դիրիժաբլ «Իտալիան», ինչպես «Նորդե»-ն, թռիչք կատարեց Կինգսբեյ գյուղաքաղաքից, վոր գտնվում է Շպիցբերգեն կղզու վրա։

Սկզբում դիրիժաբլն աշխատեց հասնել մինչև «Հյուսիսային Յերկիր» կղզին, սակայն մառախուղի մեջ մոլորվեց և վերադարձավ Շպիցբերգեն։

Յերկու որից հետո նա նորից ճանապարհ ընկավ։ Այս անգամ նրա բախտը բանեց. նա բարեհաջող կերպով հասավ հյուսիսային բևեռ և յերկու ժամ շարունակ պտտվեց նրա վրա։ Բևեռում դիրիժաբլից վայր նետեցին իտալական բազմաթիվ դրոշակներ։

Դիրիժաբլում գրամաֆոնը մարշ էր նվագում։ Այս ցերեմոնիայից հետո Նոբիլեն դիրիժաբլը դարձրեց յետ, դեպի Շպիցբերգեն։

Ռադիոն դիրիժաբլից յուրաքանչյուր կես ժամը մեկ անգամ յերկրին հաղորդում էր, թե ինչպես է անցնում թռիչքը։ Ամեն ինչ բարեհաջող էր գնում։ Դիրիժաբլն արդեն գտնվում էր Շպիցբերգենից 110 կիլոմետր հեռավորության վրա, յերբ հանկարծ սկսվեց սարսափելի քամին՝ խիտ մառախուղի հետ միասին և դիրիժաբլն սկսվեց սառույցով ծածկվել։ Նա այնքան ծանրացավ, վոր արդեն ցածր էր թռչում սառույցների վրայով։ Մառախուղի մեջ նա զարնվեց մի բարձր սառցասարի։ Դիրիժաբլի մի գոնդոլը, վորի մեջ գտնվում էին ինը մարդ և ինքը՝ Նոբիլեն, կտրվեց դիրիժաբլից և ընկավ սառույցների վրա, իսկ մյուս գոնդոլը՝ դիրիժաբլի հետ միասին բարձրացավ վերև և թռչում էր դեպի հարավ-արևելք։ Այս գոնդոլում գտնվում էին վեց մարդ։

Սառույցի վրա ընկած մարդիկ շուտով ուշքի յեկան. Նրանցից հինգն անվնաս էին մնացել, ինքը՝ Նոբիլեն ընկնելու ժամանակ ջարդել էր իր ձեռքը, գիտնական

Մալմգրենի ձեռքը դուրս էր ընկել, իսկ մեխանիկ Չիչիոնի վոտքը կոտրվել էր։

Նրանք բոլորը շուտով ուշքի յեկան։

Մի կերպ կապեցին վիրավորներին և սկսեցին հավաքել այն իրերը, վորոնք վթարի ժամանակ ընկել էին գոնդոլից։ Բարեբախտաբար գտնվեցին բոլոր իրերը՝ պարենը, զենքը և ռադիո ապարատը։

Մեծ դժվարությամբ ռադիո-հեռագրիչ Բիաջին սարքեց ռադիո ապարատը։ Սկզբում նա միայն լսում էր ռադիո-լուրեր, իսկ ինքը վոչ մի ազդանշան չէր կարողանում ուղարկել։ Ի՞նչ պետք էր անել։

Ինը հոգով միասին մինչև Շպիցբերգենի ափերը գնալ չեյին կարող, — ճանապարհորդները վոչ սահնակ ունեյին և վոչ լավ կոշիկներ։ Բացի այդ, յերեք մարդ վիրավորված էին և դժվարությամբ էին շարժվում։ Այսպիսի պայմաններում գնալ լողացող սառույցներով, անկարելի յեր։ Այն ժամանակ վորոշեցին, վոր յերեքը — Ցապպին, Մարիանոն և Մալմգրենը վոտքով գնան դեպի ցամաք, իսկ մնացածներն ոգնության սպասեն սառույցների վրա։

Նրանք գնացին, իսկ նրանց գնալուց մի շաբաթ անց Բիաջին սարքեց ապարատը և սկսեց պատահած դժբախտության մասին ազդանշաններ տալ։

Այդ ազդանշանները լսեց ռուս ռադիո սիրող Շըմիդտը, հետո այդ ազդանշաններն ընդունեց նաև Շպիցբերգենում կանգնած «Չիտա դա Միլանո» իտալական նավը։

Հաստատված էր կապը խորտակվողների հետ։ Նրանց փրկության համար դուրս յեկան տարբեր ազգերի 14 նավեր՝ իտալական, նորվեգական, շվեդական և ֆրանսիական հածանավեր, նորվեգական գրահապատ նավը, խորհրդային յերեք սառցահատ նավեր՝ «Կրասին»-ը, «Մալիգին»-ը և «Սեդով»-ը։

Ամունդսենը մեծ հետաքրքրությամբ հետևում էր, թե ինչպես էր տարվում խորտակվողներին փրկելու աշխատանքը։

Մի անգամ յերեկոյան նա նստած եր կաֆեյում։ Հանկարծ նրան մոտեցավ մատուցողը և ասաց, վոր նրան հեռախոսի մոտ ե խնդրում Նորվեգիայի զինվորական մինիստրը։ Մինիստրը հարցրեց Ամունդսենին, թե արդյոք նա չի համաձայնի ֆրանսիական «Լատամ» սավառնակով թռչել ոգնելու խորտակվածներին։

— Դուք այնպիսի փորձված բևեռային ճանապարհորդ եք, վոր ձեր ոգնությունն ամենաարագը և ամենալավը կլինի։

Ամունդսենն անմիջապես պատասխան տվեց՝

— Համաձայն եմ։

Յեվ հաջորդ որը յերեկոյան նա Ոսլոյից մեկնեց Բերգեն, վորտեղ իր սավառնակով յեկավ ֆրանսիացի հռչակավոր ոդաչու Գիլբոն։ Վերջինիս հետ եյին ֆրանսիացի յերեք մեխանիկ։ Ամունդսենը հրավիրեց իր հետ թռչելու իր փորձված ընկերներին՝ Դիտրիխսոնին և Վիստինգին։

Բերգենից «Լատամ» սավառնակը թռավ հյուսիսային նավահանգիստ Տրոմսը, վորտեղ և կատարվեցին վերջին նախապատրաստությունները։ Վերջին րոպեյին պարզվեց, վոր սավառնակը շատ ե ծանրաբեռնված։ Մի մարդ անպայման պիտի մնար։ Մնաց Ամունդսենի հին ընկեր Վիստինգը։ Նա նավով պետք ե հասներ Ամունդսենին Շպիցբերգենում։

Իսկ վեց հոգին — ինքն՝ Ամունդսենը, նրա ոդաչու Դիտրիխսոնը, ֆրանսիացի ոդաչու Գիլբոն և ֆրանսիացի յերեք մեխանիկ թռան դեպի Շպիցբերգեն։

Նրանք թռան հունիսի 19-ի յերեկոյան։

Յեղանակն այդ որը շատ փոթորկալից եր, արևելքից փչում եր ուժեղ քամի, ովկիանոսում հսկայական ալիքներ կային։ Սավառնակից ռադիոյով ոդաչուները յերկու ժամ շարունակ հաղորդում եյին, թե ամեն ինչ բարեհաջող ե գնում։ Հանկարծ ռադիո-կապը կտրվեց։

Ի՞նչ պատահեց սավառնակին։ Վոչ վոք չեր կարող

—Համաձայն եմ։

վճռել այդ հարցը։ Անցավ մի օր, յերկրորդը, յերրորդը,— սավառնակի մասին վոչ մի լուր չկար։ Վոչ Շպիցբերգենում, վոչ Արշի կղզիներում, վորոնց վրայով նա պիտի թռչեր, վոչինչ հայտնի չեր։

Անցավ ելի յերկու շաբաթ,—վոչ մի լուր չկար։ Սկզբում շատ քչերն եյին անհանգստանում. բոլորը գիտեյին, վոր Ամունդսենը կարող ե ամենավտանգավոր դրությունններից դուրս գալ։ Հնարավոր ե, վոր նրանց հետ դժբախտություն ե պատահել, հնարավոր ե, վոր նա նստած ե վորևե սառույցի վրա։ Առայժմ չպետք ե անհանգստանալ։

Մարդիկ դեռևս անհանգստանում եյին այն խալացի ճանապարհորդների մասին, վորոնց ոգնության եր գնացել Ամունդսենը։ Ամբողջ աշխարհը մեծ լարվածությամբ հետևում եր, թե ինչպես ամեն կողմից շտապում եյին ոգնության հասնել նավերն ու սավառնակները։

Մեր «Կրասին» սառցահատն արագ անցավ Շպիցբերգենն արևմտյան կողմից և սկսեց առաջ շարժվել կղզու կողքով, հանդիպելու այն մարդկանց, վորոնք սառույցների վրա եյին մնացել։

Շուտով սառցահատն ընկավ ծանր սառույցների մեջ և կանգ առավ։ Նրանից դուրս բերին սառույցի վրա ոդաչու Չուխնովսկու մեծ սավառնակը։ Սավառնակը սառույցների վրայով թռավ դեպի խալացիները։ Շուտով ոդաչուն սառույցի վրա ինչ-վոր սև բծեր նկատեց։ Ավելի մոտ թռչելով՝ նրանք տեսան, վոր դրանք մարդիկ եյին — յերկու հոգի սառույցի վրա ձեռքով նշան եյին անում, ոգնություն եյին կանչում։ Սավառնակն աշխատում եր իջնել սառույցի վրա, սակայն սառույցն ամբողջովին ճաքճքած եր, անհնար եր նրա վրա իջնել։ Սավառնակը թռավ ավելի հեռու՝ խալացիներին վորոնելու համար։

Հանկարծ մառախուղը խտացավ, ամեն ինչ ծածկեց և սավառնակը վերադարձավ դեպի սառցահատը,—յերկար պտտվելով, վորոնելով նավը մառախուղի մեջ։ Վոչինչ չեր



Նրանք թռան հունիսի 19-ին:

վճռել այդ հարցը։ Անցավ մի օր, երկրորդը, երրորդը,— սավառնակի մասին վոչ մի լուր չկար։ Վոչ Շպիցբերգենում, վոչ Արջի կղզիներում, վորոնց վրայով նա պիտի թռչեր, վոչինչ հայտնի չեր։

Անցավ ելի յերկու շաբաթ,—վոչ մի լուր չկար։ Սկզբում շատ քչերն եյին անհանգստանում. բոլորը գիտեյին, վոր Ամունդսենը կարող ե ամենավտանգավոր դրություններից դուրս գալ։ Հնարավոր ե, վոր նրանց հետ դժբախտություն ե պատահել, հնարավոր ե, վոր նա նստած ե վորևե սառույցի վրա։ Առայժմ չպետք ե անհանգստանալ։

Մարդիկ դեռևս անհանգստանում եյին այն խալացի ճանապարհորդների մասին, վորոնց ոգնության եր գնացել Ամունդսենը։ Ամբողջ աշխարհը մեծ լարվածությամբ հետևում եր, թե ինչպես ամեն կողմից շտապում եյին ոգնության հասնել նավերն ու սավառնակները։

Մեր «Կրասին» սառցահատն արագ անցավ Շպիցբերգենն արևմտյան կողմից և սկսեց առաջ շարժվել կղզու կողքով, հանդիպելու այն մարդկանց, վորոնք սառույցների վրա եյին մնացել։

Շուտով սառցահատն ընկավ ծանր սառույցների մեջ և կանգ առավ։ Նրանից դուրս բերին սառույցի վրա ոդաչու Չուխնովսկու մեծ սավառնակը։ Սավառնակը սառույցների վրայով թռավ դեպի խալացիները։ Շուտով ոդաչուն սառույցի վրա ինչ-վոր սև բծեր նկատեց։ Ավելի մոտ թռչելով՝ նրանք տեսան, վոր դրանք մարդիկ եյին — յերկու հոգի սառույցի վրա ձեռքով նշան եյին անում, ոգնություն եյին կանչում։ Սավառնակն աշխատում եր իջնել սառույցի վրա, սակայն սառույցն ամբողջովին ճաքճքած եր, անհնար եր նրա վրա իջնել։ Սավառնակը թռավ ավելի հեռու՝ խալացիներին վորոնելու համար։

Հանկարծ մառախուղը խտացավ, ամեն ինչ ծածկեց և սավառնակը վերադարձավ դեպի սառցահատը,—յերկար պտտվելով, վորոնելով նավը մառախուղի մեջ։ Վոչինչ չեր



Նրանք թռան հունիսի 19-ին:

յերևում։ Սավառնակը թռավ դեպի կղզին և նստեց ծովափի սառույցի վրա։ Իջնելու ժամանակ նա ջարդեց իր հենասարքը—այնպես վոր սառույցի վրայից այլևս չեր կարող բարձրանալ։

Ոդաչուները դրին ռադիո-ապարատ և սառցահատ «Կրասին»-ին հաղորդեցին, վոր նրանք յերկու մարդ են տեսել սառույցի վրա և հատկապես այսինչ տեղում։ «Կրասին»-ն անմիջապես առաջացավ մատնանշված վայրը և շուտով գտավ նրանց։ Դրանք իտալացի Ցապպին և Մարիանոն եյին, վորոնք ամիս ու կես առաջ Նոբիլեյի խմբից բաժանվել, վոտքով գնում եյին Շպիցբերգեն և սառույցների մեջ եյին մնացել։ Ճանապարհին ուղեկիցներից մեկը— շվեդացի Մալմգրենը մեռել եր։ Ցապպին և Մարիանոն փոխադրվեցին սառցահատը։

Այդ ժամանակ սառույցները բավականին նոսրացել եյին, «Կրասին»-ն ավելի առաջ գնաց և շուտով լողացող սառույցների վրա գտավ իտալացիներին և փրկեց նրանց։

Կորան միայն այն վեց իտալացիները, վորոնք յերկրորդ գոնդոլում դիրիժաբլի հետ միասին թռել եյին։ Կորան նաև Ամունդսենն ու իր ուղեկիցները։

Հենց այն ժամանակ, յերբ «Կրասին»-ը փրկեց իտալացիներին, խորհրդային մի ուրիշ սառցահատ՝ «Մալիգին»-ը ոգնության եր շտապել այդ նույն իտալացիներին՝ Շպիցբերգենի արևելյան կողմից։ «Մալիգին»-ն ընկավ ծանր ու խիտ սառույցների մեջ և խրվեց այնտեղ։ Նա յերկար կանգնեց, սպասելով թե յերբ սառույցները կնոսրանան։ «Մալիգին»-ն անընդհատ ռադիոյով տեղեկություններ եր ստանում այն մասին, թե ինչ ե կատարվում աշխարհում։

Այն որը, յերբ Ամունդսենը սավառնակով Տրոմսից թռիչք կատարեց, «Մալիգին»-ը դրա մասին լուր ստացավ ռադիոյով։ Ամունդսենը պետք ե թռչեր մոտավորապես այնտեղ, ուր գտնվում եր «Մալիգին»-ը, միայն նրանից մի քիչ դեպի արևմուտք։ Հենց այդ որն ել ովկիանոսում ուժեղ փոթորիկ եր։

Ոդաչու Չուխնովսկին։

Մի քանի որից հետո «Մալիգին»-ը լուր ստացավ, թե «Կրասին»-ն ազատել ե իտալացիներին։ Սառույցներում խրված «Մալիգին»-ում ամենքն ուրախացան, վոր խորհրդային սառցահատ «Կրասին»-ը կատարել ե այդպիսի սխրագործություն և միաժամանակ տխրեցին, վոր իրենց չի հաջողվել փրկել այդ մարդկանց։ Հանկարծ Մոսկվայից ռադիոյով հրաման ստացվեց.

— Սառցահատ «Մալիգին»-ը թող գնա Շպիցբերգեն վորոնելու անհայտ կորած Ամունդսենին և նրա ուղեկիցներին։

Սառցահատի վրա նորից աշխուժություն տիրեց։ «Մալիգին»-ը մեծ դժվարությամբ դուրս եկավ սառույցներից դեպի օվկիանոսի մաքուր ջուրը և ուղևորվեց դեպի Շպիցբերգեն։ Ամունդսենը պետք է թռչեր կղզու հարավային ցեղերքով։

Մի օրից հետո «Մալիգին»-ի նավակազմը տեսավ կղզու սպիտակ լեռների վրա ոդային գիծ։ Արևելքից ամբողջ կղզին շրջապատված էր սառույցներով։ Կղզու արևելյան ծովածոցերից մեկի ցեղերքին մի խրճիթ կար, որ ինչ-որ ժամանակ կառուցել էին ռուս գաղանորսները։ Ամունդսենը, ինչպես և բևեռային բոլոր ճանապարհորդները, գիտեյին այդ խրճիթի տեղը։ Յեթե նրանց հետ որևէ դժբախտություն պատահած լիներ կղզու մոտ, նրանք սառույցների վրայով կղզին կվերադառնային և, հավանաբար, ապաստան կգտնեյին այդ խրճիթում։

«Մալիգին»-ը փորձեց սառույցների միջով մոտենալ կղզու ափերին, հինգ որ շարունակ փնտռեց անվեհեր ճանապարհորդներին, սակայն և ոչ մի տեղ նրանց ժամանման հետքն անգամ չգտավ։ Ամբողջ որոնումներն իզուր անցան։ «Մալիգին»-ն օվկիանոսով վերադարձավ դեպի Արխանգելսկ։

Այսպես անցավ մեկ, յերկու ամիս։ Այն մարդիկ, վորոնց ոգնելու համար թռել էր Ամունդսենը, վաղուց արդեն ապահով գտնվում եյին Իտալիայում, իսկ Ամունդսենի մասին ոչ մի լուր չկար։

Յեվ ահա, միայն ոգոստոսի 31-ին, նորվեգական «Բրոդ» շոգենավը ծովում գտավ հիդրոպլանի մի լողան, վոր պատկանում եր «Լատամ» սավառնակին։

Այս լուրն անմիջապես ցնցեց վողջ աշխարհը։ Ի՞նչ է պատահել Ամունդսենին և նրա ուղեկիցներին։

Մի քանի օրից հետո նոր լուր ստացվեց. ծովում գտել են բենզինի մի բաք, վորի վրա կա մետաղի մի շերտ, վրան գրված «Լատամ»։ Այս բաքը գտնվում էր սավառնակի ներսում, նշանակում է սավառնակը ջարդ

ու փշուր է յեղել։ Բաքի վրա յերկու տեղում յերևում եյին կրակի հետքեր, կարծես թե նա հրդեհի մեջ էր յեղել։

Յեվ այժմ սավառնակի կործանման մասին տարբեր կերպ են մտածում։

Յերկու ժամ նա թռել է բարեհաջող։ Արևելյան ուժեղ քամին քշել է նրան կողքի վրա և սավառնակը շուռ է յեկել այս ու այն կողմի վրա։ Օվկիանոսում սարսափելի ալեկոծություն է յեղել։ Հանկարծ սավառնակի մոտորը դադարել է աշխատելուց։ Ոդաչու Գիլբոն յերկար աշխատել է ճախրասավառնել, մեխանիկները նետվել են մեքենայի մոտ։ Այդ ժամանակ ռադիո հեռագրիչն շտապել է ազդանշան տալ «SOS» — փրկեցե՛ք մեզ, — ծովային և ոդային նավերն այսպես են կանչում ոգնություն այն րոպեյին, յերբ նրանց կործանման վտանգ է սպառնում։ Այդ ազդանշաններն անորոշաբար լսել են Շպիցբերգենի մոտ լողացող նավերը։

Սակայն արդեն վոչինչ անել չեր կարելի։ Մոտորը չի աշխատել այլևս, — սավառնակն իջել է ջրի վրա։ Նա նման է յեղել փոթորկված ծովում մի փոքր տաշեղի։ Ալիքի լեռներն ընկել են նրա վրա։ Նրանք զարնվել են նրան խորտակիչ, ահավոր ուժով։ Փայտե նուրբ թիթեղի շերտից կառուցված սավառնակը, վոր շրջաքաշված եր բրեզենտով, պատռվել է, շուռ յեկել կողքի վրա, նրանից բաժանվել են թևերը, կաբինը լցվել է ջրով, — ծանր մոտոր ջարդված սավառնակը քարշ է տվել օվկիանոսի հատակը։ Մարդիկ մի քանի րոպե թպրտացել են սառցաջրում։ Ամունդսենն իր հետ ուներ ծալովի նավակ։ Թերևս, նա աշխատել է բաց անել այն։ Չի հասցրել։ Մարդիկ մեկը-մյուսի յետևից ընկղմվել են — յերեք մեխանիկ, ոդաչուներ Գիլբոն, Դիտրիխսոնը և ինքը՝ Ամունդսենը։ Ծովի մակերեսին մնացել են միայն սավառնակի լողանը և բենզինի դատարկ բաքը։ Քշվելով քամուց և ալիքներից, նրանք լողացել են դեպի արևմուտք, վորպեսզի պան-

Սառցահատի վրա նորից աշխուժություն տիրեց։ «Մալինգին»-ը մեծ դժվարությամբ դուրս եկավ սառույցներից դեպի օվկիանոսի մաքուր ջուրը և ուղևորվեց դեպի Շպիցբերգեն։ Ամունդսենը պետք է թռչեր կղզու հարավային եզերքով։

Մի օրից հետո «Մալինգին»-ի նավակազմը տեսավ կըղզու սպիտակ լեռների վրա ոդային գիծ։ Արևելքից ամբողջ կղզին շրջապատված էր սառույցներով։ Կղզու արևելյան ծովածոցերից մեկի եզերքին մի խրճիթ կար, որ ինչ-որ ժամանակ կառուցել էին ռուս գաղանորսները։ Ամունդսենը, ինչպես և բևեռային բոլոր ճանապարհորդները, գիտեյին այդ խրճիթի տեղը։ Յեթե նրանց հետ որևե դժբախտություն պատահած լիներ կղզու մոտ, նրանք սառույցների վրայով կղզին կվերադառնային և, հավանաբար, ապաստան կգտնեյին այդ խրճիթում։

«Մալինգին»-ը փորձեց սառույցների միջով մոտենալ կղզու ափերին, հինգ որ շարունակ փնտռեց անվեհեր ճանապարհորդներին, սակայն և ոչ մի տեղ նրանց ժամանման հետքն անգամ չգտավ։ Ամբողջ որոնումներն իզուր անցան։ «Մալինգին»-ն օվկիանոսով վերադարձավ դեպի Արխանգելսկ։

Այսպես անցավ մեկ, յերկու ամիս։ Այն մարդիկ, որոնց օգնելու համար թռել եր Ամունդսենը, վաղուց արդեն ապահով գտնվում եյին Իտալիայում, իսկ Ամունդսենի մասին ոչ մի լուր չկար։

Յեվ ահա, միայն օգոստոսի 31-ին, նորվեգական «Բրոդդ» շոգենավը ծովում գտավ հիդրոպլանի մի լողան, որ պատկանում եր «Լատամ» սավառնակին։

Այս լուրն անմիջապես ցնցեց ողջ աշխարհը։ Ի՞նչ է պատահել Ամունդսենին և նրա ուղեկիցներին։

Մի քանի օրից հետո նոր լուր ստացվեց. ծովում գտել են բենզինի մի բաք, որի վրա կա մետաղի մի շերտ, վրան գրված «Լատամ»։ Այս բաքը գտնվում եր սավառնակի ներսում, նշանակում է սավառնակը ջարդ ու փշուր է յեղել։ Բաքի վրա յերկու տեղում յերևում եյին կրակի հետքեր, կարծես թե նա հրդեհի մեջ եր յեղել։

Յեվ այժմ սավառնակի կործանման մասին տարբեր կերպ են մտածում։

Յերկու ժամ նա թռել է բարեհաջող։ Արևելյան ուժեղ քամին քշել է նրան կողքի վրա և սավառնակը շուռ է յեկել այս ու այն կողմի վրա։ Օվկիանոսում սարսափելի ալեկոծություն է յեղել։ Հանկարծ սավառնակի մոտորը դադարել է աշխատելուց։ Օդաչու Գիլբոն յերկար աշխատել է ճախրասավառնել, մեխանիկները նետվել են մեքենայի մոտ։ Այդ ժամանակ ռադիո հեռագրիչն շտապել է ազդանշան տալ «SOS»—փրկեցեք մեզ,—ծովային և օդային նավերն այսպես են կանչում օգնություն այն րոպեյին, յերբ նրանց կործանման վտանգ է սպառնում։ Այդ ազդանշաններն անորոշաբար լսել են Շպիցբերգենի մոտ լողացող նավերը։

Սակայն արդեն ոչինչ անել չեր կարելի։ Մոտորը չի աշխատել այլևս,—սավառնակն իջել է ջրի վրա։ Նա նման է յեղել փոթորկված ծովում մի փոքր տաշեղի։ Ալիքի լեռներն ընկել են նրա վրա։ Նրանք զարնվել են նրան խորտակիչ, ահավոր ուժով։ Փայտե նուրբ թիթեղի շերտից կառուցված սավառնակը, որ շրջաքաշված եր բրեզենտով, պատռվել է, շուռ յեկել կողքի վրա, նրանից բաժանվել են թևերը, կաբինը լցվել է ջրով,—ծանր մոտոր ջարդված սավառնակը քարշ է տվել օվկիանոսի հատակը։ Մարդիկ մի քանի րոպե թպրտացել են սառցաջրում։ Ամունդսենն իր հետ ուներ ծալովի նավակ։ Թերևս, նա աշխատել է բաց անել այն։ Չի հասցրել։ Մարդիկ մեկը-մյուսի յետևից ընկղմվել են—յերեք մեխանիկ, օդաչուներ Գիլբոն, Դիտրիխսոնը և ինքը՝ Ամունդսենը։ Ծովի մակերեսին մնացել են միայն սավառնակի լողանը և բենզինի դատարկ բաքը։ Քշվելով քամուց և ալիքներից, նրանք լողացել են դեպի արևմուտք, որպեսզի պան-

ծալի ողաչուների և մեծ բևեռային հետազոտող Ամունդսենի մահվան լուրը բերեն։

Բայց կարող է լինել նաև, որ սավառնակն այրվել է։ Բոցավառ դրությամբ նա մի քանի րոպե թռել է օվկիանոսի վրայով։ Հետո ուժեղ թափով ընկել է օվկիանոսի ալիքների մեջ, կրակը մարել է, սակայն ալիքները վայրկենապես ջարդ ու փշուր են արել սավառնակը և կուլ են տվել հերոսներին։

Հինգ տարի անցնելուց հետո նորվեգական ձկնորսները ուռկանով որսացել են «Լաթամ» սավառնակի թևերի մետաղյա մասերը։ Ցավ սա չէ այն ամենը, ինչ որ մնում է մեծ ճանապարհորդ Ռոալդ Ամունդսենի փրկարար էքսպեդիցիայից։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	Եջ
Ճանապարհորդություն դեպի ծովը	7
«Դու բժիշկ կդառնաս...»	15
Ջոն Ֆրանկլինի արկածները	19
Ամեն ինչ մի նպատակի համար	26
Ուժեղ կամքի տեր մարդը	31
Հերոսը	39
Բեկում	43
Առաջին փորձությունը	49
Կյանքը մազից կախված	61
Նրանց չեն ճանաչում	65
Նավաստի	72
Դեպի հարավային բևեռ	82
Թակարդում	90
Ամունդսենը նավապետ	99
Բժիշկ Կուկն ազատարար	104
Վերադարձ	114
Նանսենի մոտ	116
Գիտության համար	122
Ամեն ինչ պարտքով	126
Նպատակին հասնելու ճանապարհին	130
Ձմեռում	135
Ճանապարհը գտնված է	144
Դեպի հարավային բևեռ	148
Դեպի նոր արշավ	161
Սավառնակներով դեպի բևեռ	166
Պայքար կյանքի համար	178
Դեպի հյուսիսային բևեռ	188
Փառավոր մահ	193

ՀՀ Ազգային գրադարան
NL0147694

ԳԻՆԸ 3 Ռ. 60 Կ.

226

16580